





NATIONAL ACADEMY OF SCIENCES  
REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

---

# THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST

## VOLUME XXXIII, PART 1

YEREVAN  
"GITUTYUN" PUBLISHING HOUSE  
2020



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

**СТРАНЫ И НАРОДЫ  
БЛИЖНЕГО И СРЕДНЕГО  
ВОСТОКА**

**ТОМ XXXIII, ЧАСТЬ 1**

ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО « ГИТУГИОНЬ »  
2020



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱ

---

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ  
ԱՐԵՎԵԼՔԻ  
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ**

**ՀԱՏՈՐ XXXIII, ՊՐԱԿ 1**

ԵՐԵՎԱՆ  
«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱՎՅՈՒԹՅՈՒՆ  
2020



**Տվագրվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի զինակա  
խորհրդի որոշմամբ**

**Ժողովածու հրատարակվում է 1960 թ.-ից**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ռոբերտ Մաֆրատյան (գլխավոր խմբագիր) - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
Ռոբերտ Նազարյան (գլխավոր խմբագրի տեղակալ) - պ.գ.թ., Ռուսաստանի  
Տեղագիտության ակադեմիայի ակադեմիկոս, Քաղաքագիտության ակադեմիայի  
ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Կահան

Քաղաքագիտության ակադեմիայի ակադեմիկոս, Արամ Քոչարյան - պ.գ.դ., Ազատ Բազումյան - պ.գ.դ.,  
Ալեքսանդր Կոչարյան - պ.գ.դ., Գոռ Մարգարյան - պ.գ.թ., Լիլիթ Հարությունյան - պ.գ.թ., Քրիստինե Մելքոնյան - պ.գ.թ.

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐՏԱՍԱՀԱՆՅԱՆ ԱՆՊԱՐՏՆԵՐ**

Տատևղուս Ալեքոյան - պ.գ.թ., Թրակիայի Գեոլոգիայի համալսարան (Հունաստան), izak@cyta.gr, Բզաբեղ Օձե - պ.գ.դ., Մոնեպելի համալսարան (Յթրակիա), issabelle.suge@univ-montp3.fr, Մարիամ Չխարոյիչյանի - պ.գ.դ., Թրակիայի պետ. համալսարան (Կլուսոստան), mariam.chikaridze@tsu.ge, Վլադիմիր Գիտարին - պ.գ.թ., Պեկրոյի պետ. համալսարան (Ռուսաստան), dva\_psk@mail.ru, Հրաչ Մարտիրոսյան - ր.գ.թ., Լեյդենի համալսարան (Նիդերլանդներ), hrch.martirosyan@gmail.com, Աննա Շիրինյան - ր.գ.թ., Բոլոնյայի համալսարան (Իտալիա), anna.sirinian@unibo.it, Մուրադզեյի Սոյեզով - ր.գ.դ., ակադեմիկոս, msogyev@gmail.com (Գոթթրանսալան)

Խմբագրական խորհրդի նախնի՝ Մ. Բարյակյան ստղ. 2/4, ք. Երևան, 0019, ՀՀ Հեռ. (+374 10) 58 33 82, (+374 10) 56 52 11

Էլ. փոստ՝ journal@orient.sci.am  
Կայքէջ՝ <http://www.orientcprnme.am>

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՄՆԵՐ.  
XXXIII/1 / - Եր.: «Գիտություն» հրատ., 2020, 534 էջ:

«Մերնավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ժամանակագրի հերթական (XXXIII/1) հատորն ընդգրկում է Մերնավոր և Միջին Արևելքի երկրների հին և միջին դարերի պատմության, նոր և նորագույն ժամանակների ինչպես նաև աղբյուրագիտության և քննադատության հարցերի վերաբերյալ հետազոտություններ: Ձգալի տեղ է հատկացված տարածաշրջանի քաղաքական զարգացումներին, միջազգային հարաբերություններին և այլ հիմնախնդիրների յուսարանմանը: Լավագույնագույն է արևելագետների, հայագետների, միջազգայնագետների համար:

ISSN 1829-1422  
© ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, 2020

**Published by the decision of the Scientific Council of the Institute of Oriental Studies of NAS RA**

*The periodical has been published since 1960*

**EDITORIAL BOARD:**

**Ruben Safrastyan** (Editor-in-Chief) - Doctor of Sciences, Full Member (academician) of the National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA);

**Robert Ghazaryan** (Vice Editor-in-Chief) - Ph.D;

**Ruslan Tsakanyan** (Executive Secretary) - Ph.D;

**Nikolay Hovhannisyán** - Doctor of Sciences, Corresponding Member of NAS RA; **Vahan Bayburdyan** - Doctor of Sciences; **Aram Kosyan** - Doctor of Sciences; **Azat Bozoyan** - Doctor of Sciences; **Alexan Hakobyan** - Doctor of Sciences; **Gor Margaryan** - Ph.D; **Lilit Harutyunyan** -Ph.D; **Kristine Melkonyan** - Ph.D

**FOREIGN MEMBERS OF THE EDITORIAL BOARD:**

**Iakovos Altsoglu** - Ph.D., Democritus University of Thrace (Hellas), izak@cyta.gr; **Isabelle Augé** - Doctor of Sciences, University of Montpellier (France), isabelle.auge@univ-montp3.fr; **Mariam Chkhartishvili** - Doctor of Sciences, Tbilisi State University (Georgia), mariam.chkhartishvili@tsu.ge;

**Vladimir Dmitriev** - Ph.D, Pskov State University (Russia), dva\_psk@mail.ru;

**Hrach Martirosyan** - Ph.D, Leiden University (Netherlands), hrch.martirosyan@gmail.com; **Anna Sirinian** - Ph.D, Bologna University (Italy), anna.sirinian@unibo.it; **Muratgeldi Soyegov** - Doctor of Sciences, Full Member (academician) (Turkmenistan), msyegov@gmail.com

**Editorial Office:** Marshal Baghramyan Ave. 24/4, Yerevan 0019, Armenia

**Tel.** (+374 10) 58 33 82, (+374 10) 56 52 11

**E-mail:** journal@orient.sci.am <http://www.orientcpmne.am>

THE COUNTRIES AND PEOPLES OF THE NEAR AND MIDDLE EAST.  
XXXIII/1 / Yerevan: «Ghutyun» Publishing house, 2020. 534 p.

The current issue of the "The Countries and Peoples of the Near and Middle East" includes researches on the ancient, medieval, modern and contemporary history of the countries of the Near and Middle East history, as well as issues of source studies and philology. A considerable part is devoted to the ongoing developments and processes in the Eurasian region. The periodical may be of interest to orientalists, specialists in the field of Armenology and International Relations.

ISSN 1829-1422

© Institute of Oriental Studies of NAS RA, 2020

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐՆԻ ԴԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

<b>ՄԱՐԻԱՄ ԽԱՆՁԱԳՅԱՆ</b>	
ՍՏՏՏԻԿԱՆ ԵՎ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԾԱՅԻՆ, ՁԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ, ՄԱՍ I .....	16
<b>ԱՆՆԱ ԱՇԻՉՅԱՆ</b>	
ՇԵՆԳԱՎԻԹԻՏ ՀԱՅՏՆԱՐԵՐՎԱԾ ՔԱՐԵ ՄԻ ԱՐՁԱՆԻԿԻ ՇՈՒՐՁ .....	49
<b>ՀԱՍՄԻԿ ՀՄԱՅԱԿՅԱՆ</b>	
ԵՂՋԵՐՈՒՆԵՐԻ ԵՎ ԱՐԵՎԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԿԱՊԸ ՀԱՅԱՏՆԱՆՅԱՆ ԵՎ ՓՈՔՐԱՄԱԻԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ .....	60
<b>ՈՐՔԵՐՏ ԴԱՁԱՐՅԱՆ</b>	
ԿԱՆԱՆՑ ԴԵՐԸ ԱՇՇՈՒՐ ՔԱՆԵՇ ՄԻՋԱՁԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ .....	78
<b>ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ</b>	
ԵՓՐԱՏՅԱՆ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԳՈՏԻՆ Մ.Թ.Ա. II ՀԱՁԱՐԱՄՅԱԿՈՒՄ (ԻՍՈՒԿԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ) .....	95
<b>ՈՐՈՒՍԱՆ ՑԱԿԱՆՅԱՆ</b>	
ԱՇՇՈՒՐ ԴԱՆ ԱՊԼՈՒԻ ԱՊՏԱՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ Մ.Թ.Ա. IX ԴԱՐԻ ԱՍՈՐԱՔԱՐԵԼԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ .....	111
<b>ՄԻՔԱՅԵԼ ՔԱԴՊԱՆՅԱՆ</b>	
ԵՒՔՐՈՒՆԻԻՑ ԴԵՊԻ ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ: ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԹԵՑԵՔՐԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՇՈՒՐՁ .....	131
<b>ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ</b>	
ԱՊՏԱՄԱՐԵՒՆ ԵՐ ԱՐԴՅՈՔ ԵԳԻՊՏՈՍԸ ԴԱՐԵՎ I-Ի ԴԵՄ .....	141
<b>ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻՔՅԱՆ</b>	
ՄԻՀՐԴԱՏ I ԱՐԵՎԱԿՈՒՆՈՒՆ S.7.2 ՏԻՊԻ ԵՐԿՔԱՂՔՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ....	156
<b>ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ</b>	
ՀԱՎԱՏՔԻ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՆ ԸՍՏ Ա, ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ՈՍԿԵՓՈՐՏԻԿ» .....	187

**ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

<b>ՎԱՀԱՆ ՔԱՅՐՈՒՂՅԱՆ</b>	
ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԸ ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿԱՆ ԲՐՊԱԳԵՏ .....	206
<b>ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ</b>	
ԱԼԺԻՐԻ ԳԱՂՈՒԹԱՅՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՈՋԱՆ, ԱՐԴ ԱԼ- ԿԱԴԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ (1839 թ.) .....	237
<b>ՈՌՈՒՆ ԽԱՅՐԱՍՅԱՆ</b>	
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆԸ 1871-1875 թթ. ՃԳՆԱԺԱՆԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ .....	250
<b>ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ</b>	
ՀԱՅ-ԹՐՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶԱՐԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ» ԷՋԵՐՈՒՄ (1920 թ.) .....	260
<b>ԴԱՎԻԹ ՔԱՐԱՅԱՆ</b>	
ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶԻ ԿԱԶՄԱԿՈՐՄԱՆ, ԳՈՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ .....	277
<b>ՀԱՅԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ</b>	
ՄԻՐԻԱՅԻ ԱՐԱՔԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱՏ ՈՒԺԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԶՈՐՔԵՐԸ .....	313
<b>ԱՐՄԵՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ</b>	
ԱՐԴՐՔՁԱՆԻ ՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՆԻ ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԱՆՋԱՑՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ (ԻԼՀԱՄ ԱԼԻԵԿԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՄԱՄՅԱԿՈՒՄ) .....	357
<b>ՄՈՒՇԵՂ ԴԱՀՐԻՅԱՆ</b>	
ՀԱՅՈՑ ՑԵՆԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՐԱՔԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ .....	375
<b>ԱՐԱՔՍ ՓԱՇՅԱՆ</b>	
ԱՍՈՒԴՅԱՆ ԱՐԱՔԱՆ ԵՎ «ԱՐԱՔԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՁԵՎ ՀԱԿԱՇՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ (2011-2013 թթ.) .....	402
<b>ԱՐՇՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ</b>	
ԱԹԱՆԵՐԻ ՊԱՐՍԵՐԻ ԵՎ ԵՐԱՄՆԵՐԻ ՀԱՅՅԱԿԱՐԳԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԵՐՉԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ .....	425

**ԱՂՔՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՄՈՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՏՅՈՒ ՏՈՒՈՅԱՆ**

Բանավոր Ազատագրությունից Դեմի Պատասխան Իրավունություն, Խաղաղի Շեղանի	456
---	-----

**ՎԱՅ ԿԱՎՈՐՅԱՆ**

Մեմորիա Մաշտոցի Անպան Հին Ձեռագրերի Իշխանության 1713 ԵՎ Սատուրթյանի Համալսարանի 6770 Ձեռագրերի Հատկատեսակներ Բնութագրում	474
---	-----

**ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ**

Մասնագիտական Պարսկերեն Վազեղագրեր Ազատագրություն XVII դարի ՀԱՅ Վաճառականների Մասին	488
---	-----

**ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՉՄԱՅԱՆ**

Իրանի Մեծագրությունից Ձեռագրերի Հիմնական Միտումները XIX-XX դդ. (ԱՎՆԱՐԿ).....	517
---	-----

## СОДЕРЖАНИЕ

### ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

<b>МАРИАМ ХАНЗАДЯН</b> СТАТИКА И ДИНАМИКА: ПРЕДСТАВЛЕНИЯ О ВРЕМЕНИ И ЛИНЕЙНОМ РАЗВИТИИ ИСТОРИИ НА ДРЕВНЕМ ВО- СТОКЕ. ЧАСТЬ I .....	16
<b>АННА АЗИЗЯН</b> ОБ ОДНОЙ КАМЕННОЙ СТАТУЭТКЕ НАЙДЕННОЙ ИЗ ШЕНГАВИТА .....	49
<b>АСМИК АМАЯКЯН</b> СВЯЗЬ КУЛЬТОВ ОЛЕНЯ И СОЛНЦА В КУЛЬТУРАХ АР- МЕНИИ И МАЛОЙ АЗИИ .....	60
<b>РОБЕРТ КАЗАРЯН</b> РОЛЬ ЖЕНЩИН В МЕЖДУНАРОДНОЙ ТОРГОВЛЕ МЕЖ- ДУ АШШУРОМ И КАНЕШОМ .....	78
<b>АРАМ КОСЯН</b> ЕВФРАТСКАЯ КОНТАКТНАЯ ЗОНА ВО II ТЫСЯЧЕЛЕТИИ ДО Н.Э. (НА ПРИМЕРЕ ИСУВЫ) .....	95
<b>РУСЛАН ЦАКАНЯН</b> ВОССТАНИЕ АШШУР-ДАИН-АПЛУ В КОНТЕКСТЕ АС- СИРИЙСКО-БАВИЛОНСКИХ МЕЖГОСУДАРСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ IX В. ДО Н. Э. ...	111
<b>МНКАЕЛ БАДАДЯН</b> ОТ ЭРЕБУНИ ДО КАРМИР БЛУРА. НЕКОТОРЫЕ ЗАМЕ- ЧАНИЯ ПО ОСНОВАНИЮ ГОРОДА ТЕЙШЕБАЙНИ ...	131
<b>ОВАНЕС ХОРИКЯН</b> ВОССТАЛ ЛИ ЕГИПЕТ ПРОТИВ ДАРИЯ I .....	141
<b>АРТУР МЕЛІКЯН</b> ИКОНОГРАФИЧЕСКИЙ КОМПЛЕКС ДИХАЛКОВ МИТРИ- ДАТА I АРШАКИДА ТИПА S 7.2. ....	156
<b>АРТУР МАТЕВОСЯН</b> СТУПЕНИ ИСПОВЕДАНИЯ ВЕРЫ СОГЛАСНО "ЗЛА- ТОЧРЕВУ" СВ. ГРИГОРА ТАТЕВАЦИ .....	187
<b>НОВАЯ И ПОВЕЙШАЯ ИСТОРИЯ</b>	
<b>ВАН БАЙБУРДЯН</b> ХАЧАТУР АБОВЯН КАК УЧЕНЫЙ-КУРДОЛОГ .....	206

<b>АРАМ ГАСПАРЯН</b>	
ВТОРОЙ ЭТАП КОЛОНИЗАЦИИ АЛЖИРА: ПАДЕНИЕ ГОСУДАРСТВА АБД-АЛ-КАДЕРА (1839 Г.) .....	237
<b>РУБЕН САФРАСЯН</b>	
ОСМАНСКАЯ ИМПЕРИЯ В 1871-1875 ГГ.: КРИЗИСНЫЕ ТЕНДЕНЦИИ .....	250
<b>МАРИАМ ОВСЕЯН</b>	
АРМЯНО-ТУРЕЦКАЯ ВОЙНА НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ «ЧАКАТ АМАРТ» (1920 Г.) .....	260
<b>ДАВИД БАБАЯН</b>	
ГЕОПОЛИТИЧЕСКИЕ АСПЕКТЫ ОБРАЗОВАНИЯ, СУЩЕСТВОВАНИЯ И ЭВОЛЮЦИИ НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ .....	274
<b>АЙК САМСОЯН</b>	
СПЕЦИАЛЬНЫЕ ВОЙСКА ВООРУЖЕННЫХ СИЛ СИРИЙСКОЙ АРАБСКОЙ РЕСПУБЛИКИ .....	313
<b>АРМЕН ИСРАЕЛЯН</b>	
УЧАСТИЕ АЗЕРБАЙДЖАНА В СЕПАРАТИЗМЕ В ИРАНСКОЙ ПРОВИНЦИИ АТРПАТАКАН (В ПЕРВОМ ДЕСЯТИЛЕТИИ ПРАВЛЕНИЯ ПРЕЗИДЕНТА ИЛЬХАМА АЛИЕВА) .....	357
<b>МУШЕГ ГАГРИЯН</b>	
ПРОБЛЕМА ПРИЗНАНИЯ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В АРАБСКИХ СТРАНАХ .....	375
<b>АРАКС ПАШАЯН</b>	
САУДОВСКАЯ АРАВИЯ И «АРАБСКАЯ ВЕСНА»: ОТ РЕВОЛЮЦИИ К КОНТРРЕВОЛЮЦИИ (2011-2013) .....	402
<b>АРЦРУН ОГАННЕСЯН</b>	
ПРОЯВЛЕНИЕ КОНЦЕПЦИИ СТАЙ БЛА НА БЛИЖНЕМ ВОСТОКЕ .....	425
<b>ИСТОЧНИКОВЕДЕНИЕ И ФИЛОЛОГИЯ</b>	
<b>АРТЕМ ТОНОЯН</b>	
ОТ УСТНОЙ ТРАДИЦИИ К ИСТОРИЧЕСКОЙ РЕАЛЬНОСТИ. К ВОПРОСУ О МЕСТЕ РОЖДЕНИЯ ХАГАНИ ШИРВАНИ .....	456
<b>ВАГЕ АКОПЯН</b>	
СРАВНИТЕЛЬНОЕ ОПИСАНИЕ 1713 РУКОПИСЕЙ ИНСТИТУТА ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА И 6670 РУКОПИСЕЙ УНИВЕРСИТЕТА КОРОЛЯ САУДА .....	474

<b>КРИСТИНЕ КОСТИКЯН</b>	
ПЕРСИДСКИЕ ДОКУМЕНТЫ МАТЕНАДАРАНА ОБ АР- МЯНСКИХ КУПЦАХ АГУЛИСА XVII ВЕКА .....	488
<b>АРМАНУШ КОЗМОЯН</b>	
ОЧЕРК ОСНОВНЫХ ТЕНДЕНЦИЙ РАЗВИТИЯ ИРАНСКО- ГО ИСКУССТВА (XIX-XX ВВ.) .....	517



## CONTENTS

<b>HISTORY OF THE ANCIENT AND MIDDLE AGES</b>	
<b>MARIAM KHANZADYAN</b>	
STATICS AND DYNAMICS: IDEAS OF TIME AND LINEAR DEVELOPMENT OF HISTORY IN ANCIENT NEAR EAST. PART I .....	16
<b>ANNA AZIZYAN</b>	
ABOUT ONE STONE STATUETTE FOUNDED FROM SHENGAVIT SETTLEMENT .....	49
<b>HASMIK HMAYAKYAN</b>	
CONNECTION OF DEER AND THE SUN CULT IN CULTURES OF ARMENIA AND ASIA MINOR .....	60
<b>ROBERT GHAZARYAN</b>	
THE ROLE OF WOMEN IN AŠŠUR-KANEŠ INTERNATIONAL TRADE .....	78
<b>ARAM KOSYAN</b>	
THE EUPHRATIAN CONTACT ZONE IN THE II MILLENNIUM BC (ON THE EXAMPLE OF ISUWA) .....	95
<b>RUSLAN TSAKANYAN</b>	
THE REBELLION OF AŠŠUR-DA'IN-APLU IN THE CONTEXT OF ASSYRIAN-BABYLONIAN INTERSTATE RELATIONS OF THE IX CENTURY B.C. ....	111
<b>MIQAEL BADALYAN</b>	
FROM EREBUNI TO KARMIR BLUR. SOME REMARKS ON THE ESTABLISHMENT OF THE CITY OF TEIŠEBAINI .....	131
<b>HOVHANNES KHORIKYAN</b>	
DID EGYPT REVOLT AGAINST DARIUS I? .....	141
<b>ARTHUR MELIKYAN</b>	
THE ICONOGRAPHICAL COMPLEX OF THE S 7.2 TYPE DICHALKOUSES OF MITHRIDATES I ARSACID .....	156
<b>ARTHUR MATEVOSYAN</b>	
THE DEGREES OF THE CONFESSION OF FAITH ACCORDING TO THE "GOLDEN BELLY" OF ST. GREGORY OF TATEV .....	187
<b>MODERN AND CONTEMPORARY HISTORY</b>	
<b>VAHAN BAYBURDYAN</b>	
KHACHATUR ABOVYAN AS A SCHOLAR KURDOLOGIST ..	206

<b>ARAM GASPARYAN</b>	
THE SECOND ERA OF THE COLONIZATION OF ALGERIA: THE FALL OF ABD EL-KADER'S STATE (1839) .....	237
<b>RUBEN SAFRASYAN</b>	
OSMANISCHES REICH IN DEN JAHREN 1871-1875: DIE KRISENTENDENZEN .....	250
<b>MARIAM HOVSEPYAN</b>	
ARMENIAN-TURKISH WAR ON THE PAGES OF "CHA- KATAMART" (1920) .....	260
<b>DAVID BABAYAN</b>	
GEOLOGICAL ASPECTS OF FORMATION, EXISTENCE AND EVOLUTION OF NAGORNO KARABAGH AUTONOMOUS REC	274
<b>HAYK SAMSONYAN</b>	
SPECIAL TROOPS OF THE ARMED FORCES OF THE SYRI- AN ARAB REPUBLIC .....	313
<b>ARMEN ISRAYELYAN</b>	
AZERBAIJAN'S INVOLVEMENT IN THE STIRRING SEPARATISM IN THE ATROPOTANE PROVINCE OF IRAN (DURING ILHAM ALIEV'S 1 <sup>ST</sup> DECADE OF RULE) .....	357
<b>MUSHEGH GHAHRIYAN</b>	
THE PROBLEM OF ARMENIAN GENOCIDE RECOGNITION IN THE ARAB COUNTRIES .....	375
<b>ARAKS PASHAYAN</b>	
THE SAUDI ARABIA AND THE "ARAB SPRING": FROM REVOLUTION TO COUNTERREVOLUTION (2011-2013) .....	402
<b>ARTSRUN HOVHANNISYAN</b>	
THE MANIFESTATION OF CONCEPTS OF UAV SWARMS AND CLUSTERS IN THE MIDDLE EAST .....	425
<b>SOURCE STUDY AND PHILOLOGY</b>	
<b>ARTYOM TONYAN</b>	
FROM ORAL TRADITION TO HISTORICAL REALITY: ON THE CASE OF KHAQANI ŠIRWANI'S BIRTHPLACE .....	456
<b>VAHÉ HAKOBYAN</b>	
COMPARATIVE DESCRIPTION BETWEEN THE 1713 MANUSCRIPT KEPT AT THE MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS (MATENA- DARAN) AND THE 6770 MANUSCRIPT KEPT AT THE KING SAUD UNIVERSITY .....	474

<b>KRISTINE KOSTIKYAN</b> THE PERSIAN DOCUMENTS OF THE MATENADARAN ABOUT THE ARMENIAN MERCHANTS OF AGULIS IN XVII CENTURY .....	488
<b>ARMANUSH KOZMOYAN</b> A REVIEW OF MAJOR TRENDS IN THE DEVELOPMENT OF IRANIAN ART (XIX-XX CENTURIES) .....	517

---

---

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ԴԱՏՄՈՒԹՅՈՒՆ

---

---

---

---

ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

---

---

---

---

HISTORY OF THE ANCIENT AND MIDDLE AGES

---

---

ՄՏԱՏԻԿԱՆ ԵՎ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԾԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ. ՄԱՍ Ի՞

ՄԱՐԻԱՄ ԽԱՆԶԱԴՅԱՆ

**Բանալի բառեր՝** պարմության գծային զարգացում, պարմության ցիկլային զարգացում, վաղ պեւրսկանություն, Հին Եգիպտոս, առասպել, առասպելամրաժողություն, ժամանակի մասին պարկերացումներ, Մանեթոն:

Հոդվածում քննարկվում է ժամանակի և պարմության մասին պարկերացումների զարգացումը հինարեւելյան՝ եգիպտական, միջագետքյան (շումերա-աքքադական, բաբելոնական, ասորեստական), խեթա-խուտիական աշխարհագրական համակարգերում, զրադաշտական և հուդայական կրոններում: Պարմության գծային զարգացման գաղափարը սկսում է ծնավորվել ժամանակի մասին ցիկլային պարկերացումների ներսում՝ իր փրամարանական ավարտին հասնելով առաջին կրոնական համակարգերում՝ հուդայականության և զրադաշտականության մեջ: Հոդվածի առաջին մասը նվիրված է առասպելամրաժողությանը և ժամանակի մասին պարկերացումների եգիպտական փարբերակին:

Ժամանակը և տարածությունը՝ արիստոտելյան «բանականության կատեգորիաները», մտածողությունը պարփակող անուր շրջանակներն են՝ ժամանակի գաղա-

\* Հոդվածը ներկայացվել է 13.07.2020: Գրախոսվել է 13.08.2020:

<sup>1</sup> Диорксейм 1998: 184.

փարը փոխկապակցված է տարածության, պատճառա-  
կանության, ճակատագրի և նման համապարփակ հաս-  
կացությունների հետ, և այդ փոխկապակցվածությունը  
ձևավորում է աշխարհի յուրատեսակ մոդել կամ «կոոր-  
դինատների ցանց», որի միջոցով մարդիկ ընկալում են  
իրականությունը և կառուցում աշխարհի՝ իրենց գիտակ-  
ցության մեջ գոյություն ունեցող պատկերը<sup>2</sup>:

Հոլվաժի շրջանակներում մենք կքննարկենք հին-  
արևելյան հասարակություններում (եգիպտական, միջա-  
գետյան՝ շումերա-աքքադական, ասորեստանյան, քա-  
բելոնյան, իսթա-խուտիական աշխարհատեսական հա-  
մակարգերում, զրադաշտական և հուդայական կրոն-  
ներում) **ժամանակի** մասին պատկերացումների և **գծա-  
յին զարգացման** գաղափարի առաջացման և ծավալ-  
ման հարցը:

Հինարևելյան դարաշրջանն առաջին պետականու-  
թյունների և զրոյից ձևավորվող արխայիկ աշխարհատե-  
սական համակարգերի առաջացման շրջանն է: Արխայիկ  
մարդուն բնորոշ աշխարհատեսական համակարգը գի-  
տության մեջ ստացել է **առասպելամտաճողություն** բնու-  
րոշումը: Սոցիոլոգիական գիտությունների զարգացմանը  
զուգահեռ ձևավորվել են առասպելամտաճողության  
ուսումնասիրման բազմաթիվ դպրոցներ, որոնցից առա-  
ջինը է. Դյուրկհեյմի **«կոլեկտիվ պատկերացումների»**  
հայեցակարգն էր: Առասպելամտաճողությունը (Դյուրկհեյ-  
մի ձևակերպմամբ՝ արխայիկ կամ նախնադարյան հա-  
մայնքի կոլեկտիվ մտաճողությունը) նա դիտարկում էր որ-  
պես տարրական կրոն, մարդու պատկերացումների առա-

<sup>2</sup> Гуревич 1999: 33-34.

զին՝ մանկական համակարգ<sup>3</sup>։ «Կոլեկտիվ պատկերացումները արդյունք են հսկայական կոոպերացիայի, որը ծավալվել է ոչ միայն ժամանակի, այլև փարածության մեջ, այդ պատկերացումները սրեղծելու համար փարաքնույթ ուղեղների անհաշվելի բազմությունը միավորել, միախառնել, զուգակցել է սեփական գաղափարներն ու զգացմունքները, սերունդների երկար շարքերն այդ պատկերացումներում կուրակել են իրենց գիրելիքներն ու փորձը»<sup>4</sup>։

Դյուրկեյնյան սոցիոլոգիական դպրոցի հետևորդ Լյուայն Լևի-Քլյուզն առաջարկեց *état prélogique* (նախատրամաքանական մտածողություն) հասկացությունը։ Նա գտնում էր, որ նախնադարյան մտածողության միտվածությունն այլ է. այնտեղ, որտեղ մենք փնտրում ենք երկրորդական պատճառներ և կայուն նախորդող պատճառներ (անտեցեդենտներ), նախնադարյան մտածողությունը ուշադրություն է դարձնում քացառապես միտիկ պատճառներին, որոնց ներգործությունը զգում է ամենուր։ Մեզ համար անընդունելի հակասությունները նախնադարյան մտածողության համար նշանակություն չունեն։ Դա է պատճառը, որ այժմյան մտածողության հետ համեմատած՝ նախնադարյան մտածողությունը նախատրամաքանական<sup>5</sup> է (նաև միտիկական, նախատրամաքանականն ու միտիկն ավելի շուտ միևնույն հիմնական հատկության երկու կողմերն են, քան ինքնուրույն որակներ, պատկերացումների բովանդակության տեսակետից այն միտիկ է, ասոցիացիաների տեսակետից՝ նախատրամաքանական<sup>6</sup>)։<sup>7</sup>

<sup>3</sup> Дюркгейм 1998: 183.

<sup>4</sup> Լույն տեղում, 193:

<sup>5</sup> Лесс-Брюль 1980: 132.

<sup>6</sup> Լույն տեղում, 138-139:

Անի-Բրյուսի *état prélogique* հասկացությանն արձագանքեց աներիկացի հետազոտող Ֆ. Բոսաը *The Mind of Primitive Man* աշխատությամբ (1911 թ.), որտեղ նա պնդում էր, որ մարդկության բնույթը, հոգեկանն ու մտավոր ունակությունները միասնական են, իսկ մշակութային զարգացման մակարդակը պայմանավորված է մշակութային պայմաններով, այլ ոչ թե տարբեր ուսաների ունակությունների բնական տարբերություններով<sup>7</sup>: Իր բացասական կարծիքը հայտնեց նաև Կ. Յունզը՝ ընդգծելով, որ «...չկա ապացույց այն բանի, որ նախնադարյան մարդը մտածում, զգում կամ ընկալում է սկզբունքորեն այլ կերպ, քան մենք»<sup>8</sup>: Ավելին, Յունզը համեմատեց նախնադարյան մարդու պատկերացումները ժամանակակից մատերիալիստական հայացքների հետ. երկու աշխարհատեսություններում էլ անհատը ներկայանում է որպես *արդյունք*, առաջին դեպքում՝ բնական պատճառների հետևանք, երկրորդ դեպքում՝ նախակերտ, պարզունակ հասարակությունում, կամայական իրադարձությունների հետևանք: Երկու դեպքում էլ մարդկային անհատականությունն արտաքին միջավայրի

<sup>7</sup> Անի-Բրյուսը հավելում է, սակայն, որ *état prélogique* հասկացությունը բնավ չի նշանակում, որ մարդկությունը մտածողության երկու ձևեր է ունեցել, որոնցից մեկը՝ նախատրամաքանականը, նախորդել է տրամաքանականին, որ նախատրամաքանականը հակատրամաքանական է կամ ալոգիկ, որ նախատրամաքանական և տրամաքանական մտածելակերպը միմյանցից բաժանված են խուլ պատով: «Նախատրամաքանական» եզրույթը նշանակում է, որ կան տարբեր մտածողական կատյուններ, որոնք կարող են գոյություն ունենալ միևնույն հասարակության և հաճախ միևնույն գիտակցության մեջ: Տե՛ս *Лесс-Боса. 1980*: 132, 138.

<sup>8</sup> *Боса 1926*: 13-14, *Костин 2014*: 319.

<sup>9</sup> *Юнг 1930*, օնլայն տարբերակը՝ [http://peyliv.org.ua/books/\\_yungk02.htm](http://peyliv.org.ua/books/_yungk02.htm)



գործող սուբստանցիաների պատահական արդյունք է: «Քանն այն է, որ մարդկության նախնադարյան մրցքերից փիլիսոփայական համակարգ անհնար է բխեցնել, այլ կարելի է դուրս հանել միայն անտրինոմիաներ, որոնք սակայն բոլոր ժամանակներում և բոլոր մշակույթներում կազմում են հոգևոր պրորիենստրիկայի անսպառ հիմքը»<sup>10</sup>:

Իր հայեցակարգն առաջարկեց նաև Կարլ Յասպերսը: Նա առանձնացրեց աշխարհատեսության (*Ein Bild des Ganzen*) մի քանի ձևեր՝ առասպելներ թեոգոնիաներով և կոսմոգոնիաներով, այնուհետև աշխարհի քաղաքական ճակատագրերը կանխորոշող աստվածային գործերի շարան և, վերջապես, պատմության ամբողջական ընկալում՝ աշխարհաստեղծումից մինչև ահեղ դատաստան<sup>11</sup>: Պատմական գործընթացը, ըստ Յասպերսի, միասնական բնույթ ունի. այն ընթացք է, որն ունի սկիզբ և վերջ, իմաստային ավարտ, եզրափակում<sup>12</sup>: Առասպելական աշխարհատեսությունը, ըստ Յասպերսի, սահմանափակ է, դանդաղ ընթացող, մարդն ինքն իրեն չի գիտակցում և, հետևաբար, չի ճանաչում<sup>13</sup>: Այն մարդու՝ նախապատմական շրջանում ձևավորված էությունական հիմքն է<sup>14</sup>:

Յասպերսը առասպելամտածողության գերակայության ավարտի նոր հայեցակարգ առաջարկեց: Եթե եվրոպական պատմափիլիսոփայությունը որպես պատմական զարգացման մեկնակետ դիտարկում էր Քրիստոսի

<sup>10</sup> **ICM** 1930, օնլայն տարբերակը՝ [http://psylib.org.ua/books/\\_yungk02.htm](http://psylib.org.ua/books/_yungk02.htm)

<sup>11</sup> **Jaspers** 2017: 13.

<sup>12</sup> **Гайденко** 1991: 21-22.

<sup>13</sup> **Jaspers** 2017: 20.

<sup>14</sup> **Jaspers** 2017: 42.

հայտնվելը՝ հեզելյան «համաշխարհային պատմության առանցք» բնորոշումով<sup>15</sup>, ապա Յասպերսը «*Achsenzeit*», «*Achse der Weltgeschichte*» (առանցքային ժամանակ)<sup>16</sup> է համարում մ.թ.ա. 800-200 թթ.<sup>17</sup>: Ըստ Յասպերսի՝ սա այն շրջանն է, երբ մարդկությունն առասպելամտածողությունից անցնում է տրամաբանական մտածողության, առասպելից՝ լոգոսի<sup>18</sup>, երբ միմյանցից հեռու և միմյանցից տարբերվող մշակույթներում ի հայտ են գալիս խորհրդածական հոգևոր կյանքի ակտիվ օջախներ<sup>19</sup>. սա հունական պոլիսի կայացման, փիլիսոփայության առաջացման, հինկտակարանյան մարգարեների և այլնի շըր-

<sup>15</sup> Դալենկո 1991: 22.

<sup>16</sup> Սակայն անհրաժեշտ է նշել, որ Յասպերսի այս տեսությունը 2018 թվականին լուրջ վերանայման է ենթարկել Յան Ասսմանը իր *Achsenzeit. Eine Archeologie der Moderne* աշխատության մեջ. որտեղ նա վերհանում է Յասպերսի տեսության հենքը՝ Ալեքստայի առաջին եվրոպացի թարգմանիչ Արթահամ Անկետիլ-Դյուպերոնից սկսած մինչև Ռոբերտ Բելլա (ամբողջ աշխարհի համար համընդգրկուն, համապարփակ պատմության, եվրոպայում զրադաշտականության և կոնֆուցիականության ճանաչման փուլերով հանդերձ)՝ եզրահանգելով, որ «առանցքային ժամանակ» եզրույթն այս պահին պատմափիլիսոփայության, այլ ոչ թե իրական պատմության հետ պետք է զուգորդել և անհրաժեշտ է խուսափել պատմության նորմատիվ փուլազատումից: Ցավոք, գիրքն ամբողջությամբ համացանցում գտնելը դժո անհնար է, կան միայն րովանդակությունը և նախաբանի մի մասը (<https://d-nb.info/1161477306/04>), այդ պատճառով ստիպված էինք առաջնորդվել երկու գրախոսությանը՝ **Schnurer «Jan Assmann: Achsenzeit»** <https://www.socialnet.de/rezensionen/25040.php> և **Horyna «ASSMANN, Jan: Achsenzeit. Eine Archeologie der Moderne»** գրախոսությանը *Filozofia* (April 2019) արցանց ամսագրում՝ [https://www.sav.sk/index.php?lang=en&doc=journal-list&part=article\\_response\\_page&journal\\_article\\_no=16827](https://www.sav.sk/index.php?lang=en&doc=journal-list&part=article_response_page&journal_article_no=16827).

<sup>17</sup> *Jaspers* 2017: 17-18.

<sup>18</sup> Լոյսի տեղում:

<sup>19</sup> Դալենկո 1991: 23.

զանն է: Հենց «ստանդային շրջանի» մարզարեններին է Յասպերսը վերագրում անհատականության սրված ինքնագիտակցումը և քարոյագիտական այն պաթոսը, որը մեծամասամբ խզում է կապը ծեսի և պաշտամունքի հետ և թույլ է տալիս մարզարենների մեջ տեսնել փիլիսոփայական հավատքի նախակարապետներին<sup>20</sup>:

Տասնամյակներ անց ֆրանսիացի ստրուկտուրալիստները Կլոդ Լևի-Ստրոսի գլխավորությամբ, վերանայելով Լևի-Քրյույի տեսակետներն ազգագրական նոր նյութի հիման վրա, սկզբունքորեն հրաժարվեցին *état prélogique* արտահայտությունից՝ հակադրելով դրան պատմական զարգացման բոլոր փուլերում մարդկային բանականության միասնականության օրենքը<sup>21</sup>. «Առասպելամրաժողության մեջ գործում է նույն տրամաբանությունը, որը գործում է նաև գիտական մրաժողության մեջ. մարդը միշտ հավասարապես լավ է մրաժում»<sup>22</sup>:

Ոնչևէ, առասպելամտածողության և լոգոսի (քննական մտածողության) դեպքում տրամաբանությունը և՛ այստեղ, և՛ այնտեղ նույնն է. առասպելամտածողությունը սպեցիֆիկ է, առանձնահատուկ, քայց ոչ անտրամաբանական. մարդ տեսակի մտավոր ունակությունները և մտածելաձևը թե՛ *տրաժամանակյա*, թե՛ *համաժամանակյա* հարթություններում նույնն են<sup>23</sup>:

Կարող ենք համարել առասպելամտածողությունն ու քննական մտածողությունը ֆիզիկայի հետ: Կա նյութոն-

<sup>20</sup> Гайденко 1991: 23; Рахманинова 2014, օնլայն  
<https://ruivers.ru/philosophy/logosphere/477038/>

<sup>21</sup> Дарган 1987: 13.

<sup>22</sup> Левин-Стросс 1972a: 207.

<sup>23</sup> Ст'ю Жюль 1988, օնլայն  
[http://armades.info/other/small/mifitnysl.htm#\\_ftoref1](http://armades.info/other/small/mifitnysl.htm#_ftoref1)

յան ֆիզիկա՝ իր օրենքներով և էյնշտեյնյան՝ իր օրենքներով: Երկու դեպքում էլ գործ ունենք ֆիզիկայի հետ, բայց ելակետային առումով տարբերվող պայմաններով:

Որո՞նք են այդ դեպքում առասպելամտածողության ելակետային պայմանները:

*Առաջին նախապայմանն արխայիկ մարդու գիտակցության մակարդակն է, անհատական գիտակցությունը դեռ չի առանձնացել միջավայրից՝ թե՛ բնական, թե՛ սոցիալական շրջակա աշխարհից<sup>24</sup>, կերպարն ու առարկան, սուրյեկտիվն ու օբյեկտիվը դեռ տարանջատված չեն: Եվ որպես հետևանք՝ այն տրամաբանության տեսակետից դիֆուզային է և չմասնատված: «Արխայիկ առասպելաբանության մեջ ամեն ինչը փարբեր է ամեն ինչից, և նաև անցնում է մեկը մյուսին, ամեն բան կարող է վերածվել ամեն բանի, ... ներառյալ առարկաների սուբստանցիաները»<sup>25</sup>:*

Արխայիկ պարճատահերևանքային կապը հակապարճատական (*антимагический*) բնույթ ունի. մի միտքը կրկնվում է մյուսով, մի կերպարը՝ մեկ այլով, նրանց ձևերի տարբերությունը ստեղծում է թվացյալ քազմազանությունը<sup>26</sup>, մետոնոմիկ կապերն ընկալվում են որպես լիահավասար պատճառական կապեր (օր.՝ խուսափում են մարդու մազերը կամ եղունգները վերացնելուց, որ չսպանեն դրանց կրողին)<sup>27</sup>, առարկայի ծագումն ընկալվում է որպես առարկայի էություն<sup>28</sup>, և տիեզերաբանական հարցերն էլ մեծամասամբ տիեզերքի այս կամ այն

<sup>24</sup> Токарев, Мелетинский 1991: 13.

<sup>25</sup> Лосев 1991: 35.

<sup>26</sup> Фрейдзенберг 1998: 29.

<sup>27</sup> Дьяконов 1983: 98.

<sup>28</sup> Токарев, Мелетинский 1991: 13.

մասերի ծագման մասին պատումներ են<sup>29</sup>։ Սա առարկայական-զգացմունքային, կերպարային մտածողություն է, որում վերացական հասկացությունները թույլ են զարգացած<sup>30</sup>։ Այն բազմասեննանտիկ է, մետաֆորիկ և խորհրդանշական<sup>31</sup>։

*Առասպելամտածողության մեջ անցյալն ու ներկան միախառնված են*։ Արխայիկ մշակույթի առաջընթաց շարժումը հենվում է վերապրածի և անցածի վրա, որոնք նորի և արդիականի պարապայում մնում են չհաղթահարված<sup>32</sup>։ Այս «ծուղակի» մեջ կրնկնեն նաև եզրիտական պատմագրությունը և բարեղության աշխարհատեսությունը. երկուսն էլ չեն կարողանա հաղթահարել իրենց փառավոր անցյալը։

Արխայիկ մարդը թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգով խորատուզված է մի աշխարհի մեջ, որի լույ մի մասն է, ոչ թե տերը, նրա կենդանաբանական դասակարգման գազաթնակետը homo sapiens-ը չէ<sup>33</sup>։

Այնուամենայնիվ, նույնիսկ այս վիճակում մարդկային ուղեղը փորձում է ընդհանրացնել և համակարգել, կառուցել քիներ հակադրությունների համակարգ, որը ներառում է տարածության կառուցվածքը (վերև-ներքև, երկինք-երկիր), ժամանակային կոորդինատները (օր-գիշեր, ամառ-ձմեռ), ինչպես նաև քնական և մշակութային-սոցիալական հարթությունների ծայրակցատեղերում գտնվող հակադրությունները (նախնիներ-հետնորդներ,

<sup>29</sup> Мелетинский 1972: 159.

<sup>30</sup> Вайнберг 1986: 46.

<sup>31</sup> Куненос 2007: 333.

<sup>32</sup> Фрейдзенберг 1998: 29.

<sup>33</sup> Юнг 1930, տվյալն տարբերակը՝ [http://peylib.org.ua/books/\\_yungk02.htm](http://peylib.org.ua/books/_yungk02.htm)

յուրայիններ-օտարներ և այլն)<sup>34</sup>:

*«Յուրացանցյուր մարդ, սկսած նախնադարյան մարդուց, գործելով կենսաբանական, աշխարանքային, սոցիալական ուժերի համակարգում, ակամայից բեկում է դրանք իր ամբողջ կենսաբանական, արտադրական և հասարակական բնույթով, և այդ բեկումների արդյունքն է դառնում առասպելը՝ աշխարհի վաղնչագույն հալեփն»<sup>35</sup>:*

Առասպելը լեզու է, բայց այդ լեզուն գործում է աննարարձր մակարդակով, որտեղ իմաստին հաջողվում է անջատվել իրեն ստեղծած լեզվական հիմքից<sup>36</sup>, այլ կերպ ասած՝ արխայկ մարդը, համակցելով լեզվական միջոցները և պատմական պատահականությունները<sup>37</sup>, ստեղծում է որոշակի խորհրդանշական լեզու, որի եզրույթներով էլ մեկնաբանում է ինքն իրեն<sup>38</sup>:

Առասպելանտաճողության շրջանակներում ապրող հանրույթի համար բնական է հասարակագիտական և կրոնական հայեցակարգերի միասնականությունը: Եվ տվյալ կրոնական համակարգը, որի առանձնահատկություններն իրենց հերթին հստակ սոցիալական և աշխարհագրական պատճառներ ունեն, ի հայտ է բերում պատմական գործընթացի իր ուրույն ընկալումը, որը նաև սերտաճած է անդրշիրիմյան կյանքի պատկերացումների հետ: Փորձենք այդ տարբերությունները ցույց տալ ժամանակի մասին պատկերացումների օրինակով:

#### ***Ժամանակը առասպելանտաճողության մեջ***

<sup>34</sup> Топоров 1991: 162.

<sup>35</sup> Фрейдзенберг 1998: 143.

<sup>36</sup> Левин-Стросс 1972a: 187.

<sup>37</sup> Левин-Стросс 1972b: 28.

<sup>38</sup> Токарев, Мелетинский 1991: 14.

Ժամանակի զաղափարի առաջացումն ինքնին հետաքրքիր երևույթ է, և այն պետք է պայմանավորված լինի Նախնադարյան մարդու կենսական կարևորություն ունեցող զգացողություններով:

Ժամանակի և տարածության մասին պատկերացումների ձևավորման պատմությունն անցել է երկու փուլ, սկզբնապես հիշողության մեջ արձանագրվել է ժամանակի ընթացքը, որն արտահայտվել է ցերեկ-գիշեր, տարվա եղանակների, երկնային լուսատուների դիրքերի հերթազալությամբ: Այս պահին ժամանակի զգացողությունը մարդու հարմարվելն է բնական միջավայրին<sup>39</sup>:

Ֆրանսիացի փիլիսոփա և սոցիոլոգ Ժ.-Մ. Գյույոն (Jean-Marie Guyau) դեռ XIX դ. վերջերին առաջարկել էր ժամանակի զաղափարի ձևավորման հետաքրքիր հայեցակարգ. Նախնադարյան մարդը ժամանակը պետք է ընկալեր տարածական կերպով՝ ստիպված լինելով մտային վերացարկմամբ մեկ զծի տարբեր հատվածներում դասավորել միմյանց հաջորդող իրադարձությունները: Այլ կերպ ասած՝ ժամանակը պատկերացնելու համար մարդը տարածական պատկերների շարքի կարիք ուներ<sup>40</sup>:

Գյույոյի վարկածը, ըստ որի՝ ժամանակի մարդկային ընկալման հիմքում ընկած են տպավորությունների կուտակումը և հեռանկարի առաջացումը, լրացվում է մարդաբանների այն տեսակետով, որ Homo sapiens-ի ճակատային հատվածների հսկայական զարգացումը կարող էր սերտ կապ ունենալ նրա՝ ապագա իրադարձություններին հարմարվելու աճող ունակության և առաջ

<sup>39</sup> Бэгр 1987: 8.

<sup>40</sup> Гюйо 1899: 24.

նայելու միտման ձևավորման հետ<sup>41</sup>:

Զարգացման հաջորդ փուլում ժամանակ-տարածություն կապերը սկսում են ակտիվ կիրառվել՝ առարկայական-գործնական գործունեությունը կազմակերպելու համար: Որոշիչ նշանակություն են ձեռք բերում արտադրության ձևերի զարգացումը և այս ամենի հիմքի վրա իր ապրումները վերլուծելու ընդունակության ձևավորումը: Ժամանակի մասին պատկերացումները սկսում են ձեռք բերել տվյալ ձևավորվող մշակույթին բնորոշ ձևեր. մշակույթը ոտք է դնում ինքն իրեն՝ իր տարբերվող առանձնահատկություններով ճանաչելու երկարատև և դժվար ճանապարհի վրա, այսինքն՝ ճանաչում է ինքն իրեն պատմության աշխարհում տարածական-ժամանակային կողմնորոշման միջոցով: Միայն այս դեպքում պատմական գիտակցության տիեզերաբանական, նատուրալիստական և այլ ձևեր կփոխարինվեն պատմական գիտակցության բուն պատմական ձևով<sup>42</sup>:

Ժամանակի տարածական ընկալմանը զուգընթաց ձևավորվում է **ռիթմի** զգացողությունը, որը հիմնարար նշանակություն ունի թե՛ ժամանակի, թե՛ խոսքի զարգացման համար<sup>43</sup>: Աստիճանաբար գոյանում են որոշ ժամանակային ասոցիացիաներ, որոնք ժամանակը բաժանում էին ինտերվալների, ինչպես տակտը՝ երաժշտության մեջ (վերոնշյալ բինար հակադրությունների շարքից): Եվ մարդկային ուղեղի համար դեռ շատ երկար ժամանակը բնորոշվելու է ոչ թե իր տևողությամբ, ուղղվածությամբ ու անդառնալիությամբ, այլ կրկնողությամբ ու համաժամանակությամբ՝ **«առասպելական**

<sup>41</sup> Yampoy 2003: 72.

<sup>42</sup> Бобр 1987: 8.

<sup>43</sup> Yampoy 2003: 75.



**Ժամանակի»** առանձնահատկություններով<sup>44</sup>. «Ժամանակի կարեգորիայի հիմքում սոցիալական կյանքի դիթամն է, բայց եթե կա կոլեկտիվ կյանքի դիթամ, ապա կարելի է համոզված լինել, որ նման դիթամ կա և՛ անհատի կյանքում, և՛ ավելի լայն առումով՝ Տիեզերքում: Առաջինն ընդամենն ավելի երևացող է և ակնհայտ»<sup>45</sup>:

Ռիթմը կրկնություն է, որում արտահայտվում է կինետատիկ խթանման և ինքնապահպանման միտումը: Ռիթմի զգացողության բարձր զարգացածությունը թույլ է տալիս հանրության գործել ներդաշնակ մեխանիզմի պես՝ պատերազմելու կամ որսի դուրս գալու պարագայում:

«Այս փոլում ժամանակի և փարածության ընկալման էական առանձնահատկությունը նաև այն է, որ մարդու զիրակցության մեջ դրանք ոչ թե չեզոք կորդինատներ են, այլ հզոր փարօրինակ ուժեր, որոնց կառավարման ներքո է ամեն ինչ՝ առարկաները, մարդկանց կյանքը և նույնիսկ աստվածները: Այդ իսկ պարճատով նրանք զգացմունքային-արժեքային լցվածություն ունեն. թե՛ ժամանակը և թե՛ փարածությունը կարող են լինել բարի ու չար, սակրալ ու սովորական և այլն»<sup>46</sup>:

Եվ այսպես՝ արխաիկ մարդու ժամանակի ընկալումները սպեցիֆիկ են. նախ՝ ժամանակին բնորոշ է **դիթամայնություն և մշտական վերադարձի զգացողություն**: Ժամանակն այստեղ կարող է լինել նախնական կամ նախաժամանակ՝ սակրալ ժամանակ, երբ աստվածները (արարիչները, մշակութային հերոսները) ստեղծում են աշխարհիս ներկա վիճակը՝ սկզբնաառարկաների, սկզբնագործողությունների և սկզբնաարարման ժամա-

<sup>44</sup> Утроп 2003: 75.

<sup>45</sup> Дюркгейм 1998: 198 (ср. № 24).

<sup>46</sup> Гуревич 1999: 47–48.

նակը, որին կհաջորդի իրական էմպիրիկ իրադարձությունների՝ պրոֆանային ժամանակը, ինչն էլ արտացոլված է տիեզերաստեղծական, մարդաստեղծական և ծագումնաբանական առասպելներում<sup>47</sup>:

*«Նախնական առասպելական ժամանակն առասպելաբանական մրբի շար կարևոր կարեգորիա է: Այն հարացուցային գործառույթ ունի և հերազայում առաջացողի աղբյուրն է ու նախապարճառը: Դա նախնիների, մշակութային հերոսների, առաջին առարկաների, տիեզերական և սոցիալական կարգի հաստատման ժամանակն է: Ավելի ուշ առասպելներում այն կվերածվի ոսկյա կամ հերոսական դարաշրջանի»<sup>48</sup>:*

Ժամանակ/հաստատված կարգուկանոն – պրոֆանային ժամանակ զծային հայեցակարգը միաժամանակ լրացվում է ցիկլային փուլերով կամ վերածում ցիկլային փուլերի՝ էպոսի, ծեսերի և այլնի միջոցով անընդհատ վերարտադրելով, կապ պահելով, ծեսերով մոզական ուժերը պարբերաբար ակտիվացնելով՝ բնության և հասարակության կարգը պահելու համար:

Հիշողության (առասպելական) ֆիզիոլոգիան<sup>49</sup> պետք է մարմնավորված լինեն որոշակի տարածության մեջ և արդիականացվեն որոշակի ժամանակի մեջ, այսինքն՝ նրանք միշտ որոշակի են ժամանակի և տարածության մեջ, թեև ոչ միշտ աշխարհագրական կամ պատմական

<sup>47</sup> Мелетинский 1991. 252-253.

<sup>48</sup> Мелетинский 2011, օնլայն՝ <https://emiliya.org/article/mifologicheskoe-myshlenie-kategorii-mifov-em-meletinskii.html>

<sup>49</sup> «Под «фигурами воспоминания» мы подразумеваем, напротив, культурно сформированные, общественно обязательные «образы воспоминания» и предпочитаем понятие «фигуры» понятию «образы» потому, что оно может относиться не только к исторической, но, например, и к нарративной форме», Ассман 2004. 39.

ինաստով: Քանի որ կոլեկտիվ հիշողությունները հստակ ուղղորդված են, ստեղծվում են քյուրեղացման կետեր: Հիշողությունները բովանդակում են ժամանակի ցուցիչը և՛ այն պատճառով, որ կապված են հնագույն ու արտա- ուղ իրադարձությունների հետ, և՛ այն պատճառով, որ հիշողությունը ռիթմիկ քնույթ ունի: Օրինակ, տոների տարեկան շրջանն արտադրում է կոլեկտիվ վերապրած ժամանակը, լինի դա քաղաքացիական, կրոնական, գյու- ղացիական կամ ռազմական տոմարը<sup>50</sup>, ինչպես օրինակ՝ եգիպտոսում Օսիրիսի վերածնունդը կամ Միջագետքում Դոմուգիի և Ինաննայի՝ դժոխքից վերադարձի տոնը<sup>51</sup>:

Նույն միտումը պահպանվել է քարձրագույն առա- պելարանական համակարգերում՝ զրադաշտականու- թյունից մինչև քրիստոնեություն: «Աշխարհարեսական ճգնաժամի մեջ գրեմվելով և անկում ապրելով, բայց լի- նելով սրբացված (քրմականացված) և անշարժ քաղա- քակրթություն՝ եգիպտացի, քարեդրնացի, փյունիկեցի և հուդայական մրավորականները հերիայացք գցեցին նախնական ժամանակներին: Էվկլիդեսի և Արքիմեդի ժամանակակիցները լինելով՝ նրանք խոսում էին Աբրա- համից և Օանեսից»<sup>52</sup>:

<sup>50</sup> **Assman 2004**: 39-40.

<sup>51</sup> **Cohen 1993**: 474.

<sup>52</sup> **Bickerman 1988**: 218, Oanes անունով առասպելական կերպարի մասին տեղեկությունները պահպանվել են Բերոսոսի «Բաբելո- նական պատմության» մեջ: Այն կրկնակի՝ մարդու և ձկան գլխով ու մարդու և ձկան մարմնով էակ էր, որը մարդկանց սովորեցրեց գիր ու մաթեմատիկա, սովորեցրեց նաև ապրել քաղաքներում, օրենքներ հաստատել, տաճարներ հիմնել և այլն: Հայերեն և լատիներեն տա- րբերակներում՝ «ովան», «oane»: Տե՛ս **Նաների Պամփիլեայ Կեսարացույ** ժամանակակառք երկմասնեայ, Մասն Ա, էջ 10 (օելայն՝ էջ 43), [http://greenstone.flib.sci.am/gsdll/collect/ambook/books/evsebi1818\\_index.htm](http://greenstone.flib.sci.am/gsdll/collect/ambook/books/evsebi1818_index.htm)

### **Ժամանակ և պերականություն**

Հիշողության և ժամանակի զգացողության զարգացման համար մեծ նշանակություն ունի կենտրոնացված իշխանության՝ պետականության ձևավորումը:

Պետության ձևավորած վարչակարգը ժամանակի հետ կիրառական հարաբերություններ է հաստատում. ժամանակն այստեղ պրակտիկ գործիք է հողագործական աշխատանքների անցկացման և կազմակերպման համար, այդ պատճառով էլ այն նույնպես համակարգվում, տրոհվում և միասնականացվում է. ծնվում է վարչական ժամանակն իր արհեստական ժամերով ու ամիսներով<sup>53</sup>:

*«Ակնֆայ» հասարակություններում պարմական հիշողությունները հիմնականում բովանդակում են մի քանի սերունդների հիշողություն՝ կորչելով անորոշ, «առասպելական» հետության մեջ, հնություն, որում բոլոր իրադարձությունները միևնույն ժամանակային մակարդակի վրա են»<sup>54</sup>:*

Պատմականության ձևավորման համար անհրաժեշտ էր գոնե նվազագույն չափով դուրս գալ նախապետական ծանրաշարժ կացութաձևի սահմաններից<sup>55</sup>: Իսկ մինչ այդ պատմականություն որպես այդպիսին դեռ չկա. պատմության գաղափարը դեռ գոյություն չունի<sup>56</sup>: Պատմական գիտակցության ձևավորման համար անհրաժեշտ են երեք նախադրյալներ՝ ավանդության և ազատության միջև դիալեկտիկայի գիտակցումը, անցյալն իրապես ճանաչելու ձգտումը և մարդկային գործունեու-

<sup>53</sup> Maiocchi 2019: 407.

<sup>54</sup> Ассман 2004: 74-75.

<sup>55</sup> Юсов 1977: 37.

<sup>56</sup> Коллингууд 1980: 16.

թյան իմաստությունը: Այս դարաշրջանում հիմնարար այս երեք տարրերը դեռ չեն ձևավորվել<sup>57</sup>:

Պետության ձևավորումից հետո կենտրոնացված իշխանությունը վերաքննում է անցյալը և կառուցում իր համար ներկան՝ հուշարձաններով, դամբարաններով, արխիվներով և այլնով: Այս պաշտոնական, քաղաքական-գաղափարական համատեքստին են պատկանում Հին Արևելքից մեզ հասած բոլոր պատմական աղբյուրները<sup>58</sup>, որոնք պատմական են, բայց ոչ պատմագիտական՝ «*իշխանությունը լեզիփոմացվել է ռեփրոսպեկտիվ, հավերժացել պրոսպեկտիվ*»<sup>59</sup>:

#### **Գծային զարգացման հին եզիպական մոդելը**

Փորձենք ներկայացնել ժամանակի և պատմական գործընթացի մասին հին եզիպտական պատկերացումները եզիպտական առասպելամտաճողության համատեքստում:

Հին եզիպտական կրոնական համակարգը վերջնականապես ձևավորվեց մ.թ.ա. II հազարամյակի վերջում: Այն, ինչպես և միջագետքյանը, խեթականը և այլն, պատկանում է այսպես կոչված «առաջնային կրոնական համակարգերի» շարքին, այսինքն՝ այն կրոնական համակարգերի, որոնք թեև իրենց պատկերացումներում որոշակի հետևողականություն և համայիր բնույթ ունեն, սակայն դեռ չեն ստեղծել իրենց փակ աստվածաբանական-բարոյագիտական ինքնապարփակ համակարգը: Նրանք ավելի շատ կարող են ներկայանալ որպես բարձր զարգացած առասպելաբանական, քան թե կրոնական համակարգեր: Այս համակարգերի հիմնական

<sup>57</sup> Алексн 2014: 194

<sup>58</sup> Ассман 2004: 75.

<sup>59</sup> Строевский 2006: 357.

զծերի (*ո՛չ դոգմաբերի*) կազմավորման ժամանակ այլ առասպելաբանական տարրերի հանդեպ անհանդուրժողականություն կամ արհեստական սահմանափակումներ չեն նկատվում: Նման կրոնական համակարգերն առանձնահատուկ են, քայց ոչ դոգմատիկ:

Որպեսզի առասպելը դառնա դոգմա, պետք է կատարել ցանկացած մտային նախադրյալի առաջին պայմանը՝ առանձնացնել, սահմանափակել այդ առասպելը նույն իրադարձության մասին պատմող մյուս առասպելից և հաստատել այն որպես միակ ճշմարիտն ու անհրաժեշտը<sup>60</sup>, այլ կերպ ասած՝ պետք է առաջին պլան մղել որոշակի գաղափարը՝ ապագա կրոնական համակարգի կմախքը, որը հարուստ առասպելաբանական զինանոցից կրնտրի առասպելաբանական այն սյուժեները, որոնք առավելագույնս համապատասխան են այդ գաղափարի հետագա զարգացման համար: Իհարկե, դա քարոզ աշխատանք է, որը պահանջում է քրմերի քազմաթիվ սերունդների լարված մտավոր աշխատանք, այդուհանդերձ կրոնը, եթե այն ընկալենք որպես մաքուր քարոյաաստվածաբանական աշխարհատեսություն, երբեք, նույնիսկ մեր օրերում, էլ չասած առաջին կրոնական համակարգերի ձևավորման փուլում, չի առանձնացել իր առասպելաբանական աստուծից. *«Մեր առջև կարծես փնտրեսող դերձակ փնի նսրած, որը մի հազուարը վերափոխում է ուրիշ հազուարի՝ լաթի որևէ կտոր դեմ չնեպրելով: Կթվա, որ որոշ մաշված կտորներ կտրվել-հանվել են, քայց դրանք միշտ էլ կարող եք գտնել զգեստի աստիճանի կամ գրպանների ներսում»*<sup>61</sup>:

<sup>60</sup> Josses 2001: 132.

<sup>61</sup> Փրեյսենբեր 1998: 169.

Եգիպտական՝ ժամանակի և հավերժության մասին մեծ թվով ուսումնասիրություններ կան<sup>62</sup>: Մեզ այս պարագայում հետաքրքրում է ժամանակ հասկացության մեջ շարժման առկայությունը կամ բացակայությունը:

Այսպես, եգիպտական աշխարհատեսության մեջ մենք տեսնում ենք հարյուրամյակների ընթացքում մանրամասն մշակված համակարգ՝ ժամանակի ուրույն հայեցակարգով, որի առանցքում Maat հասկացությունն է՝ երկրի վրա տիրող բացարձակ խաղաղությունը և բնության կատարյալ ներդաշնակությունը<sup>63</sup>: Maat-ը վերահսկում է ամեն ինչ և ներառում է մարդկանց, առարկաների, բնության և տիեզերական երևույթների աշխարհը: Maat-ը արարման իմաստն է, որին այժմյան աշխարհն արդեն չի համապատասխանում: Եվ թե՛ շարքային եգիպտացու, թե՛ փարավոնի ջանքերն ուղղված էին այդ իմաստի նախնական լիակատարությունը վերականգնելուն և գործողությունների մեջ մարմնավորելուն<sup>64</sup>:

Ըստ այդմ եգիպտական «ժամանակը» կարող էր լինել ժամանակ-**նեխեխ** (nHH) կամ ժամանակ-**ջեթ** (Dt):

Նեխեխը կապված էր արևի շրջապտույտի հետ, դա տարիների, տարվա եղանակների, ամիսների, օրերի անընդհատ բաբախող, զարկահոսող հոսքն է<sup>65</sup>: Ծեսերի

---

<sup>62</sup> Եգիպտական ժամանակային կատեգորիաների մասին ընդարձակ գրականության շրջանակներում ուսումնասիրվել են եգիպտական հավերժություն հասկացության, ժամանակի ցիկլային և գծային ուղղվածության, այդ կատեգորիաների լեզվական արտահայտման դժվարությունների և այլ հարցեր, տե՛ս **Кычанов 2011**: 47.

<sup>63</sup> **Károly 1964**: 206.

<sup>64</sup> **Ассман 1999**: 19.

<sup>65</sup> **Լոյս տեղում**: 19.

ժամանակ պարբերաբար գործողությունների միևնույն համալիրը կրկնելով՝ եզիպտացիներն ժամանակը վերադարձնում է իր նախնական վիճակին և կարծես չեզոքացնում նրան՝ հար և նման առասպելամտածողության օրենքներով ապրող մյուս մշակույթներին<sup>66</sup>:

Մյուսը ժամանակ-ջեթն է: Եթե ժամանակ-նեխեխն *անցնում է, գնում է*, ապա ժամանակ-ջեթն ընդհակառակը՝ *չարունակվում է, փնում*: Դա այն ժամանակն է, երբ պահպանվում է ավարտվածը, այն, ինչ իրականացվել է ժամանակի նեխեխն հոսքում և այժմ փոխակերպվել է ժամանակի մեկ այլ ձևի, որում չկա ոչ մի փոփոխություն և չկա որևէ շարժում<sup>67</sup>:

Ըստ այդմ, եզիպտական ժամանակը դիթմիկ է ու բաղկացած մեծ և փոքր շրջափուլերից, ինչպես օրինակ՝ Սոտիսի 1450-ամյա շրջափուլը<sup>68</sup>, Օսիրիսի մահը՝ «մեծ հանցանքն» ու «աղետը», իրերի քականոն ընթացքի խախտումը<sup>69</sup> և վերածնունդը, քարենպաստ (աստվածների հետ բարի հարաբերություններով բնորոշվող «ուկեդարեր») և բեկումնային (աստվածների երես թեքելու և աղետների փուլեր) փուլերի ցիկլիկ հերթազայությունը<sup>70</sup>, փարավոնի մահը, տարվա և օրվա ավարտը և այլն:

«Աշխարհի վերջ» հասկացությունը եզիպտական աշխարհատեսության հանդեպ միայն պայմանականորեն

<sup>66</sup> **Լոյն տեղում**, 123:

<sup>67</sup> **Լոյն տեղում**, 121:

<sup>68</sup> Եզիպտական տոմարի առաջին օրը համընկնում էր Սիրիոս աստղի (եզիպտերեն Սուպրեթ, հունարեն՝ Սոտիս) աստղի հեղիական ծագմանը, որը տեղի էր ունենում 4 տարի անընդմեջ 1450-1460 տարին մեկ: Մանրամասն տե՛ս: **Լեյնտոն, Դեմոտրոսկոյ 2001**:

<sup>69</sup> **Васильева 2009**: 30:

<sup>70</sup> **Բանտոնա 2013**: 26; **Լեյնտոն 2015**: 13-14:



կարող է կիրառվել, և խոսքն էլ ոչ թե հինկտակարանյան աշխարհի վերջի, այլ հերթական տիեզերական ցիկլի խզման վտանգի մասին է<sup>71</sup>։ այդ ցիկլը սկսվել է նախնական Նուն օվկիանոսի նյութից Ատոմի արարչագործությունից ու կավարտվի ինչ-որ ժամանակ, և բոլոր էությունները կկործանվեն ու կվերադառնան նույն օվկիանոսի մեջ<sup>72</sup>։

Դատելով «Մեռյալների գրքից», որը վերջնականապես ձևավորվել է Նոր թագավորության շրջանում, ինչ-որ մի ժամանակ բոլոր կենդանի էակները և առարկաները պետք է վերածվեն անշունչ միատարր մատերիայի, և ողջ են մնալու միայն օձի տեսք ստացած արարիչ Բան ու Օսիրիսը։ Դա էլ լինելու է աշխարհի վերջը։

«Մեռյալների գրքի» 175-րդ գլխում պահպանվել է Օսիրիսի և Ատոմի երկխոսությունը, որտեղ ուշագրավ տողեր կան.

Ատոմը պատասխանում է Օսիրիսի «Որքա՞ն է կյանքի տևողությունը» հարցին. «Դու (նախապեսված ես ցինելու) միփոռնավոր փարիներ... եվ ես կոչնչացնեմ այն ամենը, ինչ ստեղծել եմ: Երկիրն այս կրկին կվերադառնա խորխորափի (բառսի) և ջրհեղեղի, ինչպես ի սկզբանե էր: Միայն ես և Օսիրիսը ողջ կմնանք այն բանից հետո, երբ ես օձի տեսք կընդունեմ, որոնց մարդիկ մինչ այդ չգիտեին, և աստվածները չէին տեսել»<sup>73</sup>։

<sup>71</sup> Васильева 2009: 31.

<sup>72</sup> Зельман 2015: 8.

<sup>73</sup> Allen 1974: 184. "What is a lifetime of life?" says (Osiris). "Thou art (destined) for millions of millions (of years), a lifetime of millions (of years). I have caused that he (i.e., thy successor) send out the Elders. And I will destroy all that I have made. This land shall return into the Deep, into the flood, as it was aforesaid. (Only) I shall survive together with Osiris, after I have assumed my forms of other (snakes) which men know not and gods see not. How good is

Դատելով այն հանգամանքից, որ այս դրվագը եգիպտական աշխարհատեսության մեջ զարգացում չստանալու, կարելի է ենթադրել, որ այն զարգացման մայրուղուց գլխավոր զծից դուրս էր: Հին եգիպտացիներին քնորոշ էր կենսական պրագմատիզմը, որի շրջանակներում ի սկզբանե անիմաստ էր քննարկել այն հարցերը, որոնք այժա պահին անհնար է ուսումնասիրել<sup>74</sup>: Հակառակ դրան՝ մանրամասն մշակված են անդրշիրիմյան աշխարհում անհատի գոյության հարցերը. մ.թ.ա. III հազ. Վերջում ի հայտ է գալիս դրան նվիրված տեքստերի մի բազմություն, որոնք մ.թ.ա. II հազ. կեսերին ստանում են մանրակրկիտ մշակում՝ ընդհուպ մինչև պարզունակ համակարգում: Այն աստիճան, որ հենց անդրշիրիմյան աշխարհի ավելի մեծ «ակտուալությունը», մահացածների և նախնիների պաշտամունքը և մահացած փարավոնների հավուր պատշաճի հիշատակամենն են դրդել ստեղծել մահացած փարավոնների արքայացանկեր<sup>75</sup>:

Եգիպտացիների վերացարկման ամենաբարձր մակարդակը կյանքը որպես *բա-ի* և մարմնի միավորում պատկերացնելն էր, այսինքն՝ որպես «հավերժ կյանք», որի մեջ ներառված են նաև մահացածները: Ժամանակը նրանց ընկալմամբ այդ հավերժական կյանքի իրադարձությունների ընթացքն է: Ոչ թե հունական գոյը, լինելիությունը, ոչ հին հնդկական վերամարմնավորումներից ազատումը, այլ հենց ակտուալ «կյանքը»: Ոչ թե հավեր-

---

*what I have done for Osiris, more than (for) all the (other) gods; for I have given him the desert, the silent land, and his son Horus as heir upon his throne that is in the Isle of Flame. I have made his (throne in) the bark of millions (of years), while Horus abides on his façade (i.e., in his earthly palace) in order to establish his monuments”.*

<sup>74</sup> *В.Д.Мухомов* 2015: 9.

<sup>75</sup> *Башинская* 2013: 26.

ժությունն առհասարակ, այլ կյանքի անընդհատելիությունը, որին սովորական մարդն ակտիվ մասնակցություն է բերում, և «կյանքի փրկությունն» այստեղ ոչ թե Փրկության պատմության վերջնական արդյունքն է, այլ խնդիր, որը լուծվում է ծեսի օգնությամբ<sup>76</sup>:

Եթե այս հայեցակարգի ներսում փոփոխություններ կային էլ, ապա նրանք հիմնականում բխում էին եզիպտական առասպելաբանության ոչ դոգմատիկ բնույթից և մեկ երևույթի համար առավել առասպելաբանական հասկացություններ գտնելու ծգտումից<sup>77</sup>:

Ժամանակի մասին պատկերացումներին սերտաճած են պատմական գործընթացի, առհասարակ պատմության մասին պատկերացումները: Պետք է հաշվի առնել, որ Հին Եգիպտոսի պատմությունն իրենց իսկ եգիպտացիների համար խոր անցյալ էր և ըստ այդմ էլ ենթակա համընթաց ձևավորվող գաղափարախոսությանը: Իրական պատմությունից կարող էր մի քաղաղրիչ մնալ, որը կձաղկեցվեր այդ պահին արդիական պատմողական կամ ֆոլկլորային լրացումներով, սյուժեներով և այլն:

Ժամանակային այդ ահռելի ժառանգությունը, որի հետ եգիպտացիները գործ ունեին, ստիպել է նրանց առաջ քաշել եգիպտական պատմության մեջ կրկնվող դարակազմիկ իրադարձությունների հստակ սխեմա: Այն է՝ *«ոսկեդար», բեկում, օտար նվաճողների հարձակում, եգիպտոսի գրավում, պայքար փարավոնի գլխավորությամբ, ոսկեդարյան նոր դինաստիայի հիմնադրում,*

<sup>76</sup> Ассман 1999:127.

<sup>77</sup> Айтс 1977: 61-62.

առավել ընդհանուր՝ *maat*-ի համընդհանուր կործանում - *maat*-ի վերականգնում<sup>75</sup>:

Ըստ էության եգիպտական պատումների դեպքում մենք ականատես ենք պատմական անցքերի առասպելացմանը, ինչը միանգամայն համապատասխանում է այդ շրջանի հասարակագիտական ընկալումներին:

Աղավաղումները մեծ են, քայք դրանք ներքին տրամաբանություն ունեն և բխում են ոչ թե անցյալը մոռանալուց, այլ անցյալի մի շարք իրադարձություններ սխալ մեկնաբանելուց. նրանց հիմքում վերաբերմունքն է նախորդ թագավորությունների հուշարձաններին՝ որպես եգիպտական պատմության կարևորագույն իրադարձությունների<sup>76</sup>:

Եգիպտական աշխարհընկալումը և պատմագրական ավանդույթը ստատիկ են, դինամիկա եթե լինել էլ, ապա մնալու էր քուրզերի ճնշող ստատիկայի տակ: Մանեթոնի գրած պատմության հիմքում էլ անցյալի հանդեպ ստատիկ պատկերացումն է.<sup>80</sup> «Նրանց աշխարհը հիմնականում սպարիկ էր և անփոփոխ, Արարչի ձեռքերից պարտափրկ դուրս եկած, պարմական իրադարձությունները ոչ այլ ինչ են, քան հաստատված կարգի մակերեսային խախտումներ կամ էական նշանակություն չունեցող կրկնվող իրադարձություններ»<sup>81</sup>:

Այստեղ չկա ներքին զարգացման հայեցակարգ-եգիպտացիների աշխարհատեսության մեջ իրենց պետությունն իր քուրդ հատկանիշներով ստեղծվել է անմիջապես աշխարհի ստեղծման պահին, իսկ դեմիուրգ-

<sup>75</sup> Այս հայեցակարգի մասին տե՛ս *Лекции 2016*.

<sup>76</sup> *Лекции 2018*: 18.

<sup>77</sup> *Dillery 2007*: 209.

<sup>78</sup> *Утроп 2003*: 76.

աստվածն էլ առաջին տիրակալն է եղել: Այդ պահին Maat-ն էլ իջնում է երկնքից, և նրանով լցվածությունը համատարած է, սակայն միաժամանակ էլ սկսում է ի հայտ գալ ու կոտավելել Maat-ին հակադրվող isefet-ը (izfi)՝ նորմ հանդիսացող բնական և սոցիալական երկվոյթների որակների հակադարձումը<sup>82</sup>:

Դժվար է ասել՝ մինչև Մանեթոնի աշխատությունը եզիպտացիները ստեղծել են արդյոք ամփոփ որևէ աշխատություն. եզիպտական պատմական նկարագրությունները պատմական քնույթի արժատիկ տվյալների (առաջին հերթին՝ արքայացանկերի) և արդեն գոյություն ունեցող գրական-պատմական կոմպոզիցիաների համադրություն<sup>83</sup> են՝ բանահյուսական լուրջ բաղադրիչներով<sup>84</sup>, և միայն արքայացուցակներն են օգնում այդ պատումները դասավորել ժամանակագրական կարգով: Եզիպտացիները, ինչպես և այլ արիստիկ մշակույթների ներկայացուցիչներ, «դժվարությամբ էին դիմանում պատմությանը»<sup>85</sup>, և քաղաքակրթական բարձր մակարդակ, պետություն ու գրավոր մշակույթ ունենալով հանդերձ՝ եզիպտացիները պատմությունը ներս չէին թողնում իրենց աշխարհատեսության մեջ՝ ստեղծելով այն<sup>86</sup>: Նրանք Եզիպտոսի անցյալի մասին ստեղծեցին հարուստ ավանդություն, որն այդպես էլ չվերածեց մեզ համար հասկանալի պատմության նկարագրության, որն իր առջև նպատակ կրներ որևէ մարդկային խմբի կամ

<sup>82</sup> Ледовитов 2015: 9.

<sup>83</sup> Dillery 1999: 93.

<sup>84</sup> Банишкова 2010: 22.

<sup>85</sup> Злате 1987: 58.

<sup>86</sup> Ափ-Ստրոսի «տաք» և «սառը» հասարակությունների ընթերցումը տես Ассман 2004: 72-76:

տարածքի պատմության հետևողական նկարագրությունը: Նման առաջին աշխատանքը գրեց եզիպտացի Մանեթոնը հունարեն, հունախոս ընթերցողի համար և հունական պատմական երկերի նմուշները որպես օրինակ աչքի առջև ունենալով<sup>87</sup>:

Դա հատուկ է առասպելամտածողության այն ձևին, որին քնորոշ է ավելի շուտ չգիտակցված, քնազդային վախը ժամանակից և ըստ այդմ էլ պատմությունից: Պատմական գիտակցության և նրա ձևերի ձևավորումը դեռ առջևում է<sup>88</sup>:

Այդուհանդերձ, այս պահին ուսումնասիրողների մեծամասնության կարծիքով Մանեթոնի ցուցակն իր ներքին տրամաբանությամբ և ամուր հիմք/հիմնականիսք համարվում է սերված հեղինակին հասու հին եզիպտական ավանդությունից<sup>89</sup>:

Հետաքրքիր է, որ եզիպտական պատմության ցիկլիկ սխեման, ըստ էության, մ.թ.ա. IV դարում վերածվեց շրջանակի, որը, ըստ այս կամ այն գաղափարական ստեղծագործության և լսարանի առանձնահատկությունների, կարող էր լցվել որոշակի րովանդակությամբ: Այդ սխեման Մանեթոնի հայտնագործությունը չէ, այն առհասարակ հատուկ է եզիպտական պատմության կարգաբերմանը<sup>90</sup>:

Այդ սխեմայի ներսում դրվագները կարող են տեղափոխվել արքայացանկի երկարությամբ, կոնտամինացիայի ենթարկվել, ցիկլացվել, լրացվել բանախոսական և արձակագրական դրվագներով, որոնք հետագայում

<sup>87</sup> Бегунцова 2013: 35.

<sup>88</sup> Борг 1987: 11.

<sup>89</sup> Вильямс 2015: 16.

<sup>90</sup> Вильямс 2016: 335.

ընկալվում են որպես պատմական կամ վերափոխվում են ըստ վերոնշյալ սխեմայի ներքին տրամաբանության<sup>91</sup>:

Համապատասխանաբար, անցյալի մասին հին եգիպտական ավանդության կարևորագույն գծերից են *արիստիկությունն ու թերզարգացածությունը*, ինչն արտահայտվում է աղբյուրների հանդեպ քննադատական վերաբերմունքի պակասով, և *բազմադարձերակայնությունը*<sup>92</sup>՝ այդ անցյալի զանազան տարբերակների համագոյակցությունը՝ հուսալիության տարբեր աստիճաններով, համեմատաբար բարձր հուսալիությամբ Մանեթոնի մոտ և էականորեն աղճատված՝ Հերոդոտոսի մոտ<sup>93</sup>:

Շարժընթացը կրկին շրջանակի ներսում է: սյուժեն զարգանում է՝ հասնելով Maat-ի խախտման, որը վերականգնվում է պայքարի միջոցով: Եգիպտական աշխարհատեսությանը հատուկ է դիմամիկան, որը սահմանափակված է որոշակի և անփոփոխ շրջանակներով<sup>94</sup>:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Եսեթի Պամփիլեյա Կեսարացոյ** Ժամանակակիցը երկմասնեայ: Մասն Ա-Բ: Ժամանակագրություն պատմական = Chronicon bipartitum, by Եսեթիոս Պամփիլիոս Կեսարացի: Ավգերեան, Մկրտիչ Հայրապետի. Վենետիկ: Ա. Ղազար, 1818:

**Алесин И.И.** 2014, Историческое сознание как продукт историзма, «Научные ведомости», № 16 (187), выпуск 29, с. 190-196.

**Antes P.** 1977, Мифология в древнем Египте, в сб. Мифологии древнего мира (пер. с англ. и предисл. И.М. Дьяконова),

<sup>91</sup> Бантикова 2013: 30-31.

<sup>92</sup> Бантикова 2010: 22.

<sup>93</sup> Эвльини 2018: 6-7.

Москва, Главная редакция восточной литературы издательства «Наука», 436 с.

- Ассман А., Ассман Я. 2001.** Канон и цензура. В сб. Немецкое философское литературоведение наших дней: Алгология, СПб, Изд-во Санкт-Петербургского университета, 552 с.
- Ассман Я. 1999.** Египет, Теология и благочестие ранней цивилизации, Москва, Изд-во «Присцелье», 365 с.
- Ассман Я. 2004.** Культурная память: письмо, память в прошлом и политическая идентичность в высоких культурах древности, Москва, 368 с.
- Банщикова А.А. 2010.** Переломные эпохи в исторической традиции и сознании древних египтян (по источникам конца II тыс. до н. э. - I тыс. н. э.), Автореферат диссертации, Москва.
- Банщикова А.А. 2013.** Историзмизация без истории: египетское восприятие прошлого и его фиксация, В кн. Древнейшие государства Восточной Европы, Зарождение историзмизации в обществах Древности и Средневековья, Москва, Университет Дмитрия Пожарского, 2016, с. 25-37.
- Боас Ф. 1926.** Ум первобытного человека, Москва-Ленинград, Государственное издательство, 154 с.
- Васильева О. 2009.** Гибель Осириса: древнеегипетский «апокалипсис», В сб. Древность: историческое знание и специфика источника, Москва, ИВ РАН, с. 30-32.
- Вейнберг Н.П. 1986.** Человек в культуре древнего Ближнего Востока, Москва, «Наука», 208 с.
- Гайденко П. 1991.** Человек и история в экзистенциальной философии К.Яспера, В кн. Ясперс К., Смысл и назначение истории, Перевод с немецкого, Москва, Политиздат, с. 5-27.
- Гайденко П. 2006.** Время. Длительность. Вечность. Проблема времени в европейской философии и науке, М., Изд-во «Прогресс-Традиция», 464 с.
- Гуревич А.Я. 1999.** Избранные труды в 2 томах, том 2 (Категории средневековой культуры и Средневековый мир: культура безмолвствующего большинства), СПб, Издательство «Университетская книга», 560 с.
- Гуйо М. 1899.** Происхождение идеи времени, СПб.
- Дараган Н.Я. 1987.** Очерк жизни и творчества Мирча Элиаде, В кн. Элиаде М. 1987, Космос и история, Москва, Изд-во «Прогресс», с. 3-26.



- Диксон И.М. 1983**, (под ред.) История Древнего Востока, часть I, Москва, Изд-во «Наука», 534 с.
- Дюркгейм Э. 1998**, Элементарные формы религиозной жизни, В сб. Классики мирового религиоведения. Антология, (История философии в памятниках), Москва, Изд-во «Канон», с. 173-231.
- Жмудь Л.Я. 1988**, О понятии мифологическое мышление, в сб. Жизнь мифа в античности, Материалы научной конференции «Випперовские чтения - 1985», вып. XVIII, в 2-х ч., Москва, Изд-во «Советский художник», с. 287-306.
- Клейн Л.С. 2014**, История антропологических учений, СПб., Изд-во Санкт-Петербургского университета, 744 с.
- Коллингвуд Р.Дж. 1980**, Идеи истории, Москва, Изд-во «Наука», 484 с., [https://nsu.ru/xmlui/bitstream/handle/nsu/9030/Collingwood\\_Idea\\_AutoBio.pdf](https://nsu.ru/xmlui/bitstream/handle/nsu/9030/Collingwood_Idea_AutoBio.pdf)
- Кузнецов В.Г. 2007**, Словарь философских терминов, Москва, ИНФРА-М, 730 с.
- Кучиннов Е. 2011**, Время и вечность в древнеегипетской культуре: феноменологический анализ, В сб. Теория и практика общественного развития (2011, № 7), с. 47-49.
- Ладьянин И.А., Немировский А.А. 2001**, Мемфисская стела Аменхотепя II о его втором победоносном походе, В сб. Эпиграфика Востока, Москва, том 26, с. 56-98.
- Ладьянин И.А. 2015**, Циклы египетской истории и три тома труда Манефона Севернитского (I), Вестник древней истории 2015, № 4, с. 8-21.
- Ладьянин И.А. 2016**, Циклы египетской истории и три тома труда Манефона Севернитского (II), Вестник древней истории 76/2 (2016), с. 315-340.
- Ладьянин И.А. 2018**, «Парадоксы идеи прогресса» и «культурная память» в древнем Египте (по поводу статьи В.В. Емельянова), В сб. Восток. Афро-Азиатские общества: история и современность, 2018, № 6, с. 6-21.
- Левин-Брюль Л. 1980**, Психология мышления, Москва, Изд-во МГУ, с. 130-140. [http://psylib.org.ua/books/\\_levbr01.htm](http://psylib.org.ua/books/_levbr01.htm)
- Левин-Стросс К. 1972а**, Структурная антропология, М., Главная редакция восточной литературы, 536 с.

- Левин-Стросс К. 1972b.** Сырое и вареное, В сб. Семантика и искусствометрия, Москва, Изд-во «Мир», 368 с.
- Лосев А. 1977.** Античная философия истории, Москва, Изд-во «Наука», 208 с.
- Лосев А. 1991.** Дилектива мифа, в кн. Философия, мифология, религия, Москва, Политгиздат, с. 21-176.
- Мамардашвили М. 1996.** Появление философии на фоне мифа, Введение в философию, В кн. Необходимость себя, Москва, Изд-во «Лабиринт», с. 7-154, <http://psylib.org.ua/books/mama02/bd01.htm>
- Мелетинский Е.М. 1972.** Первобытные истоки словесного искусства, в сб. Ранние формы искусства. Москва, Искусство, 1972, с. 149-189.
- Мелетинский Е.М. 1976.** Поэтика мифа, Изд-во «Наука», 407 с.
- Мелетинский Е.М. 1991.** Время мифическое, в Мифы народов мира, том 1, М., Изд-во «Советская энциклопедия», с. 252-253.
- Мелетинский Е. 2011.** Мифологическое мышление, <https://omiliya.org/article/mifologicheskoe-myshlenie-kategorii-mifov-em-meletinskii.html>
- Немировский А.И. 1979.** У истоков исторической мысли, Воронеж, Изд-во Воронежского университета, 209 с.
- Рахманинова М. 2014.** Мифология и мифологическое мышление: генезис и механизмы. Часть 1, <https://runivers.ru/philosophy/logosphere/477058/>
- Рейхенбах Г. 2003** (αὐτὴν τὴν ἰστορίαν) **Reichenbach H. 1955.** The direction of time, LA, 1955) Направление времени, Москва, Изд-во УРСС, 203 с.
- Строгачевский В.М. 2006.** Проблема становления истории как науки в античности. «Античный мир и археология», Вып. 12. Саратов, с. 351-362. <http://ancientrome.ru/publik/article.htm?a=1353401060>
- Тоскарев С.А., Мелетинский Е.М. 1991.** Мифологии в Мифы народов мира, том 1, Москва, Изд-во Советская энциклопедия, с. 11-20.
- Топоров В.И. 1991а.** История и мифы, В кн. Мифы народов мира, том 1, Москва, Изд-во Советская энциклопедия, с. 572-574.
- Топоров В.И. 1991б.** Модель мира, В кн. Мифы народов мира, том 1, Москва, Изд-во Советская энциклопедия, с. 161-164.

- Уитроу Дж. 2003** (английское издание **G.J. Whitrow 1961**, *The Natural Philosophy of Time*), Естественная философия времени, Москва, Изд-во Едиториал УРСС, 400 с.
- Фрейдленберг О. 1998**, Миф и литература древности, 2-е изд., Москва, Издательская фирма «Восточная литература», РАН, 800 с.
- Юнг К.Г. 1930**, Архаичный человек (доклад, прочитанный в читательском кружке Геттинген), Цюрих, В кн. К.Г. Юнг: Проблемы души нашего времени. Москва, Изд-во «Прогресс», 1994, с. 158-184. Օւլլայն տարբերակը՝ [http://paylib.org.ua/books/\\_yungk02.htm](http://paylib.org.ua/books/_yungk02.htm)
- Элиаде М. 1987**, Космос и история: избранные работы, Москва, Изд-во «Прогресс», 312 с.
- Allen Th.G. 1974**, *The Book of the Dead*, spell 175, in *The Book of the Dead or Going forth by day, Ideas of the ancient Egyptians concerning the hereafter as expressed in their own terms*, Studies in Ancient Oriental Civilization, № 37, The University of Chicago Press, Chicago, 1974, Online <https://oi.uchicago.edu/sites/oi.uchicago.edu/files/uploads/shared/docs/saoc37.pdf>
- Cohen, M.E. 1993**, *Cultic Calendars of the Ancient Near East*, Bethesda, MD: CDL Press, 504 pp.: Օւլլայն տարբերակը՝ [https://ia800500.us.archive.org/3/items/TheCulticCalendarsOfTheAncientNearEast/Cohen1983\\_CulticCalendars.pdf](https://ia800500.us.archive.org/3/items/TheCulticCalendarsOfTheAncientNearEast/Cohen1983_CulticCalendars.pdf)
- Dillery J. 1999**, *The First Egyptian Narrative History: Manetho and Greek Historiography*, in *Zeitschrift für Papyrologie und Epigraphik*, Bd. 127 (1999), pp. 93-116.
- Dillery J. 2007**, *Greek Historians of the Near East: Clio's «Others» Sons*, in *A Companion to Greek and Roman Historiography*, Wiley-Blackwell, pp. 208-212.
- Норна В. 2019**, Assman, Jan: Achsenzeit. Eine Archeologie der Moderne, in «Filozofia», vol. 74, no. 4, Օւլլայն տարբերակը՝ [https://www.sav.sk/index.php?lang=en&doc=journal-list&part=article\\_response\\_page&journal\\_article\\_no=16827](https://www.sav.sk/index.php?lang=en&doc=journal-list&part=article_response_page&journal_article_no=16827)
- Jaspers K. 2017**, *Vom Ursprung und Ziel der Geschichte*, Gesamtausgabe, Herausgegeben im Auftrag der Heidelberger Akademie der Wissenschaften und der Akademie der Wissenschaften zu Göttingen band 10, 284 S., Օւլլայն տարբերակը՝ [https://www.academia.edu/29231054/The\\_Origins\\_of\\_the\\_Roman](https://www.academia.edu/29231054/The_Origins_of_the_Roman)

«Cult of Mithras in the Light of New Evidence and Interpretations: The Current State of Affairs» [https://pdfs.semanticscholar.org/1147/3444c8949e9533144761140689e72b79fc47.pdf?\\_ga=2.59970541.177385018.1590867104-1860376847.1590867104](https://pdfs.semanticscholar.org/1147/3444c8949e9533144761140689e72b79fc47.pdf?_ga=2.59970541.177385018.1590867104-1860376847.1590867104)

**Kákosy L.** 1964, Ideas about the fallen state of the world in Egyptian religion: decline of the Golden Age, Acta Orientalia Academiae Scientiarum Hungaricae Vol. 17, No. 2 (1964), pp. 205-216 (12 pages)

Օւլլայն տարբերակը՝

<https://www.jstor.org/stable/23656852>

**Malocchi M.** 2019, Writing in Early Mesopotamia. The Historical Interplay of Technology, Cognition, and Environment, in Beyond the Meme: Development and Structure in Cultural Evolution, University of Minnesota Press, pp. 395-424, օւլլայն տարբերակը՝

[https://www.jstor.org/stable/10.5749/j.ctvnp0krm.13?refreqid=exc-el-sior%63Ab2a85dc2b8d4d8a4c1f077db363873e2&seq=1#metadata\\_info\\_tab\\_contents](https://www.jstor.org/stable/10.5749/j.ctvnp0krm.13?refreqid=exc-el-sior%63Ab2a85dc2b8d4d8a4c1f077db363873e2&seq=1#metadata_info_tab_contents)

**Schnurer J.** 2018, Rezension zu: Jan Assmann: Achsenzeit. Eine Archäologie der Moderne. Verlag C.H. Beck (München), օւլլայն տարբերակը՝

<https://www.socialnet.de/rezensionen/25040.php>

**Մարիամ Խանզադյան - ՀՀ ԳԱԱ**

*արևելագիտության ինստիտուտ,*

*Հին Արևելքի բաժին, գիտաշխատող, mkhanzad-  
dyan@orient.sci.am*

#### STATICS AND DYNAMICS: IDEAS OF TIME AND LINEAR DEVELOPMENT OF HISTORY IN ANCIENT NEAR EAST. PART I

**Keywords:** *linear development of history, cyclical development of history, early state, ancient Egypt, mythology, mythical thinking, ideas of time, Manetho.*

The article discusses the development of ideas about time and history in the ancient Near East, in Egyptian, Mesopotamian

(Sumerian-Akkadian, Babylonian, Assyrian), Hittite-Khurian worldview systems, Zoroastrian and Jewish religions. The idea of linear development of history begins to form within cyclic perceptions of time, reaching its logical end in the first religious systems of Judaism and Zoroastrianism. The first part of article discusses mythical thinking and ideas of time in ancient Egypt.

**Mariam Khanzadyan** - *Institute of Oriental Studies NAS RA,*  
*Department of Ancient Orient, Researcher,*  
*[mkhanzadyan@orient.sci.am](mailto:mkhanzadyan@orient.sci.am)*

**ՇԵՆՂԱՎԻՌԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՔԱՐԵ ՄԻ  
ԱՐՁԱՆԻԿԻ ՇՈՒՐՁ\***

**ԱՆՆԱ ԱԶԻՁՅԱՆ**

**Բանալի բառեր՝** շենգավիզայան մշակույթ, արձանիկ, Շենգավիթ հնավայր, առանձին ազոցված գլուխ, գարդամոքիվ, ծխակարգ:

Շենգավիզայան մշակույթի ուսումնասիրության մեջ կարևորվում են տարարեսակ փոքրիկ պարկերաքանդակները: Դրանց շարքումն են դասվում մարդակերպ, կենդանակերպ և այլ տիպի քանդակներ: Փոքրիկ քանդակների ավանդույթը Հայկական լեռնաշխարհում վկայված է դեռևս վաղ երկրագործական ժամանակաշրջանում:

Շենգավիզայան մշակույթի ուսումնասիրության անբաժանելի մասն են կազմում փոքրածավալ կերտվածքները՝ արձանիկները: Դրանք պատրաստված են եղել տարբեր նյութերից և չափերով չեն գերազանցում 10 սմ-ը: Փոքրիկ արձանիկներն ի հայտ են գալիս ոչ հաճախ և ոչ բոլոր հուշարձաններում, ինչը չի կարելի ասել Շենգավիթ բնակավայրի մասին: Այն շենգավիզայան մշակույթի նշանավոր հուշարձաններից է Հայաստանի տարածքում<sup>1</sup>, որի ուսումնասիրման սկիզբը դրեց առաջին իսկ պեղող հնագետ՝ Ե. Բայբուրջյանը 1936-1938 թթ.<sup>2</sup> անվանելով այն «Շենգավիզայան մշակույթ»<sup>2</sup>:

\* Շղվածը ներկայացվել է 02.05.2020: Գրախոսվել է 10.05.2020:

<sup>1</sup> Պեղումը 2015: 9:

<sup>2</sup> Եանդյրում 2011: 5, 7, 14:

2016 թ. Շենգավիթ հուշարձանի տարածքից պատահական<sup>3</sup> հայտնաբերվել է քարե փոքրիկ արձանիկ և նրա վերաբերյալ առաջին անգամ նյութ է հրապարակվում: Այն քառանիստ է, ուղղանկյունածև, հարթ հղկված մակերեսներով և գտնվում է «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում՝ հաշվառված № 23/1 համարի ներքո:

Արձանիկի երկու նիստերը մյուս կողային նիստերի համեմատ լայն են, ընդհանուր բարձրությունը՝ 4,6 սմ, լայնությունը - 2,5 սմ, հաստությունը՝ 7 սմ, նեղ նիստերը դեպի վեր քիչ նեղանում են: Պատրաստված է հավանաբար հասպիս կիսաթանկարժեք քարից (աղ. 1, նկ. 1): Արձանիկն ունի վարդամանուշակագույն երանգ, քարը պարունակում է սպիտակ հավելումներ: Կերտվածքի դիմային և թիկունքային լայն նիստերը փորագրված են համանման համակենտրոն շրջաններով, որոնք միմյանց նկատմամբ ոչ այնքան համաչափ են դասավորված, իսկ նեղ նիստերը հարթ են ու անզարդ:

Արձանիկի գլուխը բացակայում է: Մեր կարծիքով այն առանձին պատրաստվել և տեղադրվել է իրանի վերնամասի կենտրոնական հատվածում փորված խոռոչի մեջ (աղ. 1, նկ. 1ե): Նման արձանիկներ առանձին ազդեցված գլուխներով հայտնի են դեռ նեոլիթյան ժամանակաշրջանից<sup>4</sup>: Հնարավոր է, որ գլուխը պատրաստված լինի նույն քարատեսակից կամ այլ նյութերից՝ փայտից, կավից, որը ցավոք չի պահպանվել:

<sup>3</sup> Արձանիկը վերգետնյա գտածո է: Այն հայտնաբերվել է Շենգավիթ հուշարձանի տարածքից նույն թանգարանի էքսկուրսավար Լիլիթ Գասպարյանի կողմից:

<sup>4</sup> **Lauren 2004**: Fig. 5; **Douglass 2005**: 155, Fig 7.4; **Svend 2014**: 275, Fig. 19, 20.

Կերտվածքի համաչափության համեմատ արձանիկի փորված խոռոչը խորն է, ինչը մեկ անգամ ևս փաստում է, որ այդտեղ ազուցված է եղել արձանիկի գրվիչը: Խոռոչի դիմային մասը մի փոքր վնասված է, բայց դեպի կրծքավանդակ իջնող բացվածքի աջ հատվածը պահպանված է: Այն դիտվում է նաև որպես կերտվածքի վիզ: Թիկունքից վիզն ունի ընդգծված քիչ բարձր փոված տեսք, որից ուղղահայաց կատարված են երկու անհամաչափ խոր ակոսներ (աղ. 1, նկ. 1c): Հնարավոր է, որ այդ ակոսները կապված լինեն գլխի կառուցվածքի հետ՝ որպես մազերի կամ գլխաշորի շարունակություն: Վզից իջնում են թեք ուսերը, որոնք աննշան նեղ են իրանի համեմատ:

Արձանիկը պատված է փորագիր կետ շրջագծերով: Կերտվածքի դիմային մակերեսի վրա պատկերված կետ շրջագծերը թիկունքի շրջագծերի համեմատ ավելի խիտ են կատարված (աղ. 11, նկ. 1 b, c): Վերջիններս ընդելուզված են սպիտակավուն նյութով՝ արտահայտիչ տեսք ստանալու համար, և մասնակիորեն են պահպանվել (աղ. 1, նկ. 2):

Արձանիկն ավարտվում է հարթ կտրած նստուկով: Այն տեղադրելով հորիզոնական հարթակի վրա՝ կայուն կանգնում է (աղ. 1, նկ. 3): Նստուկին արված է փոքրիկ կամարածև ոչ խոր փորվածք՝ հավանաբար լրացուցիչ կայունություն ապահովելու համար (աղ. 1, նկ. 1f):

Մակերեսին առկա են բազմաթիվ համաժամանակյա քերծվածքներ:

Արձանիկի դիմային և թիկունքային մակերեսներին փորագրված կետ շրջագծերը մեր կարծիքով պատահական չեն և ունեն որոշակի իմաստ: Տվյալ մշակություն հայտնի է նմանատիպ պատկերներով, համակենտրոն



շրջաններով զարդարված խեցեղեն: Այդ համակենտրոն շրջանները դիտվել են որպես տղյար պատկերներ<sup>5</sup> կամ էլ սերմի ու քազմացման՝ պտղաբերության խորհրդանշան<sup>6</sup>:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում մարմնից առանձնացվող և միացվող գլուխների թեման, որի վերաբերյալ կան որոշ տարակարծություններ: Գլուխը առանձին միացվելով արձանիկի մարմնին՝ կարծես «կենդանացրել» է նրան<sup>7</sup>: Որոշակի արարողակարգի կամ ծիսակարգի բովանդակության և կերպարանքի փոփոխման հետ կապված՝ դեմքի տարբեր արտահայտությամբ գլուխներ են տեղադրվել՝ այն ներդաշնակելով համապատասխան արարողությանը<sup>8</sup>:

Մեր կողմից նկարագրված արձանիկը զուգահեռներ ունի Շենգավիթ հնավայրի՝ 2009 թ. պեղումների ժամանակ հայտնաբերված քարե կերտվածքի միջև, որը, ըստ հնագետ Հակոբ Սիմոնյանի, արձանիկ է (աղ. III, նկ. 1)<sup>9</sup>: Այն կիսաթանկարժեք քարից է, ունի երկու լայն նիստեր, որոնք նույնպես փորագրված են կես շրջագծերով և ընդելյուզված են սև նյութով, գուցե բխտումով (աղ. III, նկ. 1c): Այն արտաքին ձևով եռանկյունաձև է և տարբերվում է մեր կողմից նկարագրված արձանիկի ձևից: Վերջինս վերնամասում նույնպես ունի միայն մեկ խոռոչ (աղ. III, նկ. 1a):

Արձանիկը մեր կարծիքով կարող է նաև աղերսվել վիշապ քարակոթողներին: Իր կառուցվածքի ընդհանուր

<sup>5</sup> Խանգուդյան 1969: 157; Դ.Օ.Առն 1992: 27.

<sup>6</sup> Մեսգուկյան 1955, 83-88; Antonova 1972, 15; Կրյաչևսե 1988: 16.

<sup>7</sup> Կրյաչևսե 1988: 11.

<sup>8</sup> Lauren 2004: 145, 146.

<sup>9</sup> Սիմոնյան 2013, պատկեր 14, նկ. 2:

զծերով, ուղղանկյունաձև և գլխի տեղադրման դիրքով այն մոտ է ցլակերպ վիշապներին (աղ. III, նկ. 2, 2a): Քանի որ արձանիկի կրծքավանդակի բացվածքը թերի է պահպանված, չի բացատրում նաև, որ եզան կամ ցլի գլովխը հարմարեցված լինի արձանիկի դիմային հատվածում: Այս տեսանկյունից ուշագրավ են վիշապ քարակոթողների վրա հանդիպող կիսագնդաձև փորվածքները<sup>10</sup>, որոնք կարծես զուգահեռներ են գտնու՞մ արձանիկի երկու լայն նիստերին պատկերված համակենտրոն շրջանների միջև: Նման փորվածքները հնարավոր է, որ աղերավեն ինչպես ջրի պաշտամունքի, այնպես էլ «արևային խորհրդանիշների» հետ<sup>11</sup>. Խնդիրն այն է՝ արդո՞ք դրանք ժամանակակից են վիշապ քարակոթողներին, թե՛ հետագա օգտագործման արդյունք են:

Մեր կարծիքով այս երկու արձանիկները հնարավոր է, որ կիրառված լինեն հացահարսյսերի հետ կապ ունեցող ծիսական արարողությունների ժամանակ և տեղադրված լինեն դրանց համար նախատեսված հորերին կից:

Նման արձանիկներ առայժմ հայտնի են միայն Շենգավիթ բնակավայրից: Թվագրվում են շենգավիթյան մշակույթի ուշ փուլով՝ մ.թ.ա. 2600-2400 թթ.:

Ցավոք, նշված երկու արձանիկների հայտնաբերման հանգամանքները դուրս են հնագիտական համատեքստից:

---

<sup>10</sup> Հճմու., օրինակ, Ավետիսյան, Գնունի, Մկրտչյան, Քորոխյան 2019, նկ. 2:

<sup>11</sup> Լոսյե տեղում, 603-604:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ավետիսյան Հ., Գեունի Ա., Մկրտչյան, Լ., Բորոխյան Ա. 2019.** Վիշապ քարակրթողների թասաձև փորվածքները և դրանց ընդհանուր զուգահեռները, Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, խմբագիրներ՝ Բորոխյան Ա., Ջիլիբերտ Ա., Հեկլա Պ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀԱԻ հրատարակչություն, Երևան, էջ 591- 624:
- Բորոխյան Ա., Ջիլիբերտ Ա., Հեկլա Պ. 2015.** Վիշապաքարերի հնագիտություն, Վիշապ քարակրթողները, խմբագիրներ՝ Պետրոսյան Ա., Բորոխյան Ա., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, «Գիտություն» հրատարակչություն, Երևան, էջ 269- 396:
- Խանզադյան Է. 1969.** Գտնի IV, Հնագիտական պեղումները Հայաստանում, N 12, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ հրատ.», 238 էջ:
- Մնացականյան Ա. 1955.** Հայկական զարդարվեստ, ԳԱ հրատարակչություն, Երևան, 658 էջ:
- Սիմոնյան Հ. 2013.** Շենգավիթ. շարքային քնակավայր, թե վաղ քարաքար, Հուշարձան, տարեգիրք Ը, «Հուշարձան» հրատարակչություն, Երևան, էջ 5-53:
- Антонова Е. 1972.** К вопросу о происхождении и смысловой нагрузке знаков на статуэтках анануской культуры, СА № 4, с. 7-18.
- Голан А. 1992.** Миф и символ, Издательство «Известия», Москва, 359 с.
- Урушадзе Н. 1988.** Древнегрузинское пластическое искусство, Издательство «Хеловнеба», Грузия, 180 с.
- Մենգավիտ 2015.** каталог археологических материалов из коллекции Музея истории Армении, Музей истории Армении, Составители - Бадалян Р. С., Овсепян С. Г., Хачатрян Л. В., Ереван. 245 с.
- Douglas B. 2005.** Prehistoric Figurines, Representation and Corporeality in the Neolithic, Published in the Taylor & Francis e-Library, 270 Madison Ave, New York, NY 10016, 243 p.

**Lauren T. 2004, Heady Business: Skulls, Heads, and Decapitation in Neolithic Anatolia and Greece**, Journal of Mediterranean Archaeology 17.2, ISSN (Print), pp. 139-163.

**Svend H. 2014, Neolithic Figurines in Anatolia, The Neolithic in Turkey**, vol. 6, Archaeology and Art Publications, Edited by M. Ozdogan, N. Bafigelen, P. Kuniholm, Istanbul, pp. 265-292.

#### ԱՂՆՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ I

Նկ. 1, 2, 3. Շենգավիթ, պահվում է՝ ԷՊԱԹ, կոլեկցիոն № 23/1, լրասնկարը՝ հողվածի հեղինակի:

Աղյուսակ II

Նկ. 1. Շենգավիթ, պահվում է՝ ԷՊԱԹ, կոլեկցիոն № 23/1, գծանկարը՝ հողվածի հեղինակի:

Աղյուսակ III

Նկ. 1. Շենգավիթ, Սիմոնյան Հ. 2013, պատկեր 14, նկ. 2:

Նկ. 2, 2a. Գողթ 1 (Գեղամա լեռներ), Բորոխյան Ա., Ջիլիբերտ Ա., Հնիլա Պ. 2015, 337:

**Աննա Ազիզյան** - էրբերոնի

պատմահնագիտական արգելոց-թանգարան,

գիտահետազոտական բաժնի վարիչ,

[annamalah@yahoo.com](mailto:annamalah@yahoo.com)

#### ABOUT ONE STONE STATUETTE FOUNDED FROM SHENGAVIT SETTLEMENT

**Keywords:** *Shengavit culture, statuette, Shengavit settlement, separately attached head, ornament, ritual.*


In 2016 in the area of the Shengavit monument was accidentally founded a small stone statuette. It is tetrahedron with form of rectangular, with smooth polished surfaces. The two seats of the statuette are wider than the other side of seats, the total height is 4.6 cm, the width is 2.5 cm, the thickness is 7 cm, the narrow seats climbing are slightly narrower. It is probably made of jas-


per, a semi-precious stone. The statuette is covered with engraved dot circles. The latter are covered with a whitish material for getting expressive look, and are partially preserved. The perimeter of the statuette carved on the front and back surfaces of the statuette, in our opinion, is not accidental and has a certain meaning. In this culture the ceramics decorated with similar images and concentric circles are known. These concentric circles have been observed in both and as a solitarium images and as a seed and reproduction, giving the meaning of fertility.


The particular interest represents the topic of connected and detachable heads from the body, about which there are some disagreements. By attaching the head separately to the body of the statuette, it seems to have "animated" it. In connection with the change of the content and the image of the specific ritual or ceremony, the heads were placed with different facial expressions, harmonizing it with the corresponding ceremony. In our opinion, the sculptor can also beg with dragon petroglyphs. With the general features of its structure, the position of the rectangle and the position of the head, it is close to the bull-shaped dragons. Since the opening of the statuette chest is poorly preserved, it is not excluded that the ox or bull's head will be adapted to the front of the statuette.

Such statuettes are known only from Shengavit settlement. They are dated to the late stage of Shengavit culture, BC 2600-2400. In our opinion, these two statuettes may have been used during the rituals associated with the plants of bread, and may have been placed next to the wells intended for them.

*Anna Azizyan - Erebuni Historical and Archaeological  
Museum-Reserve,  
Head of the Scientific Research Section  
[annamalah@yahoo.com](mailto:annamalah@yahoo.com)*









**ԵՂՋԵՐՈՒՆԵՐԻ ԵՎ ԱՐԵՎԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԿԱՊԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵՎ ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ  
ՄՇԱԿՈՒՅՑՆԵՐՈՒՄ\***

**ՀԱՍՄԻԿ ՀՄԱՅԱԿՅԱՆ**

**Բանալի բառեր՝** եղջերու, Փոքր Ասիա, Արև, ժայռապարկերներ, բրոնզե գուրիներ, որսորդական րեսառաններ, Հայկական լեռնաշխարհ, խեթական սեպագիր, պարկերագրություն:

Հոդվածում քննարկվում է եղջերուների և Արևի պաշտամունքի կապը Հայկական լեռնաշխարհից և Փոքր Ասիայից գրեթե հնագիտական և աղբյուրագիտական նյութերի հիման վրա: Ըստ ուսումնասիրողների<sup>\*</sup>, եղջերուների պաշտամունքի հնագույն վայրեր են համարվում Փոքր Ասիան՝ հատկապես վերջինիս արևելյան շրջանները, Հարավային Կովկասը, Կասպից և Միջերկրական ծովերի շրջանները: Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ թե՛ Փոքր Ասիայում քնակվող խաթական և խեթա-իտալիական ժողովուրդներին, թե՛ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչներին բնորոշ էին եղջերուների պաշտամունքը և նրա կապը Արևի պաշտամունքի հետ, և այս պարկերագումային ընդհանրությունները կարող են հավանաբար վկայել նրանց փոխադարձ շփումների և փոխազդեցությունների մասին, որոնք իրենց արտացոլումն են գտել ու ենթաշերտային կերպով պահպանվել հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ժառանգության մեջ:

\* Հոդվածը ներկայացվել է 11.06.2020: Գրախոսվել է 08.08.2020:

եղջերուների պաշտամունքը հնագույն արմատներ ունի Փոքր Ասիայում և Հայկական քարձրավանդակում, ինչի մասին վկայում են հնագիտական նյութերը և տեքստային վկայությունները: Ընդհանրապես, ըստ ուսումնասիրողների, եղջերուների պաշտամունքի հնագույն վայրեր են համարվում Փոքր Ասիան, հատկապես վերջինիս արևելյան շրջանները<sup>1</sup>, Հարավային Կովկասը, Կասպից և Միջերկրական ծովերի շրջանները<sup>2</sup>: Փոքր Ասիայից հայտնաբերված հնագիտական նյութերը վկայում են եղջերուի պաշտամունքի հնագույն ավանդույթներ նեոլիթից սկսած, օրինակ՝ Չաթալ Հոյուքում<sup>3</sup>, որտեղ ներկայացված են եղջերուների որսի տարբեր տեսարաններ, եղջերուների պատկերներ, որոնք նաև ծխական բովանդակություն ունեն (նկ. 1): Եղջերուների զոոմորֆիկ պատկերումներ գտնվել են նաև Ք.ա. III հազարամյակում Ալաշահույուքում<sup>4</sup> (նկ. 2), այնուհետև դրանք փոխակերպվում են մարդակերպ աստվածությունների Ք.ա. 19-րդ դարից, ինչն արդեն դիտարկելի է կապադովկյան կնիքների վրայի պատկերներից<sup>5</sup>: Խեթական սեպագիր աղբյուրներում պահպանվել են բազմաթիվ տեքստեր, հիմնականում ծխական բովանդակությամբ կամ ծխական արարողությունների ու տոների նկարագրություններ, որոնցում խոսվում է տաճարներին եղջերուներ նվիրաբերելու մասին: Եղջերուների պաշտամունքը ընդհանրապես խեթական հավատալիքներում առնչվել է արևի,

<sup>1</sup> Collins 1989: 162-163.

<sup>2</sup> Լույն տեղում, 164:

<sup>3</sup> Mellaart 1967: 96.

<sup>4</sup> Sellier 2016: 53.

<sup>5</sup> Լույն տեղում:

վերածնության<sup>6</sup>, պողաբերության, բնության հովանավորության և նախնիների պաշտամունքի հետ: Օրինակ, եղջերուի պաշտամունքի կապը խեթական Արիննա քաղաքի Արևի աստվածուհու հետ վկայված է մի շարք խեթական տեքստերում, այսպես, KUB XV, 22-ում նշվում է<sup>7</sup>. «Երկրորդ տարին է եղջերուներին Արիննա քաղաքում (...) Դու, Արև արքա, ողջ- ողջ պահում ես»<sup>8</sup>:

Խեթական տեքստերից հայտնի է, որ եղջերուներին ընտելացրել են, պահել Արևի աստծո տաճարում, և նրանց առջև կատարվել են ծիսակատարություններ: Նույնտարիյապես խեթական տոնի շրջանակներում իրականացվող ծեսերից մեկի ժամանակ, որ տեղի էր ունենում Արևի աստծո տաճարում, Պուդուհեպա թագուհին և նրա ամուսինը՝ խեթական արքա Խաթուսիլիսը, խոստանում են տաճարին նվիրաբերել արծաթյա դոտ, արծաթյա պատվանդան, ինչպես նաև եղջերուներ<sup>9</sup>: Բացի այդ, եղջերուի և Արևի աստծո ու աստվածուհու կապը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ Արևի աստծուն նվիրված ծիսակարգի ժամանակ թագավորը վերջինիս պատվին հեղում է կատարում եղջերուի պրոտոմով զավաթից<sup>10</sup>: Ի դեպ, այդպիսի եղջերվակերպ արծաթյա դիտոն է գտնվել, որի վրա պատկերված է եղջերուի վրա կանգնած աստված, որի առջև հեղում է կատարում թագավորը, այն թվագրվում է Ք.ա. 14-րդ դարով (նկ. 3, 3ա): Խեթական ծեսերից մեկում ներկայացվում է եղջերուի զոհաբերության դրվագ, որ կատարվում

<sup>6</sup> Լոյն տեղում:

<sup>7</sup> KUB XV, 22; *Археологія* 1982: 166-167.

<sup>8</sup> Լոյն տեղում, ծնթ. 43:

<sup>9</sup> Haas 1994: 587.

<sup>10</sup> Լոյն տեղում, 432:

է ծիսական Պիսկորնովա սարի վրա թագավորի ներկայությամբ<sup>11</sup>: Ի վերջո, խեթերն ունեին տուն, որ նվիրված էր հենց եղիկներին կամ եղջերուներին, կոչվում էր EZEN AYALI<sup>12</sup>:

Խեթական հին թագավորության շրջանի տեքստերում եղջերուների պաշտամունքին առնչվող աստվածները հանդես են գալիս հետևյալ անվանումներով՝ Լուլայամա, Կուռունտա կամ Ռունտա: Հնագիտական նյութերում, ինչպես նշվեց, հանդիպում են եղջերուի հետ կամ նրա վրա կանգնած աստվածների պատկերումներ, որը հնագույն փոքրասիական ավանդույթ է, օրինակ՝ Ցարասուց գտնված ռեֆիեֆի վրա պատկերված է եղջերուի վրա կանգնած աստված (նկ. 4), և նման պատկերումներ հանդիպում են դեռևս հին կապադովկյան կնիքների վրա: Սակայն հին խեթական շրջանին վերաբերող տեքստերի ուսումնասիրությունը թույլ չի տալիս պարզել պատկերված այդ աստվածությունների ինքնությունը, և միայն միջին և նոր թագավորության շրջանի տեքստերում նրանք նույնացվում են վերոնշյալ Կուռունտա/Կուռունտիյա, Ռունտա և Լամմա կամ պահապան աստծո հետ<sup>13</sup>: Կարելի է ենթադրել, որ եղջերուի պաշտամունքը և պատկերագրությունից վկայված վերոնշյալ եղջերուի վրա կանգնած աստվածները, որոնք հին խեթական շրջանում կարևոր դերակատարում կարող էին ունենալ, կապված որսորդության՝ տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկի հետ, այնուհետև, հասարակության ու տնտեսության մյուս ճյուղերի զարգացմանը զուգընթաց,

<sup>11</sup> Collins 1989: 160-161.

<sup>12</sup> Լույն տեղում, 162:

<sup>13</sup> Taracha 2009: 57.

իրենց դիրքը զիջում են այլ աստվածությունների՝ վերածվելով պարզապես պահապան աստվածությունների կամ միավորվելով այլ աստվածությունների հետ՝ այսուհանդերձ պահպանում են վաղ պատկերագրային առանձնահատկությունները: Այս աստվածությունների կարևորության մասին է վկայում այն հանգամանքը, որ խեթական միջին և նոր թագավորության շրջանի կրոնական փոփոխությունների արդյունքում այս հնագույն խեթա-լուվիական «եղջերու աստվածը» սկսում է կրել LAMMA անվանումը, որը պահապան աստվածների համար դրվող գաղափարագիր էր, կամ Կոտունտա/տիյա անվանումը՝ իր ուղեկից Ալայի հետ, իսկ որոշ տեքստերում, որոնք արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի պետական դիցարանը, հանդես են գալիս դիցարանը գլխավորող Ամպրոպի աստծուց և Արևի աստվածուհուց հետո<sup>14</sup>: Ինչ վերաբերում է եղջերուի անվանը, ապա տարօրինակ է, որ խեթական տեքստերում մինչև քոլորովին վերջերս հայտնի չէր նրա բուն խեթական անվանումը: Խեթական տեքստերում այն հանդես էր գալիս շումերական և արքադական գաղափարագրերով՝ շումերական՝ DARA-MAS և LULIM, և արքադական՝ *AYALU*: Սակայն Քոլինզը առաջարկել է խեթական տեքստերում հանդիպող *aliva* և *kurala* խեթերեն բառերը մեկնաբանել որպես եղջերու՝ նրա տարբեր տեսակները, իհարկե հիմնվելով համատեքստի վրա, և ցույց է տվել վերջիններիս կապը PIE \*el- «կարմիր եղնիկ» եզրույթ հնդեվրոպական մի շարք լեզուների, ի դեպ, այդ թվում և հայերենի համար և *kurala* եզրույթը, որը հանգում է PIE \*ker՝ եղջյուր արմատին, ինչը շատ համոզիչ է թվում, եթե հիշենք նաև

<sup>14</sup> Taracha 2009: 85.

եղջերուի վրա կանգնած աստվածներից Կոտունտիյա անվանումը<sup>15</sup>:

Եղջերունների պաշտամունքը վկայված է նաև Հայկական լեռնաշխարհում հնուց ի վեր: Նման պատկերումներ առկա են բրոնզե գոտիների, ծիսական անոթների վրա, ինչպես նաև առկա են եղջերունների արձանիկներ, բազմաթիվ եղջերունների պատկերումներ նաև ժայռապատկերներում: Ինչպես նշում է Հ. Մարտիրոսյանը. «Բրոնզեդարյան շրջանում մեր լեռները լի էին եղջերուներով, որոնց որսով առանձնապես լայնորեն զբաղվում էին մ.թ.ա. II հազ. առաջին կեսից մինչև մ.թ.ա. I հազ. սկիզբը»: Եվ ուսումնասիրողի կարծիքով այդ ժամանակաշրջանին են վերաբերում եղջերունների բազմաթիվ կերպավորումներն արվեստի հուշարձաններում, այդ թվում և ժայռապատկերներում, որոնք այցի են ընկնում գծերի նրբությամբ ու ճկունությամբ, կենդանիներին քնորոշ գծերի ստույգ վերարտադրությամբ<sup>16</sup>: Հետաքրքրական է, որ փոքրասիական հնագիտական նյութերը, խեթական սեպագիր վերոնշյալ տեքստերը, որոնք ի ցույց են դնում եղջերունների պաշտամունքի կապը Արևի կամ Արևի աստծո պաշտամունքի հետ, միանգամայն համընկնում են Հայկական լեռնաշխարհից գտնված հնագիտական նյութերում առկա պատկերացումների հետ:

Հայաստանյան նյութում եղջերուի և արևի կապը դիտարկելի է, օրինակ, Իջևանի շրջանի Ենոքավան գյուղի դամբարաններից մեկում գտնված բրոնզե գոտու վրայի պատկերներից, որը հրատարակել է Ս. Եսայանը: Գոտու վրա պատկերված որսի տեսարանը Եսայանը մեկնա-

<sup>15</sup> Collins 2003: 5-8.

<sup>16</sup> Մարտիրոսյան 1981, 35:

քանել է որպես պողաբերության գաղափարի, մասնավորապես արևի պաշտամունքի արտահայտություն, ինչը մանրամասնորեն քննարկվում է հողվածում<sup>17</sup> (նկ. 5): ՀԻսրայելյանը գոտու վրա պատկերված այս որսի տեսարանի մասին նշում է, որ պատկերը սակրածև վերջավորություններ ունեցող խաչի շնորհիվ բաժանվում է երկու մասի: Խաչից ձախ ընկած մասում, որն էլ հետաքրքրում է մեզ, կանգնած է աղեղնավոր որսորդ՝ գլխին արևի նմանվող ճառագայթավոր թագ, և նա ավելի քարձրահասակ է երկու ձիերի միջև և կառքի վրա կանգնած մարդկանցից: Նրա նետերն ընկել են, իսկ մեկը աղեղի վրա է: Նույն հատվածում պատկերված են երկու ձի, իսկ առջևում՝ մեկ այլ որսորդ՝ զինված նետ ու աղեղով, այնուհետև պատկերված է քառաձի երկանիվ մի սայլ՝ ձեռքին վահան բռնած մարդկային ֆիգուրով, իսկ վահանի կողքին թռչուն է, սայլին լծված չորս ձիերի առջևում կանգնած է նույն հսկայամարմին որսորդը՝ նետ ու աղեղը ձեռքին, և երեք նետեր, որոնք իրենց սլաքներով դեպի ներքև են ուղղված: Այս բոլորի առջևում կանգնած է մայր եղջերուն իր ձագերով: Ըստ Իսրայելյանի՝ եղջերուն իր ձագերով այստեղ ներկայանում է որպես պողաբերության մարմնավորող, իսկ նրան հովանավորողի դերում հանդես է գալիս ինքը՝ Արևի աստվածությունն իր բոլոր ատրիբուտներով<sup>18</sup>: Միանգամայն համաձայնելով այս մեկնաբանության հետ՝ կհավելեմք, որ այդ հսկայամարմին որսորդն իրավամբ արևի աստվածության մարմնավորումն է, և պատահական չէ, որ նրա նետերը չեն հասել եղջերուին և իր ձագերին, քանզի նա

<sup>17</sup> *Ecum* 1967: 221-226.

<sup>18</sup> *Իսրայելյան* 1973, 160-161:

հովանավորում է եղջերուին, մեկնաբանություն, որ համարժեք է խեթական տեքստերում առկա պատկերացումների հետ, որոնցում առկա է Արևի աստծո հովանավորությունը եղջերուների: Նմանատիպ բովանդակությամբ մեկ այլ գտտի է գտնվել Լճաշենից, որը թվագրվում է Ք.ա. XII-XI դարերով (նկ. 6): Այն պատրաստված է դրվագված բրոնզե թիթեղից: Նուրբ փորագրությամբ մակերեսը բաժանված է պլոմբետային չորս հատվածների, որոնցում հաջորդաբար պատկերված են երեքական խմբերով սուրացող եղջերուներ: Կենդանիների պրոնթաց վազքին ընդառաջ թռչում են թռչուններ, իսկ գոտու հատվածներն իրարից բաժանված են ոճավորված եռանկյունաձև թռչունների և վազող պարոպրագարդ ուղղահայաց զարդանախշի շարքերով<sup>19</sup>: Այս գոտու չորրորդ հատվածում սուրացող եղջերուի վզի տակ փորագրված սվաստիկան, մեր կարծիքով, ևս հուշում է Արև պաշտամունքի հետ կապը, քանզի սվաստիկայի առկայությունը միանշանակորեն հուշում է արևի պաշտամունքի մասին:

Ընդհանրապես եղջերուի և Արևի պաշտամունքի կապը հավանաբար բացատրվում է այն բանով, որ եղջերուի եղջյուրները, որոնք ամեն տարի թափվում և նորից աճում են, համարվել են կյանքի ու բնության վերակենդանացման սիմվոլ (խորհրդանիշ), և այդ է պատճառը, որ նրանց պաշտամունքը մի շարք ժողովուրդների մոտ առնչվում է կյանքի ու վերածնության խորհրդանիշ հանդիսացող Արևի պաշտամունքի հետ: Բազմաթիվ են եղջերուների պատկերումները նաև հայկական ժայռապատկերներում, որոնցում ևս դրսևորվում է եղջերուի և

<sup>19</sup> Հայացք բրոնզե դարից 2010, 120:



Արևի պաշտամունքի կապը, շատ դեպքերում այդ պատկերներն ուղղակի պատկերագարքումներ են վերոնշյալ խեթական տեքստերում առկա Արևի աստծո տաճարում ողջ-ողջ եղջերուներ պահելու, ընտելացնելու մասին վկայությունների համար: Օրինակ, Գեղամա լեռների ժայռապատկերներից մեկում առկա է հետևյալ պատկերը, որն աջի է ընկնում նաև նրբագեղությամբ և կատարման որոշակի համաչափությամբ. հորինվածքի կենտրոնում դեմ դիմաց փորագրված են սլացիկ, փաթթած եղջյուրներով զույգ եղջերուներ, որոնց պարանել է ներքևում պատկերված մի որսորդ: Առանձնապես ընդգծված են նրա ուժեղ թևերը՝ հնգմատնյա «ճառագայթող» վերջույթներով: Հիշտ նույն տիպի մեկ այլ եղջերուի էլ պարանել է աջից եկող որսորդը, որին հետևում է շունը: Այս բազմաթիվ հորինվածքի կենտրոնական մասում պատկերված տեսարանը՝ ճառագայթածև մատներով որսորդը և եղջերուները, ենթադրվում է, որ կատարվել են Ք.ա. II հազ., մինչդեռ մյուս պատկերները համարվել են առավել ուշ ժամանակաշրջանի վերամուծություն<sup>20</sup>: Կենտրոնում պատկերված ճառագայթավոր վերջույթներով մարդկային պատկերն ամենայն հավանականությամբ արեգակնային քնույթ ունեցող կերպար է, և այստեղ մենք հավկած ենք տեսնելու ծիսական պատկեր, որում Արևի աստվածը որսում է եղջերուներին (Նկ. 7): Լմանատիպ մի պատկեր է ներկայացված նաև Նկար 57,2-ում, որտեղ դարձյալ անզեն, «ճառագայթածև» վերջույթներով երկու որսորդ փորձում են պարանել եղջերուփին: Այստեղ կարևոր է, որ նրանք ոչ թե նետահարում են վերջիններին, այլ պարանում, ինչը նշանա-

<sup>20</sup> Մարտիրոսյան 1981, 37:

կում է, որ եղջերուներին հավանաբար ընտելացրել և պահել են (նկ. 8): Նույնանման պատկեր է առկա նաև 55 1, 2, (նկ. 9, 10) ժայռապատկերներում. առաջին պատկերում առկա են անզնն պատանու կողմից եղջերուներին պարանով որսալու, մյուս դեպքում՝ արդեն պարանված եղջերուների պատկերներ, որոնց առաջնորդում է զգեստավորված անզնն մի մարդ, որի գլխավերևում պատկերված կլոր շրջանակն այլ ժայռապատկերներում մեկնաբանվել է որպես արևի սիմվոլիկ գեղաձև պատկերում: Ըստ իս, այստեղ ևս գործ ունենք արևային աստվածության կողմից եղջերուներին ընտելացնելու պատկերացման հետ, որ, ինչպես նշեցինք վերևում, համարժեք էր խեթական պատկերացումներին:

Եղջերուների և արևի կապը դիտարկելի է նաև Ք. ա. II-I հազ. թվագրվող կավե սափորների և կարասների վրա առկա պատկերներում: Օրինակ, Շիրակից գտնված եղջերուի ռեյինՖ կրող կավե սափորի վերին մասում ներկայացված է երկարավուն դնչով եղջերու՝ գեղեցիկ եղջյուրներով, որ թվագրվում է Ք.ա. XII-IX դդ.: Եղջերուի իրանը զարդարված է զազաթներով դեպի ցած ուղղված կետագծումներով արված եռանկյունաձև նախշով: Նույնպիսի կետագծումներով են բոլորված եղջերուի աչքերը, ինչպես նաև եղջյուրները, սափորի միջնամասը զարդարում են նույնպես զազաթով դեպի ցած ուղղված կետագծումներով արված եռանկյունիները, որոնք ավարտվում են դարձյալ կետագծումներով տրված գնդաձև, հավանաբար արևանման պատկերով: Այստեղ դարձյալ ակնհայտ է արևի եղջերուի պաշտամունքի կապը (նկ. 11): Մեկ այլ կարասի վրա, որ գտնվել է Դվինից և թվագրվում է Ք.ա. X-XI դդ., պատկերված է թևատարած, հավանաբար արևի մարդկերպ մի աստվածություն,

որը ճառագայթներ է արձակում գլխից և ունի ճառագայթաձև վերջույթներ, իսկ կարասի վերին գոտու վրա պատկերված են երկնային լուսատուներ՝ շրջանաձև, իսկ միջին մասում պատկերված թևատարած արևային աստվածության կողքին եղջերուների և արևի սիմվոլիկ պատկերումներ են: Հետաքրքրական է նաև Արուճի համար 3 դամբարանից պեղված և Ք. ա. 1700-1400 թթ. Թվագրվող սափորը, որի վրա պատկերված են եղջերու, գայլեր և այծեր, սափորի պատկերագրությանն անդադարձած Գ. Արեշյանը նշում է, որ եղջերուն պատկերված է կարմիր գույնով, մինչդեռ մյուս կենդանիները՝ սևով, և այս հանգամանքը փաստում է, ըստ նրա, որ եղջերուն առնչվում է կարմիր կրակի՝ արևի պաշտամունքին<sup>21</sup>:

Կարելի է ենթադրել, իհարկե, որ մեր դիտարկված ընդհանրությունները խեթական և հայկական պատկերացումներում կարող են լինել տիպաբանական կամ միգրացե հանգում են ընդհանուր հնդեվրոպական ժառանգությանը կամ փոխազդեցությունների և միմյանց հարևանությամբ բնակվելու արդյունք են նաև, սակայն հարկ ենք համարում նշել, որ Գ. Արեշյանը, իր հետազոտություններից մեկում անդրադառնալով նախահնդեվրոպական «ծնունդ-մահ-վերածնունդ» առասպելաբանական ցիկլի կենդանական կողին, հիմնվելով լեզվաբանական, հնագիտական և առասպելաբանական նյութերի վրա, կատարել է շատ ուշագրավ դիտարկումներ, որոնցից հատկապես մեզ հետաքրքրեց իր ներկայացրած հետևյալ աղյուսակը, որը կազմված է ցուցադրելու

<sup>21</sup> Areshyan 2005: 235. Հայաստանյան հնագիտական նյութերում արևի պաշտամունքի և եղջերուի կապի առումով տե՛ս նաև **Նույն տեղում**, 240:

համար անատոլիական, այսինքն՝ նաև խեթական, պափոնական, հայ, հույն և իրանական ժողովուրդների պատկերացումներում առկա ընդհանրություններն ընդհանրապես եղջերու, գայլ/այծ, օձ-վիշապ հերթագայության և հարաբերակցության առումով, սակայն աղյուսակի վերին շարքը ներկայացնում է արև-եղջերու կապը, որից ակնհայտորեն պարզ է դառնում մեզ համար, որ աղյուսակում ներառված հնդեվրոպական ժողովուրդների պատկերացումներում միայն հայկական և խեթա-լուվիական/անատոլիական ժողովուրդների մոտ է դիտարկելի եղջերու-արև կապ, իսկ պափոնականի դեպքում տեսնում ենք միայն արև, հունականի դեպքում՝ այծեղջյուր՝ մի առասպելական կենդանի, սակայն արև չկա, իսկ իրանականի դեպքում չկան երկուսն էլ<sup>27</sup>:

Ամփոփելով կարելի է ասել, որ Փոքր Ասիայում քնակվող խաթական և խեթա-լուվիական ժողովուրդներին և Հայկական լեռնաշխարհի հնագույն քնակիչներին բնորոշ էին եղջերուների պաշտամունքը և նրա կապը Արևի պաշտամունքի հետ, և այս պատկերացումային ընդհանրությունները կարող են հավանաբար վկայել նրանց փոխադարձ շփումների և փոխազդեցությունների մասին, որոնք իրենց արտացոլումն են գտել ու ենթաշերտային կերպով պահպանվել հայ ժողովրդի հոգևոր-մշակութային ժառանգության մեջ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Խորայեցյան Հ. 1973.** Պաշտամունքը ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան:

<sup>27</sup> Areshyan 2005: 243.

- Հայացք բրնձե դարից 2010**, Կատարվոց-այլոմ, Հայաստանի պատմության թանգարան, Երևան:
- Մարտիրոսյան Հ. 1981**, Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 11, ժայռապատկերներ: Դրակ III, Երևան:
- Арзумба В. 1982**, Ритуалы и мифы Древней Анатолии, Москва.
- Есапи С. 1967**, Погребения No14 асхаблырекского могильника, ИФЖ, I, Ереван, с. 221-226:
- Areshyan G. 2005**, The Zoomorphic Code of the Proto-Indo-European Mythological Cycle of "Birth-Death- Resurrection": A Linguistic-Archaeological Reconstruction, Proceedings of The fourteenth Annual UCLA Indo-European Conference, pp. 238-249.
- Collins B. 1989**, The Representation of Wild Animals in Hittite Text, a Dissertation of Yale University in Candidacy of the Degree of Doctor of Philosophy.
- Collins B. 2003**, On the Trail of Deer: Hittite Kurals, Hittite Studies in Honor of Harry A. Hoffner, Jr. on the Occasion of His 65th Birthday, Edited by G. M. Beckman et al. Winona Lake, IN: Eisenbrauns, pp. 73-82.
- Haas V. 1994**, Geschichte der hethitischen Religion, Leiden.
- Mellaart J. 1967**, Çatal-Hüyük, Neolithic Town in Anatolia, New York.
- Sellier G. 2016**, Le culte du cerf anatolien; symbolism, évolution et constance, III<sup>e</sup>-I<sup>er</sup> millenaire a.C, Actes du colloque "Le sacré dans ses états" organisé par l'APOA, le 21-22 avril 2016 à l'UQAM, Association des Études de Proche-Orient Ancien.
- Taracha P. 2009**, Religions of Second Millennium Anatolia, Wiesbaden, Harrassowitz Verlag.

**Համիկ Հմայակյան - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ  
արևելագիտության ինստիտուտ,  
Հին Արևելքի բաժին, ավագ գիտաշխատող,  
hmayakyan@yahoo.com**

CONNECTION OF DEER AND THE SUN CULT IN CULTURES OF ARMENIA AND ASIA MINOR

HASMIK Hmayakyan

**Key words:** *deer, Asia Minor, Sun, rock paintings, bronze belts, hunting scenes, Armenian Highlands, Hittite cuneiforms, iconography.*

The article discusses the connection of deer and the Sun cult on the basis of archaeological artifacts and Hittite texts discovered from the Armenian Highlands and Asia Minor. According to the scholars, Asia Minor and especially its eastern regions, South Caucasus, Caspian and Mediterranean regions are considered to be the most ancient places of the deer cults. Our observations show that the deer cult was distinct to the Hattian and Hittite-Luwian people, the ancient inhabitants of the Armenian Highlands and its connection to the sun cult. The commonness of these beliefs can be an evidence of their mutual contacts and inter-influences. This has been reflected and preserved as substratum in the Armenian people's spiritual and cultural heritage.

**Hasmik Hmayakyan - PhD,**

*Institute of Oriental Studies NAS RA,*

*Department of Ancient Orient, Senior Researcher,*

[hmayakyan@yahoo.com](mailto:hmayakyan@yahoo.com)



Նկար 1



Նկար 2



Նկար 3



Detail from a  
silver rhyton  
ca. 1400 BC.

Նկար 3ա




Նկար 4

HRITE silver rhyton






Նկար 5



Նկար 6



Նկար 7



Նկար 8-9



Նկար 10

Նկար 11

**ԿԱՆԱՆՑ ԴԵՐՆ ԱՇՇՈՒՐ-ՔԱՆԵՇ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԱՌԵՎՏՐՈՒՄ\***

**ՌՈՐԵՆՏ ԴԱԶԱՐՅԱԼ**

**Քանալի բառեր՝** Քանեշ, Աշշուր, կին, ընտանիք, միջազգային առևտրոր, րուրդ, նամակներ, Փոքր Ասիա, Հայկական լեռնաշխարհ:

Աշշուրցի առևտրականները մ.թ.ա. 20-18-րդ դդ. Փոքր Ասիայի արևելքում, Հայկական լեռնաշխարհի արևմուտքում և Ասորիքի հյուսիսում՝ մոտ քառասուն քաղաքներում, հիմնադրել էին առևտրական կայաններ, որոնք փվյալ քաղաքներում նրանց առևտրային գործունեության կենտրոններն էին: Միջազգային առևտրական ցանցի հանգուցակետերը և գլխավոր քաղաքն էր Քանեշը կամ Նեասն՝ հեղազայում խեթական պետության մեջ հայտնի երկրորդ մայրաքաղաքը:

Սովորաբար աշշուրցի վաճառականները հիմնավորվում էին փոքրասիական քաղաքներում՝ գնելով այնպեղ րներ, կազմելով ընտանիքներ: Նրանց րներում էին պահվում նաև նրանց առևտրական արխիվները: Այդ առևտրականները նաև մշտական նամակագրական կապի մեջ էին իրենց հայրենի քաղաքի՝ Աշշուրի հետ: Հիմնականում դրանք փաստաթղթեր էին, որոնք վերաբերում էին նրանց առևտրային գործունեությանը: Հա-

\* Հոդվածը ներկայացվել է 15.07.2020: Գրայնություն է 08.08.2020: Հոդվածի թեման որպես զեկուցում հեղինակի կողմից ներկայացվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում կազմակերպված «Կա- նայք Արևելքում» խորագրով գիտաժողովում (2019 թ. դեկտեմբերի 15-ին):

ճախ այդ նամակներն ունեին անձնական, նեղ ընդա-  
նեկան բնույթ, և դրանց շնորհիվ մենք րեղեկանում ենք  
նաև այդ ժամանակաշրջանի ընդհանեկան հարաբերու-  
թյունների, անձնային կապերի և այլնի մասին: Այդ  
առևտրավարեսական հարաբերություններում կարևոր  
դերակատարում են ունեցել նաև կանայք:

Աշուր-Քանեշ<sup>1</sup> միջազգային առևտուրն իրականաց-  
վում էր Աշուր քաղաք-պետության և փոքրասիական  
քաղաք-պետությունների միջև կնքված պայմանագրերի  
հիման վրա: Պայմանագրերը, փաստորեն, աշուրցի  
առևտրականների առջև բաց էին արել Փոքր Ասիայի և  
Հայկական լեռնաշխարհի շուկաները<sup>2</sup>: Սա աշուրցիներ  
ի խաղաղ ներթափանցումն էր տարածաշրջան:

Աշուրցի առևտրականները կարողանում էին տեղի  
կառավարիչներից և արքաներից ստանալ այնպիսի  
իրավունքներ, որոնք նրանց թույլ էին տալիս քնակա-  
վայրերում հաստատվելուց հետո այնտեղ գործել իրենց  
առանձին օրենքներով և վարել անկախ ֆինանսական  
գործունեություն: Ըստ էության, առևտրային գաղութ-  
ներում գործում էին աշուրյան օրենքները: Աշուրցի  
առևտրականներն օգտագործում էին իրենց հաշվարկի

<sup>1</sup> Քանեշի կարումի տարածքից կամ Քուլթեփե հնավայրից (հայ. Զրզորք) է գտնվել, այսպես կոչված, կապպադովկյան (գերադասելի է դրանք անվանել *քանեշյան*) արյուսակների մեծագույն մասը (մոտ 23.000, սակայն Անկարայի Անատոլիական քաղաքակրթության թանգարանի հազարավոր տեքստեր դեռ սպասում են իրավա-  
րակման), (տե՛ս Michel 2003):

<sup>2</sup> Բացի Փոքր Ասիայի արևելյան, կենտրոնական և հարավային  
շրջաններից, առևտուրն ընդգրկել էր նաև թերակղզու արևմտյան  
մասը, տե՛ս Sahoglu 2005: 339-361:

միավորները, իրենց լեզուն, պաշտում էին իրենց աստվածություններին և իրենց ներքին հարցերը նույնպես կարգավորում էին աշշուրյան օրենքներով: Քանեչի աշշուրցի առևտրականներն ունեին նաև իրենց ավագների խորհուրդը:

Տեքստերում քիչ են տրված տեղացի քանեչցի առևտրականների անուններ<sup>3</sup>: Սակայն սա չի նշանակում, որ նրանք ներգրավված չեն եղել առևտրային գործունեության մեջ: Օրինակ, աշշուրցի առևտրականների տեքստերում շատ քիչ տեղեկություն կա աղի, ստրուկների, զենքի վաճառքի մասին. փաստ, որը կարող է վկայել այն մասին, որ այդ ապրանքների առևտրով զբաղվել են հիմնականում ոչ աշշուրցի առևտրականները:

Աշշուրցիները տեղացիներին անվանում էին *mi'ā'am* (տեղացի), իսկ տեղացիները նրանց անվանում էին *tam-kārum* (առևտրական, վաճառական, պարզապես աշշուրցի): Նրանք վարչական և իրավական առումով անկախ էին և առնչվում էին Քանեչի իշխանությունների հետ իրենց կարումի (աշշուրցիների հիմնած առևտրային գաղութը, բառացի՝ հանգրվան) ներկայացուցիչների միջոցով: Նրանց պարտականություններն ու իրավունքներն ամրագրվում էին երկկողմ պայմանագրերում, որտեղ ամրագրվում էին նաև տեղական իշխանությունների պարտականությունները: Աշշուրցի առևտրականները պարտավոր էին վճարել առևտրական հարկեր, իսկ տեղական իշխանությունները պարտավոր էին ապահո-

<sup>3</sup> Քանեչյան տեքստերում կան ասորաբաբելոնական, արևմտասեմական, իսրայական, խեթական, խուտիական անձնանուններ (Orlin 1970, Wilhelm 2008: 181-194, Hesse 2008: 9-29):

վել նրանց և նրանց ապրանքների անվտանգությունն իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներում<sup>4</sup>:

Աշուրացիները հիմնականում արտահանում էին արհեստագործական պատրաստի արտադրանք՝ գործվածքներ, հագուստ, կահկարասի: Սակայն Աշուր-Քանեշ առևտուրը հիմնականում հենվում էր երկու ապրանքների՝ անագի և բրդե գործվածքների վրա: Աշուրացիներն այս ապրանքների մի մասը ձեռք էին բերում Բաբելոնիայում և արտահանում Փոքր Ասիա<sup>5</sup>:

Ապրանքը քաղաք տեղ հասնելուն պես զնահատվում էր պալատում և կարող էր վաճառվել միայն դրանից հետո: Աշուրի առևտրականները, բացի միջազգային առևտրից, ներքաշված էին նաև տեղական առևտրային գործունեության մեջ:

Քանեշյան աղյուցները, տարատեսակ տեղեկատվությունից բացի, տեղեկություններ են պարունակում նաև Աշուր-Քանեշ միջազգային առևտրում կանանց դերի և ներգրավվածության վերաբերյալ:

Եշենք, որ Աշուրում մնացած աշուրցի առևտրականների կանանց ուսերին էին մնում տան և ընտանիքի հոգսերը: Սակայն նրանց Քանեշ և այլ փոքրասիական քաղաքներ ուղարկած նամակներից պարզ է դառնում, որ նրանք կարող էին հանդիսանալ իրենց տան սեփականատերը և հանդես գալ նաև որպես առևտրային գործունեության անմիջական մասնակիցներ:

Քանեշում և այլ քաղաքներում, որտեղ հաստատվում կամ առևտուր էին անում աշուրացիները, նրանք սովորաբար անուսանում էին տեղացի կանանց հետ: Սակայն

<sup>4</sup> Orlin 1970: 74-75; Michel 2014a: 69-73.

<sup>5</sup> Barjamovic 2011: 9.

կար երկու պայման. նրանք չէին կարող միաժամանակ ունենալ երկու կին միևնույն կարգավիճակով (աքք.<sup>6</sup> *adū-um* «գլխավոր կին, ամուսնացած կին», աքք.<sup>7</sup> *ambum* «երկրորդ կին, ծառա») և ապրեին միևնույն հարկի տակ: Բացի դրանից, աշշուրցի վաճառականները չէին կարող ունենալ մեկից ավելի կին նույն բնակավայրում<sup>8</sup>: Պատահում էր նաև այնպես, որ աշշուրցի այրի կանայք էին ամուսանում փոքրասիացի տղամարդկանց հետ և տեղափոխվում ապրելու իրենց ամուսինների բնակավայրերը<sup>9</sup>:

Միգայել Բադալյան - պ.գ.թ.,  
«Էրեբունի» պատմահնագիտական  
արգելից-թանգարանի փնտրեն  
miq.badalyan@gmail.com


FROM EREBUNI TO KARMIR BLUR.  
SOME REMARKS ON THE ESTABLISHMENT OF THE  
CITY OF TEİŞEBAINI

**Keywords:** *Erebuni, Karmir blur, Teişebaini, Urartu, Argištī, earthquake.*

We tend to assume that the foundation of the city of Teişebaini is directly connected with the earthquake recorded in Erebuni at the first half of the VII c. BC. In this respect, first of all, we need to find out why Rusa II built such an enormous city in the Ararat Plain, while large cities such as Erebuni and Argištīlīnili were already existed. Some inscribed objects, found from Karmir Blur during the excavations, bear the name of the city of Erebuni. Why were those objects transferred from Erebuni to Teişebaini? The construction of such a big fortress as Teişebaini would require a considerable amount of time. This means that during the period of its construction, the general political situation was peaceful, and a military reason thus unlikely. In our opinion, the most recent excavations at Erebuni fortress, especially from the 2014, 2016 seasons (co-directors: M. Badalyan, S. Deschamps)-can provide crucial data for the above-mentioned questions. The results of work in the sectors D1 and D2 in particular revealed clear evidence of a strong earthquake (Figure 2). This was confirmed also by an Armenian and French archaeo-seismologists, who were working in the site. In our personal opinion, the earthquake can be dated to the beginning to the middle of the 7th century B.C. This data should correspond to the foundation of Teişebaini. The earthquake could be a reason for the drying of the Erebuni water sources. As we have already mentioned, in that period water was a crucial problem for Urartu. This issue could have been the reason for the foundation of Karmir Blur.

Rusa II chose a position which was close to water sources, including the Hrazdan River, and the Urartian monarch also constructed the Umešini channel in the Ararat Plain. In our opinion, the dedication of the city to the weather god was meant as a prayer to Teišeba for rain and fertile lands.

**Miqael Badalyan - PhD.,**  
*Erebuni Historical and Archaeological  
Museum-Reserve, Director*  
miq.badalyan@gmail.com



**Հայաստանի Հանրապետության ուրարտական  
հուշարձանների քարտեզը: Կազմող՝ Հենրիկ Դանիելյան:**





Նկար 1: Աշոտ Մամաջանյան: Էրեբունիից դեպի Կարմիր բլուր



Նկար 2: Էրեբունու՝ 2016 թվականին հայտնաբերված ուրարտական փողոցը՝ երկրաշարժի ակնհայտ հետքերով

**ԱՊՍԱՄԲԵՆ ԷՐ ԱՐԴՅՈՔ ԵԳԻՊՏՈՍԸ ԴԱՐԵՑ Լ-Ի  
ԴԵՄ\***

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ**

**Բանալի բառեր՝** Դարեհ Լ, Բեհիսթոնի արձանագրություն, սկզբնաղբյուրներ, Եգիպտոս, սափրապ, ապրսպամրություն, Արյուանդես, Պեպրասպիս IV, Հերոդոտոս, ուզուրպպոր:

Եգիպտոսի ապսպամրության հարցը Դարեհ Լ-ի դեմ մասնագիտական գրականության մեջ փարբեր ենթադրությունների փեղիք է փվել, ինչը, անկասկած, պայմանավորված է սկզբնաղբյուրների կցկտուր փեղեկություններով: Մեզ համար ընդունելի է այն փեսակեպը, որ Եգիպտոսի սափրապ Արյուանդեսն իրեն անկախ է պահել Դարեհ Լ-ի նկատմամբ: Արյուանդեսն ապսպամրության որոշակի փորձեր կատարել էր Դարեհ Լ-ի իշխանության սկզբին՝ մ.թ.ա. 522-520 թվականներին, սակայն նրա փորձերն ինչ-ինչ պատճառներով հաջողություն չէին ունեցել. թերևս, Արյուանդեսը չի վայելել ժողովրդական լայն խավերի ու ազնվականության աջակցությունը: Նման պայմաններում հավանական է, որ Արյուանդեսն ինքն է հեպ կանգնել իր մտադրություններից, և Եգիպտական ապսպամրությունը չսկսված ավարտվել է:

Մ.թ.ա. 522 թ. դեկտեմբերին Դարեհ Լ-ը, գտնվելով Բաբելոնում, Բեհիսթոնի արձանագրության մեջ իր դեմ ապսպամրած երկրների շարքում Ասորեստանի և Պար-

\* Հոդվածը ներկայացվել է 31.01.2020: Գրախոսվել է 27.04.2020:

բնքի միջև հիշատակում է նաև Եզիպտոսը<sup>1</sup>: Բեհիսթունի արձանագրության սկզբնական հատվածում Եզիպտոսը՝ Mudrāyan-ն, նշված է Դարեհ I-ին հպատակ երկրների թվում<sup>2</sup>: Բացի այս երկու հիշատակություններից, Եզիպտոսի մասին Բեհիսթունի արձանագրության մեջ այլ տեղեկություններ չկան: Նկատենք, որ Բեհիսթունի արձանագրության գրման հավանական ժամանակը մ.թ.ա. 518 թվականն է<sup>3</sup>, հետևաբար, անկախ այն հանգամանքից, թե Եզիպտոսն իրոք ապստամբել էր Դարեհ I-ի դեմ, թե ոչ, այն համարվել է հպատակ երկրներից մեկը, քանի որ, օրինակ, Ղուկաստանն արձանագրության մեջ նշված չէ, ինչը նշանակում է, որ Ղուկաստանը (Ինդոս գետի հովիտը) նվաճվել է մ.թ.ա. 517 թվականի մոտերքը<sup>4</sup>: Ըստ էության, Եզիպտական ապստամբությունը ճնշվել է Դարեհ I-ի կառավարման երկրորդ տարուց ոչ ուշ<sup>5</sup>, այսինքն՝ մ.թ.ա. 521 թվականին:

Դարեհ I-ի դեմ Եզիպտոսի ապստամբության հարցը մասնագիտական գրականության մեջ տարբեր ենթադրությունների տեղիք է տվել, ինչը, անկասկած, պայմանավորված է սկզբնաղբյուրների կցկտուր տեղեկություններով: Այսպես, հիմնավորված չեն այն ուսումնասիրողների կարծիքները, ըստ որոնց՝ Եզիպտոսը Սակեի երկրի և Սատազյուտիայի հետ տերության կազմ են վերա-

<sup>1</sup> Kent 1953: 121. Տե՛ս նաև Դարեհ Վշտասպի Բիսթունյան արձանագրությունը 1964, 12 (իայերեն թարգմանության մեջ Դարբենը բաց է թողնված, և Եզիպտոսից հետո նշված է Մարգիանան); The Bisitun Inscription of Darius the Great 1978: 22; Grilhot-Susni, Herrenschildt, Malbran-Labat 1993: 26.

<sup>2</sup> Kent 1953: 117.

<sup>3</sup> Խորիկյան 2010, 12: Լույսի<sup>4</sup> 2014, 147:

<sup>4</sup> Խորիկյան 2010, 13:

<sup>5</sup> Cuyave 1954: 7.

դարձվել մ.թ.ա. 518 թվականից հետո, երբ ավարտվել էր տիգրախատույա սակերի դեմ կազմակերպված արշավանքը, և Բեհիսթունի արձանագրության աշխատանքները մոտենում էին ավարտին, ուստի հնարավոր չէր նոր իրադարձություններն արտացոլել արձանագրության մեջ<sup>6</sup>: Այս կարծիքները քննություն չեն բռնում թեկուզ հենց այն առումով, որ Դարեհի արձանագրությունը նվիրված էր իր իշխանության օրինականության քարոզին և պարսից արքայի դեմ ընդվզած ինքնակոչների և այլ ապստամբների ոչնչացմանը: Հետևաբար, այս հանգամանքը ելակետային հիմք է այն տեսակետն առաջ տանելու համար, որ եզիպտոսում ապստամբություն չի եղել, կամ ապստամբությունը չակված ինչ-որ ձևով տեղում ճնշվել է: Ամեն դեպքում դեմոթական երկու աղբյուրներից ակնհայտ է, որ գոնե մ.թ.ա. 519 թվականին ապստամբությունը եզիպտոսում ճնշվել էր<sup>7</sup>: Ինչ վերաբերում է Սատագյուտիայում և Սակերի երկրում ապստամբություններ լինել-չլինելուն, ապա այդ երկրներում ապստամբությունները լայն տարածում չեն ունեցել, և մ.թ.ա. 521 թվականին Դարեհը կրկին վերանվաճել էր այդ երկրները, Սատագյուտիայում և Սակերի երկրում

<sup>6</sup> Kent 1953: 163; Danzmaen 1985: 103-104; Cameron 1943: 309-311.

<sup>7</sup> Danzmaen 1985: 104; Griffith 1909: 25 և այլն: Համաձայն մ.թ.ա. 518 թ. դեկտեմբերի 30-ով թվագրված դեմոթական պատիժաններից մեկի՝ Դարեհ I-ը եզիպտական սատրապից (անունը չնշված է) պահանջում է Սուզա ուղարկել եզիպտական օրենքների գիտակների (տե՛ս Spiegelberg 1914: 30-31), այսինքն՝ պարսից արքայի տիրապետությունը եզիպտոսում ոչ միայն հաստատուն էր, այլև Արյուանդեանի փոխարինել էր նոր սատրապ (տե՛ս ստորև), եթե նկատի ունենանք, որ պատիժանում Դարեհի երրորդ տարին պետք է փոխարինվի չորրորդ տարով (տե՛ս Wijnsma 2018: 169):

ապստամբությունները դադարել էին Արաքոսիայում և Մարգինայում Դարեհի հաղթանակներից հետո<sup>8</sup>: Գանդուտակա վայրը, որտեղ տեղի էր ունեցել Վահյազդատայի և Դարեհի բանակների ճակատամարտը, Բեհիսթունի արձանագրության էլամերեն տարբերակում հիշատակվում է Արաքոսիայում<sup>9</sup>, իսկ աքքադերեն տարբերակում՝ Սատտագյուտիայում<sup>10</sup>, ինչը նշանակում է, որ Արաքոսիան և Սատտագյուտիան ապստամբությունների ժամանակափուլում ընկալվել են որպես վարչական մեկ միավոր<sup>11</sup>:

Եթե համենատում ենք եգիպտական ապստամբությունը Դարեհ I-ի դեմ ուղղված այլ խոշոր ապստամբությունների հետ, ապա ինքնուստինքյան այն համոզմունքն է ծնվում, որ եգիպտական ապստամբությունը ժողովրդական լայն աջակցություն չի ստացել, հակառակ դեպքում եգիպտոսի պատմությանը քաջատեղյակ Հերոդոտոսը հազիվ թե չպատմեր այդ իրադարձությունների մասին: Հետևաբար՝ ճիշտ է Վ. Ստրուվեն, որ եգիպտական ապստամբությունը համարում է աննշան իրադարձություն<sup>12</sup>: Յ. Պրաշեկն էլ գտնում էր, որ Դարեհ I-ի

<sup>8</sup> *Cyrus* 1954: 8.

<sup>9</sup> Գանդուտակա անունը էլամերեն տեղատում վերականգնում են Գանդումակակա (տե՛ս Kent 1953: 183; *Les inscriptions de la Perse achéménide* 1997: 205) կամ Իրդումակա (տե՛ս *Corpus des Inscriptions Royales en Elamite Achéménide* 1977: 122; *Grillot Susini, Herrenschildt, Malbran-Labat* 1993: 33), ինչը մեր ուսումնասիրության համար էական նշանակություն չունի:

<sup>10</sup> *The Bisitun Inscription of Darius the Great* 1978: 35; *Malbran-Labat* 1994: 116.

<sup>11</sup> *Isophrisus* 2016, 273:

<sup>12</sup> *Cyrus* 1954: 7 և այլն: Վ. Ստրուվեն իրավացիորեն մերժում է Զ. Բամբրոնի այն կարծիքը, որ ապստամբության ճշումն ուղեկցվել է

գահակալման սկզբին եզիպտական ապստամբություն չի եղել, քայց երկրի սատրապ Արյուանդեսն իրեն անկախ էր պահում պարսից արքայի նկատմամբ<sup>13</sup>: Է. Բիկերմանը ժամանակին Մ. Դանդամակին այն կարծիքն էր հայտնել, թե Դարեհ I-ի գահակալման սկզբին եզիպտոսում ոչ մի ապստամբություն էլ չէր եղել, եթե չհաշվենք Լիբիայի ժամանակավոր անկախացումը<sup>14</sup>: Վերջին տասնամյակներին կարծիք կա նաև, որ հենվելով Մենփիսի մոտ հայտնաբերված որոշ արձանագրությունների վրա՝ ապստամբությունն ունեցել է տեղային նշանակություն և տեղի է ունեցել մ.թ.ա. 522/521 սահմանագծին Պետուրասթիս Տև-նե-Ր<sup>5</sup> IV-ի (կամ III-ի<sup>15</sup>) գլխավորությամբ<sup>16</sup>: Այս վերջին տեսակետը կասկածելի է այն առումով, որ դժվար թե Դարեհ I-ը մանրամասներ չհաղորդեր հերթական ուզուրպատորի մասին: Ընդ որում հարց է ծագում նաև, թե ով է ճնշել ինքնակոչ փարսկոնի ապստամբությունը՝ պարսից արքա՞ն, թե՞ Արյուանդեսը: Պետուրասթիս IV-ի ապստամբությունն ընդգրկել է նաև Հարավային Օագիսը՝ Խարզան և Դախան<sup>17</sup>, քայց արդյոք Արյուանդե՞սն է ճնշել ապստամբությունը: Այս տեսակետը լրացուցիչ կիիմնավորվի միայն նոր աղբյուր-

---

զանգվածային սպանդով (տե՛ս **Cameron 1943**: 310): Խորհրդային պատմաբանը ցույց է տալիս, որ Ջ. Քամերոնի՝ նման ենթադրության համար հիմք ծառայած եզիպտացի մեծատոհմիկ պաշտոնյա Ողջա-հորեսեստի տեղեկությունը վերաբերում է Կամբյուսեսի՝ Նոբիայի դեմ կազմակերպված արշավանքից վերադառնալու ժամանակաշրջանին (տե՛ս նաև **Cr Payne 1952**: 45-46):

<sup>13</sup> **Prásek 1910**: 41.

<sup>14</sup> **Dandamies 1985**: 104.

<sup>15</sup> **Vitmann 2011**: 382.

<sup>16</sup> **Kaper 2015**: 125-149; **Wijnsma 2018**: 157-173.

<sup>17</sup> **Kaper 2015**: 137.

ների ի հայտ գալով: Հավելենք, որ նորանկաճ Եգիպտոսը կարող էր կրկին ապստամբել պարսից տիրապետության դեմ Կամբյուսեսի՝ մ.թ.ա. 522 թվականի մարտին Եգիպտոսից հեռանալուց հետո, այսինքն՝ Եգիպտացիներն ապստամբել են պարսից տերության դեմ անկախ Գառմնատայի խռովության ու Դարեհի իշխանության գալու հանգամանքից:

Մեզ համար ընդունելի է Յ. Պրաշեկի կարծիքը, որ Եգիպտոսի սատրապ Արյուանդեսն իրեն անկախ է պահել Դարեհ I-ի նկատմամբ (գուցե Պետութաթիս IV-ի ապստամբությունը ճնշելուց հետո): Հերոդոտոսը հայտնում է, որ Կամբյուսեսը Եգիպտոսի հյուպարքոս, այսինքն՝ կառավարիչ<sup>18</sup> էր նշանակել Արյուանդեսին: Հույն պատմիչն ավելացնում է. «Հետագայում այս Արյուանդեսը սպանվում է, քանի որ իրեն համարել էր Դարեհին հավասար: Քանզի լսելով ու տեսնելով, որ Դարեհը կամենում է իր համար թողնել այնպիսի հուշարձան, որպիսին երբևէ ոչ մի թագավոր չէր թողել, Արյուանդեսը ուզում է նրա օրինակին հետևել, որի համար էլ նա ստանում է իր վարձը: Դարեհը, հնարավորինս մաքուր ոսկի ձուլելով, դրամ է հատում: Իսկ Արյուանդեսը, որը Եգիպտոսի կառավարիչն էր, նույնը անում է արծաթ դրամներով. ուստի հիմա նա արյուանդական արծաթը ամենամաքուրն է: Դարեհը, լսելով նրա այս արարքի մասին, նրան մեղադրում է մեկ այլ, այն է՝ ապստամբություն նյութելու մեղադրանքով, և սպանում»<sup>19</sup>: Հերոդոտոսի մեջբերված տեղեկությունն անկասկած կարևոր

<sup>18</sup> Եգիպտական սատրապության մասին մանրամասն տե՛ս **Խոթիկյան 2018**, 34-46:

<sup>19</sup> **Հերոդոտոս 1986**, IV, 166; **Herodotus 1928**: 370, 372.

է, չնայած այն հանգամանքին, որ տեղեկության մեջ կա ժամանակագրական շեղում: Նկատի ունենանք, որ Դարեհ I-ի դրամական քարեփոխումը տեղի էր ունեցել մ.թ.ա. 517 թ., այսինքն՝ Բեհիսթունի արձանագրությունը գրելուց հետո: Հետևաբար՝ Արյուանդեաը կարծես թե պետք է սպանված լիներ մ.թ.ա. 517 թվականից առաջ: Ընդ որում Արյուանդեաի կողմից արձաթե դրամների հատումը սատրապների իրավունքներից մեկն էր<sup>20</sup>, այսինքն՝ խոսքը վերաբերում է պարսկական արձաթե դրամին<sup>21</sup>: Իրոք հևարավոր է, որ Արյուանդեաի արձաթե դրամներն<sup>22</sup> ավելի մաքուր են եղել, քան Դարեհիներ, սակայն Արյուանդեաի նպատակը, ամենայն հավանականությամբ, վարձկաններ հավաքագրելն էր, և չի րացառվում, որ նա արձաթե դրամներ հատում էր մինչև Դարեհ I-ի զահակալումը ու հավանաբար փոխել էր արձաթի կշռի ընդունված չափանիշները՝ նաև եզիպտական հարկը վճարելու համար<sup>23</sup>:

Ամեն դեպքում Արյուանդեաի այս քայլն ուղղված էր Դարեհ I-ի իշխանության դեմ<sup>24</sup>, սակայն վերջինս կանխում է ապստամբության տարածումը, ե՞րբ և ինչպե՞ս է կանխում, սա է հարցը: Անկասկած, Արյուանդեաը հազիվ թե մ.թ.ա. 518 թվականից հետո փորձեր ընդվզել պարսից ամենագոր արքայի դեմ, քանի որ վերջինս վերականգնել էր իր տերության ամբողջականությունը: Մնում է ենթադրել, որ Արյուանդեան ապստամբության որոշակի

<sup>20</sup> *Dariusنامه*, *Tyconin* 1980: 205-206.

<sup>21</sup> *Milne* 1938: 245-246.

<sup>22</sup> Դրամները մեզ չեն հասել, չնայած եզիպտոսում գործարքներն իրականացվում էին կշռված ծովակտորներով (*Olmstead* 1960: 224):

<sup>23</sup> *Briant* 2002: 410.

<sup>24</sup> Հմմտ, *Bodzek* 2014: 5:





որում աստրապական՝ եգիպտական զորքի<sup>29</sup> մեջ պարսիկները զգալի և հավատարիմ ուժ են եղել: Հավանաբար Դարեհի I-ի գահակալության սկզբին Արյուանդեսի ապստամբության փորձի մեջ պետք է, որ Եգիպտոսում գտնվող պարսիկները որոշակի հույսեր ներշնչած լինեին իրենց աստրապին, սակայն հետագայում Արյուանդեսի նպատակները հորս են ցնդում՝ հենարան չունենալու և Դարեհի իշխանության ամրապնդվելու պատճառով:

Միաժամանակ նշենք, որ Բարկայի գրավման ժամանակի մասին պատմագիտության մեջ հստակություն չկա: Այդ իրադարձությունը թվագրվում է կամ մ.թ.ա. 513/512 թվականով, կամ մ.թ.ա. 510 և 492 թվականների միջև, երբ Արյուանդեսին փոխարինել էր Փերենդատեսը<sup>30</sup>: Բացառված չէ, որ վերջինս Արյուանդեսին փոխարինել է մ.թ.ա. 518 թ. անտան վերջերին կամ աշնան սկզբներին, երբ Դարեհը Եգիպտոսում էր<sup>31</sup>: Ըստ էության, Դարեհ I-ը հազիվ թե անհավատարիմ աստրապին թողներ իր պաշտոնում և գալով Եգիպտոս՝ նրան անմիջապես փոխարինել է Փերենդատեսով: Նման մոտեցման դեպքում Արյուանդեսի ռազմական գործողությունները Լիբիայում պետք է թվագրել մ.թ.ա. 518 թվականից առաջ, հավանաբար Դարեհ I-ի գահակալության սկզբին՝ մ.թ.ա. 522-520 թվականներին, երբ Դարեհ I-ի համար ծանր ժամանակներ էին:

<sup>29</sup> **Լոպս տեղում**, IV, 167:

<sup>30</sup> **Dariusnes 1985**: 105, **Olmstead 1960**: 225, **Yoyotte 1972**: 266, **Bresciani 1985**: 507. Համաձայն այլ կարծիքների՝ Դարեհը Եգիպտոսում կարող էր լինել նաև մ.թ.ա. 519 թ. (տե՛ս, օրինակ, **Wijnsma 2018**: 170):

<sup>31</sup> **Dariusnes 1985**: 105, **Wiedemann 1880**: 236, **Cameron 1943**: 311; **Parker 1941**: 376 և հաջ.:

Բեհիսթունի արձանագրությունը, Հերոդոտոսի և Պոլինոսի տեղեկությունները, մեկը մյուսին լրացնելով, ցույց են տալիս, որ Արյուանդեսի իշխանությունը եգիպտոսում հեղինակություն չի վայելել, և վերջինս ունեցել է անջատողական նկրտումներ, ինչի պատճառով էլ պատժվել է պարսից արքայի կողմից: Հերոդոտոսի պատմությունն Արյուանդեսի մասին որոշ ընդհանուր զուգահեռների կարող է հանգեցնել Լյուդիայի սատրապ Օրոյտեսի վերաբերյալ տեղեկությունները քննելիս<sup>32</sup>: Հերոդոտոսն անհավատարիմ սատրապի մասին գրում է. «Իշխանությունը վերցնելուց հետո Դարեհը մտադրվեց պատժել Օրոյտեսին՝ նրա բոլոր չարագործությունների և հատկապես Միտրոբատեսի և նրա որդու սպանության համար: Այնժամ Դարեհը մտածեց, որ նրա դեմ իսկույն զորք ուղարկելն անպատեհ է, քանի որ երկրում դեռևս շարունակվում էին խռովությունները, իսկ ինքը տակավին նոր էր վերցրել իշխանությունը: Բացի այդ, Դարեհը գիտեր, որ Օրոյտեսն ուներ ռազմական մեծ ուժ, նա ուներ «հազար» պարսիկ նիզակակիրներից բաղկացած թիկնազոր, նրա սատրապության կազմում էին Փոյուզիան, Լյուդիան և Հոնիան...»<sup>33</sup>: Օրոյտեսը դավադրաբար սպանվում է, բայց կարևորն այն է, որ Արյուանդեսին ևս Դարեհը սպանել է տալիս (հավանաբար) իր իշխանությունն ամրապնդելուց հետո, քանի որ եգիպտոսի սատրապը նույնպես հզոր էր:

Այսպիսով, ի մի բերելով կատարված քննությունը, կարող ենք եզրակացնել, որ Բեհիսթունի արձանագրության մեջ եգիպտական ապստամբության մասին ման-

<sup>32</sup> Հմմտ. *Стросе* 1952: 46:

<sup>33</sup> *Հերոդոտոս* 1986, III, 127-128:

րամասն տեղեկությունների բացակայությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ Արյունդեսը չի հասցրել հեռուն գնացող նպատակներ իրականացնել Դարեհ 1-ի հաջողությունների պատճառով, և միայն մ.թ.ա. 518 թվականին էլ Դարեհը նրան փոխարինում այլ աստրապով: Մյուս կողմից էլ պետք է նշենք, որ Արյունդեսի անհավատարմությունը Դարեհի նկատմամբ ի վերջո չավարտվեց պարսից աստրապի կողմից եզիպտական փարավոն հռչակվելով, ինչն, անկասկած, Բեհիսթունի արձանագրությունում կարտացոլվեր:

Ինչ վերաբերում է Պետրոպասթիս IV-ի ապստամբությանը, ապա այդ ապստամբությունն առկա աղբյուրագիտական նյութի պայմաններում դեռևս կասկածելի է կամ զրնե մեծ ծավալում չի ունեցել: Նկատենք նաև, որ հազիվ թե Դարեհ 1-ը Պետրոպասթիս IV-ին պարտության մատնելու մասին Բեհիսթունի արձանագրության մեջ չի շատակեր թեկուզ միայն այն պատճառով, որ վերջինս կհամարվեր անօրեն իշխանության եկած և օրինական թագավորի դեմ ապստամբած անձ, ու դրանով իսկ պարսից նոր արքան, Եզիպտոսի նվաճման փառքն իրեն վերագրելով, մոռանալ կտար Կամբյուեսի նվաճումները:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Դարեհ Վշտասպի Քիսեթունյան արձանագրությունը. 1964,** Թարգմ. քննարկից, առաջաբան և ծանոթ. Գ. Նայբանդյանի, ԵՊՀ հրատ., Երևան, 30 էջ:

**Խորիկյան Հ. 2018,** Եզիպտոսն Աքեմենյան Պարսկաստանի աստրապական բաժանման համակարգում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXXI, Երևան, էջ 34-46:

- Խորհկյան Հ. 2016**, Արեւմտեան Պարսկաստանի VII սատրապության տեղադրության շուրջ, Արևելագիտության հարցեր (Գիտական հոդվածների պարբերական ժողովածու), ԵՊՀ հրատ., № 11, էջ 270-283:
- Խորհկյան Յովհ. 2014**, Սատրապությունների հերոդոտեան ցուցակը (Պատմաաշխարհագրական ցննություն), «Հայկազեան հայագիտական հանդես», հ. ԼՂ, Պեղրույ, էջ 143-161:
- Խորհկյան Հ. 2010**, Արեւմտեան Պարսկաստանի վարչական քաժանումների շուրջ, Հեղինակային հրատ., Երևան, 57 էջ:
- Շերոդոտոս 1986**, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկաշարյանի, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 651 էջ:
- Дандамаев М. А. 1985**, Политическая история Ахеменидской державы, Главная редакция восточной литературы издательства «Наука», Москва, 319 с.
- Дандамаев М. А., Луконин В. Г. 1980**, Культура и экономика древнего Ирана, Главная редакция восточной литературы издательства «Наука», Москва, 416 с.
- Струве В. В. 1954**, Восстание в Египте в первый год царствования Дария I, Палестинский сборник, I, Москва-Ленинград, с. 7-13.
- Струве В. В. 1952**, Датировка Бехистунской надписи, Вестник древней истории, № 1, с. 26-48.
- Bodzek J. 2014**, Remarks on the Origins of Achaemenid Satrapic Coinages, *Folia Numismatica* 28/1, Supplementum ad Acta Musei Moraviae, Scientiae sociales XCIX, pp. 3-10.
- Bresciani E. 1985**, The Persian Occupation of Egypt, in: "The Cambridge History of Iran", Vol. 2, Cambridge, pp. 502-528.
- Briant P. 2002**, From Cyrus to Alexander. A History of the Persian Empire, Translated by P. T. Daniels, Winona Lake, Eisenbrauns, Indiana, XXI+1196 p.
- Cameron G. G. 1943**, Darius, Egypt, and the "Lands beyond the Sea", *Journal of Near Eastern Studies*, Vol. II, № 4, pp. 307-313.
- Corpus des Inscriptions Royales en Elamite Achéménide. 1977**, par François Vallat, Thèse présentée pour l'obtention du Doctorat de IIIe cycle, Paris, 256 p.

- Griffith F. L. 1909.** Catalogue of the Demotic Papyri in the John Rylands Library at Manchester, Vol. III, London University Press, Manchester, XII+468 p.
- Grillot-Susini F., Herrenschildt C., Malbran-Labat F. 1993.** La version élamite de la trilingue de Behistun: une nouvelle lecture, *Journal Asiatique*, Vol. 281, № 1-2, pp. 19-59.
- Herodotus 1928.** with an English translation by A. D. Godley, Vol. II, Cambridge-Massachusetts-London, Loeb Classical Library, XVIII+416 p.
- Kaper O. E. 2015.** Petubastis IV in the Dakhla Oasis: New Evidence about an Early Rebellion against Persian Rule and Its Suppression in Political Memory. In: *Political Memory in and after the Persian Empire*, Ed. by J. M. Silverman and C. Waerzeggers, Atlanta, pp. 125-149.
- Kent R. 1953.** *Old Persian. Grammar. Texts. Lexicon.* 2nd ed., American Oriental Society, New Haven, XI+219 p.
- Les inscriptions de la Perse achéménide.** 1997, Traduit du vieux perse, de l'élamite, du babylonien et de l'araméen, présenté et annoté par Pierre Lecoq, Gallimard, Paris, 330 p.
- Malbran-Labat F. 1994.** La version akkadienne de l'inscription trilingue de Darius à Behistun, *GEL*, Roma, 174 p.
- Milne J. G. 1938.** The Silver of Aryandes, *The Journal of Egyptian Archaeology*, Vol. 24, № 2, pp. 245-246.
- Olmstead A. T. 1960.** *History of the Persian Empire*, Third Impression, The University of Chicago Press, Chicago, XXXII+568 p.
- Parker R. A. 1941.** Darius and his Egyptian Campaign, *The American Journal of Semitic Languages and Literatures*, Vol. 58, № 4, pp. 373-377.
- Polyaenus's Stratagems of War.** 1793, by R. Shepherd, Printed for George Nicole, Bookseller to His Majesty, Pall-Mall, London, XXXVI+366 p.
- Posener G. 1936.** *La première domination Perse en Égypte*, recueil d'inscriptions hiéroglyphiques, Imprimerie de l'Institut français d'archéologie orientale, Le Caire, XV+206 p.+17 planches.
- Prásek J. 1910.** *Geschichte der Meder und Perser bis zur Makedonischen Eroberung*, Bd II, F.A.Perthes, Gotha, XII+256 S.
- Spiegelberg W. 1914.** *Die sogenannte Demotische Chronik des Pap. 215 der Bibliothèque Nationale zu Paris nebst den auf der*

Rückseite des Papyrus stehenden Texten, Demotische Studien 7, J. C. Hinrichs'sche Buchhandlung, Leipzig, III+145 S.+IX Tafeln.

**The Bisitun Inscription of Darius the Great 1978.** Babylonian Version, Coepus Inscriptionum Iranicarum, Part I, Inscriptions of Ancient Iran, Vol II, The Babylonian Versions of the Achaemenian Inscriptions, Text I, Lund Humphries, London, XIV+73 p.

**Vitmann G. 2011.** Ägypten zur Zeit der Perserherrschaft, Herodot und das Persische Weltreich, Ed. by R. Rollinger, B. Truschneegg, R. Bichler, Wiesbaden, S. 373-429.

**Wiedemann A. 1880.** Geschichte Ägyptens von Psammetich I. bis auf Alexander den Grossen, Verlag von J. A. Barth, Leipzig, VIII+312 S.

**Wijnsma U. Z. 2018.** The Worst Revolt of the Bisitun Crisis: A Chronological Reconstruction of the Egyptian Revolt under Petubastis IV, *Journal of Near Eastern Studies*, Vol. 77, № 2, pp. 157-173.

**Yoyotte J. 1972.** Les inscriptions hiéroglyphiques. Darius et l'Égypte, *Journal Asiatique*, t. 260, Paris, f. 3-4, pp. 253-266.

Հովհաննես Խորիկյան - պ. գ. թ.,  
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,  
Իրանի բաժին, առաջատար գիտաշխատող,  
hovhkor78@mail.ru

#### DID EGYPT REVOLT AGAINST DARIUS I?

**Keywords:** *Darius I, Bisitun inscription, Primary sources, Egypt, Satrap, Revolt, Aryandes, Petubastis IV, Herodotus, Usurper.*

Egypt's revolt against Darius I gives rise to various assumptions which are undoubtedly due to scarce information available via primary sources. We are for the opinion that Egypt satrap Aryandes kept himself independent of Darius I. Aryandes made certain attempts to rebel at the beginning of Darius I's rules in 522-520 BC, but his attempts somehow failed to succeed. Perhaps

Aryandes wasn't supported by broader classes and nobility. In such conditions, Aryandes possibly backed from his intentions, and the Egyptian rebellion ended with even being started. In Bisitun's inscription, the absence of the details on Egyptian rebellion is because Aryandes didn't manage to implement long-term goals because of Darius I's successes, and only in 518 BC Darius replaced him with another satrap. On the other hand, it should be mentioned that Aryandes's unfaithfulness to Darius didn't end with the proclamation of the pharaoh by the Persian satrap, which would undoubtedly have been mentioned in Bisitun's inscription.

**Hovhannes Khorikyan** - *PhD,*  
*Institute of Oriental Studies NAS RA,*  
*Department of Iran, Leading researcher,*  
**hovhkor78@mail.ru**



ՄԻՇՐԴԱՏ I ԱՐՇԱԿՈՒՆՈՒՄ S.7.2 ՏԻՊԻ  
ԵՐԿՔԱՂՔՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ\*

ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻՔՅԱՆ

**Բանալի բառեր՝** Արշակ I, Արշակ II, դրահմա, երկբաղ-  
բուս, Պարթևատան, Վրկան, Անտիոքոս III, Միհրդատ I,  
Հեկատոնպիրոս:

Միհրդատ I-ի օրոք Պարթևական պետության մեջ կապարված վերափոխություններն իրենց յուրօրինակ արվագեղումն են գրել նրա դրամահատության մեջ: Հողվածի շրջանակներում քննության են առնվել Միհրդատի գահակալության սկզբներին հարված՝ այսպես կոչված 7-րդ տիպի բրոնզե դրամների պատկերագրական համակարգը, թողարկման ժամանակը, պարունակած տեղեկատվությունն ու Միհրդատ I-ի վաղ շրջանի մյուս դրամական տիպերի հետ դրանց ոճական ու գաղափարական աղերսները: Պարթևական դրամահատության մեջ առաջինն այս դրամների վրա է, որ Պարթուննի նկատմամբ Արշակունիների նվաճման իրավունքն արտահայտող խորհրդանշանները փոխարինված են ինվենտիվորայի հունական տեսարանով: Դրամների քննարկվող տիպն ունեցել է քաղաքական-քարոզչական նշանակություն, սակայն առաջին անգամ այն հասցեագրվել է ոչ թե պարների հանրության, այլ Պարթևական տերության հունահելլենիստական բնակչությանը: Ընդհանուր առմամբ, Միհրդատ I-ի կողմից հունական դիցուհու և հելլենիստական խորհրդանշան-

\* Հողվածը ներկայացվել է 28.04.2020: Գրախոսվել է 21.05.2020:

ների կիրառությունը ճիշդ կլինի դիտարկել որպես հողային բուսազավթումների ու արտաքսման իր նախորդների քաղաքականությունից հրաժարվելու և հունահելլենիստական քնակչության հետ խաղաղ համակցության անցնելու պարաստականության հայտարարություն:

### **S 7.2 տիպի երկբաղբուրների նկարագրությունը<sup>1</sup>**

Ս. Դովինն պարթևական արվեստի հիմնական առանձնահատկությունը համարում է հունական և հին առաջավորասիական մշակութային ոճերն ու մոտիվները փոխառնելու և սեփական քոչվորականի հետ դրանց համակցությամբ նոր ձևեր ստեղծելու զարմանալի կարողությունը<sup>2</sup>: Վաղպարթևական պաշտոնական կերպարվեստում գաղափարական և ոճական տարրերի համադրության այսպիսի օրինակներ են Դ. Սելվուդի նշանավոր «Տիպահամարում»<sup>3</sup> պարթևական դրամների VII տիպին պատկանող բրոնզե երկբաղբուրները<sup>4</sup> (նկար 1): Դ. Սելվուդի կարծիքով, որը կարծես թե դրամագետների առարկությանը ցի հանդիպել, դրանք հատվել են Հեկատոմպիլոսի (ներկայիս Շահր-ի Կումիս) դրամահատարանում: Դրամների քաշը տատանվում է 2,85-3,70 գրամի միջև, իսկ տրամագիծը՝ 16-17 մմ է, որով դրանք ընդ-

<sup>1</sup> Մենք օգտվելու ենք պարթևական դրամների դասակարգման համընդհանուր ճանաչում գտած ձևից (ըստ Դ. Սելվուդի «Տիպահամարի» S 7):

<sup>2</sup> Downey 1986. I.

<sup>3</sup> Sellwood 1980.

<sup>4</sup> Երկբաղբուրների նկարները ներառված չեն Դ. Սելվուդի աշխատության մեջ, բայց հասանելի են [http://www.parthia.com/parthia\\_sellwood.htm](http://www.parthia.com/parthia_sellwood.htm) կայքում, որին և հղելու ենք՝ S 7.2 դրամների վերաբերյալ դիտարկումներում:

հանրանում են Արշակ I-ի (Ք.ա. 247-211 թթ.)<sup>5</sup> և Արշակ II-ի (Ք.ա. 211-185 թթ.) երկբաղբուսների հետ: S 7.2 երկբաղբուսների երեսի պատկերը ճշտորեն կրկնում է նույն տիպի արձաթե դրահմանների երեսի պատկերը (նկար 2), երկու դեպքում էլ արքայի՝ հեյլենիստական նորաձևությանը համապատասխան՝ սափրված դեմքով գլուխը ներկայացված է ձախ դարձած դիրքով: Նրա գլխին կուրբասի (պարսկ. *kurpāsa*, թուրք. *başlık*)՝ ականջակալներով փափուկ սաղավարտածն գլխարկ է: Քոչվորական հանդերձանքին քնորոշ այս տարրն Աքեմենյան դարաշրջանում արևելաիրանական և միջինասիական աստրապների գլխի հարդարանքի հիմնական ձևն էր<sup>6</sup>: Սակայն, ինչպես նկատում է Ջ. Գեյլենը, առաջին Արշակունիների գլխին այն դարձել էր «նվաճողի կարգավիճակի, նրանց ծագման և էթնո-մշակութային պատկանելության խորհրդանիշը»<sup>7</sup>: Թեև S 7.2 երկբաղբուսների մեզ հասած նմուշները բավականին մաշված են, այնուամենայնիվ, նկատելի է, որ դրանց վրա կրկնված են S 7.1 դրահմանների դիմերեսի պատկերի նաև մանրամասները. քաղցրանների վրա ևս արքան ականջօղ է կրում, բացի այդ նրա գլխի հարդարանքում նույնպես կուրբասի հետ դիտվում է համադրված<sup>8</sup>:

<sup>5</sup> Վաղպարթևական արքայացանկի ու նրա ժամանակագրության հարցերում առաջնորդվելու ենք Գ. Աստարի կողմից 2006 թ. առաջարկված սխեմայով (Assar 2006a: 87-158):

<sup>6</sup> Sellwood 1983: 279-280; Kawami 1987: 3; Peck 1993: 408. Հմմտ. Kottakomso 1968: 53-71:

<sup>7</sup> Gaslain 2005: 9-30.

<sup>8</sup> Assar G. Bagloo 2006: 26. Քննարկվող դրահմանների՝ Դ. Սելվուդի «Տիպահամարի» էլեկտրոնային հրատարակության մեջ ներառված որոշ օրինակների վրա, դրանց մաշվածության պատճառով, դիտվում են փ նշմարվում:

Արշակ I-ի և Արշակ II-ի երկաթղուների դարձերեսների պատկերագրությունը բաղկացած է աստվածային փառքի՝ *xvarənah*-ի մասին հին արևելաիրանական քոչվորների պատկերացումներն արտահայտող խորհրդանշաններից (պատյանի մեջ դրված աղեղ<sup>9</sup>, ցլի գլխի վրա կանգնած թևատարած արծիվ (վարզան բազե): Դրանք, ազդարարելով մակեդոնական տիրապետության դեմ պարների տարած հաղթանակը<sup>10</sup>, միևնույն ժամանակ, իրենց կիրառության շտաովորվ գծագրում էին նվաճման իրավունքով պարների ձեռք բերած նոր հայրենիքի վարչաքաղաքական սահմանները<sup>11</sup>: Դրանց լեգենդը պարունակում է միայն *APΣAKOY* (= *Արշակի*) անունը<sup>12</sup>:

<sup>9</sup> *Paenecius* 1977: 83-84; **Մեկնքյան** 2012, 60-61:

<sup>10</sup> *Assar* 2004, 78, footn. 69.

<sup>11</sup> **Մեկնքյան** 2012, 45:

<sup>12</sup> Առաջին Արշակունիների դրամական լեգենդում արքայական տիտղոսի քաջակալությունը բազում ենթադրությունների տեղիք է տվել (*Kousslema* 1968: 65; *Assar* 2004, 71; *Olbrycht* 2011: 233-234; **Մեկնքյան** 2012, էջ 38): Գոյացող հակասությունը մեկնաբանելի է պատմական զուգահեռման մեթոդով: Դիադեմաներ կան նաև հելլենիստական դարաշրջանի այլ տիրակալների գլխի հարդարանքում, որոնք պաշտոնապես արքա չեն հռչակվել: Առտալոսյան արքայատան հիմնադիր Ֆիլետերուսը երբեք արքա չի կոչվել, սակայն եվմենես I-ի հատած դրամների վրա նրա գլուխը զարդարված է դիադեմայով (*Morkholm* 1991: 129, № 409): Նմանապես արևելաիրանական դինաստիաներից մեկի՝ Նաշունի դրամների դարձերեսին քաջակալում է արքայական տիտղոսը, քայք դիմերեսին նա դիադեմա է կրում (**Bopearachchi** 1997: 67-73): Բակտրիայի տիրակալներից մեկը՝ Հերոսը, նույնպես արքայական տիտղոս չէր կրում, սակայն պատկերվել է դիադեմայով (**Sachs** 2003: № 148a): Դա քաջատրվում է հելլենիստական դարաշրջանում տարածված ավանդակարգով, ըստ որի՝ արքայական տիտղոսի ընդունումը մշտապես հաջորդում էր նախկին վեհապետի կամ արքայական հակառակորդի դեմ տարած հաղթանակին (**Մեկնքյան** 2012, 38): Ուստի այդ տիտղոսի քաջակալության տե-

Սրանց հետ S 7.2 երկբաղրուանների աղերսը սուկ գաղափարական է, մինչդեռ հորինվածքային առումով այն կատարելապես նորոյթ է: Դրանց դարձերեսին պատկերված է Նիկե դիցուհին՝ երկար, մինչև գետինը հասնող հունական հագուստով, մագերի հունական հարդարանքով, աջ ձեռքին՝ պակ, իսկ ձախին արմավենու ճյուղ է րոնած<sup>33</sup>: Առաջինը հաղթանակի, իսկ երկրորդը ինվեստիտուրայի խորհրդանշաններ էին, որոնց հելլենիստական դարաշրջանի պատկերագրության մեջ համադրված են՝ պայմանավորված արքայական իշխանության ծագման և բնույթի վերաբերյալ պատկերացումներով: Այլ խոսքով՝ S 7.2 երկբաղրուանների պատկերագրական համալիրը նույնպես խորհրդապաշտությամբ է հագեցած, և այստեղ էլ հորինվածքում առկա է դինամիկա<sup>34</sup>: Սակայն նորոյթ է այն, որ դինամիկան արտահայտված է բրոնզե դրամների վրա և հորինվածքի մեջ էլ արևելաիրանական-քոչվորական պատկերագրության տարրերը փոխարինված են հունահելլենիստական տարրերով:

---

սանկունից պետք է անհրաժեշտ համարել Սելևոս II-ի դեմ Արշակ I-ի հաղթանակի վերաբերյալ Հուստինոսի (*Justinus* **XLI. 4. 9**) հաղորդումը, մանավանդ, որ այն հակասում է Ստրաբոնի վկայությանը, ըստ որի՝ Արշակը ստիպված է եղել փախչել և ապավինել ապսիսիների պաշտպանությանը (*Strabon* **XI, 8.8**):

<sup>33</sup> *Sellwood* 1980: 7. 2, *Curtis* 2007: 418-421.

<sup>34</sup> Ավելի վաղ դինամիկան, որպես այդպիսին, դրսևորվել էր Արշակ II-ի դրահմանների վրա: Այսպես կոչված «պարթևական աղեղնավորի» պատկերաձևի վերարտադրության արդյունքում ողջ հորինվածքը վերափոխադրվել էր որպես Արշակունիների հարստության աստվածացված հիմնադրի կրմից Արշակ II-ին արքայական իշխանության խորհրդանշանի՝ աղեղի շնորհման՝ ինվեստիտուրայի տեսարան (*Comacremio, Farnoux* 2013: 339-340, Հմմտ. *Da, Browe* 2009: 26):

### S 7.2 դրամների հեղինակի և ժամանակի հարցը

Վաղյաբրթեական մյուս դրամների պես S 7.2 երկբաղջուսները ևս թվագրված չեն: Ուստի բավականին դժվար է Արշակունիների դրամական պատկերագրության ոլորտում վերոնշյալ նորանուծությունների ժամանակն ու քաղաքական պատճառները պարզելը:

Դ. Սելվուդը պարթևական դրամների S 7 տիպը վերագրել է Միհրդատ I-ի կառավարման առաջին շրջանին՝ ելնելով գերազանցապես դրանց մետրոլոգիական և տեխնիկական առանձնահատկությունից և այն իրողությունից, որ Բուջնուրդի գանձում այդ տիպի դրահմաներ չկան<sup>15</sup>: Այսպիսի ժամանակագրությանն առաջին անգամ առարկել են Գ. Ասսարն ու Մ. Բազլուն: Վերջիններիս կարծիքով S 7 տիպի արձաթե դրահմաներն ու բրոնզե երկբաղջուսները որպես հուշարձաններ թողարկել է Արշակ II-ը՝ Բ.ա. 189-187 թթ.<sup>16</sup> ի նշանավորումն Բ.ա. 190 թ. Մագնեզիայի մոտ Անտիոքոս III-ի պարտությունից հետո Սելևկանների գերիշխանությունից պարների երկրորդ ազատագրության<sup>16</sup>: Երկու տարի անց Գ. Կոշելնևկոն ևս փորձել է վերանայել Դ. Սելվուդի սխեման և Արշակ I-ին է վերագրել ոչ միայն S 5.1 և S 6.1 տիպերը, որոնց դարձերեսին «պարթևական աղեղնավորը» նստած է գահավորակ դիֆրոսի վրա, այլև S 7.1 և S 8.1 տիպերը, որոնց դարձերեսին նա ներկայացված է Դելի-

<sup>15</sup> Մոտավորապես 209 թ. թաղված և 1964 թ. հայտնաբերված Բուջնուրդի գանձը պարունակել է տարբեր ծագման մոտ 3000 դրամներ, որոնցից 60-ը պատկանել են Արշակ I-ին և մոտ 850-ը՝ Արշակ II-ին (Abgaryans, Sellwood 1971: 104-106, 109-111, 119): Դ. Սելվուդի «Տիպահամարում» դրանք դասակարգված են I-VI տիպերում:

<sup>16</sup> Assar, Bagloo 2006: 33.

յան քարի՝ օմփոլոսի վրա նստած<sup>17</sup>: Ավելի ուշ Գ. Կոշելենկոն հրաժարվեց S 7.1 և S 8.1 տիպերի վերաբերյալ իր նախորդ կարծիքից՝ փոխարենը Արշակ I-ին վերագրելով S. 9 տիպը, որի վրա «պարթևական աղեղնավորը» նստած է օմփոլոսի վրա, իսկ նրա երկու կողմերում ուղղածիզ գրությամբ դրամական լեգենդն է՝ ΑΡΣΑΚΟΥ ΒΑΣΙΛΕΥΣ<sup>18</sup>:

Մի կողմ թողնելով S 5.1 և S 6.1 տիպերի վերաբերյալ Գ. Կոշելենկոյի դիտարկումները՝ նշենք միայն, որ S 7.1, S 8.1 և S 9 տիպերի վերաբերյալ նրա մեկնաբանությունը, ըստ էության, բավականին ապրիորի է, քանի որ նրանում զարմանալիորեն հաշվի չի առնվել Բուջնուրդի գանձում այդ տիպի դրամների բացակայությունը: Բացի այդ, հեղինակն ուշադրություն չի դարձրել նաև այդ և Արշակ I-ին վերագրված դրամական մյուս տիպերի մետրոլոգիական և կատարողական տարբերություններին, որոնք անհնարին էին դարձնում դրանց միաժամանակյա շրջանառությունը<sup>19</sup>:

Ինչ վերաբերում է Գ. Ասարի ու Մ. Բազլոյի մեկնաբանությանը, ապա այն միայն արտաքուստ է բացատրում Բուջնուրդի գանձում S 7 տիպի դրամների բացակայությունը: Եվ թեպետ համահեղինակներն իրենց կարծիքը հիմնավորելու նպատակով կոմաններ են փնտրում պարթևական դրամագիտության տվյալներում ու գրավոր սկզբնաղբյուրներում, այդուհանդերձ, նրանց մեկնաբանությունը նույնպես ոչ միայն հիմնավորման կարոտ է մնում, այլև հարուցում է պատկերագրական և աղբյուրագիտական բնույթի լուրջ առարկություններ:

<sup>17</sup> Κομμελενκο 2008: 139-140.

<sup>18</sup> Κομμελενκο, Γ' αιώνα 2013: 343-344.

<sup>19</sup> Abgarians, Sellwood 1971: 109-111, 119.

Ելնելով հողվածի շահեկանությունից՝ նպատակահարմար ենք գտնում S 7.2 դրամների պատկերագրական համակարգի դիտարկումը սկսել նրա նշանակության վերաբերյալ Գ. Ասարի ու Մ. Բազլուի առաջարկած կարծիքի քննության համապատկերում:

Այսպես, եթե S 7.2 երկքաղցրաները հուշադրամների նշանակություն ունենային, ապա դրանց թողարկումը պետք է միանվագ բնույթ կրեր, իսկ նրանց պատկերագրությունն էլ ավելի կամ պակաս չափով նույնական լիներ: Մինչդեռ դրանց օրինակների դարձերեսների համեմատությունը երևան է հանում ոճական և կատարողական էական տարբերություններ: Նախ՝ Գ. Սելվուդի «Տիպահամարի» լրացված էլեկտրոնային հրատարակության մեջ ներկայացված օրինակների վրա Նիկեն թևավոր չէ<sup>20</sup>, մինչդեռ Գ. Ասարի ու Մ. Բազլուի հրապարակած օրինակում Նիկեի թևերը շատ ընդգծված են: Ակնհայտ է նաև, որ դրամների առանցքի համեմատ դիցուհու պատկերի տեղադրությունները տարբեր են. մի դեպքում այն առանցքից ձախ է տեղադրված, մեկ այլ դեպքում՝ աջ, իսկ երրորդ դեպքում նա ներկայացված է դրամի առանցքով<sup>21</sup>: Բացի այդ, թեև բոլոր դեպքերում էլ դիցուհու զբվիչը ձախ է շրջված, նրա մարմինը մի դեպքում ներկայացված է երեք քառորդ, մյուս դեպքերում՝ ճակատային դիրքով: Վերջապես, «Տիպահամարի» էլեկտրոնային հրատարակության մեջ ներկայացված օրինակներում դիցուհու պատկերները սլացիկ են ու նրբագեղ, մինչդեռ Գ. Ասարի ու Մ. Բազլուի հրապարակած նորահայտ դրամի վրա նա ավելի կարճահասակ է, իսկ

<sup>20</sup> Sellwood 1980: 7.2.

<sup>21</sup> Sellwood 1980: 7.2 variants.



քանդակը՝ անհամեմատ կուպիտ<sup>22</sup>։ Առաջին դեպքում դրամական լեզենը ներկայացված է դիցուհու պատկերի և դրամի եզրագծի միջև՝ ուղղանկյալ գրությամբ, իսկ նորահայտ օրինակի վրա այն տեղադրված է դարձերեսի աջակողմյան եզրագծին կպած։ Բացի այդ, որոշ օրինակների վրա «ΑΡΞΑΚΟΥ» անվան առաջին երկու և չորրորդ տառերը շրջված են, իսկ մյուսներում ոչ։ Ակնհայտ է նաև դրանց քաշի տարբերությունը. «Տիպահամարում» ներկայացված օրինակներում այն տատանվում է 2,85-3,27 գրամի միջև, մինչդեռ Գ. Ասարի ու Մ. Բազլուի հրապարակած նորահայտ դրամի քաշը 3,70 գ է։ Նշված տարբերություններից հետևում է, որ կամ այս տիպի դրամներ, հեկատոմպիլոյանից բացի, թողարկվել են նաև այլ դրամահատարաններում, կամ էլ, որ դրանք հատվել են Հեկատոմպիլոսում, բայց մեկից ավելի անգամ և տարբեր դրամահատական դրոշմոցների միջոցով։ Երկու դեպքում էլ եզրակացությունը կարող է լինել մեկը՝ S 7.2 երկբաղբուսները թողարկվել են ո՛չ որպես հուշադրամներ։

Վերոնշյալ մեկնաբանությունը մեզ անընդունեյի է թվում նաև այլ տեսանկյուններից։ Իսկապես Մագնեզիայի մոտ Անտիոքոս III-ի պարտությունը ճակատագրական նշանակություն ունեցավ նրա տերության համար։ Ապամեայի Բ.ա. 188 թ. պայմանագրով Անտիոքոս III-ը մեկընդմիջտ կորցրեց Տակրոսյան լեռներից հյուսիս ընկած տարածքները<sup>23</sup> և ստանձնեց պարտավորություններ<sup>24</sup>, որոնք երբեմնի գերտերությունը վերածում էին երկրորդական բնույթի պետության։ Այդուհանդերձ, հեղ-

<sup>22</sup> Assar, Bagloo 2006: 26.

<sup>23</sup> Livius XXXVIII, 38.4.

<sup>24</sup> Livius XXXVIII, 38.8-14.

լեւիստական արևելքում Սելևկյանները շարունակում էին մնալ հզորագույն ուժը, մանավանդ որ արևմտյան և հյուսիսային ուղղություններով ակտիվ քաղաքականության կատեցումը, ըստ էության, ազատում էր նրանց ձեռքերը արևելյան ուղղությամբ գործելու համար: Ի դեպ, Ապամեայի հաշտության պայմանագիրը չէր շոշափում Սելևկյանների արևելյան տիրույթների պատկանելության հարցը՝ այդպիսով ճանաչելով դրանց նկատմամբ Անտիոքոս III-ի իրավունքները: Ցավոք, գրավոր աղբյուրները ոչինչ չեն հաղորդում, թե պարները Սելևկյաններից ազատագրվելու գայթակղիչ հեռանկարի և նրանց կողմից նորից ջախջախվելու վտանգի միջև որն են նախընտրել: Դատելով աղբյուրների լուսթյունից՝ պարները ձեռնպահ են մնացել գայթակղությունից: Հավանաբար որոշիչ է եղել Արշակ I-ի և Արշակ II-ի պարտությունների մասին թարմ հիշողությունը<sup>25</sup>:

Քննարկվող մեկնաբանությունն անհավանական է թվում, եթե անգամ ենթադրենք, որ Անտիոքոս III-ի պարտությունից հետո Արշակ II-ը գործնականում վերականգնել է իր անկախությունը: Պարների հանրույթի մեջ, որտեղ ռազմական սխրանքը վեր էր դասվում ամեն ինչից<sup>26</sup>, «անհավանական քաջությամբ» օժտված Արշակ II-ը<sup>27</sup> չէր համարձակվի հաղթանակի և ինվեստիտուրայի տեսարանով դրամներ թողարկել մի իրադարձության առթիվ, որին նա ո՛չ ռազմական, ո՛չ էլ անգամ դիվանագիտական մասնակցություն չէր ունեցել: Դա կլիներ

<sup>25</sup> **Be.auxsames 2018:** 271, Գ. Աստարը 2006 թ. հրատարակած մեկ այլ հոդվածում 209 թ. պարթևա-սելևկյան պայմանագրի խախտող համարում է Հրահատ I-ին (Ք.ա. 168-165 թթ.) (**Assar 2006a:** 88):

<sup>26</sup> **Justinus II,** 3, 7.

<sup>27</sup> **Justinus XLI,** 5, 7.

պարզ չարաշահում, որը փառավորելու փոխարեն կենդանակազմեր նրան<sup>26</sup>: Մինչդեռ Գ. Ասսարն ու Մ. Բագլուն ոչ միայն անտեսում են Արշակի հեղինակության դեմ նման քայլի վտանգավորությունը, այլև, մատնացույց անելով այն փաստը, որ S 7.1 դրահմանների դարձերեսին Արշակունիների արքայատան հիմնադիր Արշակը գահավորակ դիֆրուսի փոխարեն նստած է օմփուսի վրա, եզրակացնում են. «Նարավիր է, որ Բ.ա. 189 թ. Անտիոքոս III-ի պարտությունից հետո պարթևներն իրենց արքայատան հիմնադիր էպոնիմին անչել են Դելփյան քարին՝ ցույց տալու համար, որ երկրի կենտրոնը, որը հույների կողմից վերապահված էր Ապոլլոն աստծուն, այժմ զբաղեցված է նոր իշխանության կողմից»<sup>27</sup>:

Գ. Ասսարի ու Մ. Բագլուի առաջարկած մեկնաբանության քննության շրջանակներում հարկ ենք համարում անդրադառնալ նաև S 7 տիպի դրամների հասցեականության խնդրին: Բրոնզե դրամների թողարկումը գերազանցապես նախատեսված էր ներքին շրջանառության համար, իսկ նրանց արտահայտած պաշտոնական գաղափարներն էլ սովորաբար հասցեագրվում էին հենց տեղական հանրությանը: Այս տեսանկյունից S 7.2 երկբաղբուսների դարձերեսի պատկերագրության հունական ոճից ու խորհրդանշաններից պետք է եզրակացնել, որ դրանց հասցեատերը ոչ թե պարների հանրույթն է

<sup>26</sup> Հատկանշական է որ Դիոն Կասիուսը նմանատիպ մի առիթով ծաղրում է Անտոնինոս Կարակալա կայսրին. «Նա մեծապես պարծենում էր, որ պարթևների թագավոր Վոլոգեսոսի (Վաղարշ V) մահից հետո նրա որդիները կռվում էին գահի համար՝ պատահաբար կատարվող այդ դեպքերը վերագրելով իր կտտարած նախապատրաստական աշխատանքին» (Dio Cassius LXXVIII, 12.2a):

<sup>27</sup> Assar Baglioni 2006: 26.

ելել, այլ նրանց տիրապետության տակ հայտնված հունահելլենիստական քնակչությունը: Հետևաբար՝ սեփական դրամների վրա ինվեստիտորայի իրանական պատկերազրությունը հունահելլենիստականով վերափոխելը պետք է գնահատել որպես հունահելլենիստական քնակչության և մշակույթի նկատմամբ դրական վերաբերմունքի, պարների հանրույթի հելլենականացման պատրաստականության արտահայտություն: Գրավոր աղբյուրները մինչև Ք.ա. 209 թ. Անտիոքոս III-ի դեմ Արշակ II-ի պատերազմը ընդ Պարթունենում և Վրկանում հիշատակում են մի շարք ջաղաքներ (Ալեքսանդրոպոլիսը<sup>30</sup>, Հեկատոմպիոսը<sup>31</sup>, Դարան<sup>32</sup>, Աստակը (Արշակիա)<sup>33</sup>, Սոտեյրը<sup>34</sup>, Կալլիոպը<sup>35</sup>, Խարիտեն<sup>36</sup>, Աքայը<sup>37</sup>, Տամբրակը<sup>38</sup> և Սիրիսքսը<sup>39</sup> և այլք<sup>40</sup>), որոնց մեծ մասը Սելևկյանների օրոք պոլիսային կառուցվածք և բավականին սովոր հունական քնակչություն ուներ<sup>41</sup>: Սակայն

<sup>30</sup> **Pliny** 6. 113. Դատելով այն բանից, որ Բսիդրոսն ու մյուս հեղինակներն այն չեն հիշատակում, ենթադրում են, որ ջաղաքը հիմնադրումից հետո երկար կյանք չի ունեցել (**Obrycht** 2015: 121): Հմմտ. **Komellecko** 1979: 129:

<sup>31</sup> **Polybius** X. 28. 7; **Curtius** VI, 2, 15; **Appianus Syr.**, 57; **Strabon**, XI, 9.1.

<sup>32</sup> **Justinus** XLI, 5. 2-4.

<sup>33</sup> **Isidoros** 11.

<sup>34</sup> **Appianus Syr.**, 57.

<sup>35</sup> **Appianus Syr.**, 57.

<sup>36</sup> **Polybius** X. 31.

<sup>37</sup> **Appianus Syr.**, 57.

<sup>38</sup> **Polybius** X. 31.

<sup>39</sup> **Polybius** X. 31. 5-6, 11.

<sup>40</sup> Գ. Կոչելենկոն, հիմնվելով Ատ. Բյուզանդացու մի հաղորդման վրա, եզրակացնում է, որ Արևելյան Մաքաստանում Սելևկոս Նիկատորի հիմնադրած մեկ այլ պոլիս՝ Եվրոպան (հետագայի Ռազան), նույնպես նվաճվել էր Արշակ II-ի կողմից և վերակոչվել Արշակիա (**Komellecko**, **Gamma** 2012: 36):

<sup>41</sup> **Komellecko** 1979: 127-129.

հարց է առաջանում, թե ինչպիսի հարաբերություններ ունեն Արշակ II-ը հունական այդ պոլիսների հետ և ներդաշնակում է արդյոք Տ 7 տիպի դրամների պարունակած քաղաքական ուղեքնն այդ հարաբերություններին: Արշակ II-ի Տ 5 և Տ 6 տիպի դրամների «սկյութական» պատկերագրությունն ու Ստրաբոնի մի հաղորդումը<sup>42</sup> հիմք են տալիս եզրակացնելու, որ Արշակ II-ը տեղական քնակչության<sup>1</sup> հույների, պարթևների ու վրկանների դեմ շարունակել է հողագրվման և հպատակեցման իր հոր քաղաքականությունը: Արշակունիների պետության կազմավորման փուլում այն նորահաստատ արքայատան շուրջը պարսների հանրության համախմբման և նրա լրջության ապահովման միջոց էր<sup>43</sup>: Բայց միևնույն ժամանակ այդ քաղաքականությունն ընդդեմ պարսների էր համախմբում ոչ միայն Պարթևստանի և Վրկանի, այլև Բակտրիայի հունական քնակչությանը: Ինչպես երևում է, տեղական և եվկոր քնակչության միջև հակամարտությունը սովորական ռազմաքաղաքական առճակատումից վերաճել է ավելի ընդգրկուն էթնո-մշակութային և քաղաքակրթական (նստակյաց-քոչվոր, երկրագործ – խաշնարած) դիմակայության<sup>44</sup>:

---

<sup>42</sup> **Strabon XI.** 9. 2. «Սկզբում Արշակը անգոր էր՝ անընդհատ պատերազմելով նրանց հետ, ումից նա զավթել էր հողը, ինչպես ինքը, նույնպես և նրա ժառանգորդները: Մակայն ռազմական հաջողությունների շնորհիվ հարևան շրջանների մշտական նվաճումների արդյունքում նրանք ...հզորացան... »:

<sup>43</sup> **Бачахьянц 2018** 236.

<sup>44</sup> Այս առումով խոսում է այն փաստը, որ Բակտրիայի արքա Դիոդոտ II-ը (Ք.ա. 235-225 թթ.) իր ողջ ընտանիքի հետ սպանվեց հունական վերնախավի ներկայացուցիչ եվտիդեմոսի կողմից (**Polybios XI.** 34, 2-3) այն քանի համար, որ դաշնակցել էր Արշակ I-ի հետ: Ըստ

Արշակ II-ի դեմ Անտիոքոս III-ի պատերազմն արժատական ազդեցություն ունեցավ պարսերի ու հունական պոլիսների հետագա հարաբերությունների վրա: Պարտված Արշակ II-ը ստիպված էր Ք.ա. 208 թ. կնքել հաշտություն, որի պայմանները, ցավոք, հստակ չեն: Սակայն նկատի ունենալով այն փաստը, որ Արշակ II-ի հետ հաշտություն կնքելու պահին սելևկյան զորքերն արդեն գրավել էին նրա պետության գրեթե ողջ տարածքը, կարելի է կարծել, որ հաշտության պայմանները պարսերի համար եղել են քավականին ծանր: Ըստ երևույթին, Արշակ II-ը ոչ միայն կորցրել է ինքնուրույն դրամահատության իրավունքը և վերածվել Սելևկյաններից կախյալ սովորական դինաստի<sup>45</sup>, այլև զրկվել է նվաճած տարածքների մեծ մասից՝ իր ձեռքում պահելով Սոմբարի ու Ատրեկի միայն այն շրջանները, որոնք պարսերը զբաղեցրել էին իրենց առաջին ներխուժման ժամանակ<sup>46</sup>: Այստեղ հունական պոլիսներ չկային, և հետևաբար՝ Արշակ II-ի ենթադրվող քաղաքական-մշակութային «հայտարարագիրը» տեղական հասցեատեր չուներ:

Բացի վերոհիշյալից, նշենք մի կարևոր հանգամանք ևս. Պոլիբիոսը հաղորդում է, որ պատերազմի ընթացքում պարսերը Սիրիսքսում սրի են քաշել քաղաքի հույն բնակչությանը՝ կասկածելով Սելևկյանների նկատմամբ համակրանքի մեջ<sup>47</sup>: Հելլենասպանության այդ ակտը,

---

երևույթին Պիոդատը հեռմահու Նույնիակ հայտարարվել է համահելլենական գործի դավաճան (Honn 2008: 53-54):

<sup>45</sup> Копеленко, Ганбон 2012: 31. Հմտ. Assar, Bagloo 2006: 33; Strootman 2017: 187, 193.

<sup>46</sup> Балзаханов 2015: 12; Балзаханов 2018: 270.

<sup>47</sup> Polybius X. 29-31.

որը, ի դեպ, կարող էր և եզակի չլինել, իրապես խոսում է հույն-պարսկական հարաբերությունների ծայրահեղ լարվածության մասին: Այն գործնականում փակում էր պատերազմից հետո Արշակ II-ի հեյլենասիրության դրսևորման հնարավորությունը: Այս և վերոնշյալ մյուս դիտարկումները հիմք են տալիս մերժելու S 7 տիպի դրամների թողարկման ժամանակի, հեղինակի ու նշանակության վերաբերյալ Գ. Ասսարի և Մ. Բազլոյի առաջադրած վարկածը:

**Պարթևական դրամների S 7 տիպը Միհրդատ I-ի ներքին քաղաքականության համապատկերում:**

S 7.2 երկբաղբյուրաների պատկերագրությունն ինքնին վկայում է դրանց թողարկման և Արշակունիների ռազմա-քաղաքական հաջողությունների միջև ուղղակի կապի մասին: Ցավոք, Արշակ II-ից հետո եկող երկու տասնամյակների պարթևական պատմության մասին մեր տեղեկությունները չափազանց աղքատ են: Հուստինոսի համաձայն՝ Արշակ II-ին հաջորդած Պրիսպատիոսը գահակալել է 15 տարի (Ք.ա. 185-170 թթ.), որից հետո «[Պարթև] ժողովրդի սովորությամբ՝ իշխանությունը ժառանգել է նրա ավագ որդին՝ Հրահատ I-ը (Ք.ա. 168-165 թթ.)<sup>40</sup>: Հուստինոսը վերջինիս մասին միայն հաղորդում է, որ նա «հպատակեցրեց մարդերի հզոր ցեղին»<sup>41</sup>: Եթե Հուստինոսի հաղորդումը ճիշտ է, կենանակի պարները, խախտելով 208 թ. հաշտության պայմանները, մինչ այդ արդեն վերանվաճել էին Վրկանը: Տակիտոսի համա-

<sup>40</sup> *Justinus* XLI, 5. 9.

<sup>41</sup> *Justinus* XLI, 5. 9. Անտիկ աղբյուրները մարդերի ցեղին տեղորոշում են Կասպից ծովի հարավային ափին զուգահեռ ձգվող լեռնային շրջանում՝ Վրկանից արևմուտք (*Strabon* XI. 8.1; XI. 13. 6. *Arrian* III. 24).

ձայն՝ հենց այդ իրադարձությունն էր դրդել Սելևկյան արքա Անտիոքոս IV-ին հետաձգել հրեաների դեմ պատերազմը և Ք.ա. 165 թ. գարնանը իր զորքերն ուղղել ընդդեմ ապստամբ պարսերի<sup>50</sup>: Սելևկյանների դեմ նոր պատերազմի սպասման պայմաններում Ք.ա. 165 թ. վախճանվեց Հրահատ I-ը՝ իշխանությունը փոխանցելով հարազատ եղբորը՝ Միհրդատին: Դա կատարվեց «պարթևն ժողովրդի սովորոյթի» խախտմամբ<sup>51</sup>, ինչը Ն. Դիբլոյսը բացատրում է Միհրդատի նկատմամբ Հրահատի տաճած «եղբայրական սիրով»<sup>52</sup>: Իրականում Հուստինոսի հաղորդումը ենթադրում է պարսերի հանրոյթի մի այնպիսի լարված ռազմաքաղաքական իրավիճակ, որը պահանջում էր պետության դեկլարացիայի և «բացառիկ քաջությամբ» օժտված անհատի հանձնելը:

Ք.ա. 164 թ. աշնանը Սպահանի մոտ Անտիոքոս IV-ի սպանության պատճառով նրա արշավանքը ձախողվեց: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ Միհրդատ I-ը Ք.ա. 164 թ. վերջին կամ Ք.ա. 163 թ. սկզբներին վերականգնեց իր տիրապետությունը ողջ Պարթունեների նկատմամբ՝ Հեկատոնպոլիսում վերսկսելով սեփական դրամների թողարկումը:

Ինչպես երևում է, Միհրդատ I-ը, քաջությունից բացի, օժտված է եղել նաև քաղաքական իմաստնությամբ և

<sup>50</sup> Tatum V, 8. Հմտ. *Балханович* 2018: 281-282.

<sup>51</sup> *Justinus* XXI, 5, 9-10. «Հրահատը... վախճանվեց՝ թողնելով քաղաքով որդիներ, սակայն շրջանցելով նրանց՝ նա նախընտրեց իշխանությունը հանձնել իր եղբորը՝ քացառիկ քաջության տեր մարդուն՝ համարելով, որ արցայական աստիճանը պարունակում է ավելի կարևոր պարտականություններ, քան հայրականը, և որ ինքը պարտավոր է առավել իրազայ հայրենիքի, քան իր զավակների մասին»:

<sup>52</sup> *Լևոնյան* 2008: 41.



կարողացել է ճիշտ գնահատել իր նախորդների քաղաքականության թերություններն ու սխալները: Ուսանելի պետք է լիներ հատկապես Սելևկոս II-ի և Անտիոքոս III-ի դեմ պատերազմներում հունական պոլիսների կողմից պարներին չաջակցելու փաստը, հանգամանք, որը, ըստ էության, պայմանավորել էր Արշակունիների պարտությունը<sup>53</sup>: Դրա պատճառահետևանքային կապի քննությունը Միհրդատին պետք է հանգեցներ այն մտքին, որ պարների հաստատվելը նորանվաճ երկրամասում հնարավոր է միայն հույների, պարթևների ու վրկանների հետ հարաբերությունների բարելավման դեպքում: Միայն այս պարագայում Արշակունիները, որոնց հարազատ պարնա-սկյութական հանրությունը քանակական առումով փոքրամասնություն էր կազմում, կկարողանային օգտագործել նվաճված շրջանների նյութական և մարդկային պաշարներն արևմուտքում Սելևկյանների, իսկ արևելքում՝ Հունա-բալտրիական թագավորության դեմ հաջողությամբ պայքարելու համար<sup>54</sup>: Դրա գիտակցումով Միհրդատը ներքին քաղաքականության հիմնախնդիրը դարձրեց պարների ու նվաճված քնակչության միջև խաղաղ համակեցության հաստատումը: Ակնհայտ է Արշակունիների վերաբերմունքի կտրուկ փոփոխությունը հատկապես հունական պոլիսների հանդեպ: Միհրդատը, մի կողմից զանազան արտոնություններ շնորհելով, հաստատում է նրանց պոլիսային կարգավիճակը, մյուս կողմից, օգտագործելով Սելևկյանների խորհրդանշանները, փորձում է ներկայանալ որպես մակեդոնական հարստության իրավահաջորդ՝ հուսալով, որ

<sup>53</sup> *Balkanicae* 2018, 267-268.

<sup>54</sup> *Լոյս տեղում*, 34:

այդպիսով կապահովի պարթևական իշխանության նկատմամբ նրանց հնազանդությունն ու աջակցությունը<sup>55</sup>: Ի թիվս այլ միջոցների, Միհրդատը Արշակունիների նոր քաղաքականության քարոզությանն է ծառայեցրել իր դրամների (S 7 և S 8 տիպեր) պատկերագրությունը: Բայց ակնհայտ է, որ արծաթե և բրոնզե դրամների վրա դա տարբեր ձևերով է արվել:

Վաղ շրջանի արծաթե դրամների (S 7.1 և S 8.1) պատկերագրության մեջ Միհրդատը շարունակել է «պարթևական արեղնավորի»-ի միջոցով անուղակի ինվեստիտուրայի թեման՝ լայն շառավղով ազդարարելով իր իշխանության օրինականությունը: Սակայն Արշակունիների արքայատան աստվածացված հիմնադրին օմփոլսի վրա նստեցնելով՝ Միհրդատը միաժամանակ փորձել է իր հույն հպատակներին ցույց տալ, որ Արշակունիները, չհրաժարվելով նվաճման փաստից բխող իրավունքներից, հավակնում են նրանց համար կատարել սոցիալ-քաղաքական այն նույն առանցքային դերը, ինչ որ նախկինում կատարում էին Սելևկյանները<sup>56</sup>:

Ներքին շրջանառության համար նախատեսված S 7.2, 8.2 և 8.3 տիպի բրոնզե դրամների հորինվածքներում Միհրդատ I-ը ընդհանրապես հրաժարվել է Արշակունիների նվաճման իրավունքն արտահայտող պատկերագրությունից: Դրանց դարձերեսին հպատակ հունական հանրության հետ համակեցության և մշակութային երկխոսության հաստատման ուղղությամբ նրա հայտարարություններն ավելի ընդգծված ու խորիմաստ են: Կարելի է կարծել, որ առաջին զգուշավոր քայլերից մեկը

<sup>55</sup> Da, browa 2009: 27.

<sup>56</sup> Հմմտ. Erickson, Wright 2011: 165.

երել է փոյի և ծիու պատկերները պարթևական դրամական պատկերացանկի մեջ ներառելը: Առաջինը Սելևկյանների դրամահատության մեջ բաժանվածին տարածված էր<sup>57</sup> և պարթևական S 8.3 տիպում սոսկ պատճենված է: Մինչդեռ ծիու ամբողջական պատկերները Սելևկյան և հունա-բակտրիական դրամահատության մեջ ոչ միայն հազվադեպ են կիրառվել<sup>58</sup>, այլև ձևական առումով զգալիորեն տարբեր են S 8.2 տիպի (*նկար 3*) դրամների պատկերից: Ակնհայտ է, որ S 8.2 տիպի քաղցրոսների դարձերեսին այն ոչ միայն ձևական, այլև զաղափարական վերամշակման է ենթարկվել<sup>59</sup>: Ըստ երևույթին, ծիու պատկերը Արշակունիների դրամական պատկերագրության մեջ է ներառվել՝ պայմանավորված Միհրդատ I-ի կողմից Միթրայի պաշտամունքին համապետական նշանակություն տալու հանգամանքով<sup>60</sup>: Այլ հարց է, թե ինչով էր պայմանավորված Միթրայի (Միհրի) պաշտամունքի պաշտոնականացումը:

Ձրադաշտականության մեջ Միթրան ոչ միայն մարդկանց և գերագույն աստված Ահուրամազդայի միջև հարաբերությունների միջնորդն էր, այլև մարդկային հարաբերությունների կայունության և համաձայնության երաշխավորը<sup>61</sup>: «Վենդիդադ»-ի «Միհր յաշտում», որն ըստ երևույթին ստեղծվել է հենց Միհրդատ I-ի օրոք, Միթրան, որպես աստված-ռազմիկ և աստված-դատավոր, ուղեկցում է Վերթրազնային և ոչնչացնում պայմանա-

<sup>57</sup> Sb'u Erikson 2009: Figs. 15, 25, 129, 130, 132-134, 161, 162, 164, 166, 185.

<sup>58</sup> Erikson 2009: Figs. 129, 130. Homan 2008: 58.

<sup>59</sup> Սելևկոս II-ի դրամների դարձերեսին ծիու ձախ է շրջված, իսկ S 8.2 տիպում՝ աջ:

<sup>60</sup> Duhonin 2008: 46-47.

<sup>61</sup> Gynakova 2004: 152.

դրությունը խախտողներին<sup>62</sup>։ Բայց Պարթևստանի և Վրկանի իրանական ու հունական բնակչության կողմից Միթրան կարող էր նույնականացվել Արեգակ-Հելիոսի հետ<sup>63</sup>։ Ամեն դեպքում նրա խորհրդանշական կերպավորումը պարթևական դրամների վրա ներքին համաձայնության և համերաշխության խորհուրդն էր արտահայտում։

8.2 քաղցրաները հետաքրքիր են նաև S 7.2 երկբաղբուսների ժամանակագրությունը ճշտելու հարցում իրենց օգտակարության առումով։ Բացի լեգենդի ընդհանրությունից, դրամական երկու տիպերն ընդհանրանում են նաև պատկերների գլխի հարդարանքի և դիմագծերի առումով։ Արտառոց նմանությունը նույնիսկ դրդում է՝ կարծելու, որ Միհրդատ I-ը S 7 և S 8 տիպերը թողարկել է եթե ոչ միաժամանակ, ապա մոտ ժամանակներում։

Պարթևների նվաճումից անմիջապես հետո Միհրդատը պատերազմեց նաև Հունա-բակտրիական թագավորության դեմ, որը թուլացել էր Եվկրատիդես I-ի (Ք.ա. 171-145 թթ.) և Դեմետրիոս II-ի (Ք.ա. 175-170 թթ.) միջև երկարատև պայքարի հետևանքով։ Գ. Ասարը Ստրաբոնի երկու հաղորդումների (XI, 9.11 և XI, 11.2) համադրությամբ եզրակացնում է, որ Ք.ա. 163 թ. ոչ շատ ուշ Միհրդատը, պարտության մատնելով Եվկրատիդես I-ին, իր պետությանն է բռնակցել Բակտրիայի ստրատեգիական առումով կարևոր երկու նահանգները՝ Տապուրիան և Տրաքսիանեն<sup>64</sup>։ Ինչպես երևում է, հակառակորդի դեմ տարած այդ տպավորիչ հաղթանակը վճռական նշանակություն է ունեցել Միհրդատ I-ի քաղաքական վերելքի

<sup>62</sup> *Abecra* 1997: Տիր 10. XVIII, 70-72.

<sup>63</sup> *Strabon* XV. 13.

<sup>64</sup> *Assar* 2006a: 89.

շարժընթացում գաղափարական հենք ստեղծելով արքայական տիտղոս ընդունելու համար<sup>65</sup>: Այդ կերպ Միիրդատ I-ը տուրք էր տալիս դեռևս Ալեքսանդրի՝ դիադոքոսների օրոք սկզբնավորված ավանդակարգին, ըստ որի՝ ընդարձակ տարածքների, նյութական և մարդկային ռեսուրսների տիրացած մակեդոնացի զորապետները հետաձգում էին իրենց պաշտոնական թագադրությունը մինչև այն պահը, երբ արտաքին թշնամու դեմ կտանեին որևէ նշանակալից հաղթանակ<sup>66</sup>:

Հելլենիստական դարաշրջանի քաղաքական մշակույթի ընդհանուր տրամաբանությամբ Միիրդատ I-ի կողմից արքայական տիտղոսի ընդունումը պետք է անմիջապես հաջորդեր նրա տարած տպավորիչ հաղթանակին: Ուստի, այդ նույն տրամաբանությամբ էլ S 7.1, S 7.2 դրամների թողարկումը պետք է վերագրել Ք.ա. 162 թ. այն սեղմ ժամանակամիջոցին, որն ընկած է եվկրատիդես I-ի դեմ Միիրդատի տարած հաղթանակի և նրա կողմից արքայական տիտղոսի ընդունման միջև<sup>67</sup>:

Ամենայն հավանականությամբ, Միիրդատ I-ը S 7.2 երկբաղբյուրները թողարկել է եվկրատիդես I-ի նկատմամբ հաղթանակից անմիջապես հետո՝ հանրային ուշադրությունն այդ և դրանից բխող իրադարձությունների վրա բևեռելու մտայնությամբ: Նրա պատկերագրությունը ոչ երկիմաստ ձևով արտահայտում էր մի կողմից՝

<sup>65</sup> Sellwood 1980: 32-33; *Επιτομή* 2018: 34.

<sup>66</sup> Appianus Syr., 54; Diodoros XX, 53, 3; XXXI, I, 5; Polybios V, 67, 4; Tit Livius XXXIV, 57, 7.

<sup>67</sup> Արքայական տիտղոսի ընդունումից հետո Հելլատոմպիլոսում և Նիսայում Միիրդատ I-ի հատած դրամների վրա արդեն դրոշմված է ΑΡΣΑΚΟΥ ΒΑΣΙΛΕΩΣ տիտղոսը (Sellwood 1980: 9):

առաջին Արշակունիների պարզ, շատ կողմերով դեռևս ցեղատաշնորհություն հիշեցնող իշխանության լիարժեք արքայական իշխանության վերածումը, իսկ մյուս կողմից՝ ներքին կառավարման ոլորտում պարների ցեղային դիկտատուրայից էթնիկական խմբերի ազգային-մշակութային ինքնավարության ճանաչման և փոխադարձ հանդուրժողականության վրա խարսխված համակեցության անցնելը: Ամենայն հավանականությամբ, S 7.2 երկբաղբյուրանների վրա Միհրդատ I-ի գործածած աստվածային ինվեստիտուրայի հեղինակական հորինվածքը եղել է Արշակունիների պաշտոնական արվեստի հեղինականացման ուղղությամբ առաջին քայլը: Ամեն դեպքում անվիճելի է, որ հենց նրա օրոք է սկսվել այդ երևույթը<sup>68</sup>:

Նիկեի խնդրո առարկա պատկերաձևը հայտնի չէ ո՛չ Սելևկյանների, ո՛չ հունա-քակտրիական և հնդկա-հունական դրամահատության մեջ, ինչը բացառում է դրանց հնարավոր ազդեցությունը: Բայց մյուս կողմից էլ S 7.2 երկբաղբյուրանների դարձերեսի հորինվածքը չափազանց օտարոտի ու բարդ է՝ Ք.ա. II դ. առաջին կեսի Արշակունիների պաշտոնական արվեստի հարազատ ծնունդ համարվելու համար: Պարթևական հորինվածքի գեղարվեստական նախատիպի փնտրուքը մեզ հասցնում է մինչև Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակները: Ինչպես երևում է, Հեկատոմպիլոսի պարթևական դրամահատարանը ստեղծագործաբար վերամշակել է Ալեքսանդրի ոսկյա ստատերների դարձերեսի թևավոր Նիկեի պատկերաձևը<sup>69</sup> մի դեպքում դիցուհու պատկերից

<sup>68</sup> Մեյքլյան 2017, 85-88, 91-104:

<sup>69</sup> Corry & Mosch 2010, 185, lot 84; Triton XX, 2017, lot 58. Մեյքլյան 2017, 52-54, հավ. II, նկ. 7:

հեռացնելով թևերը և պարթևների ընկալումներին խորթ առազաստն էլ փոխարինելով արմավենու ճյուղով, այլ թողարկումներում՝ ընդամենը առազաստը փոխարինելով արմավենու ճյուղով: Արդյունքում փոխվել է դրամական ուղջ հորինվածքը: Ալեքսանդրի դրամների դիմերեսին Աթենասի՝ կորնթական սաղավարտով պատկերն է: Հետևաբար՝ դրամի հորինվածքը բնավ էլ Ալեքսանդրի ինվեստիտուրայի գաղափար չէր արտահայտում: Մինչդեռ պարթևական S 7.2 երկաղջուանների հորինվածքը հնարավոր չէ այլ կերպ մեկնարանել, քան արքայի ինվեստիտուրա: Դրանց վրա այդ գաղափարը դեռևս մատուցված է անուղղակիորեն, այսինքն՝ արքան և նրան հարթանակ ու արքայական նշան պարզևող դիցուհին միևնույն քանդակային մակերեսի վրա չեն հանդիպում, այլ նրանց կապը հասկացվում է բանականորեն՝ դրամը նրա առանցքի շուրջը պտտեցնելու կամ միևնույն դրամի երկու օրինակը դիմերեսով և դարձերեսով կողք կողքի դնելով: Հորինվածքի ընկալումը դժվարացնող հանգամանքը պարթևական դրամահատական արվեստը հաղթահարեց մոտ մեկ դար անց<sup>70</sup>:

Հետագայում՝ Մարաստանի և Միջագետքի նվաճումից հետո, պաշտոնական արվեստի հելլենականացման Միհրդատի քաղաքականությունն ավելի լայն ծավալներ ընդունեց: Ք.ա. 141/140 թթ. Տիզբիսի վրայի Սելևկիայում հատած չորեքդրամների վրա Միհրդատ I-ն արդեն ներկայացվել է հելլենիստական դիադեմայով և մորուքի

<sup>70</sup> Որքան մեզ հայտնի է, աստվածույթյան կողմից արքայի ուղղակի ինվեստիտուրայի տեսարաններ առաջին անգամ դրոշմվել են Դարեհ Մարաստանցու (Գ. Սասարի կարծիքով՝ Հրահատ III-ի (Assae 2006b: 92)) քրոնզե դրամների դիմերեսին (Selwood 1980: 36.19-20):

ու մազերի կարճ (հունական) կտրվածքով<sup>71</sup>: Սրանց դարձրեսին պատկերված են Հերակլեսի, այլ դեպքերում Ջևաի պատկերները: Նույն դրամների վրա Միհրդատ I-ի դեռևս Մարաստանի նվաճումից հետո ընդունած «Մեծ արքա Արշակ» պաշտոնական տիտղոսին հավելված է «հելլենասեր» (*φιλήλλητος*) պատվատիտղոսը<sup>72</sup>: Ուսումնասիրողներն այդ վերջին իրողությունը բացատրում են պարթևների՝ «Միջագետքի հունական համայնքների հետ բարեկամական երկխոսության գնալու համաձայնությամբ»<sup>73</sup>, «Միջագետքի հույն և հելլենականացած բնակչության համակրանքը շահելու մտադրությամբ»<sup>74</sup>: Սակայն իրականում դա Միհրդատ I-ի գահակալության սկզբներից տարվող ներքին քաղաքականության տրամաբանական շարունակությունն էր, որն ընդամենն ավելի տպավորիչ ձևեր էր ընդունել՝ պայմանավորված Մարաստանի ու Միջագետքի հունահելլենիստական բնակչությանը հնարավորինս արագ և հաստատուն դեպի Արշակունիները տրամադրելու անհրաժեշտությամբ: Միհրդատ I-ի ու նրա հաջորդների հետագա դրամական թողարկումներում Նիկե, Տյուփսե, Դեմետրա դիցուհիների, Ջևաի ու Հերակլեսի պատկերներն ավելի հաճախակի են փոխարինում «պարթևական աղեղնավորի» ավանդական պատկերին<sup>75</sup>: Այդուհանդերձ, նախ՝ Սելևկյան արքաներ Դեմետրիոս II-ի և Անտիոքոս VII-ի, իսկ հետագայում Հռոմի դեմ պարթևների մղած պատերազմ-

<sup>71</sup> Sellwood 1980, 13. 1-10; Ira & Larry Goldberg Auctioneere 89, 2016: lots 28-32.

<sup>72</sup> Sellwood 1980, 13. 1-10.

<sup>73</sup> Fowler 2005, 152; Porada 1965: 183.

<sup>74</sup> Gariboldi 2004: 376.

<sup>75</sup> Sellwood 1980: 12. 26; 12. 27; 13.1; 13. 5; 14. 5; 17. 4; 42. 3; 57. 17.



ներում հելլենիստական քաղաքների արևմտամեծ դիրքորոշումը պարզորոշ ցույց է տալիս, որ գիշումների ու սիրաշահման միջոցով հունա-հելլենիստական բնակչությանն իրենց իշխանությանն ինտեգրելու Արշակունիների քաղաքականությունն այդպես էլ իր նպատակին չի հասել:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Մելիքյան Ա. 2012**, Անկախության գաղափարի պատկերագրությունը Արշակ I-ի դրամների վրա: Միջազգային գիտատղովի նյութեր՝ նվիրված հայ գրատպության 500-ամյակին, Վանաձոր, էջ 33-78:
- Մելիքյան Ա. 2017**, Հոնգ-ի Աժդարի ժայռաքանդակը: Հելլենիստական դարաշրջանի մի հուշարձանի պատմաաշակութաբանական ընտություն, Երևան, 328 էջ:
- Авеста в русских переводах 1997**, Составление, общая редакция, примечания и справочный раздел И.В. Рака, С.-Петербург, 480 с.
- Балахванцев А. 2015**, Парфянский поход Антиоха III // Восток. Афро-азиатские общества: история и современность. 1, с. 9-13.
- Балахванцев А. 2018**, Политическая история ранней Парфии, Диссертация на соискание ученой степени доктора исторических наук, Москва, 271 с.
- Дибовой Н. 2008**, Политическая история Парфии, СПб, 816 с..
- Кошеленко Г. 1968**, Некоторые вопросы истории ранней Парфии", ВДИ, № 1, с. 53-71.
- Кошеленко Г. 1979**, Греческий полде на эллинистическом Востоке, Москва, 295 с.
- Кошеленко Г. 2008**, Монеты первых парфянских царей. Труды II (XVIII) Всероссийского археологического съезда в Суздале. А.П. Деревянко, Н.А. Макаров (ред.), Т. II, Москва, с. 138-140.
- Кошеленко Г., Ганбов В. 2012**, Монетное дело Парфии при Аршаке II. Проблемы истории, филологии, культуры. М.-Магнитогорок, № 4, с. 24-33.
- Кошеленко Г., Ганбов В. 2013**, Аршак I и его монетный чекан, см. Monumentum Gregorianum: сборник научных статей памяти

- академика Григория Максимовича Бонгард-Левиня, отв. ред. А. И. Иванчик. Москва, с. 327-347.
- Попов А. 2008**, Греко-бактрийское царство, С.-Петербург, 122 с.
- Раевский Д. 1977**, К вопросу об обосновании царской власти в Парфии ("Парфянский лучник" и его семантика), *Средняя Азия в древности и средневековье*, Б.Г. Гафуров, Б.А. Литвинский (ред.). Москва, с. 81-86.
- Ташт К. 2001**, История, Перевод с латинского и комментарии Г. С. Кыбае, Москва, 400 с.
- Чушкова О. 2004**, Пехлевийский словарь зороастрийских терминов, мифических персонажей и мифологических символов, Москва, 286 с.
- Abgarians M., Sellwood D. 1971**, A Hoard of Early Parthian Drachms, *Numismatic Chronicle* 7, Vol. 11, pp. 103-119.
- Appianus 1962**, *Historia Romana* / Ed. P. Vireck, A. Roos, cor. E. Gabba. Leipzig, Vol. I, 545 S.
- Arrian 1976**, *Anabasis Alexandri. Indika* / with an English translation by P.A. Brunt. Cambridge (Mass.), London, Vol. I, 547 p.
- Arrian 1983**, *Anabasis Alexandri. Indika* / with an English translation by P.A. Brunt. Cambridge (Mass.), London, Vol. II, 549 P.
- Assar G. 2004**, Genealogy and Coinage of the Early Parthian Rulers. I, *Parthica*, 6, Pisa-Roma, pp. 69-93.
- Assar G. 2005**, Genealogy and Coinage of the Early Parthian Rulers. II. A Revised Stemma, *Parthica*, 7, Pisa-Roma, pp. 29-63.
- Assar G. 2006a**, A Revised Parthian Chronology of the Period 165-91 BC, *Electrum*, vol. 11, Kraków, pp. 87-158.
- Assar G. 2006b**, Revised Parthian Chronology of the Period of 91-55 BC, *Parthica* 8, Pisa-Roma, pp. 55-104.
- Assar G. Bagloo M. 2006**, An Early Parthian "Victory" Coin, *Parthica* 8, Pisa-Roma, pp. 25-35.
- Bopearachchi O. 1997**, Našten, a hitherto unknown Iranian ruler in India. *Studies in Silk Road Coins and Culture. Papers in honour of Professor Ikuo Hirayama on his 65th birthday*. K. Tanabe, J. Cribb, H. Wang (eds.). Kamakura, pp. 67-73.
- CNG Auction 69, 2005**, Inc. Lancaster, PA. Mail Bid Sale, June 8, 89 p.
- Corny & Mosch Giessner Munzhandlung. 2010**, Auction 185, 8. März, 98 P.

- Curtis V. 2007**, Religious Iconography of Ancient Iranian Coins, in: J. Cribb/G. Herrmann (Hg.) *After Alexander. Central Asia before Alexander*. Proceedings of the British Academy 133, Oxford/New York, pp. 413-434.
- Dabrowa Ed. 2009**, The Political Propaganda of the First Arsacides and its Targets (From Arsaces I to Mithradates II), *Parthica* 10, pp. 25-31.
- Diodorus of Sicily** / Library of History, with an English translation by F. Walton. Cambridge (Mass.), London, 1999. Vol. XI (books XXI-XXXII), 465 p.
- Dion Cassius 1955**, Roman History, With an English translation by Earnest Cary, on the basis of the edition of Herbert Baldwin Foster, V. IX, London-Cambridge-Massachusetts, 572 p.
- Downey S. 1986**, Art in Iran IV. Parthian Art, *Enciclopedia Iranica*, December 15.
- Erikson K. 2009**, Early Seleucides, Their Gods and Their Coins. Submitted by Kyle Glenn Erickson, to the University of Exeter as a thesis for the degree of Doctor of Philosophy in Classics and Ancient History, Vol. 1, 337 p.  
<https://ore.exeter.ac.uk/repository/bitstream/handle/10036/95348/EriksonKG.pdf>
- Erickson K., Wright N. 2011**, The "Royal Archer" and Apollo in the East: Greco-Persian Iconography in the Seleucid Empire, In: Proceedings of the XIVth International Numismatic Congress, Glasgow, 2009, ed. by N. Holmes, Glasgow, pp. 163-168.
- Fowler R. 2005**, Most Fortunate Roots: Tradition and Legitimacy in Parthian Royal Ideology. In: *Imaginary Kings: Royal Images in the Ancient Near East, Greece and Rome*, Ed. by Oliver Hakster and Richard Fowler, München, pp. 125-156.
- Gariboldi A. 2004**, Royal Ideological Patterns between Seleucid and Parthian Coins. The Case of Theopator, Published in *Melammu Symposia* 5, Stuttgart, pp. 366-384.
- Gaslain J. 2005**, Le basileus d'Arsace Ier ou la représentation du nomade-roi, in *Bulletin of Parthian and Mixed Oriental Studies*, I, pp. 9-30.
- Gaslain J. 2009**, A propos d'Arsace Ier, *Electrum* 15, Kraków, pp. 27-39.
- Ira & Larry Goldberg Auctioneers 89** (5-7 January 2016)  
[http://www.goldbergcoins.com/content/?page\\_id=3145](http://www.goldbergcoins.com/content/?page_id=3145)

- Isidoros 2013**, Parthian Stations by Isidore of Charax. An Account of the overland trade Route between the Levant and India in the first Century B. C. The Greek Text, with a Translation and Commentary by W.H. Schoff. Chicago, 54 p.
- Justinus 1886**, *Epitoma Historiarum Philippicarum Pompei Trogi* / Ed. F. Rühl. Lipsiae, 315 P.
- Kawami T. 1987**, Monumental Art of the Parthian Period in Iran, *Acta Iranica*, 26, Leiden: 272 P
- Mørholm O. 1991**, Early Hellenistic Coinage: From the Accession of Alexander to the Peace of Apamea (336-188 B.C.). Cambridge, 273 p.
- Newell E. 1978**, Coinage of the Eastern Seleucid Mints from Seleucus I to Antiochus III, with a Summary of Recent Scholarship, Additions and Corrections by Otto Mørholm, New York, 307 P.
- Olbrycht M. 2011**, *Titulatura Pierwszych Arsakidów i Jej Polityczno-Religijne Knotacje* w Gniezno European Studies Monograph Series, Vol. IV. The World of Antiquity, its Polish Researchers and the Cult of the Ruler, pod redakcją Leszka Mrozewicza i Katarzyny Balbuzy, Poznań, s. 229-241.
- Olbrycht M. 2015**, Parthian Cities and Strongholds in Turkmenistan, *International Journal of Eurasian Studies*, Vol. II, 2015, pp.117-125.
- Peck E. 1993**, Crown ii. From the Seleucids to the Islamic Conquest, *Encyclopaedia Iranica*, Vol. VI, Fasc. 4, pp. 408-418.
- Pliny 1989**, *Natural History* / With an English translation by H. Rackham. Cambridge (Mass.), London, V. II (libri III-VII), 672 p.
- Polybius 1893**, *Historiae* / Ed. L. Dindorf, retract. T. Büttner-Wobst. Leipzig, Vol. 3 (libri IX-XIX), 453 S.
- Porada E. 1965**: *The Art of Ancient Iran: Pre-Islamic Culture*, New York, 279 p.
- Q. Curti Rufi** *historiarum Alexandri Magni Macedoniae libri qui supersunt* / Rec. T. Vogel. Lipsiae, 1884, 308 p.
- Sachs Ch. 2003**, Héracos // *De l'Indus à l'Oxus*: Archéologie de l'Asie Centrale / O. Bopearachchi, C. Landes, Ch. Sachs (eds). Lattes, 2003, p. 173.
- Sellwood D. 1980**, *An Introduction to the Coinage of Parthia*, 2<sup>nd</sup> edit., London, 322 P.
- Sellwood 2nd Edition** (1980) Parthian Coin Types  
[http://www.parthia.com/parthia\\_sellwood.htm](http://www.parthia.com/parthia_sellwood.htm)

- Selwood D. 1983**, Parthian Coins, in E. Yershater (ed.), Cambridge History of Iran, Vol. 3 (1), The Seleucid, Parthian and Sasanian Periods, Cambridge, pp. 279-280.
- Strabon 1988**, The Geography of Strabo / with an English translation by H.L. Jones. Cambridge (Mass.), London, Vol. V (books X-XII), 542 p.
- Strootman R. 2017**, Imperial Persianism: Seleucids, Arsakids and Fratarakā. Persianism in Antiquity, R. Strootman, M.J. Versluys (eds.). Stuttgart, pp. 177-200.
- Tity Livii 1999**, Ab Vrbe Conditā / Ed. P.G. Walsh. Oxford, Vol. 6 (libri XXXVI-XL), 424 p.
- Triton Auction XX**, (10-11 January 2017),  
[https://issuu.com/engcoins/docs/nomcs2\\_catalogue\\_web](https://issuu.com/engcoins/docs/nomcs2_catalogue_web)

**Արթուր Մելիքյան - պ.գ.թ.,**  
*Վանաձորի պեղական համալսարան,*  
*Պարմասշխարհագրական ֆակուլտետ,*  
[arthurmelikyan@rambler.ru](mailto:arthurmelikyan@rambler.ru)

#### THE ICONOGRAPHICAL COMPLEX OF THE S 7.2 TYPE DICHALKOUSES OF MITHRDATES I ARSACID

**Keywords:** Arsaces I, Arsaces II, drachma, Parthia, Antiochus III, Mithridates I, Hekatompylos.

The interesting models of early Parthian mint are the 7.2 type bronze Dichalkouses cuted by Mithradates I in Hekatompylos. On their reverse first time in Parthian official fine arts is represented the Greek goddess Nike with the symbols of victory and investiture. Our examination shows that the 7.2 type bronze Dichalkouses are cuted in 162 B.C. after the victory of Mithradates I against the king of Greece-Bactrian Kingdom Eucratides I before his acceptance of the royal title. His issue had clear preaching (moralizing) aims that are to prepare the favorable public opinion among the Greek and Hellenized inhabitation towards that event. Meanwhile the examination of their iconogra-

phy helps to make some adjustments in such problems as the improvements of the Parthian Empire's treatment towards the Greek and Hellenistic inhabitation and also in the reasons and chronology of the hellenization of the official art of Arshakids.

**Arthur Melikyan** - PhD,  
Vanadzor State University,  
The faculty of History and Geography, arthmeliky-  
an@rambler.ru.



Նկ. 1, Միհրդատ I-ի S 7.2 երկբաղճուր



Նկ. 2 Միհրդատ I-ի S 7.1 արծաթե դրահման



Նկ. 3 Միհրդատ I-ի S 8.2 քաղցրաք

**ՀԱՎԱՏՔԻ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՆ ԸՍՏ  
Ս. ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ՈՍԿԵՓՈՐԻԿԻ»\***

**ԱՐԹՈՒՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

**Բանալի բառեր՝** *Աստված, Հայր, Որդի, Քրիստոս, երրորդություն, Եկեղեցի, դավանություն:*

*Հոգվածում վերլուծված են Հայ եկեղեցու դավանության աստիճանները, ինչպես որ դրանք ներկայացված են ս. Գրիգոր Տաթևացու «Ոսկեփորիկում»: Ցույց է արված Տաթևացու աստվածաբանական դիրքորոշման համապարասխանությունը ուղղափառ եկեղեցական ավանդությանը, ինչպես որ այն ներկայացված է Նիկիո հավաքո հանգանակում:*

Ս. Գրիգոր Տաթևացին հայ միջնադարյան հոգևոր մշակույթի ամենանշանավոր գործիչներից մեկն է: Խոշորագույն աստվածաբան, փիլիսոփա, մանկավարժ, ու, վերջապես, Հայ եկեղեցու սուրբ՝ նա անջնջելի հետք է թողել հայ ժողովրդի հիշողության մեջ: Նա իրենից հետո շատ հարուստ գրական ժառանգություն է թողել, որի մեծ մասը նվիրված է աստվածաբանական խնդիրներին: Դա միանգամայն քնական է միջնադարյան մտածողի համար, սակայն միայն դրանով չէ պայմանավորված: Նրա կյանքի օրոք կտրուկ ակտիվացել էր Կաթոլիկ եկեղեցու միսիոներական գոծունեությունն Արևելքում: Տարբեր ուխտերին պատկանող կաթոլիկ միսիոներները հսկայական ջանքեր էին գործադրում հայերին հավատափոխ

\* Հոդվածը ներկայացվել է 11.06.2020: Գրախոսվել է 03.08.2020:



անելու համար, ինչը մեծ վտանգ էր, քանի որ Հայ Առաքելական Եկեղեցին եղել և մնում է հայկական ինքնության սյուններից մեկը: Ս. Գրիգոր Տաթևացին Հայ Եկեղեցու վարդապետության հիմնավորմանն է նվիրել մի քանի հիմնարար երկեր, որոնցից մեկը «Ոսկեփորիկն» է: Այս աշխատության մեջ նա ի մասնավորի ներկայացնում է հավատքի դավանության աստիճանները, որոնք լինելու են սույն հոդվածի վերլուծության առարկան:

Տաթևացին գրում է. «Խոստովանիմք և հաատաւք ամենակատար սրտիք զՀայրն Աստուած՝ անեղ, անծին և անսկիզբն, այլև ծնող Որդոյ և բղխող Հոգոյն Արքոյ»<sup>1</sup>:

Ի տարբերություն անտիկ փիլիսոփայության, քրիստոնեության մեջ Աստված մարդկանց ճակատագրի հանդեպ անտարբեր և անդեմ Բացարձակ չէ: Նա միեղեն անձնական Աստված է: Սակայն քրիստոնեական միաստվածությունը տարբերվում է նաև հրեական և իսլամական միաստվածությունից, որոնք, ճանաչելով Հին Կտակարանի կենդանի և անձնական Աստծուն, նույնացնում են Աստծո լույթունն ու նրա անձը՝ քացառելով Նրա մեջ ավելի քան մեկ անձի գոյությունը: Քրիստոնեության մեջ Աստված Անձերի եռամիասնություն է. Ս. Երրորդությունը ոչ թե եռաստվածություն է, այլ միաստվածություն, քանզի երեք Անձերն ունեն մեկ էություն և բնություն, ու նրանց միջև միակ գոյություն ունեցող տարբերությունը յուրաքանչյուր Անձին բնորոշ գոյության կերպն է՝ Հոր չձևված, Որդու ծնված և Ս.Հոգու բխած լինելը: Խոսելով Հոր՝ ամենագոր Արարչի մասին, միշտ պիտի հիշել, որ Նա ամեն ինչ արարել է Իր Բանով, և որ նույն

<sup>1</sup> Գրիգոր Տաթևացի 1746, 561:

ստեղծագործական ուժը բնորոշ է նաև Ս.Հոգուն: Հայրը ծնում է Որդուն Իր էությունից, ուստի Որդին միշտ էակից է Նրան: Դրանով Որդու ծնունդը սկզբունքորեն տարբերվում է արարչությունից, որը համարվում է Հոր հիմնական առանձնահատկությունը: Հայրն արարում է աշխարհը ոչ թե Իր էությունից, այլ ոչնչից՝ Իր կամքին համաձայն: Արարչությունը Հոր համար անհրաժեշտաբար չի բխում Նրա էությունից, ու Նա կարող էր և չարարել աշխարհը: Մինչդեռ Որդու ծնունդը պայմանավորված է Հոր բնությամբ, քանզի առանց դրա նա Հայր չէր լինի: Ինչպես ասում է ս. Գրիգոր Նազիանզացին. «Մի է Աստված անսկիզբ, անպատճառ, չսահմանափակված որևէ եղանակով լինելից բանով, ով և՛ անցյալում, և՛ ապագայում պարփակվում է հավերժությունը, անվայրափակ, բարի, մեծ Միածին Որդու մեծ Հայր, Ով Որդուն ծնելիս չկրեց մարմնին բնորոշ որևէ բան, որովհետև Նա Միտք է»<sup>2</sup>:

«Հաստատվեց զԲանն Աստուած, անեղ, ծնեալ և սկսեալ ի Հօրէ, նախ քան զյաւիտեանս, ոչ յետոյ և ոչ կրօսեք, այլ որքան Հայրն Հայր՝ ընդ նմին և Որդին Որդի»<sup>3</sup>:

Եկեղեցին, իր հավատո հանգանակի մեջ, դավանում է, որ Քրիստոսն Աստծո միածին Որդին է: Սա մերժում է որդեգրման հերետիկոսական վարդապետությունը, ըստ որի Հիստաը լոկ Աստծո կողմից որդեգրված սովորական մարդ էր: Քրիստոնյաները, մկրտվելով, նույնպես դառնում են Աստծո որդիներ, սակայն դա չի վերացնում անեղ ու եղական բնությունների միջև եղած հիմնական

<sup>2</sup> Восточное учение о Церкви. Том 1, 1998: 498.

<sup>3</sup> Գրիգոր Տաթևացի 1746, 561:

տարբերությունը: Մարդիկ շնորհով Աստծո որդիներ են դառնում, իսկ Քրիստոսն իր բնությամբ է Աստծո Որդի: Եվ միայն այն պատճառով, որ Քրիստոսը բնությամբ Աստծո Որդի է, մենք կարող ենք շնորհով որդեգրվել Աստծո կողմից:

Խոստովանելով Որդուն «բոլոր դարերից առաջ ծնված Հորից», մենք չենք ասում, որ այս ծնունդը պարզապես նախորդում է արարչագործությանը, այլ հաստատում ենք, որ այն արտաժամանակյա է, քանի որ ժամանակի զաղափարը կապված է եղականության գաղափարի հետ: Հենց այս միտքն է արտահայտված Ավետարանում, որտեղ կարդում ենք. «Նախքան Աբրահամ լինելը, ես եմ» (Հովհ. 8, 58), և ոչ թե՛ «Ես էի»: Հավիտենական ծնունդի այս գաղափարն ուղղված էր արիստականների՝ Քրիստոսի մասին այն թյուր տեսակետի դեմ, ըստ որի «Եղել է ժամանակ, որ Նա չի եղել»: Որդին «Լույսը լույսից, ճշմարիտ Աստված ճշմարիտ Աստծուց» է:

Եկեղեցին միշտ խոստովանում է, ի տարբերություն Արիոսի և նրա կողմնակիցների՝ որ Որդին ծնված է, ոչ արարված, քանի որ Հորից Որդու հավիտենական ծնունդը, ինչպես Ա.Հոգու բխումը, Ա.Երրորդության մեջ կատարվող մի մշտնջենավոր գործընթաց է, որը ոչ մի ընդհանուր բան չունի արարչագործության հետ: Սա նշանակում է, որ չի կարելի համեմատել Հորից Որդու ծնունդը և աշխարհի արարումը, որը Ա. Երրորդության արտաքին գործողություն է:

Մեկընդմիշտ բոլոր անորոշություններին վերջ տալու համար Նիկիայի Տիեզերական Ժողովի մասնակից հայրերը հայտարարեցին, որ Որդին «համագո է Հոր հետ»: Սա տրամաբանական եզրակացություն էր նախորդ

դրույթներից՝ Աստվածային Անձանց համագոյության, հավասար աստվածության ու նրանց կատարյալ էական միասնության մասին: Այս եզրույթը բացառում էր բոլոր անորոշությունները: Արիոսականները օգտագործում էին Ս. Գրքից վերցված առանձին արտահայտություններ՝ դրանք մեկնաբանելով հոգուտ իրենց տեսությունների: Հետևաբար, անհրաժեշտ պարզաբանումներից հետո, եկեղեցու բոլոր ուղղափառ վարդապետները, ի վերջո, համաձայնեցին այս եզրույթին: Ինչպես գրում է ս.Գրիգոր Նազիանզացին. «Մի է ուրիշ Աստված, քայք ուրիշ ոչ ըստ Աստվածության՝ դա այն Աստծո Բանն է, Հոր կենդանի կնիքը, անսկզբի միեղեն Որդին և Միակի Միակը, ամեն ինչում հավասար Հոր՝ բացի նրանից, որ մեկը համակ Ծնող է, իսկ մյուսը՝ Որդի, Տիեզերակերտն ու Տիրակալը, Հոր գորությունն ու միտքը»<sup>4</sup>:

Հանգանակի երկրորդ անդամն ավարտվում է այն հայտարարությամբ, որ ամեն ինչ արարվել է Որդու կողմից: Այս գաղափարը վերցված է Նոր Կտակարանից (Հուլի. 1,3: Կող. 1, 16): Ամեն ինչ արարված է երեք աստվածային Անձերի կողմից: Այնուամենայնիվ, նրանցից յուրաքանչյուրը դրան մասնակցում է իրեն բնորոշ ձևով: Եթե Հայրը հիմնական պատճառն է, և Հոգին՝ կատարելագործման պատճառը, ապա Բանը կարող է կոչվել գործող պատճառ:

Մարդեղությունը փրկության պատմության մեջ անզուգական իրադարձություն է: Սա այն իրադարձությունն է, որն արմատապես փոխեց պատմությունը, քանի որ Բանի մարմնացումը փոխեց Աստծո և մարդու միջև փոխհարաբերությունները: Քրիստոնեական վարդապե-

<sup>4</sup> Восточные отцы и учителя Церкви. Том 1, 1998: 498.

տության մեջ ժամանակի հասկացությունը գծային է, այլ ոչ թե ցիկլային, այսինքն՝ ժամանակը ունի սկիզբ՝ աշխարհի արարումը, և վախճան՝ Ահեղ Դատաստանը: Դատմական գործընթացի կենտրոնում գտնվում է Աստծո Որդու մարմնացումը: Առաջին դարերի քրիստոնյաները, անկասկած, հասկացան Բանի մարդկության վճռորոշ նշանակությունը, որում նրանք իրավամբ տեսան մարգարեների կողմից կանխատեսված վախճանաբանական դարաշրջանի սկիզբը:

«Հաստատվեց զՍուրբ Հոգին Աստուած, անեղ, անժամանակ, ոչ ծնեալ, այլ բոխեալ ի Հօրէ՛ Հակից Հօր և փառակից Որդոյ»<sup>5</sup>: Եկեղեցու Ս.Հոգու աստվածային բնության հանդեպ հավատը պատմականորեն ավելի ուշ է քանաձևվել, քան Որդու աստվածության հանդեպ հավատը: Առաջին տիեզերական ժողովի հայրերը միայն նշեցին Ս. Հոգու՝ Աստված լինելը, բայց չքանաձևեցին Լրա հարաբերությունները Ս. Երրորդության այլ Անձերի հետ: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ նրանք իրենց ուշադրությունը սևեռեցին Բանի աստվածության մասին վարդապետության վրա, քանի որ այն ժամանակ եկեղեցու առջև հիմնական խնդիրը պայքարն էր արիոսականության դեմ: Այնուամենայնիվ, 4-րդ դարի ընթացքում՝ շարունակվող դավանաբանական վեճերը չէին կարող անտեսել այս կարևոր աստվածաբանական հիմնախնդիրը, քանի որ ոչ միայն արիոսականներն էին հերքում Ս. Հոգու աստվածությունը, այլև այն ուղղափառ քրիստոնյաները, ովքեր, մերժելով Արիոսի վարդապետությունը Բանի մասին, չէին ընդունում Ս. Հոգու աստվածությունը: Հետևաբար, այդ դարաշրջանի հայրերը

<sup>5</sup> Գրիգոր Տաթևացի 1746, 561:

պետք է պաշտպանեին Ամենասուրբ Երրորդության երրորդ անձի մասին ուղղափառ վարդապետությունը և պիտի պարզաբանեին Ս. Հոգու հարաբերությունները Ս. Երրորդության մյուս Անձերի հետ:

Երկրորդ տիեզերական ժողովը, որը գումարվեց 381 թվականին Կոստանդնուպոլսում, կրկին դատապարտեց Արիոսի ուսմունքն իր թյուր ձևերով և հատկապես նզովեց Մակեդոնի հերձվածը, որը մերժեց Ս. Հոգու աստվածությունը: Եկեղեցու հայրերը հաստատորեն հայտարարեցին Ս. Հոգու աստվածային բնության կատարելությունը ու նրա՝ Հորից բխած, այլ ոչ թե ծնված լինելը: Դրանով վերջնականապես ամրագրվեց եկեղեցու հավատը արտահայտող երրորդաբանական տերմինաբանությունը: Ինչպես գրում է ս.Գրիգոր Նազիանզացին. «Միեղեն է Հոգին՝ Աստված բարի Աստծուց»<sup>6</sup>:

«Հավատամք զԵրրորդութիւն Սուրբ, մի բնութիւն, մի Աստվածութիւն, ոչ երեք աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն, արարիչ երևելեաց և աներևութից»<sup>7</sup>: Բրիտանական վարդապետության հիմքը կազմում է Աստծո գոյության հանդեպ հավատը: Եկեղեցու Հայրերը խոսափում էին Աստծո գոյությունն ապացուցող տրամաբանական փաստարկերի բերելուց, քանի որ նման փաստարկեր չկան նաև Ս. Գրքում: Այնտեղ Աստծո գոյությունը ցույց է տրված Նրա գործերի՝ արարչագործության ու փրկագործության միջոցով: Աստծուն, ով անտեսանելի է և անճանաչելի, կարելի է մասամբ տեսնել և ճանաչել բնության միջոցով: Սակայն նման ճանաչողությունը կարող է, լավագույն

<sup>6</sup> Восточные отцы и учители Церкви. Том 1, 1998, 499.

<sup>7</sup> Գրիգոր Նազիացի 1746, 561-562:

դեպքում, մեզ պատկերացում տալ Աստծո հատկությունների, բայց ոչ Նրա բնության մասին: Մարդկային բանականությունն ու փորձն անզոր են պատկերացում տալ երեք Անձնի էություն ունեցող Աստծո մասին, այնպես որ Հայտնությունն Աստծո բնությունը ճանաչելու միակ հնարավոր միջոցն է: Ս. Գրքը, նախ և առաջ, հայտնում է Աստծո միեղինության մասին: Այս գաղափարը բիրթիական միաստվածության և քրիստոնեական դավանաբանության հիմքն է կազմում: Կա միայն մի ճշմարիտ Աստված, ու բացի Նրանից չկան այլ աստվածներ: Դա ոչ միայն ասված է Ս. Գրքում, այլև տրամաբանության պահանջ է: Աստված բացարձակ էակ է, քանի որ հարաբերական Աստծո գաղափարն անհեթեթություն է, իսկ երկու բացարձակներ գոյություն ունենալ չեն կարող: Ուստի բազմաստվածությունը հակասում է ոչ միայն Հայտնությանն, այլև տրամաբանությանը:

Այսպիսով, Հայոց Եկեղեցու դավանաբանական համակարգի հիմքում ընկած է Նիկիո հանգանակի այն դրոյթը, որի համաձայն Աստված մի էություն է և երեք Անձներ: Դա նշանակում է, որ միեղին Աստված հավիտյան անձնավորված է Հոր, Որդու և Ս. Հոգու Անձերի մեջ<sup>8</sup>: Յուրաքանչյուր Անձ իր մեջ է պարունակում աստվածային էության լիությունը, ուստի երեք Անձերը հավասարապես կատարյալ Աստված են, սակայն ոչ թե երեք Աստվածներ, այլ մի Աստված: Դա այդպես է, քանզի աստվածային էությունը միեղին է, ու Անձերից անկախ գոյություն չունի:

Էություն նշանակում է այն, ինչ կա, գոյություն ունի: Ըստ Ս. Գրքի Աստծո անունն է է: Եթե ասվում է, որ Ս.

<sup>8</sup> Տե՛ս Փռոբոսկոսի 2006: 47:

Երրորդության էությունը միեղեն է, ապա դա նշանակում է, որ Հայրը, Որդին և Ա.Հոգին ունեն նույն անունը՝ է, և ունեն նույն պատիվը և հավիտենականությունը: Հայրն Աստված է, անեղ ու մշտնջենավոր: Որդին ու Ա. Հոգին՝ նույնպես: Անսկիզբ է Հայրը, անսկիզբ են նաև Որդին ու Ա.Հոգին: Նրանց էությունը նույն է, բայց Անծերը տարբեր: Հայրը Որդի և Ա. Հոգի չէ, նմանապես նաև մյուս Անծերը: Տարբերությունը կայանում է Անծերին բնորոշ առանձնահատկությունների մեջ: Հայրը չճնված է, Որդին՝ ծնված, իսկ Ա. Հոգին՝ բխում է Հորից, ու երեքն էլ մի կատարյալ Աստված են: Ա. Երրորդության հիմնական բնորոշումը նրա համագոյությունն է: Որդին համագո է Հորը, ծնված լինելով հավիտենականության մեջ: Միաձին Որդին Աստծո իմաստությունն ու զորությունն է: Որդու Հորից ծնված լինելը չի նշանակում, որ Նա հաջորդում է Հորը ժամանակի մեջ, նույնը կարելի է ասել նաև Հորից բխող Ա. Հոգու մասին: Երեք Անծերն էակից են ու համապատիվ, նրանք ունեն նույն բնությունը, զորությունը և կամքը<sup>9</sup>: Ուստի Աստծո ցանկացած գործողությունը միշտ կատարում է Ա. Երրորդությունը, այլ ոչ թե Նրա Անծերից միայն մեկը: Այստեղ հարկ է նշել, որ Հայրց եկեղեցին երբեք այս տրամաբանական բանաձևումները Ա. Երրորդության խորհուրդի համարժեք սահմանում չէր համարում: Հայ աստվածաբանները դավանաբանական բանաձևերը դիտում էին ոչ թե որպես ճշմարտության կատարյալ նկարագրություն, ինչը կհակասեր անճառելի աստվածաբանության սկզբունքներին, այլ լոկ որպես խորհրդանշական սահմանումներ, որոնցից այն կողմ սկսվում են զանազան մոլորություններն ու

<sup>9</sup> Տե՛ս *Յոսեփ* 2012: 55:



հերձվածները: Ս. Երրորդության էությունը գերագո է և վեր է ամեն ինչից, այն անհասանելի է ոչ միայն մարդկանց, այլև հրեշտակների ճանաչողության համար: Ուստի բոլոր դավանական բանաձևերն ունեն լոկ հարաբերական արժեք, ինչի մասին երբեք չպիտի մոռանալ:

«Հաստամք Եկեղեցի Սուրբ, թողութին մեղաց հաղորդութեամբ սրբոց»<sup>10</sup>: Քրիստոնեության մեջ Եկեղեցին դիտվում է ոչ միայն որպես հավատացյալների ժողով կամ հասարակական հաստատություն, այլ առաջին հերթին որպես Քրիստոսի մարմին, ու հենց այդ պատճառով է, որ այն համարվում է հավատի առարկաներից մեկը: Քրիստոսն անձամբ է ստեղծել Եկեղեցին, որի մեջ բնակվում է Ս. Հոգին, ու Տաթևացին հենց այդ պատճառով է Եկեղեցին սուրբ անվանում: Եկեղեցին աստվածային շնորհի շտեմարան է, որը տրվում է Եկեղեցու բոլոր անդամներին եկեղեցական խորհուրդների միջոցով: Մեղքերի թողությունն այստեղ հիշատակված է, որովհետև քրիստոնեական հավատը սկսվում է հենց նրանից, երբ հավատացյալը, մկրտվելով, Եկեղեցու անդամ է դառնում: Մկրտության խորհուրդը կատարվում է մի անգամ, ու դրա միջոցով մարդը մաքրագործվում է աղանական մեղքից և արդարանում է Աստծո առջև: Այստեղ կարևորն այն է, որ այս արդարացումը տեղի է ունենում ոչ թե մարդկային ջանքերի, այլ զուտ Քրիստոսի կատարած փրկագործության շնորհիվ: Աստծո Որդին Իր ինքնագոհաբերությամբ վերացրեց անեծքը, որին մարդկությունը ենթարկվեց Ադամի մեղագործությունից հետո:

«Հաստամք զմին յերից անձանց զԲանն Աստուած՝ ծնեալ ի Հօրէ նախքան զյաիտեանս, ի ժամանակի

<sup>10</sup> **Գրիգոր Տաթևացի 1746**, 562:

իջեալ յԱստուածածին Կոյսն Մարիամ առեալ յարենէ և որչա միաւորեաց ընդ իւրում Աստուածութեան իննամսնայ ժուժկաբա յարգանդի անարատ կոսին և եղև Աստուածն կատարեալ և մարդ կատարեալ, հոգով և մտօք և մարմնով մի անձն մի դեմ և միաւորեալ մի բնութիւն Աստուած մարդացեալ առանց փոփոխման, առանց այլ այլութեան անսերմն յղութիւն և անապական ծնունդ որպես ոչ է սկիզբն աստուածութեան նորա և ոչ վախճան մարդութեան նորա»<sup>11</sup>:

Այստեղ էականը Քրիստոսին կատարյալ Աստված և կատարյալ մարդ խոստովանելն է: Ըստ քրիստոնեական վարդապետության՝ Կոյս Մարիամի հղիությունն անսերմ էր, քանզի Ս. Հոգուց էր: Դա շեշտում է Քրիստոսի աստվածային ծագումը, քանի որ Նա չունէր երկրային հայր: Դրանով բացառվում են ցանկացած փորձերը Քրիստոսին ներկայացնելու որպես թեկուզ և մեծ, բայց սովորական մարդ, քանզի նրա ծնունդը սկզբունքորեն տարբերվում էր ցանկացած մարդու ծնունդից: Մյուս կողմից դա բնավ չի նշանակում, որ գեթ նվազագույն չափով թերազնահատվում կամ անտեսվում է նրա մարդկային բնությունը: Ու հենց այդ պատճառով է Տաթևացին, հետևելով եկեղեցական ավանդությանը, շեշտում Քրիստոսի Կոյս Մարիամից ծնված լինելու փաստը: Հիսուսը հավասարապես և երկնավոր Հոր, և երկրային Մոր զավակ է, Նա դարձել է կատարյալ մարդ, չդադարելով լինել կատարյալ Աստված: Դրանով վճռականապես մերժվում են քաղկեդոնականների կողմից Հայ Եկեղեցու հասցեին հնչեցվող ավանդական մեղադրանքները, որ հայերը եվտիբականներ են, քանի որ իբր թե ժխտում են Քրիս-

---

<sup>11</sup> **Նոյն տեղում:**

տոսի մարդկության կատարելությունը և համարում են, որ Նա ուներ միայն մեկ՝ աստվածային բնություն: Հայոց եկեղեցու քրիստոսաբանությունը նման միաբնակության հետ որևէ ընդհանուր բան չունի, քանի որ հայերի կողմից որդեգրված Կյուրեղ Ալեքսանդրացու վարդապետությունն ընդունում է, որ Քրիստոսի մարդկային բնությունը ամբողջական էր և անթերի: Ոստի բոլոր մեղադրանքները քաղկեդոնականների կողմից, որ Հայոց եկեղեցին իբրև թե որդեգրել է միաբնակությունը, միանգամայն անհիմն են: Միաբնակություն (monophysitism) եզրույթը ծագում է հունարեն monos - միակ, և physis - բնություն բառերից: Այսինքն՝ մոնոֆիզիտիզմը ոչ թե միաբնակություն է, այլ միակաբնակություն: Կյուրեղը նաև մերժում էր այն տեսակետը, որ Քրիստոսի մեջ աստվածությունն ու մարդկությունը խառնված էին իրար հետ, կամ էլ վերափոխվում էին մեկից մյուսը<sup>12</sup>: Այստեղ նույնպես կա սկզբունքային տարածայնություն եվտիքականության հետ: Եվտիքեսը կարծում էր, որ նույնիսկ եթե Քրիստոսն ուներ մարդկային բնություն, ապա այն կլանվել է աստվածությամբ, ինչպես կաթիլը՝ օվկիանոսով: Նա նմանեցնում էր Բանի մարդեղությունը ջրի ատոմց դառնալուն: Նրա համար Քրիստոսը միայն Աստված է, իսկ մարդկային բնությունը նրա մեջ ընդամենը առաջոք երևույթ է:

Կարելի է ասել, որ Հայ եկեղեցու համար եվտիքականությունը մերժելի է, քանի որ այն չի ընդունում Քրիստոսի մեջ կատարյալ մարդկային բնության առկայությունը, առանց որի Նրա փրկագործությունը պարզապես անհնարին է: Աստվածությունն ու մարդկությունն ի Քրիստոս միեղեն են և անշփոթ, ինչի հետ համաձայն են

<sup>12</sup> Տե՛ս **Нечмаи 2014**: 219:

նաև քաղկեդոնականները, սակայն տարբերությունն այն է, որ նրանց կարծիքով Բանի մարդեղությունից հետո յուրաքանչյուր բնությանը բնորոշ հատկությունները և գործողությունները շարունակում էին դրևաևորվել իրարից անկախ, ինչը հայկական տեսակետից անհամատեղելի էր Քրիստոսի անձի միեղինության հետ: Միայ է քաղկեդոնականների այն տեսակետը, որ Քրիստոսը գործում էր կա՛մ որպես մարդ, կա՛մ որպես Աստված: Նա Մարդ-Աստված էր, ու նրա բոլոր գործողություններում հավասարապես դրսևորվում էին և՛ Նրա մարդկությունը, և՛ Աստվածությունը: Կարևոր է նշել, որ Քրիստոսի միեղինությունը չի նշանակում, որ Նրա մարմինը Բանի հետ միանալուց հետո կորցրեց իր բնորոշ հատկությունները: Նա ամբողջությամբ պահպանեց իր նյութական ու եղական բնությունը, թեև դարձավ Բան-Աստծո մարմին: Աստծո Որդու մարմինը ամեն ինչով նման էր սովորական մարդկային մարմիններին, միակ տարբերությունն այն էր, որ Քրիստոսի մարմինը զերծ էր մեղքից: Եվտիքականությունը աստվածաբանական մոլորություն է, քանզի քաջահայտ կերպով հակասում է Ավետարանին, որում Քրիստոսը բազմիցս կոչվում է Մարդու Որդի, ինա՛ իսկական մարդ: Նա կարող էր քաղցած լինել, ծարավել, հոգնել, չարչարանքների ենթարկվել և, ի վերջո, մահանալ: Եվտիքական տեսակետից այս փաստերը պարզապես անբացատրելի են, քանզի զուտ աստվածային բնությունը չի կարող վերապրած լինել այս ամենը: Ուստի այն կարծիքը, որ Քրիստոսը միայն Աստված էր և չունեի մարդկային բնություն, պիտի կտրականապես մերժվեր:

«Հաստատմք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս շրջեալ ի վերայ երկրի, յետ երեսուն ամաց եկեալ ի մկրտութիւն

Հայրի վերուստ վկայեալ դա է Ռոդի Իմ սիրելի և Հոգին Սուրբ աղանակերպ իջեալ փորձեալ ի սատանայէ և յաղթեալ նմա: Քարոզեալ մարդկանց զփրկութիւն աշխատեալ մարմնով վաստակեալ քաղցեալ և ծարաւեալ: Յետոյ ելեալ կանա ի չարչարանս՝ խաչեալ, մեռեալ մարմնով և կենդանի աստուածութեամբն մարմինն եղեալ ի գերեզմանի, միատրեալ աստուածութեամբն և հոգովն իջեալ ի դժոխս անբաժանելի աստուածութեամբն, քարոզեալ հոգոցն՝ անբեալ դժոխս՝ և ազատեալ զհոգիսն: Յետ երից ասուրց՝ յարուցեալ ի մեռելոց և երեսեալ աշակերտացն»<sup>13</sup>:

Քրիստոսի խաչելությունը նրա փրկագործական առաքելության առանցքն է: Եկեղեցական ավանդության մեջ աղանական մեղքը դիտվում է որպես մարդուն Աստծո կողմից տրված կամքի ազատության չարաշահում: Աստծո կամքն էր, որ Ադամը սիրի ու երկրպագի Նրան որպես ազատ էակ, սակայն Ադամը դրա փոխարեն արհամարհեց Արարչի արգելքը՝ դրանով ցույց տալով սիրո բացակայությունը Նրա նկատմամբ: Դրանով խզվեց կապը Աստծո և մարդու միջև, ինչի հետևանքն էր մարդկանց արտաքսումը դրախտից ու նրանց մահկանացությունը: Աստծո և մարդու հաշտեցումը իրականացրեց Հիսուս Քրիստոսը՝ կատարյալ Աստված և կատարյալ մարդը: Իր կամքով խաչվելով, նա ջախջախեց մահվան զորությունը, քանի որ մահը չէր կարող հաղթել Նրա աստվածացած մարդկային քնությունը: Իր մահվանից հետո Քրիստոսը թաղվեց, ու Նրա մարմինը երեք օր մնացել է գերեզմանի մեջ: Իսկ Նրա հոգին իջավ դժոխք և ազատեց այնտեղ գտնվող արդարների հոգիները,

<sup>13</sup> **Գրիգոր Տաթևացի 1746**, 562:

որոնք Քրիստոսից առաջ նույնպես չէին կարող փրկվել: Երրորդ օրը նա հարություն առավ և դրանով կործանեց դժոխքի իշխանությունն ու դուրս բերեց այնտեղից իինկտակարանային արդարներին, որոնք սպասում էին Մեսիային և ընդունեցին Նրա բերած Բարի Լուրը: Հարություն առնելուց հետո նա բազմիցս երևացել է իր աշակերտներին՝ Մարիամ Մագդաղենացուն, Պետրոսին, Հակոբոսին և մյուս առաքյալներին:

«Հաատամբ զՏէրն մեր Յիսուս Քրիստոս նովին մարմնովն՝ համբարծեալ յերկինս և նստեալ ընդ աջմէ Հօր: Այլև գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս Որ և յարութիւն ամենայն մարդկան»<sup>14</sup>: Ավարտելով Իր երկրային առաքելությունը, Քրիստոսը համբարծվեց ու նստեց Հոր աջ կողմում: Այստեղ կարևոր է նշել, որ Համբարծումը բնավ ապամարմնացում չէ: Քրիստոսը քարծրացավ երկինք նույն մարմնով, որն ունեւր երկրի վրա, սակայն Հարությունից հետո այս մարմինն արդեն փառավորված էր և անմահ: Սա ունի շատ մեծ կարևորություն մարդկության փրկության համար, որովհետև հանձինս Քրիստոսի մարդկությունը միավորված է Աստծո հետ և հաղորդակից է անեղ աստվածային բնությանը: Դրանից հետո արդեն մարդու ազատ ընտրությունից է կախված այդ փրկության ընդունումը կամ մերժումը: Համբարծվելով երկինք՝ Քրիստոսը բոլոր հավատացյալներին հնարավորություն ընձեռեց շնորհի միջոցով որդեգրվել Աստծո կողմից: Դրա համար նա պիտի դառնա Քրիստոսի մարմինը հանդիսացող Եկեղեցու անդամը, քանի որ աստվածացեող շնորհի միակ աղբյուրը եկեղեցական խորհուրդներն են: Սակայն

---

<sup>14</sup> **Նույն տեղում:**

դա չի նշանակում, որ մարդն իր կողմից չափոխ ջանքեր գործադրի իր փրկության համար: Փրկվելու համար անհրաժեշտ է քարոյական մաքրագործում ու, եթե հնարավոր է՝ ճգնավորություն: Երբ Քրիստոսը գալու է երկրորդ անգամ, նա դատելու է ապրողներին և մահացածներին: Նրա երկրորդ գալուստն արմատապես տարբերվելու է առաջինից: Առաջին գալուստյան ժամանակ նա խոնարհվել է ու թաքցրել Իր աստվածային փառքը, մինչդեռ երկրորդ անգամ նա գալու է որպես երկնային թագավոր փառաց:

«Հաատամբ և զհատուցումն գործոց, արդարոցն կեանք յափտենականք և մեղատրացն տանջանք յափտենականք»<sup>15</sup>: Համընդհանուր հարությունից հետո լինելու է Ահեղ Դատաստանը: Բոլոր երևիցե ապրած մարդիկ դատվելու են Քրիստոսի կողմից ըստ իրենց բարի կամ չար գործերի: Աստծո Որդին բաժանելու է արդարների և մեղավորներից, առաջիններին պարգևելով երկրների արքայություն, իսկ երկրորդներին ուղարկելով դժոխք: Արդարները վայելելու են հավիտենական կյանքը, իսկ ամբարիշտները՝ նույնքան հավիտենական մահը, ջանի որ դժոխքում անհնար է հաղորդակցվել Աստծո հետ, Ով կյանքի և անմահության աղբյուր է<sup>16</sup>:

Ընդհանրացնելով՝ նշենք հետևյալը: Շարադրելով հավատքի դավանության աստիճանները, ս.Գրիգոր Տաթևացին անշեղորեն հետևում է ուղղափառ եկեղեցական ավանդությանը, ինչպես այն ներկայացված է Նիկիո հավատո հանգանակում: Մասնավորապես նա շեշտում է Ա. Երրորդության Անձերի համագոյությունը, Քրիստոսի՝

---

<sup>15</sup> **Նույն տեղում:**

<sup>16</sup> Տե՛ս **Лоскут 2006**: 308:

մի կողմից մեկ անձ ու մեկ բնություն, իսկ մյուս կողմից՝ կատարյալ Աստված և կատարյալ մարդ լինելը, և Ս. Հոգու բխումը միայն Հորից: Սա կարևոր էր Հայ եկեղեցու դավանության անաղարտությունը պահպանելու համար, երբ Հայաստանում իրենց գործունեությունն էին ծավալել կաթոլիկ միարարները, որոնք սպառնում էին Հայ եկեղեցու ինքնուրույնությանը՝ դրանով վտանգի ենթարկելով հայ ժողովրդի ազգային ինքնությունը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Գրիգոր Տաթևացի 1746**, Գիրք որ կրչի Ոսկեհորիկ, Կ. Պոլիս, 592 էջ:

**Восточные отцы и учителя Церкви. 1998**, Том 1, Москва, 608 с.  
**Лосский В.Н. 2006**, Боговидение, Москва, 760 с.

**Пелликан Я. Б. 2014**, Возникновение кифолической традиции, Том 1, Москва, 374 с.

**Флоровский Г. В. 2006**, Восточные отцы века IV века, Минск, 304с.

**Январас Х. 2012**, Вера Церкви, Киев 230 с.

**Արթուր Մաթևոսյան, պ.գ.թ.,**

*«Հ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,*

*Քրիստոնյա Արևելքի բաժին, ավագ*

*գիտաշխատող*

[archudo7@gmail.com](mailto:archudo7@gmail.com)

THE DEGREES OF THE CONFESSION OF FAITH ACCORDING TO THE "GOLDEN BELLY" OF ST. GREGORY OF TATEV

**Keywords:** *God, Father, Son, Christ, Trinity, Church, Creed.*

St. Gregory of Tatev is one of the most famous figures of the Armenian medieval spiritual culture. A great theologian, philo-



sopher, pedagogue, and finally a saint of the Armenian Church, he has left an indelible mark on the memory of the Armenian people. He left behind a very rich literary heritage, most of which is devoted to theological issues. During his lifetime, the Catholic Church intensified the missionary activity in the East. The Catholic missionaries belonging to the various orders made great efforts to convert the Armenians, which was a great danger, as the Armenian Apostolic Church was and remains one of the pillars of the Armenian identity. St. Gregory of Tatev has dedicated several fundamental works to the struggle against Catholic unionism, one of which is the "The Golden Belly". In this work, he presents the degrees of faith of the Armenian Church, which will be the subject of analysis in this article. Describing the degrees of faith, St. Gregory of Tatev steadily follows the Orthodox Church tradition, as presented in the Nicene Creed. In particular, he emphasizes the consubstantiality of the Persons of Holy Trinity, one person and one nature of Christ on the one hand, and on the other hand His being a perfect God and a perfect man, and the procession of the Holy Spirit from only the Father. This was important in order to preserve the purity of the Armenian Church's creed, when Catholic unionists were active in Armenia, threatening the independence of the Armenian Church, thus endangering the spiritual originality of the Armenian people.

**Arthur Matevosyan - PhD,**  
*Institute of the Oriental Studies NAS RA,*  
*Department of Christian Orient,*  
*Senior Researcher,*  
*archudo7@gmail.com*

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

MODERN AND CONTEMPORARY HISTORY

**ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱԼԸ ՈՐՊԵՍ ԳԻՏՆԱԿԱԼ  
ՔՐԴԱԳԵՏ՝**

**ՎԱՀԱԼ ԲԱՅՐՈՒԴՅԱԼ**

**Բանալի բառեր՝** քուրդ, եզիդի, Բայազետ, Վազներ, մարեր, Չամյան, Շարաֆխան, շիա, մոնոթեիզմ:

Հայ իրականության մեջ մշտապես մեծ է եղել հեղաքրքրությունը քուրդ ժողովրդի պայմանության, նրա հարուստ և գունեղ բանահյուսության, ազգային ավանդույթների և առհասարակ քրդերի կյանքի փարքեր կողմերի նկարմամբ: Նման թեմաներով անցյալում հայ ուսումնասիրողների և մրավորական գործիչների կողմից գրվել են բազմաթիվ արժեքավոր հեղազոգություններ, հայկական մամուլում փայտագրվել են մեծ թվով հոդվածներ և այլն: Նման երախտավորների թվին է պատկանում նաև հայ մեծ լուսավորիչ, գրող և անզուգական մրավորական խաչարար Արույանը, ով օժտված է եղել նաև հմուտ գիտնական-վերլուծողի և խորագիտակ պատմաբանի անկիճելի ծիրքով:

Դրա ակնառու վկայությունն է նաև նրա «Քրդեր և եզիդիներ» ուշագրավ հեղազոգությունը: Այդ հեղաքրքիր և արժեքավոր ուսումնասիրության ինքնագիրը գոթաբարտ գերմաներենով պատվում է Գրականության և արվեստի թանգարանում: Ամբողջական տեքստը հրատարակվել է Խ. Արույանի երկերի լիակատար ժողովածուի ութերորդ հատրում (1958 թ.) բանասեր Պիոն Հակոբյանի ընդարձակ ծանոթագրություններով:

\* Հոդվածը ներկայացվել է 06.06.2020: Գրախոսվել է 03.08.2020:

Թեպետ ուսումնասիրությունը թվագրված չէ, սակայն պրոֆեսոր Պ. Հակոբյանը պարզել է, որ այն գրված է 1846 թ. առաջին կեսին: Քանի որ սևագիր ինքնագիրը չի ունեցել ընդհանուր խորագիր, ելնելով երկի կառուցվածքից ու բովանդակությունից՝ ծանոթագրությունների հեղինակը նպարակահարմար է գտել այն վերնագրել՝ «Die Kurden und Jesiden» («Քրդեր և եզիդիներ»): Եղած նյութերի քննությունը հանգեցրել է այն եզրակացության, որ Արովյանի «Քրդեր և եզիդիներ» ուսումնասիրությունը սևագիր փարբերակից քացի, ունեցել է երկու ավարտուն, մաքրագիր օրինակ ևս, որոնք եղել են ավելի հղկված ու մշակված, ինչպես նաև սևագիր օրինակի համեմատությամբ ունեցել են կառուցվածքային և բովանդակության որոշակի փարբերություններ: Սակայն դժբախտաբար այդ մաքրագիր ու ավարտուն ձեռագրերը դեռևս հայտնաբերված չեն:

«Քրդեր և եզիդիներ» աշխատության ձեռագրերից առաջինը Խ. Արովյանը ուղարկել է Մյունխենի համալսարանի պրոֆեսոր Մորից Վազներիին: Վերջինս այդ առթիվ կատարել է հետևյալ գրառումը. «Առաջավոր Ասիայից վերադառնալուցս մի քանի տարի հետո, շնորհիվ Երևանի գավառական դպրոցի տեսուչ, իմ քարեկամ Արովյանի սիրալիրության, ով հանդիսանում է Արևելքի լավագույն հետազոտող ու գիտակ և հիմնավորապես տիրապետում է ասիական շատ լեզուների, ես ստացա մի շատ հետաքրքրական ազգագրական աշխատություն Արևմտյան Ասիայում ապրող մի քանի ազգությունների՝ հատկապես քրդերի մասին, որոնց նա առիթ էր ունեցել երկար ժամանակ ուսումնասիրելու ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Պարսկաստանում և Բայազետի փաշա-

յությունում: Պարոն Արովյանի ձեռագիրը, որը պարունակում է քրդերի և շատ տեղեր նրանց հետ խառն ապրող եզիդիների տվորոյթների, քնավորության գծերի և կյանքի պայմանների մասին հանգամանակից դիտողություններ, դրվեց իմ տրամադրության տակ ազատորեն օգտվելու պայմանով<sup>1</sup>:

Պրոֆեսոր Մ. Վազները գտնում է, որ «շնորհիվ ասիական լեզուների վերաբերյալ Արովյանի ունեցած հսկայական գիտելիքների և Արաքսին մոտիկ ապրելուն, նա ավելի նպաստավոր պայմաններում էր գտնվում, քան այս ու այն տեղ՝ Քուրդիստանում և Սինջարում թռուցիկ կերպով եզիդիներին ուսումնասիրող ինչ-որ բրիտանական ճանապարհորդները»<sup>2</sup>: Իր գրքում Վազները հիշում է նաև Արովյանի ուղարկած քրդական և եզիդիական ժողովրդական երգերի հավաքածուի մասին:

Մինչև 1847 թ. նոյեմբեր ամիսը «Քրդեր և եզիդիներ» աշխատության տպագրության ուղղությամբ քայլեր չէին ձեռնարկվել: Այդ առթիվ Արովյանն իր «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» ռուսերեն ուսումնասիրության մեջ գրել է, թե այդ հոդվածը «այժմ, Աստված գիտե, որտեղ՝ Գերմանիայում կամ Թիֆլիսում փտում է»:

Պրոֆ. Պ. Հակոբյանը գրում է, որ «Քրդեր և եզիդիներ» ուսումնասիրության վերոհիշյալ երկու ձեռագրերն էլ այն ձևով, ինչպես դուրս են եկել Արովյանի գրչի տակից, նույնությամբ տպագրվել: Վազները հատվածաբար վերապատմել է գործի քվանդակությունը 1852 թ. լույս տեսած իր «Reise nach Persian und dem Land der

<sup>1</sup> Wagner 1852: 219. Հղումը քստ Արովյան 1958, 424:

<sup>2</sup> Լույս տեղում:

Kurden” գրքի 2-րդ հատորի հավելվածում, որը կրում է «Beiträge zur Ethnographie des Orients» վերնագիրը»<sup>3</sup>։

Միայն Արուվանի անհետացումից հետո Կովկասի փոխարքայի գրասենյակում եղած ձեռագրի մի մասը, որ վերաբերում էր քրդերին, անցել է “Kavkaz” թերթի խմբագրությանը, որը ռուսերեն թարգմանությամբ լույս է ընծայվել 1848 թ. վերջին համարներում։ Սակայն հայտնի չէ, թե թարգմանությունը որքանով է հարազատ մնացել բնագրին։

Առկա են Արուվանի վկայությունները «Քրդեր և եզիդիներ» աշխատության ստեղծագործական պատմության վերաբերյալ։ «Նախանցյալ տարի (Նկատի ունի 1845 թ. - Վ. Բ.), - գրում է նա, - պարոն կոմս Բենկենդորֆի ցանկության համաձայն, ծառայությունից ազատ ժամանակս, հենց Քրիստոսի ծննդյան տոներին, ամենադաժան ձմռանը, իմ հաշվին ես ուղևորություն ձեռնարկեցի դեպի քրդերն ու եզիդիները՝ պատմության այդ ֆենոմենները, երկու շաբաթ ապրեցի նրանց մեջ, ծերերին և կանանց թանկարժեք նվերներ բաժանեցի, որպեսզի գրավեմ նրանց վստահությունը, և այդպիսով, նրանց հրապուրելով, ավելի հարմար և հաստատ կերպով, ամեն ինչի մեջ կասկածամիտ այդ վայրենիներից իմանամ բոլոր արժեքավոր տեղեկությունները, նրանց բարքերի, սովորությունների, հավատալիքների, քնավորության և նույնիսկ պոեզիայի մասին, երկու ամսից ավելի, գիշերները ամբողջ աշխատում էի, քանի որ ցերեկներն աշխատելու ժամանակ ջրների, գրեցի մի, ոչ պակաս հետաքրքրական և բավականաչափ մեծ հոդված, որի մասին էջմիածնում անձամբ ինձ դրվատական

<sup>3</sup> Արուվան 1958, ծանոթագրություններ, 425։

կարծիք հայտնեց գիտնական գեղապետ և պարոն փոխարքայի համհարզ պարոն Մուրավյովը: Հոդվածը գրել են գերմաներեն, շատ գովասանքներ են լսել նրա մասին, ոչ պակաս ծախսի տակ ընկա, ըստ հնարավորինս շատ աշխատեցի, կազմեցի և արտագրեցի ինքս մենակ, իսկ այժմ Աստված գիտե, որտեղ՝ Գերմանիայում կամ Թիֆլիսում փտում է այն»<sup>4</sup>:

Արովյանն իր «Քրդեր և եզիդիներ» աշխատությունը շարադրելիս օգտագործել է անձնական դիտողությունները՝ դեռ մանկապատանեկան տարիներից սկսած, երբ Քանաքեռում, իրենց տանը, ծնեռները դիտում էր սարերից գյուղ իջած քրդերին ու եզիդիներին: Նա օգտագործել է նաև Արևելյան Հայաստանում, Բայազետի փաշայությունում և Մակուի խանությունում 1829 թվականից մինչև 1844 թվականը՝ Պարրուտի, Վազների, Հաքսիաուզների, Աբիխի հետ կատարած շրջագայությունների ժամանակ հավաքած նյութերը:

Նա նյութեր է քաղել նաև գիտակ անձնավորությունների հետ կատարած հարցուփորձի ճանապարհով: Այդ մարդկանց թվում եղել են արեղա Ղազար Տեր-Ղևոնդյանը, Խոյի Ջաֆար-խանը, եզիդիների ցեղապետ Թամար-աղան, Էջմիածնի սինոդի ատենապետ Բարսեղ արքեպիսկոպոսը, իր հորեղբայր Հարություն Արովյանը, քուրդ ցեղապետ Սուլեյման-աղայի որդիները՝ Իբրահիմն ու Շամդինը և շատ ուրիշներ:

Ուսումնասիրությունը կատարելիս Արովյանը ծանոթացել է նաև արաբական և պարսկական աղբյուրներին, առանց, սակայն որևէ ուշագրավ և արժեքավոր բան

---

<sup>4</sup> Արովյան 1957, 194-195:

գտնելով այնտեղ իրեն հետաքրքրող խնդրի առնչությամբ<sup>3</sup>:

«Քրդերը և եզդիները» պատմաագագրական քնույթի ուսումնասիրություն է, որտեղ Արովյանը քննության է ենթարկում հարցերի լայն շրջանակ, հնարավորինս մանրամասնորեն ներկայացնելով քուրդ ժողովրդի պատմական զարգացման և նրա կյանքի կարեվորագույն պահերի դրվագները: Ընդ որում, որպես բարեխիղճ և անաչառ հետազոտող, նա աշխատում է հավատարիմ մնալ գիտական սկզբունքայնությանը և քուրդ ժողովրդի ամբողջական և հավաքական կերպարը ներկայացնել ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերով:

Բնականաբար մեկ հողվածի շրջանակներում անհնարին է անդրադառնալ Արովյանի հետազոտության մեջ շոշափված բոլոր հարցերին: Ուստի մենք կանդրադառնանք լոկ մի շարք խնդիրների, որոնք առավել կարևոր հետաքրքրություն են ներկայացնում քուրդ ժողովրդի պատմության ուսումնասիրման համար:

Առ այսօր, քրդագիտության մեջ ոչ միայն պատասխան չունի քրդերի ծագման (էթնոգենեզի) հարցը, այլ նաև այն խնդիրը, թե ե՞րբ, ո՞ր դարից սկսած են քրդերը մուտք գործել պատմության ասպարեզ, ե՞րբ են հաստատվել Մերձավոր և Միջին Արևելքի այն տարածքներում, որոնք ներկայումս ընդունված է անվանել Քրդստան, ի՞նչ կրոն են նրանք դավանել մինչև իսլամի ընդունումը, որտեղի՞ց է ծագել նրանց «քուրդ» ինքնանվանումը, երբվանի՞ց են նրանք «քուրդ» անվան տակ հանդես եկել պատմության թատերաբեմում, ո՞ր տա-

<sup>3</sup> Արովյան 1958, Դ. Հակոբյանի ծանոթագրություններ, 426:



րածքներում է ընթացել շուրջ ժողովրդի պատմական կյանքը, կամ բնապատմական ո՞ր տարածքներն են հանդիսացել նրանց կազմավորման հնագույն օրրանները, ո՞ր վայրերում է ապրել քրդական էթնոսի սկզբնական կորիզը, ո՞րն է քրդերի նախահայրենիքը և այլն:

Ըստ էության, մինչև IX դարը քրդերի պատմությունը ծածկված է անորոշության մշուշով: Նման եզրակացության է հանգել ոուս անվանի քրդագետ-իրանագետ և դիվանագետ Վլադիմիր Մինորսկին<sup>6</sup>: Այդ նույն տեսակետին էր նաև Խ. Արովյանը: «Մեր ունեցած տեղեկությունները նրանց (քրդերի - Վ. Բ.) ծագման, ազգակցության, տարածման և այդ ժողովրդի կարևորության մասին՝ պատմության մեջ, շատ թերի և անստույգ են, հիմնված ավելի ավանդությունների, քան պատմական փաստերի վրա»<sup>7</sup>: Զարգացնելով իր միտքը, նա գրում է. «քրդերի ծագումը դեռևս շատ մութ է մնացել պատմական հավաստիության տեսակետից, և որի գոյությունը բոլորովին տարբեր բնույթ է կրում քուրդ մեզ հայտնի ասիական ժողովուրդների մեջ և ըստ ամենայնի արժանի է յուրաքանչյուր կրթված մարդու հետաքրքրության»<sup>8</sup>: «Քրդերը, - նշում է Արովյանը, - ամեն տեսակետից առեղծվածային ժողովուրդների շարքին են պատկանում»<sup>9</sup>:

Հայտնի է, որ քրդերի ծագման (էթնոգենեզի) վերաբերյալ XIX դարի սկզբներից սկսած գիտության մեջ շրջանառվել են տարբեր վարկածներ, որոնցից մեկն էլ

<sup>6</sup> Տե՛ս Minorsky 1954: 1134-1135:

<sup>7</sup> Արովյան 1958, 345:

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Նույն տեղում, 243:

նրանց մարական ծագման վարկածն է<sup>10</sup>։ Ի դեպ, այդ վարկածը արձարժվել է նաև անցյալի մի շարք հայ հետազոտողների կողմից<sup>11</sup> և կողմնակիցներ գտել մերօրյա արևելագետ-քրդագետների շրջանում<sup>12</sup>։ Մարաստանը (Մեդիան) նույնիսկ համարվել է «հին քրդական պետություն», «քրդերի պատմական տուն», իսկ քրդերենը՝ մարական լեզվի ժառանգորդ։ Գիտության մեջ չապացուցված այդ տեսակետի հաստատման համար հաճախ վկայակոչել են հայկական պատմական ավանդույթը, որի համաձայն քրդերը մարերի (մեդացիների) ժառանգորդն են։

Շրջանառվել է նաև վարկած այն մասին, որ քրդերը ծագել են պարթևներից, և որ պարթևական պետությունը հիմնադրվել է հենց քրդերի կողմից<sup>13</sup>։ Այս վարկածը հատկապես շրջանառվել է իրանցի հետազոտողների կողմից, որոնք որպես դրա հիմնավորում վկայակոչել են իրանական դիցաբանությունը<sup>14</sup>։ Հիշյալ հարցերի վերաբերյալ տեսակետ է հայտնել նաև Աբովյանը։ Ըստ նրա, քուրդ ժողովրդի ծագման մարական և պարթևական վարկածները պատմական քննություն չեն րոշում։ «Այն պնդումը, - ձևակերպում է իր միտքը Աբովյանը, - որ քրդերը ծագում են հին մարերից, իսկ ուրիշների ասելով էլ նրանք պարթևներից են ծագում՝ անհավանական է»<sup>15</sup>։

Շրջանառվել է նաև վարկած քրդերի արաբական-սե-

<sup>10</sup> Տե՛ս *Минорский* 1915: 3; *McKenzie* 1951: 68:

<sup>11</sup> *Չուճյան* 1985, 107-111:

<sup>12</sup> *Ազոնոս* 1969; *Asatrian* 2003: 25, տե՛ս նաև *Izady Mehrdad* 2005:

<sup>13</sup> *Izady Mehrdad* 1922: 40; *Eppel* 2016: 5:

<sup>14</sup> *Ազոնոս* 1964:

<sup>15</sup> *Աբովյան* 1958, 244:

մական ծագման վերաբերյալ<sup>16</sup>: Այդ վարկածը նույնպես Արովյանը համարում է անընդունելի, Նշելով այն մասին, որ քրդերը իրր «Արաբիայից են գաղթել և նույն ծագումն ունեն ինչ որ արաբները, այդ մասին ոչ մի գրավոր ապացույց գոյություն չունի»<sup>17</sup>:

Քրդերի հնագույն շրջանի պատմության վերաբերյալ տվյալների անխոնջ պրպտումները Արովյանին բերել են հետևյալ համոզման. «Առաջավոր Ասիայի բոլոր ժողովուրդների՝ ասորեստանցիների, պարսիկների, հայերի և այլն բերանացի և գրավոր ավանդույթներում քրդերի մասին ոչ մի տեղ չի կարելի որևէ բան փնտրել, լսել կամ գտնել»<sup>18</sup>: Չարգացնելով իր այդ միտքը, Արովյանը գրում է. «Ասիական ժողովուրդներից գլխավորապես մահմեդական արաբները, պարսիկներն ու թուրքերը, ապա երբայեցիները ... պետք է որ ամենից շատ հետաքրքրված լինեին քրդերի ծագման վերաբերյալ տեղեկություններ թողնելու խնդրով: Ասկայն որքան էլ ես ջանք թափեցի այդ ուղղությամբ, հիշյալ ժողովուրդների գիտնականների միջոցով որևէ պատմական բան ճշտելու, դժբախտաբար այդ քոլորն ի դերն անցան»<sup>19</sup>:

Իս. Արովյանը միազամայն ճիշտ է նկատել, որ քրդերի հնագույն շրջանի պատմության ուսումնասիրության դժվարություններից կարևորագույնն այն է, որ ըստ էության հունական, պարսկական, սիրիական, հայկական, ինչպես նաև այլ լեզուներով աղբյուրներում տեղեկություններ չեն պարունակվում: Այդ մասին տեղեկությունները բացակայում են նաև բիրյիական ավանդու-

<sup>16</sup> Akonob 1967: 175-207.

<sup>17</sup> Արովյան 1958, 244:

<sup>18</sup> Լույս տեղում:

<sup>19</sup> Լույս տեղում, 243:

թյուններում: Իսկ բուն քրդական աղբյուրներ գոյություն չունեն: Բավական է ասել, որ XVI դարի քուրդ պատմիչ Շարաֆխան Բիթլիսիի (1611-1685 թթ.) «Շարաֆ-նամե» կոչված տարեգրությունում<sup>20</sup> քրդերի պատմությունը շարադրում է միայն X դարի երկրորդ կեսից սկսած: Ավելի վաղ հիշատակումներ մեզ չեն հասել հավանաբար դրանց բացակայության պատճառով: Առհասարակ քուրդ ժողովրդի պատմության վերաբերյալ համեմատաբար ստուգված և վստահության արժանի ու հավաստի տեղեկություններ հետազոտողները հնարավորություն ունեն քաղելու միայն XVI-XVII դարերից սկսած: «Անգամ քրդական գրագետները, - գրում է Աբովյանը, - իրենց մասին ոչինչ չգիտեն, քան այն, որ նրանք քրդեր են և աշխարհիս երեսին գոյություն ունեն Նոյան ժամանակներից»<sup>21</sup>:

Խոսելով քրդերի միջնադարյան շրջանի պատմության մասին, Աբովյանը նշում է, որ այդ շրջանի վերաբերյալ ևս աղբյուրները բացակայում են, ուստի քրդերի պատմության այդ հսկա ժամանակաշրջանը ևս պարզված է անորոշության մշուշով: «Թերևս, հատկապես, խաչակրաց արշավանքների և, ավելի ուշ, իրենց կայսրության մեջ թուրքական իշխանության շեղծիվ առաջացած հեղաշրջումների ժամանակվա քյուզանդական պատմագիրները որոշ լույս են սփռել այդ տարօրինակ ժողովրդի վրա, բայց նման աղբյուրների կատարյալ պակասության հետևանքով, ոչ մի հնարավորություն չկա որևէ քան ասելու այդ մասին»<sup>22</sup>, - գրում է նա:

<sup>20</sup> Шараф-хан 1967; Cheref nameh, 1868.

<sup>21</sup> Աբովյան 1958, 243:

<sup>22</sup> Աբովյան 1958, 243:

Տեղեկություններ գոյություն չունեն նաև նախափալական շրջանում քրդերի հասարակական կառուցվածքի, պետական կազմավորումների մասին: Արովյանը չի անդրադառնում այդ հարցին, սակայն շեշտում է, որ «բաժանված լինելով անթիվ ցեղերի, դարերի ընթացքում քրդերը չեն փոխել իրենց սովորությունները, լեզուն, կենցաղը, ազգային զգեստը»<sup>23</sup>:

Նա անդրադարձ է կատարում նաև քրդերի կրոնական հավատալիքների հարցին: Նշելով, որ քրդերը դավանում են իսլամը, նա չի պատասխանում այն հարցին, թե երբ և ինչպես է նրանց մոտ տարածում գտել միաստվածությանը (մոնոթեիզմի) հետևորդ այդ կրոնը: Սակայն շեշտում է, որ իսլամական կրոնի մեջ առկա են երկու հիմնական հոսանքներ կամ ուղղություններ՝ սուննիականությունը և շիականությունը: Արովյանը նկատել է նաև, որ սուննի և շիա քրդերի միջև առկա են լուրջ տարածայնություններ, որոնք հաճախ վեր են անվում առհաշտ թշնամանքի: Սուննիների «աստելությունը շիաների վերաբերմամբ, - գրում է նա, - նույնչափ ուժեղ է, որչափ վերջիններինը առաջինների նկատմամբ»: Նրա կարծիքով սուննի քրդերը «ավելի սիրում են քրիստոնյաներին, քան շիաներին, որոնց երբեք մուսուլման չեն անվանում»<sup>24</sup>:

Արովյանին հայտնի է եղել նաև, որ սուննի քրդերը իսլամի շաֆիական մազհաբի հետևորդներ են, թեև կային նաև քրդեր, որոնք պատկանում էին հանաֆիական մազհաբին:

Հայտնի է, որ քրդական իրականության մեջ բացի

---

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Արովյան 1958, 244:

«դասական» կամ «իթնա Աշարի» շիականության հետևորդների անկա են նաև ծայրահեղ շիական աղանդներից մեկի՝ Ահ-ե հադը կամ Ալի-Իլահի («Ճշմարտության մարդիկ» կամ «Ալիի հետևորդներ») հետևող քրդեր, որոնք բնակվում էին ինչպես Օսմանյան կայսրության տարբեր մասերում, այնպես էլ Իրանում: Ալի-իլահիները մյուս քրդերից զանազանվում էին ոչ միայն իրենց հավատով, այլև լեզվով՝ խոսում էին զազա լեզվով (զազաերենով): Խորամուխ չլինելով զազաների խնդրին, Արովյանը հարևանցիորեն հիշատակում է նաև զազաների մասին:

Վերին աստիճանի ուշագրավ է նաև «քուրդ անվան վերաբերյալ Արովյանի մտորումները: Հայտնի է, որ արաբալեզու աղբյուրներում «քուրդ» (իոզնակին «աք-րադ») տերմինի տակ նկատի է առնվել նաև ընդարձակ Արաբական խալիֆայության տարբեր մասերում ապրող իրանալեզու լեռնային վաչկատուն ցեղերը<sup>25</sup>, կամ ընդհանրապես ընկալվել է «քոչվոր», «վաչկատուն», «անասնապահ», «հովիվ», «թափառակենցաղ խաշնարած» իմաստով<sup>26</sup>: Հետևաբար դժվար է, կամ համարյա անհնարին է պարզել, թե աղբյուրներում հանդիպող «քուրդ» տերմինի տակ ու՞մ է նկատի առնվել, իրական քրդերի՞ն, թե՞ վաչկատուն անասնապահ մեկ այլ ժողովրդի: Ուշ միջնադարյան հայ հեղինակների, օրինակ, Առաքել Դավրիժեցու մոտ «մար» և «քուրդ» էթնոնիմները հանդես են գալիս որպես հոմանիշներ: Մատթոս Ուտիայեցուն և Դավիթ Ալավկատորուն անձանոթ է եղել

<sup>25</sup> Տե՛ս, օրինակ, Nöldeke 1927: 78-79, Limbert, 1968: 48, Anthony, 1991, Asatryan 2003:

<sup>26</sup> Տե՛ս Ozoglu 2007:

«բուրդ» անվանումը, իսկ XIII դարի հեղինակներ Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին մինչև XII դարի դեպքերին անդրադառնալը օգտագործել են «մար», այնուհետև XII դարից սկսած՝ բուրդ էթնոնիմները<sup>27</sup>:

Ըստ հետազոտող Վլ. Իվանովի, «բուրդ» անվանումով միջնադարում բնորոշվում էին իրանալեզու բուրդ քոչվորները, ուստի և այն նույնական չէ ժամանակակից էթնոնիմին<sup>28</sup>:

Քուրդ ինքնանվանման ծագման մասին Արովյանը գրում է. «Քուրդ անունը, որքան ինձ հայտնի է, չի պատահում հին հեղինակներից և ոչ մեկի գրվածքում»<sup>29</sup>:

Արովյանի նկարագրած ժամանակաշրջանում՝ XIX դ. առաջին կեսին քրդական հասարակությանը բնորոշ էր տոհմացեղային կառուցվածքը: Քրդերն ապրում էին ցեղերով, որոնց մեծ մասը միավորված էր ցեղային միությունների՝ աշիրեթների մեջ: Ըստ իր կենսաձևի, քրդական հասարակությունը բաժանվում էր երեք խմբի, քոչվորներ կամ աշիրեթային քրդեր, կիսաքոչվորներ և նստակյաց (ոայա) բնակչություն: Ընդհուպ մինչև XIX դարի վերջը ճնշող մեծամասնությունը քոչվորներ ու կիսաքոչվորներ էին: Ընդ որում, քրդերի սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական կյանքում կարևորագույն դերը պատկանում էր քոչվոր քրդերին: Քրդերի մոտ առկա ցեղային համակարգի մասին Արովյանը գրում է. «Քուրդը «հոգով ու մարմնով ամուր կապված է իր ցեղապետին: Վերջինիս հեղինակությունը և խոսքը միշտ սուրբ և անդրժեղի է համարվել առաջինի համար: Տեղա-

<sup>27</sup> Մարգարյան 1992, 146-149:

<sup>28</sup> Ivanov 1940: 42.

<sup>29</sup> Արովյան 1958, 373:

պետի մի նշանով ամեն ոք պատրաստ էր մեռնելու»<sup>30</sup>.

Արվյանը անդրադարձ է կատարում նաև մինչև XIX դ. առաջին կեսին Արևմտյան Հայաստանում իշխող քրդական դերերեթյությունների մասին: «Հայաստանի հին բերդերն ու ամրոցները, մարդագուրկ ուղիներն ու լեռնային թաքստոցները ծառայում էին նրանց, որպես ավազակային որջեր»<sup>31</sup>, - գրում է նա: Ըստ էության արևմտահայությունը հետո ու տառապում էր քուրդ ծորապետ-դերերեթյան անագորույն լծի տակ, որոնք անխնա հարստահարության, ավարի ու կողոպուտի էին ենթարկում հայ բնակչությանը: Իրենց այդ իրավունքը, ըստ քուրդ պատմիչ Մելա Մահմուդ Բայազիդիի, նրանք հիմնավորում էին հետևյալ փաստարկով. «Քանի որ թախիբների տախիբները իրենց պատկանող հողերը և կալվածքները գրավել են զենքի ուժով վրացիների և հայերի հետ պատերազմների ընթացքում, նրանք (քրդական ցեղերն ու ցեղապետերը - Վ. Բ.) նրանցից հավաքում են հարկեր, իրենց ասելով, որպես իրենց հայրերի և պապերի թափած արյան գին»<sup>32</sup>:

Հիրավի, Արևմտյան Հայաստանում գոյություն ունեին քրդական ցեղապետ ավատատերերի կողմից սահմանված ճորտատիրական կարգեր, ընդ որում միջնադարին բնորոշ ամենաձանր ձևով: Ռուս արևելագետ-դիվանագետ Վ. Նիկիտինը գրում է, որ «քրիստոնյաներին քրդական առաջնորդներն անվանում էին «գիր խուրի», այսինքն՝ դեղինով (ոսկով) գնված: Նրա ասելով, այդ ար-

---

<sup>30</sup> **Լույս տեղում**, 346:

<sup>31</sup> **Լույս տեղում**, 244:

<sup>32</sup> Տե՛ս **Bacatusena 2009**: 96:



տահայտությունը չափազանց ճշգրիտ է, քանի որ նրանք գնվում և վաճառվում էին իբրև անասուններ»<sup>33</sup>:

Քրդական ավատատերերից հայ գյուղացիության ճորտային կախվածությունը կոչվում էր «քյաֆիրություն» կամ «խաֆիրություն», որը Ռ. Բեկգույանը բնորոշում է որպես «կամայականություն ու բռնություն»<sup>34</sup>:

Քրդական ավատական վերնախավի կողմից հայ գյուղացիության շահագործման ձևերից մեկն էլ, այսպես կոչված, ղզլաղայնությունն էր: Արովյանը այն բնութագրում է հետևյալ կերպ. «խոտառատ լեռներից և հովիտներից իջնելուց հետո, նրանք (քրդական ցեղերը - Վ. Բ.) իրենց անհամար ոչխարների և եղջերավոր անասունների հոտերը ձմռան խիստ և երկարատև ամիսներին պատսպարում էին հայերի մոտ, առանց որևէ վարձատրության: Դրա համար էլ սրանք ստիպված էին տարվա պատշաճ եղանակին անչափ կեր ու ձմեռվա պաշար պահելու, որպեսզի ազատ մնային նրանց զարհուրելի վրեժխնդրությունից: Ոչ մի օրենք, ոչ մի իշխանություն չէր կարող պաշտպանել սրանց ճնշումից: Ամենաթեթև դիմադրությունը հատուցվում էր ամենավայրագ դաժանությամբ»<sup>35</sup>: Ընդ որում Օսմանյան կայսրությունում քնակվող բոլոր քրիստոնյա ժողովուրդներից միայն հայերի վրա էր դրված քոչվոր քրդերին ձմեռային ապաստան տալու պարտավորությունը<sup>36</sup>:

«Քրիստոնյաները, հատկապես հայ դժբախտ ժողովուրդը և նեստորականները նրանց ստրուկներն էին

<sup>33</sup> Hacıran 1964: 221.

<sup>34</sup> Bekryannı 1914: 74.

<sup>35</sup> Արովյան 1958, 248:

<sup>36</sup> Walker, Christopher 1980, 108.

բառիս բուն իմաստով»<sup>37</sup>, - գրում է Արովյանը:

Հայտնի իրողություն է, որ Օսմանյան կայսրությունում այլադավան քնակչությանը շահագործելու գործում լայնորեն օգտագործվում էր նաև կրոնական գործոնը: Իս. Արովյանը կատարում է մի նրբին դիտարկում այն մասին, որ քուրդ ավատապետերի կողմից կրոնի չարաշահումը հետապնդել է լոկ սոցիալական նպատակներ: «Նրանց զարհուրելի գործողությունները հայ և նեստորական ժողովրդի հանդեպ, - գրում է նա, - պետք է նկատել կատարված ոչ երբեք մոլեռանդությունից, կամ ազգային ատելությունից... Չի եղել դեռ մի դեպք, որ քուրդը ստիպեր քրիստոնյային իր հավատն ուրանալ, կամ դրա պատճառով նրան հալածեր»<sup>38</sup>:

Հենվելով իրենց դոկամենտից կազմված զինված ջոկատների վրա՝ քուրդ ցեղապետ-աշխրեթապետերը իրականացնում էին նստակյաց ուսյա քնակչության արտատնտեսական շահագործումը այնպիսի եղանակներով, որ եվրոպացի ճանապարհորդները անվանել են «քրդավարի»:

Իս. Արովյանը նկատել է նաև, որ ինչպես քուրդ քոչվորական ժողովուրդների, այնպես էլ քրդական վաչկատուն աշխրեթների մոտ առկա է զենքի պաշտամունքը: Քրդական բանավոր եղբերգություններից մի քանիսի մեջ զենքը անվանվում է «ազատող», «կենսատու», «հույս», «կերակրող», «պատուհատող», «արդար դատավոր», «խիզախ ընկեր», «ցեղի պահապան», «խեթերին խեյքի քերող», «ապրուստի դուռ» և այլն<sup>39</sup>:

<sup>37</sup> Արովյան 1958, 244:

<sup>38</sup> Նույն տեղում, 249:

<sup>39</sup> Տե՛ս Շվոս 1905, 142-43:

Քնական է, որ զենքին տիրապետող ճանաչելու էր միայն ուժի իրավունքը: Գծելով զինված քրդի կերպարը՝ Արուվյանը գրում է. «Քրդերի բոլոր զենքերը նախատեսված են լուկ հարձակման և անձնական արհույան համար: Քրդերի մի գունդ, իր լիակատար հանդերձանքով և սպառազինությամբ, իմ կարծիքով, ցի զիջի զվարդիական որևէ լավ զնդի փառքին»<sup>40</sup>:

Առհասարակ հարկ է նշել, որ քրդերի վերաբերյալ Խ. Արուվյանի ուսումնասիրությունը պարունակում է հսկայական ազգագրական նյութ: «Ողջ երկրագնդի ժողովուրդներից որևէ մեկի մոտ հազիվ թե կարելի լինի գտնել այն իսկական նահապետական կյանքը՝ իր սկզբնական մաքրությամբ, իր բոլոր արատներով և առաքինություններով, իր բոլոր առավելություններով ու թերություններով, ինչպես քրդերի մոտ: Ազատ և ռազմասեր, անկախ և անսանձ, անհանգրվան, նրանք շրջագայում են իրենց երկրում ամենուրեք՝ կողոպտելով և հափշտակելով, կոխներ մղելով ոչ միայն պարսիկներին ու թուրքերին, որոնց երկյուղ և դիմադրություն էին ներշնչում իբրև Աստծո պատիժ, այլև սարսափելի չափերով՝ միմյանց»<sup>41</sup>: Ոչ մի օրենք, այդ բառի տառացի իմաստով, նրանք չեն համարում այնքան անձեռնմխելի սրբություն, որքան հին սովորույթը»<sup>42</sup>, - եզրակացնում է Արուվյանը:

Իր ուսումնասիրության մեջ հեղինակը մեծ տեղ է հատկացնում նաև քրդերի ազատասիրության և հերոսականության թեմային: «Ուշագրավ է այն հանգամանքը, - նկատում է Արուվյանը, - որ նրանք (քրդերը - Վ.

<sup>40</sup> Արուվյան 1958, 257:

<sup>41</sup> Նույն տեղում, 48:

<sup>42</sup> Նույն տեղում, 380:

Բ.) անարգ թաթարների նման երբեք դիտավորյալ կերպով չեն սպանում այն մարդկանց, որոնց կամենում են կողոպտել, եթե վերջինները զենքը ձեռքին չեն աշխատում պաշտպանվել առաջինների հարձակումից: Երանք հաճախ կապում են հարձակման ենթարկվածի ձեռքերը, ոտքերը և աչքերը, ամեն ինչ հանում վրայից, անզամ շապիկն ու վարտիքը, հաճախ տալիս նրան նույնիսկ իրենց ցնցոտիները և ուրախ սրտով հեռանում: Թեև գողությունը և ավազակությունը նրանց քնավորության զլխավոր հատկանիշներից մեկն է, նրանք ամենաքարձր առաջինությունը, բայց երբեք նրանք այնպես ստոր, կեղտոտ ձևով չեն կատարում այդ չարագործությունները, ինչպես սովոր են անելու թաթարները և ուրիշներ»<sup>43</sup>:

Ինչպես հայտնի է, քրդերի մոտ գործել է արյան վրիժառության ինստիտուտը: Ռազմաշունչ վաչկատուն բուլր ժողովուրդների համար այն հանդիսացել է ինչ-որ չափով զսպող գործիք: Հավանաբար ցեղերը փոխադարձաբար կոչնչացնեին միմյանց, եթե գոյություն չունենար արյան վրիժառությունը: Քուրդ պատմիչ Մելա Մահմուդ Բայազիդին հաղորդում է, որ «քրդերը չափազանց դիակալ ու քինոտ են, հիշաչար և իրենց վրեժխնդրության մեջ համար: Երբ պատահում է, որ քուրդն ունենում է արյան թշնամանք կամ վեճ որևէ մեկի հետ մի որևէ երկրում, նա ամենայն մանրամասնությամբ և մանրուքներով այն որպես կտակ փոխանցում է իր զավակներին: Մի խոսքով, հին թշնամանքը քրդերի մոտ չի մոռացվում, նրանք պահպանում են այն յոթ սերունդների կյանքի ընթացքում»<sup>44</sup>:

<sup>43</sup> Լոպի տեղում, 250:

<sup>44</sup> Եսասու 1963: 11-14.

«Արյան վրեժը, - վկայում է Արուվանը, - քրդերի մոտ «անցնում է սերնդից սերունդ, մինչև որ վերջապես փնտրված զոհը ընկնում է, հաճախ ողջ ընտանիքը, այո, անգամ ողջ ցեղը բնաջինջ է փնտում»<sup>45</sup>: «Արյան վրեժը հագեցվում է երբեմն մի ամբողջ ցեղի ոչնչացումով»<sup>46</sup>: Միաժամանակ նա բերում է ուշագրավ փաստեր այն մասին, որ սովորության իրավունքը հնարավորություն է տվել քրդերին ինչ-որ չափով հաղթահարել արյան վրիժառության կործանիչ տարերքը: «Կինը, - գրում է Արուվանը, - մանավանդ այլազգի կինը նրանց (քրդերի - Վ. Բ.) այցում մի սուրբ անձնավորություն է: Նույնիսկ արյան վրեժի կատաղի պողոթնան պահին... երբ զինված մարտիկների մի ջոկատ արյունաձարավ ներս է խուժում իր թշնամիների վրանը կամ գյուղը, բավական է որևէ միջնորդող կնոջ ներկայությունը, որպեսզի նա մեղմանա, ներում շնորհի երկար տարիներ տևող արյան վրեժի ենթակա անձնավորությանը»<sup>47</sup>:

Մեյա Մահմուդ Բայազիդիի վկայությամբ «քրդերի մոտ գոյություն ունի հետևյալ սովորույթը, արյան վրիժառության ենթակա անձը, իր վզից կախելով սուրը և թևի տակ դնելով պարանը, գնում է արյան վրիժառուի տունը և ասում նրան, ահա իմ սուրը, ահա իմ պարանը, կամ սպանիր ինձ, կամ ազատիր արյան վրիժառությունից: Այդ դեպքում արյան վրիժառուն անպայման պետք է ների վրիժառության ենթակա անձին»<sup>48</sup>:

Նկարագրելով այդ նույն երևույթը, Արուվանը միաժամանակ նշում է, որ «եթե հակառակորդը նրան չի

<sup>45</sup> Արուվան 1958, 250:

<sup>46</sup> Նույն տեղում, 346:

<sup>47</sup> Նույն տեղում, 250: Տե՛ս նաև Նահապետյան 2011, 84:

<sup>48</sup> Եսաուս 1963: 20.

ներում, ապա այդ համարվում է ամենախայտառակ չարագործություն, և այն ցեղը, որին պատկանում է հակառակորդը, դառնում է նրա թշնամին: Այդպիսի դեպքերում նրանց մեծահոգությունն այնտեղ է հասնում, որ կարող են բնաջինջ անել տալ իրենց ողջ ցեղը, քան թե հանձնել իրենց մոտ ապաստան փնտրողին, եթե նա նույնիսկ օտարազգի լինի»<sup>49</sup>:

Պատահում էին նաև դեպքեր, երբ որպես փոխհատուցում, թշնամուն կնության էին տալիս ցեղակից մի աղջկա, որից հետո արյան թշնամանքը վերանում էր<sup>50</sup>:

Արովյանն իր ուսումնասիրության մեջ զարգացնում է այն միտքը, որ քրդերի խառնվածքը հիմնականում ձևավորվում էր բնության ուժերի և թշնամիների դեմ պայքարի ազդեցության ներքո:

Խոսելով քրդական պոեզիայի և բանասիրության մասին՝ Արովյանը գրում է. «Այդ ժողովրդի ազգային պոեզիան այնպիսի հսկայական առաջադիմություն է կատարել և այնքան է կատարելագործվել, որ համարյա ամեն մի քրդի, այո՛, անգամ ամեն մի քրդուհու կարելի է համարել իսկական բանաստեղծ կամ բանաստեղծուհի: Նրանք ստեղծագործում են արագ, հանպատրաստից: ... Նրանք պարզ ձևերով ու արտահայտություններով երգում են իրենց հովիտներն ու լեռները, իրենց ծաղիկներն ու առվակները, իրենց զենքերը, նծույզները և ուզական գործերը, իրենց աղջիկներին ու գոհության աղոթքները՝ մի յուրահատուկ, տարօրինակ, իրենց պարզ զգացումներին և պատկերացումներին համապատասխան, սակայն բոլոր, նույնիսկ ասիական ժողովուրդներին

---

<sup>49</sup> Արովյան 1958, 250:

<sup>50</sup> В.С.Ческов 1958: 29, 207.

օտար պատկերներով, համեմատություններով, դարձվածքներով և եղանակներով. որոնք անսովոր ականջը կարող են ծակել»<sup>51</sup>: «Նրանց պարզ երգերի թովանդակությունն են կազմում մեծ մասամբ սերը, կարտը և պատերազմական անցքերը»<sup>52</sup>:

Խ. Արույանը նաև նկատում է, որ «քրդերը երբեք չեն երգում թուրքերեն երգեր թե՛ իրենց խնչույքների ժամանակ և թե՛ բացօթյա, ինչպես դա անում են ասիական քրիստոնյաները՝ համոթ իրենց, նրանք արհամարում են այն րոլորը, ինչ որ ծագում է իրենց կողմից այնպես սարսափելի կերպով ատելի աջամներից»<sup>53</sup>:

Խ. Արույանի գրչի արգասիք հանդիսացող «Եզդիիներ» ուսումնասիրությունը ևս գալիս է վկայելու, որ մեծ գրողն ու լուսավորիչը նաև տաղանդավոր գիտնական-արևելագետ էր: Հարկ է նշել, որ եզդիների (եզդիների) պաշտամունքի, սոցիալ-քաղաքական կազմակերպության և կրոնական հասարակության մասին տեղեկությունները չափազանց սուղ են: Նրանց դավանանքի ծագման արմատները ևս առ այսօր գիտության համար դեռևս լրիվ պարզված չեն<sup>54</sup>: Համարյա բոլոր եվրոպացի ճանապարհորդները խոսելով եզդիների մասին, անդրադառնում են լոկ նրանց բարքերին ու սովորույթներին: Ինչ վերաբերում է կրոնին և աոհասարակ նրանց դավանանքի հետ կապված խնդիրներին, ապա դա եվրոպացիների համար մնում էր մութ ու անմատչելի, որպես

<sup>51</sup> Արույան 1958, 46:

<sup>52</sup> Լոյն տեղում, 349:

<sup>53</sup> Լոյն տեղում, 247: Քրդերը սովորաբար աջամներ էին անվանում համարյա վան, սակայն այլազգի ժողովուրդներին, հատկապես պարսիկներին, շիա թաթարներին, հաճախ նաև թուրքերին:

<sup>54</sup> Տե՛ս Lexcot 1943: նույն հեղինակի, 1975: Առաքելովա 2015:

ցրացահայտված գաղտնիք: Պատճառը այն էր, որ ինչպես Արևելքի մի շարք այլ կրոնական համայնքների և աղանդների ներկայացուցիչները, եզդիները ևս օտար աչքերից խնամքով թաքցնում էին իրենց դավանանքը և ծեսերն ու սովորույթները:

Եզդիների մասին ամենահին տեղեկությունները կարելի է գտնել միջնադարյան պատմիչների և աշխարհագիրների մոտ: Եզդիների ծագման խնդիրը հատուկ քննության է ենթարկել Նիկողայոս Մառը<sup>55</sup>: Համաձայն նրա տեսության «եզդի» բառը ծագում է պարսկերեն «իզեր»-ից («Աստված»): Մառը գտնում է, որ եզդիականությունը հանդիսանում է քրդական հեթանոսական կրոն, որը դավանում էր քրդերի մեծ մասը մինչև իսլամի ընդունումը: Նշված տեսակետի հետևորդների կարծիքով, եզդիները հանդիսանում են քրդական կրոնական համայնքներից մեկը: Սակայն տեսակետ կա նաև այն մասին, որ եզդիներն առնչություն չունեն քրդերի հետ և առանձին ժողովուրդ են: Նորագույն հետազոտությունները վկայում են, որ եզդիականությունը որպես նախա-իսլամական շրջանի «համաքրդական կրոն» ներկայացնելը գիտական քննություն չի բռնում, քանի որ եզդիական դավանանքը որպես կրոնական ուսմունք ուշ շրջանի երևույթ է, ձևավորված միջնադարում (մոտավորապես XII-XIII դարերում «սուֆիական սուբստրատի վրա») և, քնականաբար, քրդերի համընդհանուր կրոնը լինել չէր կարող<sup>56</sup>:

Իս. Աբովյանը գրում է, որ այդ «փոքրիկ ժողովուրդի ծագումը, ինքնատիպությունը և մանավանդ, կրոնական

<sup>55</sup> Մառ 1910: 143, 147.

<sup>56</sup> Տե՛ս Փոլադյան, Ասատրյան 1989, 133:



վիճակը ավելի անեղծվածային է, ավելի տարօրինակ և առանձնահատուկ, քան թե մի այլ ժողովրդի՝ ամբողջ աշխարհում»<sup>57</sup>: «Հայ հոգևորականությունը, - շարունակում է նա, - հայոց անհամար պատմագիրները՝ բոլոր ասիական ժողովուրդների պատմական ավանդությունների այդ միակ տեղերն ևս կամ համարյա բոլորովին լռում են այդ փոքրիկ ժողովրդի մասին, կամ շատ անվստահելի տեղեկություններ են տալիս»<sup>58</sup>:

Իս. Աբովյանը գտնում է, որ եզդիականությունը դա սինկրետիկ կրոն է, որն իր մեջ ներառել է տարրեր քրիստոնեությունից, մահմեդականությունից, եբրայականությունից և այլ դավանանքներից: Սակայն միևնույն ժամանակ նրա գնահատականներից բխում է այն գաղափարը, որ այդ կրոնը վերին աստիճանի յուրահատուկ է, այն կառուցված է սեփական կրոնական ընկալումների վրա, և նրա մեջ տիրապետող բուն եզդիականության սկզբունքներն են: «Եզդիիները, - գրում է Իս. Աբովյանը, - աղոթում են միակ բարձրագույն էակին, միակ ամենակարող աստծուն, որը տեսանելիների և անտեսանելիների արարչին ու կառավարչին»<sup>59</sup>: Ի դեմս այդ հավատքի նա որոշակի աղերսներ է տեսնում նաև արևապաշտության հետ: Պատահական չէ, որ միջնադարում եզդիներին անվանել են «շեմսիյե» («շեմս»՝ արև բառից): Աբովյանը պատմում է, որ արևածագին եզդիները անպայման դեմքով շրջվում են արևի կողմը և խոնարհում կատարում նրա առջև:

Անդրադառնալով բուն եզդիական դավանանքին՝

---

<sup>57</sup> Աբովյան 1958, 259:

<sup>58</sup> Լույս տեղում, 262:

<sup>59</sup> Լույս տեղում:

Արովյանը գրում է, որ նրանց գլխավոր սրբավայրը գտնվում է Հյուսիսային Միջագետքում՝ Լալըշ կոչված վայրում, որտեղ գտնվում է եզդիական սրբի՝ շեյխ Ադիի (Հադիի) գերեզմանը: Եզդիների պաշտամունքի առարկան Մալաբե-Թավուսն է, որը հանդես է գալիս սիրամարգ-հրեշտակի տեսքով: Արովյանը անհիմն է համարում եզդիների կողմից խավար ուժերի երկրպագումը՝ նրանց աստանայապաշտ լինելը: «Այն բոլոր ժողովուրդները, - գրում է նա, - որոնք նրանց մոտ են կանգնած և որոնք նրանց հարևան են եղել, արհամարհել և քանի տեղ չեն դրել նրանց, իբրև աստանայի երկրպագողներ, և ամենաբուռն ատելությամբ և մղձռանդությամբ խուսափել են նրանց ընկերակցությունից»<sup>60</sup>:

Իս. Արովյանը հատուկ շեշտում է, որ եզդիները հարգանքով են վերաբերվում այլ կրոնների և նրանց հետևորդների նկատմամբ: «Նրանք չեն ժխտում ո՛չ մի կրոն, ո՛չ մի օտար դավանանք, ընդհակառակը, ամենամեծ հարգանք ու պատիվ են տաճում դրանց վերաբերմամբ»<sup>61</sup>: «Նրանք պաշտպանում են իրենց հավատը աշխարհի բոլոր ազգերի մեջ և այդ քանը ապացուցված է նաև գործով»<sup>62</sup>: «Ուշագրավ է, - նշում է Արովյանը, - որ եզդիները իրենց սրբերի թվին են դասում Հխոսա Քրիստոսին և Մարիամ Աստվածածնին: «Քրիստոնյաների հետ լուրջ գործ ունենալիս, կամ նրանց մոտ երդվելիս, ինչպես արևելյի բոլոր քրիստոնյաները, խաչակերպվում են»<sup>63</sup>: Նրա ասելով քացաղիկ առանձնահատուկ են եզդի

---

<sup>60</sup> Լույս տեղում, 262:

<sup>61</sup> Լույս տեղում, 268:

<sup>62</sup> Լույս տեղում:

<sup>63</sup> Լույս տեղում, 40:

ժողովրդի հարաբերությունները հայերի հետ: «Իրենց հարևան ազգերից ոչ մեկի հետ Նրանք այնպես սերտ չեն կապված, այնպես համատեղ չեն գործում, ինչպես հայերի, որոնց Նրանք անվանում են եղբայրներ»<sup>64</sup>: «Ով հայից մի բան հափշտակի, բոլորովին կվտարվի իրենց համայնքից: Այդ պատճառով նրանց համար սուրբ և անձեռնմխելի է այն ամենը, ինչ պատկանում է հայ ժողովրդին: Նրանք ավելի շատ իրենց ունեցվածքը կտան հային, քան թե նրանցից մի բան կվերցնեն, և նրանց ունեցվածքը կպաշտպանեն իրենց կյանքի գնով»<sup>65</sup>: Խ. Աբովյանը նաև նկատում է, որ եզդիները հայերեն շատ վարժ են խոսում, որովհետև շարունակ նրանց մեջ են ապրել:

Նա նաև հիշատակում է, որ եզդիները պահում են հայոց պատերից շատերը և տոնում են «հայոց այն սրբերի հիշատակը, որոնց անունով ասհմանված են այդ պատերը, մանավանդ մեծապես հարգված են նրանց մոտ սուրբ Գևորգը և սուրբ Սարգիսը: Վերջինիս անվանում են Խըղը-նաքի: Նրանք ոչխարներ են մատաղ անում, համրուրում են հայոց եկեղեցիների սեղանները և հայ հոգևորականների աջը, ընդունում են սուրբ հաղորդություն, մեծ գումարներ են նվիրում նաև հայոց եկեղեցիներին»<sup>66</sup>:

Խ. Աբովյանը հաղորդում է, որ կրոնական և այլ կարգի շարժառիթներով միջին դարերից սկսած եզդիների մի ստվար հատված Միջագետքից գաղթել է Արևմտյան Հայաստան: Իսկ ավելի ուշ, XIX դարում, հալա-

<sup>64</sup> **Նոյն տեղում**, 260:

<sup>65</sup> **Նոյն տեղում**, 261:

<sup>66</sup> **Նոյն տեղում**, 263-265:

ծանցների ենթարկվելով իրենց իլլամադական հարևանների՝ թուրքերի, քրդերի, մասամբ նաև արաբների կողմից, նրանք մեծ խմբերով քնակություն են հաստատել Արևելյան Հայաստանում, որտեղ ամեն տեսակետից հանգիստ ու խաղաղ վայելում են կատարյալ ազատություն»<sup>67</sup>:

Իսուելով եզդի ժողովրդի կենսունակության մասին, Աբովյանը գրում է. «Թվով սակավ լինելով և այնպես ցրված ապրելով, շրջապատված, ատված և հալածված բազմաթիվ բարբարոս, մոլեռանդ ժողովուրդներից, ինչպես՝ թուրքերը, պարսիկները, թաթարները, արաբները, և, նույնիսկ, քրդերը, դժվար թե որևէ ժողովուրդ կարողանար դարեր շարունակ գոյություն ունենալ առանց այդ առաքինության»<sup>68</sup>:

Իս. Աբովյանը այն տեսակետին է, որ եզդիները «լեզվով, կերպարանքով, ապրելակերպով, տների ձևով ու ներքին կառուցվածքով, հագուստով, մտափոր զարգացմամբ և այլ բնորոշ գծերով միանգամայն նման են քրդերին, բայց գերազանցում են սրանց՝ քաջությամբ, հոգու արիությամբ, բարքերի մաքրությամբ, ազնվությամբ և ազնվաբարոյությամբ»: Իս. Աբովյանը եզդիներին նաև բնորոշում է որպես հավատարիմ, անկեղծ և հյուրասեր ժողովուրդ<sup>69</sup>:

Այն հարցին, թե ինչպես բացատրել այն հանգամանքը, որ եզդիները խոսում են քրդերենի բարբառներից մեկով, կուրմանջիով, Իս. Աբովյանը պատասխանում

---

<sup>67</sup> **Լույս տեղում**, 260-261:

<sup>68</sup> **Լույս տեղում**, 260:

<sup>69</sup> **Լույս տեղում**:

է, որ նրանք «իրենց սեփական լեզուն ջունեն և քրդերենն են ընդունել իբրև իրենց մայրենի լեզու»<sup>70</sup>:

Եզդիների ծեսերին ու ծիսակատարություններին, բարբերին ու սովորույթներին, կրոնական արարողություններին անդրադառնալուց բացի իս, Արովյանը քննության է ենթարկում նաև այդ ժողովրդի հասարակական-համայնքային կառուցվածքի, կրոնական նվիրապետության և մի շարք այլ նմանատիպ հարցեր:

Նա ցույց է տալիս, որ եզդիական համայնքը հիմնված է կաստայական սկզբունքի վրա: Կաստաները կատարելապես փակ կառույցներ են: Եզդիական համայնքը հոգևոր անձանցից բացի բաղկացած է նաև աշխարհիկ անձանցից: «Նրանց հոգևորականությունը բաժանվում է երկու դասի՝ շեյխերի, որոնք կազմում են վերին դասը և փիրերի՝ ստորին դասը»<sup>71</sup>: «Հոգևոր հայրերի պարտականությունն է, - գրում է Արովյանը, - հսկել ժողովրդին, դաստիարակել նրանց պապական բարի բարբերով»<sup>72</sup>:

«Քրդեր և եզդիներ» ուսումնասիրությանը մեծանուն գիտնականը իր ընթերցողին ներկայանում է ազգային նեղմտությունից ու սահմանափակվածությունից բացարձակապես զերծ, բարձր մտավորականի, մարդասեր-հումանիստի, ժողովուրդների միջև փոխադարձ հարգանքի ու բարեկամության անկեղծ ու համոզված ջատագովի կերպարով: Անկասկած, Խաչատուր Արովյանի արժեքավոր ուսումնասիրությունը իր արժանի տեղն ունի ոչ միայն հայ, այլև համաշխարհային արևելագիտության, մասնավորապես, քրդագիտության անդաստանում:

---

<sup>70</sup> **Նույն տեղում:**

<sup>71</sup> **Նույն տեղում:**

<sup>72</sup> **Նույն տեղում:**

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Արվյան Խ.** 1957, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 7, Երևան:
- Արվյան Խ.** 1958, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 8, Երևան:
- Առաքելովա Վ.** 2015, Եզդիները և նրանց կրոնը, Երևան, Իրանագիտական Կովկասյան կենտրոն, 216 էջ:
- Մարգարյան Հ.** 1992, Ձաքարյանների ծագման ավանդությունը միջնադարյան հայ պատմագրության մեջ, «Պատմաբանասիրական հանդես», թիվ 2-3, էջ 139-152:
- Նահապետյան Ռ.** 2011, Խ. Արվյանը՝ քրդերի ազգագրության հետազոտող, էջմիածին, Ա, էջ 76-89:
- Շվոտ Մ. Տ.** 1905, Քրդերը Տաճկաց Հայաստանում (ազգագրական նյութեր), հատ. Ա, Սանկտ-Պետերբուրգ:
- Չանյան Մ.** 1985, Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), Ա հատոր, Երևան:
- Փոլադյան Ա., Ասատրյան Գ.** 1989, Եզդիների դավանանքը (իմնական աստվածությունները, սուրբ գրքերը), «Պատմաբանասիրական հանդես», թիվ 4, էջ 131-150:
- Акопов Г. Б.** 1964, Некоторые аспекты проблемы происхождения курдов в свете данных древнеиранской мифологии, "Востоковедческий сборник", том II, Ереван, с. 318-349.
- Акопов Г. Б.** 1967, Арабские источники по этнической истории курдов и версии их арабского происхождения. "Страны и народы Ближнего и Среднего Востока", том III, Ереван, с. 175-207.
- Акопов Г. Б.** 1969, Критическая история проблемы происхождения курдов. Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук, Ереван.
- Баязиди Мела Махмуд** 1963, нравы и обычаи курдов, Пер., предисл. и примеч. М. Б. Руденко, Москва.
- Бекстуглини Р. (Северинни)** 1914, По Турецкой Армении. Впечатления от поездки летом 1914 г., Ростов на Дону.
- Васильева Е. И.** 2009, Книга по истории Курджина, которая остается неизданной. "Курдский альманах", I, Москва.

- Вильчевский О. Л. 1958.** Музрияские курды (Этнографический очерк). "Передиазватский этнографический сборник", том 1, Москва.
- Март Н. Я. 1910.** Еще о слове "Челеби". К вопросу о культурном значении курдской народности в истории передней Азии. "Записки восточного отделения Императорского русского географического общества", No 20.
- Милютин В. Ф. 1915.** Курды. Заметки и впечатления, Петроград.
- Никитин В. П. 1964.** Курды. Пер. с франц., Москва.
- Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси,** Шараф наме, перевод, предисловие, примечания Е. И. Васильевой, т. 1, Москва, 1967, т. II, Москва, 1976.
- Anthony S. 1991.** The Nation Invented, Imagined, Reconstructed? "Millennium Journal of International Studies", vol. 20, no. 3.
- Asatrian G. 2003.** Prolegomena to the Study of Kurds, "Iran and Caucasus", vol. 13.
- Chéref-name ou histoire des Kourdes par Cheref, Prince de Bidlis, vol. 2, 1<sup>ème</sup>, SPB, 1868.
- Eppel M. A. 2016.** A People without a State. The Kurds from the Rise of Islam to the down of Nationalism, University of Texas Press, Austin.
- Izady Mehrdad R. 2005.** An Introduction to the Sharafnama. In: Sharaf-al-Din Bitlisi, the Sharafnama, or the History of the Kurdish Nation, book 1, translation into English and commentaries by M. R. Izady, XXVI-XXVII, Costa Mesa.
- Isady Mehrdad 1992.** The Kurds: A Concise History and Fact Book, New York.
- Ivanov Wl. 1940.** The Gabri Dialect Spoken by the Zoroastrians of Persia, Roma.
- Lescot R. 1975.** Enquête sur le Yezidis, Damascus.
- Lescot R. 1943.** Textes Kurdes, I, Beyrut.
- Limbirt J. 1968.** Origins and Appearances of the Kurds in the Pre-Islamic Iran, «Iranian Studies», vol. 1, no. 2 (Spring), pp. 41-51.
- McKenzie D. N. 1961.** Origins the Kurds: in Transactions of the Philological Society.
- Minorski V. 1954.** Kurds, Encyclopedia of Islam, 2 edition, vol. I, London.

- Nöldeke Th. 1898**, *Kardü und Kurden. Beiträge zur alten Geschichte und Geographie*, Berlin.
- Ozoglu H. 2007**, *The Impact of Islam on Kurdish Identity Formation in the Middle East. "The Evolution of Kurdish Nationalism*, Costa Mesa.
- Wagner M. 1852**, *Reise nach Persien und dem Land der Kurden*, Leipzig, B. II.
- Walker J. Ch. 1980**, *Armenia. The Survival a Nation*, London.

**Վահան Բայբուրդյան, պ.գ.դ.,**  
«Չ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ»,  
Իրանի բաժնի վարիչ  
V.Bayburdyan1933@gmail.com

#### KHACHATUR ABOVYAN AS A SCHOLAR KURDOLOGIST

**Keywords:** *Kurd, Ezidi, Bayazet, Arax, Wagner, mar, Chamchyan, Sharafchan, shia, monotheizm.*

Khachatur Abovyan's voluminous article titled "Kurds and Yezidis" is an ethnohistorical study, where a broad spectrum of items relating to the historical development of the Kurds and the Yezidis (Yazidis) is scrutinized. In the mentioned article the author's opinion is expressed about the ethnogenesis of the Kurds and the Yezidis. He sheds light on their religious beliefs, social structure, customs and traditions, lifestyle traits, relations with the Armenian populations, etc. The Kurdish poetry as well as the rich and colorful folklore also came under the spotlight. As far as the highlighted points are concerned, his analysis and opinions are marked by a high standard of academic merit. As a scrupulous and unbiased researcher, he tried strictly follow the principles of academic integrity writing his work and presenting the comprehensive character of the Kurds and the Yezidis incorporating both positive and negative features. It can be unequivocal-



ly stated that Abovyan's abovementioned study laid the foundation for establishing of the Armenian academic Kurdology, which was further developed by succeeding Armenian Orientalist-Kurdologists.

**Vahan Bayburdyan** - *Doctor of Sciences in History,*  
*Institute of Oriental Studies of NAS RA,*  
*Head of the Department of Iran,*  
*vahanbayburd1933@gmail.com*

**ԱԼԺԻՐԻ ԳԱՂՈՒԹԱՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ. ԱՐԴ  
ԱԼ-ԿԱԴԵՐԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ (1839 Թ.)\***

**ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

**Քանայի քառեր՝** Արդ ալ-Կադեր, Ռոբեռ Բյուժո, Ալժիր, Ֆրանսիա, Թաֆնայի պայմանագրի, բանակ, պարբերազմ, գաղութ, պեպոթյուն, Սմալա:

19-րդ դարի առաջին կեսին Ֆրանսիայի ներխուժումն Ալժիր փարածաշրջանի համար սկիզբ դրեց պատմական նոր դարաշրջանի: Գրավելով երկրի ծովափնյա մի շարք քաղաքներ և վերջ դնելով դեյերի իշխանությանը, Ֆրանսիան սկսեց Ալժիրի գաղութացումը, ինչը ուղեկցվում էր ալժիրցիների հակաֆրանսիական ապստամբություններով: Սակայն, անկախության նվաճման համար մղված պայքարն ի վերջո մատրվեց անհաջողության, իսկ երկիրն ամբողջովին գաղութացվեց: Այս իրադարձություններն արմատական ազդեցություն ունեցան ոչ միայն Ալժիրի, այլ նաև ողջ Հյուսիսային Աֆրիկայի հետագա պատմության ընթացքի վրա:

1837 թ. մայիսի 30-ին Արդ ալ-Կադերի և ֆրանսիացի զեներալ Բյուժոյի ստորագրած Թաֆնայի պայմանագրով՝ հաստատված խաղաղությունը 1839 թ. վերջին վտանգված էր: Երկու կողմերի միջև պատերազմի վերսկսումը դառնում էր անխուսափելի և նույնիսկ ցանկալի, ինչի համար առկա էին մի շարք պատճառներ:

Ռազմական գործողությունների դադարեցումը և

\* Հոդվածը ներկայացվել է 11.06.2020: Գրախոսվել է 18.08.2020:

<sup>1</sup> Թաֆնայի պայմանագրի ամբողջական տեքստը տե՛ս **Churchill Charles 2010**: 101-103:

հաստատված հարաբերական անդորրի ժամանակահատվածը էմիր Աբդ ալ-Կադերին հնարավորություն տվեց վերականգնել ուժերը, իրականացնել վարչական ու տնտեսական համակարգերի մի շարք կարևոր բարեփոխումներ, ինչպես նաև արդիականացնել այժիրյան բանակը: Սակայն, միաժամանակ, էմիրը շատ լավ գիտակցում էր, որ այս նույն ժամանակշրջանում իր թշնամին, անկասկած, ավելի կհզորանա՝ շնորհիվ եվրոպացի վերաբնակների անդադար հոսքի, այժիրյան հողերի րոնագավթման և այլն:

Պատերազմի վերսկսում, այսուհանդերձ, պայմանավորված էր մեկ այլ՝ առավել կարևոր հանգամանքով, հետաձգումը կարող էր բացասական ազդեցություն ունենալ հենց Աբդ ալ-Կադերի իշխանության և հեղինակության վրա: Հակաֆրանսիական պայքարի սկզբին Աբդ ալ-Կադերի կողմից հռչակված ցիհադն արաբական ցեղերին իր դրոշի տակ համախմբելու հիմնական պատճառներից էր, մինչդեռ այժմ՝ զինադադարի ժամանակ, վերջիններիս համախմբող և ուղղորդող կարևոր գաղափարի նշանակությունը նվազել էր: Մի շարք ցեղապետեր նույնիսկ կարծիք էին հայտնում, որ ստորագրված պայմանագիրն ավելի շուտ նման է դաշնագրի, ինչն Աբդ ալ-Կադերին վերածում էր սրբազան պատերազմի ոչ արժանի ղեկավարի<sup>2</sup>: Եվ, եթե ցեղերն սկսեին լքել էմիրի ճամբարն ու ինքնուրույն կարգավորելն ֆրանսիացիների հետ իրենց հարաբերությունները, ապա երկարամյա ազատագրական պայքարի ձեռքբերումներն ու հաղթանակներն անիմաստ կդառնային և,

---

<sup>2</sup> Marston, Petzon 2013: 40.

որպես հետևանք, Արդ ալ-Կադերի նորաստեղծ ալժիրյան պետությունը կմասնատվեր ու կկործանվեր:

Միաժամանակ Ֆրանսիայում շարունակվում էին Ալժիրում ֆրանսիական ներկայության հետագա ճակատագրի վերաբերյալ քննարկումները: Իշխանությունը երկմտում էր՝ արդյոք պետք է սահմանափակվել Ալժիրում արդեն գրավված տարածքներով, թե շարունակել գաղթողական քաղաքականությունն ու գաղութացնել ողջ Ալժիրը: Դրա հետ մեկտեղ ֆրանսիական կառավարությունը կասկածի տակ էր դնում Թաֆնայի պայմանագրի նպատակահարմարությունը, քանի որ դրանով Արդ ալ-Կադերին հանձնվել էին բավական ընդարձակ տարածքներ: Միանգամայն անընդունելի էր դիտվում նաև Արդ ալ-Կադերին ֆրանսիական զենքի և զինամթերքի խոշոր քանակների վաճառքը, և այն հիմնավորումը, որ դա անհրաժեշտ է ալժիրյան ընմրոստ ցեղախմբերին հնազանդեցնելու համար, որևէ չափով չէր բավարարում Փարիզին: Անհանգստությունը, որ նորաստեղծ արաբական պետությունը և նրա հզորացող բանակը կարող են այդ զենքն ուղղել Ֆրանսիայի դեմ, զեպով աճում էր: Բացի այդ, ֆրանսիացիների կողմից 1837 թ. հոկտեմբերին<sup>3</sup> Կոնստանտինայի<sup>4</sup> գրավումը և Ամենդ բեյի պարտությունը վերջիններիս հնարավորություն տվեց կենտրոնացնել իրենց ուժերն Արդ ալ-Կադերի դեմ: Կոնստանտինայի գրավմամբ և Արևելյան Ալժիրի հպատակեցմամբ Թաֆնայի պայմանագիրը, փաստորեն, կորցրեց իր կարևորությունը գաղութային իշխանությունների

<sup>3</sup> Лыков 1965: 153.

<sup>4</sup> Արևելյան Ալժիրի վարչական կենտրոն:

համար<sup>5</sup>, և նրանք սկսեցին այն խզելու ուղիներ որոնել:

Տարածայնություններ ծագեցին Թաֆնայի պայմաագրի տեքստի մեկնաբանման շուրջ: Պայմաագրի ֆրանսերեն և արաբերեն թարգմանությունների անճշտություններն ու անհամապատասխանությունները հնարավորություն տվեցին երկու կողմերին յուրովի ընկալել Ալժիր քաղաքից արևելք ընկած տարածքների պատկանելիության խնդիրը<sup>6</sup>:

Ձգտելով մեղմել ստեղծված ճգնաժամային իրավիճակը՝ Արդ ալ-Կադերը մի քանի նամակ ուղարկեց Ալժիրի գեներալ-նահանգապետ Վալեին, Ֆրանսիայի թագավոր Լուի-Ֆիլիպին և Ֆրանսիայի կառավարությանը, որոնցում խնդրում էր փոփոխության չենթարկել Թաֆնայի պայմանագիրը, որը կարգավորել էր հարաբերությունները ֆրանսիացիների հետ և կայունության մի քանի տարիներ էր տվել Ալժիրին: Արդ ալ-Կադերն իր նամակներում անընդհատ շեշտադրում էր խաղաղության կարևորությունը երկու կողմերի համար: Լուի-Ֆիլիպին ուղղված իր նամակում Արդ ալ-Կադերն ընդգծում էր, որ ցանկանում է խաղաղություն և միայն խաղաղություն<sup>7</sup>: Սակայն հաստատված իրավիճակը բարելավելու ոչ այս, ոչ էլ հետագա փորձերը որևէ արդյունքի չհանգեցրին: 1839 թ. հոկտեմբերին 26-ին<sup>8</sup> Ալժիրի գեներալ-նահանգապետ Վալեն<sup>9</sup>, ցանկանալով ամրապնդել ցամաքային

<sup>5</sup> Ֆրանսիացիների կողմից Թաֆնայի պայմանագրի ստորագրման էիմանական պատճառներից մեկը ուժերի կենտրոնացումն էր Կոնստանտինայի քնյ Ամմերի դեմ պայքարի համար:

<sup>6</sup> **Abou-Khamseen, Manssour 1983:** 76; **Ageron 1991:** 14-15.

<sup>7</sup> **Brower Benjamin 2011:** 181.

<sup>8</sup> **Buoyerdene Ahmed 2012:** 211.

<sup>9</sup> Միլվան Չարլզ Վալեն Ալժիրի գեներալ նահանգապետ է նշանակվել 1837 թ.:

կապը Կոնստանտինայի և Ալժիրի միջև, խոշոր զինվորական ջոկատ ուղարկեց Կոնստանտինայից, որը պետք է անցնե՛ր վիճահարույց տարածքներով: Այդ քայլը հետապնդում էր մեկ այլ կարևոր խնդիր ևս՝ փորձության ենթարկել էմիրի վճռականությունն ու գործելու պատրաստակամությունը:

Արդ ալ-Կադերը, բացատրություն պահանջելով ֆրանսիացիների գործողությունների համար, հերթական բողոքի նամակ ուղարկեց Վալեին, ինչին գեներալ-նահանգապետը պատասխանեց, որ «դա ընդամենը հաճելի զբոսանք էր»<sup>10</sup>: Անհրաժեշտ է նշել, սակայն, որ այս «զբոսանքի» ընթացքում ֆրանսիական զորքերը գրավեցին Արդ ալ-Կադերի հսկողության տակ գտնվող Համգաբերդը<sup>11</sup>:

Կողմերի միջև պատերազմը դառնում էր անխուսափելի: Վրդովված Արդ ալ-Կադերն անհապաղ սրբազան պատերազմ հայտարարեց, և արդեն նոյեմբերին նրա բանակը լավ ծրագրավորված հարձակում իրականացրեց Ալժիրից հարավ գտնվող Միտիջա դաշտավայրի վրա, որտեղ հաստատվել էին եվրոպացի վերաբնակները: Հանկարծակիի եկած գեներալ-նահանգապետ Վալեն ստիպված էր թողնել իր առաջնային դիրքերը և նահանջել<sup>12</sup>:

1839 թ. վերջին վերսկսված պատերազմն Արդ ալ-Կադերի համար կարող էր Ալժիրի գաղութացմանը վերջ դնելու լավագույն հնարավորություն դառնալ: Արդ ալ-Կադերի բանակի թիվը հասնում էր 70 հազարի, սակայն իրականում նա կարող էր ապավինել միայն իր և իր

<sup>10</sup> *Buoyerdene Ahmed* 2012: 90.

<sup>11</sup> *Хмельна* 1973: 85-86.

<sup>12</sup> *Ageron* 1991: 18.

խայիֆների անմիջական հսկողության տակ գնտվող զորքին, իսկ դրանց թիվն անհամեմատ քիչ էր՝ ընդամենը 30 000-ի հասնող հեծելազոր և 6000 հետևակ<sup>15</sup>։ Բայց և այնպես էմիրը կարողացավ հասնել մի շարք կարևոր հաղթանակների, որոնք լուրջ անհանգստության առիթ ստեղծեցին ֆրանսիական իշխանությունների համար և վերջիններիս հարկադրեցին ամրապնդել ալժիրյան զորախումբը։

1840 թ. փետրվարին զեներալ-նահանգապետ Վալեն, ստանալով համալրում և իր զորքերի թիվը հասցնելով 60 000, անցավ հակահարձակման<sup>16</sup>։ Նրան հաջողվեց մի քանի ամսվա ընթացքում մեծ կորուստների գնով նվաճել Շարշալը, Ալմերիան (ալ-Մարիյա) և Միլյանան<sup>17</sup>։ Սակայն երբ Արդ ալ-Կադերի զորքերը հարձակումներ սկսեցին Ալժիրի, Օրանի և Թիթերիի շրջանների վրա։ Չնայած այն հանգամանքին, որ զեներալ-նահանգապետ Վալեն մի քանի հաղթանակ տարավ Արդ ալ-Կադերի դեմ, սակայն, այնուամենայնիվ, նրան այդպես էլ չհաջողվեց էական փոփոխություն մտցնել ռազմական գործողություններում։ Այդ իսկ պատճառով 1840 թ. դեկտեմբերին նա հեռացվեց իր զբաղեցրած պաշտոնից, իսկ արդեն 1841 թ. սկզբին<sup>18</sup> նրան փոխարինեց Ռոբերտ Բյուժոն<sup>19</sup>։ Նկատի առնելով նոր նահանգապետի հետ իր վաղեմի ծանոթության հանգամանքը՝ Արդ ալ-Կադերը հույս

<sup>15</sup> Churchill Charles 2010: 190.

<sup>16</sup> Abou-Khamseen, Manssour 1983: 80.

<sup>17</sup> Ali, Abdulrahim, Thiam, Iba Der, Talib, Yusof 2016: 74.

<sup>18</sup> Marston, Petzon 2013: 41.

<sup>19</sup> Թոմա Ռոբեր Բյուժո, դեռևս 1836 թ. գլխավորում էր ֆրանսիական զորքերին Ալժիրում, 1837 թ. հենց նա ստորագրեց Թաֆնայի պայմանագիրը։

ուներ նրա հետ երկխոսության եզրեր գտնել, սակայն շատ արագ այդ սպասելիքները հորչ ցնդեցին: Գնե-րալ-նահանգապետ Բյուժոն անմիջապես ավելացրեց զաղության զորքերի թիվը՝ այն հասցնելով 85 000-ի<sup>10</sup>: Այսպիսով, ստանալով քանակական գերազանցություն և ունենալով տեխնիկական ակնհայտ առավելություն, Բյուժոն կիրառեց շարժական («թռչող») զորայունների նոր մարտավարությունը, համաձայն որի՝ թշնամու հսկողու-թյան տակ գտնվող տարածքներ էին ներխուժում միան-գամից մի քանի խոշոր զորայուններ՝ պարտադրելով Արդ ալ-Կադերին մասնատել իր զորքը:

1841 թ. ռազմական գործողությունները սաստկացան և, իրականում, վերածվեցին համընդհանուր պատե-րագմի: Ֆրանսիացի զինվորներն ավերակների էին վե-րածում քաղաքները՝ թալանելով և կոտորելով դրանց բնակչությանը: Նման ճակատագրի էին արժանանում նաև գյուղաբնակները: Ֆրանսիացիները հարձակումներ էին գործում գյուղերի վրա՝ ամբողջովին ոչնչացնելով դրանք և սպանոյի ենթարկելով բնակչությանը: Այս ռազ-մավարության էությունն իր հստակ արտահայտությունը գտավ գեներալ-նահանգապետ Բյուժոյի՝ Ֆրանսիայի Ներկայացուցիչների պալատում ելույթում, երբ վերջինս ուղղակիորեն ասաց. «Ես կմտնեմ ձեր սարերը, ես կվա-ռեմ ձեր գյուղերը և բերքը, ես կկտրեմ ձեր պողատու ծառերը»<sup>11</sup>:

Բյուժոյի նպատակները պարզ էին և անթաքույց. ձանր կացության մեջ դնել գյուղացիներին և, միաժամա-նակ, հետապնդումների ու արտաքսման սպառնալիքի

<sup>10</sup> Хмелена 1973: 92.

<sup>11</sup> Buoyedene Ahmed 2012: 92.



ներքո Ալժիրի ցեղերին դուրս հանել Արդ ալ-Կադերի դեմ: Ֆրանսիացիների գործողությունները տվեցին իրենց սպասված արդյունքը: Դրանք ոչ միայն կտրեցին ալժիրցիների մարտական ոգին, այլև քայքայեցին երկրի տնտեսությունը՝ նվազեցնելով դրանից ստացվող շահույթը, որն այնքան անհրաժեշտ էր Արդ ալ-Կադերին պայքարը շարունակելու համար:

Մինչև ռազմական գործողությունների վերսկսումն Արդ ալ-Կադերի վերահսկողության տակ էր գտնվում քաղաքներից և ամրոցներից կազմված պաշտպանակ զինը, որը ձգվում էր երկրի արևելքից արևմուտք, սակայն արդեն 1841 թ., այն գրավվեց Բյուժոյի զորքերի կողմից: Այսպիսով, կտրված լինելով կանոնավոր մատակարարումից և ռազմական հենակետերից, ալժիրցիներն ստիպված եղան անցնել պարտիզանական պայքարի: Արդ ալ-Կադերի ջոկատներն արագ տեղաշարժվելու և մեծ տարածքներ անցնելու շնորհիվ կարողանում էին հանկաժակի հարձակումներ իրականացնել ֆրանսիական զորքերի և նրանց մատակարարման ուղիների վրա<sup>20</sup>: Չնայած նման մարտավարությանն ու որոշակի հաջողություններին՝ ալժիրցիներն, այսուհանդերձ, ի վիճակի չէին այնպիսի հարվածներ հասցնել, որոնք կկանգնեցնեին ֆրանսիական ռազմական մեքենայի առաջխաղաղացումը:

Անհրաժեշտ է նշել, որ Արդ ալ-Կադերի համար պատերազմական գործողությունների ոչ բարենպաստ ընթացքը և ուժերի անհավասարությունը վերջինիս

---

<sup>20</sup> Գնենրալ Բյուժոյի խոստովանությամբ Արդ ալ-Կադերի որոնման համար նրան հրաշագործ է պահանջվում, իսկ զինվորներին՝ թևեր, որպեսզի րոնեն նրան: Տե՛ս **Marston, Petzon 2013**: 43.

դրոշեցին դիմել Անգլիայի միջնորդությանը՝ Ֆրանսիայի հետ բանակցությունների վերսկսման համար: 1841 թ. դեկտեմբերին Արդ ալ-Կադեբը Նոյնիսկ առաջարկում էր ֆրանսիական զորքերի դեմ պայքարում օգնության դիմաց Անգլիային հանձնել այժիրյան պետության ողջ արտաքին առևտուրը և Ալժիրի ծովափնյա շրջանների վերահսկողությունը<sup>21</sup>: Սակայն այս առաջարկը մնաց անպատասխան:

1842 թ. Արդ ալ-Կադեբն օգնություն ստանալու ակնկալիքով դիմեց նաև Օսմանյան կայսրությանը: Էմիրը պատրաստ էր ճանաչել օսմանյան տպաանի գերակայությունն Ալժիրի վրա, ինչպես նաև տարեկան հարկ վճարել<sup>22</sup>, սակայն Բ. Դուռը, չցանկանալով սրել հարաբերությունները եվրոպական երկրների հետ, մերժեց Արդ ալ-Կադեբի առաջարկը: Ստեղծված պայմաններում Արդ ալ-Կադեբի միասնական այժիրյան պետության ճակատագիրը դառնում էր անհեռանկար:

Ինչպես արդեն նշել ենք, բոլոր այն քաղաքները (ինչպես Մասկարան, Թանգոբնտը, Թլեմսենը), որոնք էմիրի համար կարող էին ծառայել որպես քաղաքական կենտրոններ, գրավվեցին: Նոյնախի ճակատագրի արժանացան նաև Արդ ալ-Կադեբի խալիֆների նստավայրերը: Ալժիրյան նորաստեղծ պետությունն ուղղակի քայքայվեց:

Չնայած դժվարին իրավիճակին՝ Արդ ալ-Կադեբը չէր պատրաստվում հանձնվել. պայքարը դեռ շարունակվում էր: Պարտիզանական պատերազմի պայմաններում էմիրին հավատարիմ զորքը մշտապես պետք է շարժման

<sup>21</sup> *Xmelema* 1973: 95-96.

<sup>22</sup> **Նոյն տեղում:**

մեջ լինելը: Հետևաբար 1842 թ. վերջին Արդ ալ-Կադերն իր մարդկանց համախմբելու և նրանց մարտունակությունը պահպանելու նոր միջոց գտավ. նա ստեղծեց Սմալա<sup>25</sup> վրանային քաղաքը, որտեղ տեղակայվեցին իր զորքն ու նրանց ընտանիքները: Այստեղ հաստատվեցին էմիրին միացած ցեղերը, ոչնչացված քաղաքների և գյուղերի քնակիչներն ու շատ ուրիշներ: Սմալայում քացվեցին դպրոցներ, արհեստանոցներ, շուկաներ, մզկիթներ, զինանոցներ և կենսական նշանակության այլ կառույցներ: Տասնյակ հազարավոր ընտանի կենդանիներն ապահովում էին անհրաժեշտ սննդամթերքի քանակությունը: «Բաղաբում» բնակություն էր հաստատել մոտ 40 հազար մարդ<sup>24</sup>: Սմալան վերածվել էր յուրատեսակ շրջիկ մայրաքաղաքի, որը վտանգի պահին կարող էր արագ տեղափոխվել այլ վայրեր, ինչի կարիքը հաճախակի էր զգացվում: Ֆրանսիացիները ջանք չէին խնայում հայտնաբերելու այն, ինչը ֆրանսիացի գեներալների համար առաջնային խնդիր էր դարձել: Ավելորդ չէ նշել, որ վերջիններս այդ նպատակով տարբեր ուղղություններով քազմաթիվ «թոշոլ» զորայուներ էին ուղարկում: Համառ փնտրողներն ի վերջո սովեցին իրենց արդյունքը. 1843 թ. գարնանը այդպիսի զորայուներից մեկը՝ դուքս դ'Օմալի<sup>26</sup> զլխավորությամբ, միանգամայն անսպասելիորեն հայտնաբերեց վրանային մայրաքաղաքը<sup>26</sup>: 600 հոգուց կազմված ֆրանսիական զորայունը հանկարծակի հարձակմամբ պարտության մատնեց պաշտպաններին և

Акт о результатах референдума о независимости Нагорно-Карабахской Республики, декабрь 1991 года.  
Александров А. 1960, Исследования по археологии и этнографии Азербайджана, Издательство Академии наук Азербайджанской ССР, Баку.

<sup>65</sup> Речь Президента Азербайджанской Республики Гейдара Алиева на заседании Милли меджлиса 23 февраля - 23 февраля 2001 года, «Бакинский рабочий», 24 февраля 2001.

- Атлас Азербайджанской ССР, раздел «Население», Москва, Баку, 1963, с. 14-15.
- Арутюни К.А. 2009.** Участие воинов-армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Ереван, Институт истории НАН РА.
- «Бакинский рабочий»**, N285, 5 декабря 1930, с. 1.
- Бабаян Д. 2005.** Красный Курдистан: геополитические аспекты создания и упразднения, XXI век, Ереван, N 4, с. 115-136.
- Бабаян Д. 2007а.** Красный Курдистан, Страны и народы Ближнего и Среднего Востока, т. XXVI, Институт востоковедения НАН РА, Ереван, 2007, с. 100-118.
- Бабаян Д. 2007б.** Политическая история Карабахского ханства в контексте арцахской дипломатии XVIII века, Ереван, 2007, изд. Агтарес, 120 с.
- Большая советская энциклопедия, том I**, раздел «Азерб. ССР», Акционерное общество «Советская энциклопедия», Москва, 1929, с. 641.
- Большая советская энциклопедия, том 41**, раздел «Нагорно-Карабахская Автономная Область», Государственный институт «Советская энциклопедия», Москва, 1939, с. 23.
- Выступление Н. Н. Нариманова** на торжественном заседании Бакинского Совета по поводу установления Советской власти в Армении, «Коммунист», Баку, 2 декабря 1920.
- Всесоюзная перепись населения 17 декабря 1926 года.** Краткие сводки, выпуск III, Население СССР, Москва, 1927.
- Всесоюзная перепись населения 1939 года: Основные итоги,** Москва, 1992.
- Всесоюзная перепись населения 1959 года,** Таблица 3.4. Распределение населения по национальности и родному языку, Российский государственный архив экономики, Ф.1562 Оп. 336 Д.1566 г, 1566 д.
- Гулиев Дж. 1966.** В.И. Ленин об Азербайджане. По страницам Полного собрания сочинений, Баку.
- Гулиев Дж. 1970.** Борьба коммунистической партии за осуществление ленинской национальной политики в Азербайджане, Баку.
- «Демократическая Россия»**, Москва, N3, 1988.
- Доклад Карабахского Обкома АКП (б) В ЦК АКП (б), 12 октября 1923 г.,** К истории образования Нагорно-Карабахской Ав-

- тономной Области Азербайджанской ССР 1918 - 1925. Документы и материалы, Баку, 1989.
- Декрет АзЦИКа Советов** «О национализации государственных учреждений в АССР», 31 июля 1923 г., Собрание узаконений и распоряжений Рабоче - Крестьянского Правительства АССР за 1923 г., Баку, 1924.
- Закон СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР. No 1410-1 от 3 апреля 1990 г.**, «Ведомости Съезда народных депутатов СССР, Верховного Совета СССР», N 15, 1990.
- Из протокола вечернего заседания пленума Кавбюро ЦК РКП (б) 4 июля 1921 г.**, К истории образования Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР 1918 - 1925. Документы и материалы, Баку, 1989.
- Из протокола заседания пленума Кавбюро ЦК РКП (б) 5 июля 1921 г.**, К истории образования Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР 1918 - 1925. Документы и материалы, Баку, 1989.
- Интернациональная помощь XI армии в борьбе за победу Советской власти в Азербайджане**, Баку, 1989.
- История Азербайджана**, т.3, Баку, 1963.
- История гражданской войны в СССР 1917-1922**, т.5, Конец иностранной военной интервенции и гражданской войны в СССР. Ликвидация последних очагов контрреволюции в СССР (февраль 1920 г. - октябрь 1922 г.), Москва, 1960.
- Карпов В.В. 2006**, Маршал Баграмян. Мы много пережили в тишине после войны, Москва.
- Ленин В. И. 1950**, Сочинения, изд. 4-е, т. 31, Ленинград.
- Ленин В.И. 1970**, Полное собрание сочинений, Издательство политической литературы, Москва.
- Ленин об Азербайджане**, (Сборник), Баку, 1970.
- Микоян С.А. 2006**, Анатомия Карибского кризиса, Москва.
- Нариманов Н. 1924**, Ленин и Восток, «Новый Восток», N5, 1924.
- Население СССР по данным Всесоюзной переписи населения 1989 г.**, Москва, 1990.
- Орджоникидзе Г.К. 1956**, Статьи и речи, т.1 (1910-1926), Москва. ЦААФ ИМЛ, ф.14, оп.1, ед.хр 8, л.65.
- Письмо А. И. Каракозова секретарю ЦК АКП (б) С. М. Кирову**, 1925 г., К истории образования Нагорно-Карабахской Авто-



вной Области Азербайджанской ССР 1918 - 1925. Документы и материалы, Баку, 1989, с. 165-166.

**Письмо Л. Н. Мирзояна в ЦК АКП (б)**, Копия в Кавбюро ЦК РКП (б) от 8 августа 1921 года, К истории образования Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР 1918 - 1925. Документы и материалы, Баку, 1989, с. 61.

**Постановление Комитета конституционного надзора СССР об актах Верховного Совета СССР и его Президиума и Верховных Советов Азербайджанской ССР (Азербайджанской Республики) и Армянской ССР (Республики Армения) о Нагорно-Карабахской автономной области**, N 28, 28 ноября 1991.

**Протокол заседания комиссии по выработке положения Автономной Области Нагорного Карабаха**, установлено границ между Низменным и Нагорным Карабахом, а также между Нагорным Карабахом и Курдистаном и определению форм административного управления Низменного Карабаха и Курдистана, июль 1923 г., К истории образования Нагорно-Карабахской Автономной Области Азербайджанской ССР 1918 - 1925. Документы и материалы, Баку 1989, с.103.

**Резолюции 2-го съезда АКП(б)**, Баку, 1920.

**Речь Президента Азербайджанской Республики Гейдара Алиева на заседании Милли меджлиса** 23 февраля - 23 февраля 2001 года, «Бакинский рабочий», 24 февраля 2001.

**Собрание узаконений и распоряжений рабоче-крестьянского правительства Азербайджанской ССР**, Баку, N1, 1920.

**Собрание узаконений и распоряжений рабоче-крестьянского правительства Азербайджанской ССР**, Баку, N2, 1921.

**Собрание узаконений и распоряжений Рабоче - Крестьянского Правительства АССР за 1923 г.**, Баку, 1924.

**Собрание узаконений и распоряжений Рабоче-Крестьянского правительства АССР за 1924 г.** Баку, 1926.

**Совет Народных Комиссаров АССР: Отчет к III Всеазербайджанскому съезду Советов.** 1922 - 1923 гг., Баку, 1923.

**«Советский Карабах»**, 21 февраля 1988 года.

**«Советский Карабах»**, 11 июля 1988 года.

**«Советский Карабах»**, 5 декабря 1988.

**Соглашение между Республикой Армении и РСФСР о прекращении военных действий и займти советскими войсками**

спорных областей Карабаха, Зангезура и Нахичевана без пред-  
решения вопроса о правах сторон 10 августа 1920 г., «Вестник  
архивов Армении», док. 17, № 3, 1967.

**Сталин И.В. 1921.** Заключительное слово по докладу об оче-  
редных задачах партии и национальном вопросе на X съезде  
РКП(б) 10 марта 1921 г., Десятый съезд Российской комму-  
нистической партии. Стенографический отчет, М., 1921.

**Сталин И.В. 1922.** Об объединении Советских республик. Доклад  
на X Всероссийском съезде Советов 26 декабря 1922г., «Прав-  
да», № 295, 28 декабря 1922.

**Усубов Рамиль.** Нагорный Карабах, миссия спасения началась  
в 70-е годы, «Панорама», 12 мая 1999.

**Хартия Европейской Безопасности,** Раздел III. Наш Общий  
Ответ, пункт 19, Стамбул, 1999.

**ЦГАОР Азерб.ССР,** ф. 57, оп. 1. д. 44, л. 3.

**ЦГАОР СССР,** ф. 1318, оп. 1. д. 657, л. 29-30.

**Численность населения СССР на 17 января 1939** года по райо-  
нам, районным центрам, городам, рабочим поселкам и круп-  
ным сельским населенным пунктам. По данным Всесоюзной  
переписи населения 1939 года, Москва, 1941.

**Axelrod A. 2007.** Encyclopedia of World War II, New York, 2007.

**Case concerning East Timor (Port.v.Austr.),** 1995 LCJ90, June 30.

**Hostler Ch, 1957.** Turkism and the Soviets, London.

**Pomiankowsky I. 1928.** Der Zusammenbruch des Ottomanischen  
Reiches, (The Total Collapse of the Ottoman Empire), Wien, 443  
S.

**The UN General Assembly Resolution 2625(XV),** UN GAOR, 25<sup>th</sup>  
Session, Supp.No28, at 124, UN Doc. A/8028(1970).

*Давид Бабалян - Доктор исторических наук,  
Советник президента Республики Арцах  
по внешнеполитическим вопросам  
dvtbabayan@gmail.com*

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ  
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ, ԳՈՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ  
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ**

**Բանալի բառեր:** *Լեոնային Ղարաքաղի Ինքնավար Մարզ, հայկական պետականություն, Ադրբեջան, աշխարհաքաղաքականություն, Այսրկովկաս, Լենին:*

Լեոնային Ղարաքաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) իրենից ներկայացնում է բավականին յուրահատուկ ժամանակահատված արցախյան հայկական պետականության պատմության մեջ: ԼՂԻՄ-ի կազմավորումը հետևանք էր Արցախի (Ղարաքաղի) հզոր և անվերապահ պատմաքաղաքական ազգային լեգիտիմության, որն անհնար էր անտեսել: Հենց դա էլ հնարավորություն տվեց հավասարակշռել առաջին անգամ աշխարհի քարտեզի վրա 1918 թ. հայտնված Ադրբեջանի առանցքային աշխարհաքաղաքական առավելությունները:

ԼՂԻՄ-ը կարողացավ դիմակայել Ադրբեջանի էթնոքաղաքական ագրեսիային և պահպանել հայկական պետականությունն ու քաղաքակրթությունը: Պատմական Ղարաքաղի և նախկին Ադրբեջանական ԽՍՀ տարբեր մասերի ողջ հայությունը զգում էր իրենց պատկանելիությունը հայկական պետականությանը առաջին հերթին ԼՂԻՄ-ի միջոցով: Հենց ԼՂԻՄ-ը դարձավ 1991 թ.-ին ձևավորված Լեոնային Ղարաքաղի Հանրապետության միջուկը: Տարածաշրջանի ինչպես մարդկային, այնպես էլ տնտեսական ու հոգևոր ներուժը հանդիսացավ Ադրբեջանի կողմից պարտադրված պատերազմում ապագա հաղթանակների հուսալի հիմքը՝ պահպանելով ոչ միայն

հայկական պետականության արցախյան հատվածը, այլ նաև մայր Հայաստանի անկախությունը:

ԼՂԻՄ-ը բնականորեն վերածվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության: Նոր պայմաններում մարզը ի վիճակի չէր լինի ապահովել Արցախի հուսալի ապագան: ԼՂԻՄ-ի սահմաններում Արցախը կենսունակ չէր: Միայն անկախ պետականությունն ու սահմանների փոփոխությունը հնարավոր դարձրեցին ապահովել Արցախի Հանրապետության անվտանգությունն ու բնականոն զարգացումը:

**Դավիթ Բաբայան, պ. գ. դ.,**  
*Արցախի Հանրապետության նախագահի*  
*արարքիև հարցերով խորհրդակցան*  
*dvbabayan@gmail.com*

#### GEOPOLITICAL ASPECTS OF FORMATION, EXISTENCE AND EVOLUTION OF NAGORNO KARABAGH AUTONOMOUS REGION

**Keywords:** *Nagorno Karabagh Autonomous Region, Armenian statehood, Azerbaijan, geopolitics, Transcaucasia, Lenin.*

The Nagorno Karabagh Autonomous Region (NKAR) represents a very specific period in the history of Karabagh/Artsakh Armenian statehood. The formation of the NKAR was the result of a very strong and viable national, historical and political legitimacy of Karabagh, which could not be ignored. These very assets allowed balancing key geopolitical advantages of Azerbaijan, a state that appeared on a world political map only in 1918.

The Nagorno Karabagh Autonomous Region managed to sustain the ethno-political aggression and pressure of Azerbaijan and preserve Armenian statehood and civilization. The Armenians of historical Karabagh and various parts of the former Azer-

bajani Soviet Republic felt their affiliation with the Armenian statehood primarily through the NKAR. The NKAR was the kernel of the Nagorno Karabagh Republic formed in 1991. The human, economic, spiritual potential of the region formed the basis of the future victories in the war imposed by Azerbaijan, thus maintaining not only the Karabagh segment of the Armenian statehood but also the independence of the Republic of Armenia.

The Nagorno Karabagh Autonomous Region evolved in a natural way to form the Nagorno Karabagh Republic. In the new situation, the Autonomous region did not have a potential to further guarantee the reliable future of Artsakh. Artsakh was not viable and was doomed to extinction within the borders of the NKAR. Only the independent statehood and border changes have made it possible to guarantee the security and natural development of the Artsakh Republic.

**David Babayan** - *Doctor of Sciences in History,*  
*Foreign Policy Adviser to the Artsakh Republic President*  
dvtbabayan@gmail.com

**ՍԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԶՈՐՔԵՐԸ\***

**ՀԱՅԿ ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**Բանալի բառեր<sup>1</sup>** *Զինված ուժեր, Հափուկ զորքեր, արաբ-խորայելական պարերազմ, Արաբական Միացյալ Հանրապետություն, Հափուկ նշանակության ուժեր, «Բասս» կուսակցություն, Ալալի սպաներ, Ալ-Ասադներ, «Մուսուլման եղբայրներ», Արաբական գարուն, քաղաքացիական պարերազմ, Սիրիական ճգնաժամ:*

Արաբական ոչ մի երկրում զինված ուժերը քաղաքական կյանքում թերևս այնքան գերիշխող դեր չեն ունեցել, որքան Սիրիայում: Այդ հանգամանքը մեկ անգամ ևս հաստատվում է մեր օրերում Սիրիայում ընթացող ազգային զինված ապստամբության օրինակով, երբ քանակը հանդես է գալիս որպես լուրջ քաղաքական գործոն: Սիրիայի ներքին և արտաքին քաղաքական կյանքի ամենակարևոր գործոններից մեկը եղել և մնում է քանակը, որը, կարելի է ասել, սերտաճած է պետությանը, իսկ զինվորականությունը բացառիկ դեր է ունեցել և ունի ոչ միայն ռազմական, այլև ներքաղաքական և արտաքին քաղաքական խնդիրների մշակման հարցում: Արաբական երկրների, նաև Սիրիայի նորագույն շրջանի պատմության փարբեր փուլերում պետության ղեկավարներ են դարձել և քաղաքական բարձր պաշտոններ ծնոք բերել հենց զինվորականները, ովքեր կարողացել են քանակը<sup>2</sup> որպես գործոն, օգտագործել իշխանության գալու և այն

\* Հոդվածը ներկայացվել է 19.05.2020: Գրայնալի է 28.08.2020:

պահելու համար: Հարկանշական է, որ քանակը կարևոր դերակարարություն է ունեցել ոչ միայն Սիրիայի ներքին կյանքում, այլև նպաստել է մերձավորարևելյան փարածաշրջանում Սիրիայի քաղաքական կշռի մեծացմանը: Սիրիայի Արաբական Հանրապետության պարունության մեջ անկախության հռչակումից մինչև Ալ-Ասադների իշխանության գալը երկրի քաղաքական կյանքում առանձնահատուկ դերակարարություն ձեռք բերեցին զինված ուժերը: Չինված ուժերի ամենագործուն օղակը՝ սպայական վերնախավը, եղել և մնում է պետական համակարգի անքաժան մասը: Ուստի պարահական չէ, որ սիրիական քանակն աստիճանաբար վերածվեց այդ երկրի քաղաքական կյանքի լուրջ գործոնի, որի ապացույցը Սիրիայում տեղի ունեցած բազմաթիվ հեղաշրջումներն են: Հենց այդ սպայական վերնախավն էր, որ իրար ետևից կազմակերպում էր ռազմական հեղաշրջումներ՝ անորոշության ու անկայունության մայրնելով միջերկրածովյան տվազանի ռազմավարական առաջնակարգ նշանակություն ունեցող այդ երկիրը: Սիրիայի ներքաղաքական կյանքում քանակի գործոնի ակտիվ դերակարարությունը, երկրում հաճախակի տեղի ունեցող ռազմական հեղաշրջումները, արաբ-խորայելական պայքերազմներն ու սիրիական ճգնաժամը լուրջ դժվարություններ ստեղծեցին երկրի սոցիալ-տնտեսական և պետական կառավարման համակարգի բնականոն զարգացման համար:

1948 թ. մայիսի 15-ին՝ Իսրայել պետության հռչակման հաջորդ օրը, արաբ-իսրայելական պատերազմին եզիպտոսի, Լիբանանի, Իրաքի և Հորդանանի հետ միասին մասնակցեց նաև Սիրիան: Սիրիան Պաղեստին

ուղարկեց 1900 հոգանոց մի քանի գնդերից բաղկացած զորամիավորում Արդ Ալ-Լահար Ալ-Հաքիմի հրամանատարությամբ, որը կազմված էր նախկին տեղական ուժերից և դեռևս չէր հասցրել դառնալ կանոնավոր բանակային զորամիավորում: Պատերազմին մասնակցող սիրիական զորքը չուներ մարտական գործողությունների անհրաժեշտ փորձ ու կարողություններ: Այդ պատերազմում Սիրիան, ինչպես նաև մասնակից արաբական մյուս պետությունները պարտություն կրեցին: Այդ ժամանակ սիրիական բանակի թիվը մոտ 8500 էր, սակայն մարտական պատրաստականություն միայն 5500-ն ուներ, իսկ մնացած 1070-ը հատուկ պաշտոնների էին, 1500-ը՝ սահմաններին և 395-ը՝ Հոմսի Ռազմական ակադեմիայում: Երեք բրիգադներից մեկը տեղակայված էր Հալեպում Ջասիմ Ալ-Բուրհանի հրամանատարությամբ, մյուսը Դեյր Ազ-Չորում Հուանի Ազ-Չահիմի և երրորդը պաղեստինյան ռազմաճակատում՝ Արդ Ալ-Լահար Ալ-Հաքիմի հրամանատարությամբ<sup>1</sup>: Մինչ այդ ստեղծվել էր նաև «Փրկության բանակ», որը հայտնի է նաև որպես «Արաբական ազատագրության բանակ»՝ Տահա Ալ-Հաշիմիի, Իսմայիլ Սաֆվաթի և Ֆալգի Ալ-Քաուքջիի<sup>2</sup> հրամանատարությամբ, ում տեղակալը Համդի Աբազան էր: Այդ բանակն Արաբական երկրների լիգայի ռազմական թևն էր: 46 սպա և 400 զինվոր միացան այդ բանակին, որոնցից շատերը Յարմուկի առաջին և երկրորդ գումարտակներից էին: «Արաբական ազատագրության

<sup>1</sup> Van Dusen 1971: 137-138.

<sup>2</sup> Ֆալգի Ալ-Քաուքջին ծնվել է 1887 թ. Լիբանանի Տրիպոլի քաղաքում: Նա մասնակցել է Սիրիայի ազգային-ազատագրական շարժումներին, ինչպես նաև 1941 թ. Իրաքում Ռաշիդ Ալի Ալ-Նայյախիի ապստամբությանը: Տե՛ս .553 .1960 الجندی



բանակի» Երկրորդ Յարմուկ գումարտակի հրամանատարն Ադիբ Աշ-Շիշակլին էր<sup>3</sup>, իսկ Առաջին Յարմուկ գումարտակինը՝ Մուհամմադ Սաֆան: Հաթթին գումարտակի հրամանատարը կապիտան Մադլուլ Աբբասն էր<sup>4</sup>: Երրորդ Յարմուկ գումարտակի հրամանատարը Ղասան Ջադիդն էր<sup>5</sup>: Մյուս 85 հոգանոց խումբը Համայիջ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամներն էին, որոնց ղեկավարում էին Մուստաֆա Աս-Սիբաին, Ջամալ Աս-Մուֆին և Աբդ Առ-Ռահման Մալուհին: Այդ բանակին միացան նաև կամավորական երեք վաշտեր Իհսան Շորդոմի, Աբու Բաքար Շիշանի, ավագ լեյտենանտ Իսմայիլ Աֆանգուտի և փոխգնդապետ Ջավադ Անգորի հրամանատարությամբ, ում տեղակալը Աուվադ Բազն էր<sup>6</sup>: Ըստ Սամի Ալ-Ջունդիի՝ այդ ռազմական կոմիտեն ուներ ընդամենը 1600 հրացան<sup>7</sup>:

Սիրիական բանակում այդ ժամանակ զենքի հնացած տեսակներ էին, որոնք մնացել էին դեռևս ֆրանսիացիներից ու անգլիացիներից: Պատերազմի շեմին, եթե այլ երկրներ ունեին տանկային կորպուսներ, ապա սիրիական բանակն ուներ ընդամենը 11 թեթև տանկ և 32 զրահանքեմա: Սիրիայի պարտությունն արաբ-իսրայելական պատերազմում խիստ բացասական հետևանքներ ունեցավ երկրի ներքաղաքական կյանքի վրա: Բոլորն այդ պարտության համար մեղադրում էին Սիրիայի կառավարությանը: Մուհամմադ Նասիրը, Ֆաուզի Սիլուն<sup>8</sup> և

<sup>3</sup> 26 . 1994 الخیر

<sup>4</sup> Al-Qawuqji 1972a: 33.

<sup>5</sup> Al-Qawuqji 1972b: 18.

<sup>6</sup> Aamen 2001: 136.

<sup>7</sup> 91 - 1968 الحیدی

<sup>8</sup> Ֆաուզի Սիլուն ծնվել է 1905 թ. -ին: Անկախության հռչակումից հետո

Աֆիֆ Ալ-Բիզրին Իսրայելի հետ զինադադարի համաձայնագիր կնքեցին 1949 թ. հուլիսի 20-ին:

1948 թ. արաբ-իսրայելական պատերազմը ճանապարհի հարթեց ռազմական հեղաշրջումների համար: Այդ հեղաշրջումներն իրականացնում էին տարբեր խմբավորումների ներկայացուցիչներ, որոնք հենվում էին զինվորականների վրա: Զինված ուժերի ամենակտիվ օղակը՝ սպայական վերնախավը, պետական համակարգի անբաժանելի մասն էր և աստիճանաբար վերածվեց Սիրիայի ներքաղաքական կյանքի լուրջ գործոնի: Սպայական վերնախավը 1949-1954 թթ. մասնակցեց Սիրիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումներին, որոնք կատարվեցին Հուսեյն Ալ-Ջաֆի, Սամի Ալ-Հիլաուիի և Ադիբ Աշ-Շիշակլիի գլխավորությամբ<sup>9</sup>:

Սիրիայի ներքաղաքական կյանքում բանակն առաջին անգամ հանդես եկավ 1948 թ. դեկտեմբերին, երբ երկրում արտակարգ իրավիճակ էր, և բանակային զորամիավորումները սկսեցին ճնշել ժողովրդական ելույթները, ինչը հանգեցրեց Ջամիլ Մարդամի<sup>10</sup> կառավարության փլուզմանը: 17 օր անց ձևավորվեց նոր կառավարություն՝ հավելյալ Ալ-Ազմի գլխավորությամբ, ով Սիրիայի ամենահարուստ մարդկանցից մեկն էր: 1949 թ. մարտի

---

Նա Ռազմական ակադեմիայի տնօրենն է եղել, այնուհետև պաշտպանության նախարարը, իսկ 1951 թ. Ֆաուզի Սիլուն դարձավ Սիրիայի նախագահ: Տե՛ս .391, 2007, 2007

<sup>9</sup> راجع 1997, 120-33, المدنى, منقضى 2009, 77-49, عبد الكريم 1994, 127, 189

<sup>10</sup> Ջամիլ Մարդամ բեկը ծնվել է 1893 թ. Ղամասկոսում և սովորել է Ֆրանսիայում: Նա «Արաբական երիտասարդական միության» հիմնադիրներից է (الجمعية العربية الفتاة), որը ստեղծվել է 1911 թ. Փարիզում: Տե՛ս . 18-17, 1994, 189

30-ին հեղաշրջում կատարվեց<sup>31</sup>: Ինչպես գրում է Նազիր Ֆանսահը իր «Հուանի Ազ-Չաիմի օրերը. 137 օր, որոնք ցնցեցին Սիրիան» աշխատությունում, տանկերը և զրահապատ մեքենաները շրջապատել էին շինություններն ու փողոցները<sup>32</sup>:

Հատուկ զորքերի (ուժեր) (القوات الخاصة) կազմավորման բուն գործընթացը սկսվել է 1951 թ.-ին, որի հիմքը համարվում է Սիրիայի ՋՈւ հրամանատարության կողմից հրահանգիչ-պարաշուտիստների հատուկ դասընթացների մասնակցելու նպատակով առաջին 5 սպաներին Ֆրանսիա ուղարկելը: Այնուհետև, նյութերի և մասնագետների բացակայության պատճառով, 1952 թ. ևս 18 սպա վերապատրաստվեց Թուրքիայում: Իսկ 1953 թ. ստեղծվեցին առաջին դեսանտային ստորաբաժանումները, որտեղ արդեն կային «Ձոնկերգ 52» ինքնաթիռներ, և Ֆրանսիայից ստացվեց առաջին 100 օդապարիկները: Ֆրանսիայում և Թուրքիայում ռազմաօդային ուժերի մասնագետների կողմից ստացված փորձի հիմքի վրա Հատուկ զորքերի համար կադրեր պատրաստելու նպատակով ստեղծվեց «Ռասմ Ալ-Ուբուդ» ուսումնական կենտրոնը: 1956 թ. ամռանը կազմավորվեց ՋՈւ առաջին օդապարիկադեսանտային վաշտը: Մեծ էր նաև Խորհրդային Միության դերը սիրիական ռազմական մասնագետների պատրաստման գործում, որոնք զինվորական ուսուցում էին ստանում ինչպես Սիրիայում, այնպես էլ ԽՍՀՄ ռազմական ուսումնական հաստատություններում: Ռազմական մասնագետները գործուղվում էին Սիրիա՝ զինվորներին և սպաներին վերապատրաստելու,

<sup>31</sup> ارساڻ 1983 .805

<sup>32</sup> مقصده 1982 .7

խորհրդային ռազմական տեխնիկայի շահագործմանը ծանոթացնելու, ինչպես նաև աջակցություն ցույց տալու ռազմական նշանակություն ունեցող տարրեր կառուցների ստեղծման գործում: Ըստ Ահմադ Հասան Մուհալլայի՝ ի տարբերություն այլ ռազմական ուսումնական հաստատությունների, կադրերի ընտրության հարցում հատկապես առանձնանում էր օդադեսանտային «կոմանդոս» ուսումնարանը<sup>53</sup>:

Սիրիան պաշտպանեց Եգիպտոսին՝ 1956 թ. անգլոֆրանս-իսրայելյան եղյակ ազդեցիկ ժամանակ: Նա դիվանագիտական հարաբերությունները խզեց Անգլիայի և Ֆրանսիայի հետ և իր ամբողջ զինված ուժերն ու հնարավորությունները դրեց Եգիպտոսի տրամադրության տակ<sup>54</sup>: Սիրիան հայտարարեց ընդհանուր զորահավաք, իսկ Դամասկոսի մոտ հինգ հազար ռաանողներ իրենց պատրաստակամությունը հայտնեցին՝ միանալ եգիպտական բանակին: Այդ իրադարձություններն էլ ավելի ստիպեցին ՋՈւ հրամանատարությանը Հատուկ զորքերի առաջխաղացման անհրաժեշտության և կառուցվածքային փոփոխություններ իրականացնելու համար:

1957 թ. հուլիս-օգոստոսին Սիրիայի ՊՆ «կարմիր միլիոնատեր» Խալեդ Ալ-Ազմի գլխավորությամբ Մոսկվա այցելեց սիրիական պատվիրակությունը և երկու երկրների միջև ռազմական պայմանագիր կնքվեց<sup>55</sup>, իսկ

<sup>53</sup> Myxana 1993: 16.

<sup>54</sup> Kyreim 2001: 62.

<sup>55</sup> Ramet 1990: 18. Սիրիան ռազմական պայմանագրեր կնքեց նաև՝ 1955 թ. հուլիսի 7-ին Չեխոսլովակիայի, 1957 թ. մարտի 19-ին Բուսիայի, 1967 թ. սեպտեմբերի 30-ին Բուլղարիայի, 1967 թ. դեկտեմբերի 20-ին Հունգարիայի, 1968 թ. մարտի 26-ին Հարավսլավիայի,

1957թ. հոկտեմբերի 28-ին Դամասկոսում կնքվեց համաձայնագիր՝ Խորհրդային Միության և Սիրիայի միջև տնտեսական ու տեխնիկական համագործակցության մասին<sup>16</sup>: 1957 թ. կնքված պայմանագրով՝ ԽՍՀՄ-ը պարտավորվեց Սիրիային տնտեսական և տեխնիկական օգնություն ցուցաբերել<sup>17</sup>:

Սիրիայի բանակի կյանքում նոր շրջան է սկսվում 1956 թ. սոցիալիստական երկրների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելուց հետո: Բանակը ստացավ նորագույն զենք և տեխնիկա: Խորհրդային Միությունը Սիրիային տրամադրեց S-34 տեսակի տանկեր, ինքնագնաց հրանոթներ ՍՈւ-100, ԲՏՈ-152, 37 միլիմետր տրամաչափի զենիթահրետանային թնդանոթներ և 122 միլիմետր տրամաչափի հաուբիցներ: Կատանայի ռազմական ստորաբաժանումներում սկսեցին ծնավորվել երկու տանկային բրիգադներ<sup>18</sup>:

Սիրիական բանակի առաջին փորձությունը եղավ 1948 թ. արաբ-իսրայելական պատերազմը, որին՝ ի թիվս արաբական մի շարք երկրների, մասնակցեց նաև Սիրիան: Այդ պատերազմում արաբների կրած պարտությունն առաջին ծանր փորձությունն էր Սիրիայի բանակի համար և առաջին հարվածը սիրիական ժողովրդի ազգային ու պետական հպարտությանը: Այդ պարտությունը խիստ բացասական հետևանքներ ունեցավ Սիրիայի ներքաղաքական վիճակի վրա՝ առաջ բերելով լուրջ քա-

---

1970 թ. փետրվարի 10-ին Կորեայի, 1980 թ. մայիսի 7-ին Գերմանիայի և 1981 թ. սեպտեմբերի 29-ին Չինաստանի հետ: Տե՛ս . ակտ. 195

<sup>16</sup> **Սարգսյան 1974**, 88:

<sup>17</sup> **Max. noф 1998**: 84-85.

<sup>18</sup> **Memmos 2010**: 43.

դաքական ճգնաժամ: Հենց այդ ժամանակաշրջանից սկսած ուժեղանում է քանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում: Սպայական վերնախավը դարձավ պետական համակարգի անբաժան մասը և աստիճանաբար վերածվեց Սիրիայի քաղաքական կյանքի լուրջ գործոնի: Հաճախակի տեղի ունեցող ռազմական հեղաշրջումների պատճառով՝ Սիրիայում ներքաղաքական անկայուն, սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակ ստեղծվեց: Իսկ հանրահայտ իրողություն է, որ ցանկացած երկրում զինվորական իշխանության հաստատումն իր հետ բերում է դիկտատուրա և բռնաբեռություն՝ երկիրը շեղելով քնականն ժողովրդավարական զարգացման շավիղից: Նման պայմաններում հենց ինքը՝ քանակը, դառնում է ներքին և արտաքին ազդեցիկ ուժերի ձեռքին մի խաղալիք, քաղաքական մեծ խաղերի գործոն մասնակից: Այդ հեղաշրջումները խոչընդոտեցին Սիրիայի պետական կառավարման համակարգի քնականն զարգացմանը: Հետանկախության այս փուլը նշանավորվեց ներքաղաքական անկայուն և հակասական զարգացումներով, ներքին և արտաքին մարտահրավերներով, հասարակական-քաղաքական արմատական փոփոխություններով, որի մեջ անառարկելիորեն կենտրոնական դերն ու տեղն ունեցավ քանակը:

1958 թ. հունվարի սկզբին սպայական վերնախավի նախաձեռնությամբ՝ հատուկ խորհրդակցություն տեղի ունեցավ, որտեղ քանակային 22 ստորաբաժանման ներկայացուցիչները քննարկեցին Սիրիայի և Եգիպտոսի միավորման հարցը<sup>10</sup>: Այդ ժամանակ Սիրիայի գլխավոր շտաբում կային զինվորական մի քանի խմբավորումներ՝

<sup>10</sup> *Исп.-Булгарова 1978*: 126.

բասական սպաները, որոնց առաջնորդներից էին Մուստաֆա Համդունը և Արդ Ալ-Ղանի Խանտօթը՝ ազգային անվտանգության պետ Արդ Ալ-Համիդ Աս-Սաուաջի աջակցությամբ, «անկախ» սպաները, որոնց շարքում էին Ամին Նաֆուրին և Ահմադ Արդ Ալ-Քարիմը, ովքեր լավ հարաբերությունների մեջ էին Խալեդ Ալ-Ազմի հետ և «հետադիմական» սպաները<sup>20</sup>:

1958 թ. հունվարի 12-ի առավոտյան սիրիական քանակի գլխավոր շտաբի պետի տեղակալ Ամին Նաֆուրին հանդիպեց պաշտպանության նախարար Խալեդ Ալ-Ազմի հետ և ասաց, որ սպայական վերնախավը քննարկել է Սիրիայի և Եգիպտոսի միավորման հարցը և որոշել է, որ այն պետք է լինի ամբողջական միավորում<sup>21</sup>: Հունվարի 12-ի երեկոյան, քանակի բարձրաստիճան սպաների խումբը, որը քաղկացած էր 14 իռզուց, մեկնեց Կահիրե՝ Եգիպտոսի հետ միավորման համար բանակցություններ վարելու<sup>22</sup>: Այդ պատվիրակությունը գլխավորում էր Սիրիայի քանակի գլխավոր շտաբի պետ Աֆիֆ Ալ-Բիզրին<sup>23</sup>: Աֆիֆ Ալ-Բիզրին առաջարկեց դաշնային հիմունքների վրա կատարել միավորումը, սակայն գինվորական պատվիրակության մեծամասնությունը, որոնք Աս-Սաուաջի և Ալ-Բիտարի համախոհներն էին, վճռականորեն ամբողջական միավորում պահանջեցին<sup>24</sup>: Չնայած միավորումն արտաքուստ ժողովրդավարական էր, սակայն իրականում այն հաջողությամբ պսակվեց

<sup>20</sup> *Kaizer* 1991: 82-83.

<sup>21</sup> *Saady* 1984: 106.

<sup>22</sup> 237, 1985 *المعجم*

<sup>23</sup> 304, 2008 *علي*

<sup>24</sup> 228-227, 1997 *محمد إبراهيم*

բանակի միջնորդության կամ, այսպես կոչված, «կիսա-նազմական հեղաշրջման» արդյունքում:

Արաբական Միացյալ Հանրապետության ձևավորման հետև սկզբից էլ նախագահը ձեռնամուխ եղավ երկու շրջանների զինված ուժերի միավորմանը<sup>25</sup>: 1958 թ. փետրվարի 22-ին մարշալ Արզ Ալ-Հաքիմ Ամերը նշանակվել էր ԱՄՀ-ի ՁՈւ հրամանատար: Կատարվեց միասնական հրամանատարության վերակազմավորում, որի արդյունքում բոլոր գլխավոր պաշտոններին նշանակվեցին եզիպտացի սպաներ: Այդ ժամանակ զինվորական հրամանատարությունը որոշում է ընդունում կազմավորել Հատուկ զորքերի օդադեսանտային բրիգադ, որի կազմի մեջ մտան երկու գումարտակներ՝ 75-րդ (եզիպտական) և 76-րդ (սիրիական)<sup>26</sup>:

1958 թ. մարտի 15-ին համար 118 հրամանագրով ՁՈւ-ի միավորումը փաստացի ավարտվեց՝ ոստիկանության, անվտանգության ծառայության և բեդվինական ջոկատների միասնական հրամանատարության տակ միավորմամբ: Այդ ժամանակ սիրիական բանակը հաշվվում էր 42 հազար հոգի<sup>27</sup>: Մարտի 12-ին սիրիական բանակի հրամանատար նշանակվեց դիվիզիոնի գեներալ Աֆիֆ Ալ-Բիզրին, որին մի բանի օր անց շնորհվեց կորպորալային գեներալի աստիճան<sup>28</sup>: Սակայն արդեն մարտի կեսերին հայտարարվեց, որ նախագահն ընդունել է գեներալ Ալ-Բիզրիի հրաժարականը: Աֆիֆ Ալ-Բիզրին բանակից հեռացվեց և նշանակվեց քաղաքացիական պաշ-

<sup>25</sup> نفس المصدر، 99-100.

<sup>26</sup> 1955 թ. հոկտեմբերի 20-ին Սիրիայի և Եզիպտոսի միջև կնքվել էր համատեղ պաշտպանության վերաբերյալ պայմանագիր:

<sup>27</sup> Xpy.ressa 1971: 96.

<sup>28</sup> المحققى 22 حزيران، 1991.



տունի, որի պատճառով նա պետք է ապրեր Կահիրեում: Դրանից հետո սիրիական սպաների եզիպտականով փոխարինվելու գործընթացն ավելի բուռն շարունակվեց<sup>29</sup>:

1958 թ. ապրիլի վերջին Սիրիայի տանկային զոմարտակների սպաների մեծամասնությունը ծառայության տեղափոխվեց եզիպտական շրջան, և նրանց փոխարինեցին եզիպտացի սպաները: Այս քաղաքականությունը սիրիացիների և եզիպտացիների միջև տարածայնությունների առիթ դարձավ: Սիրիայում շատերը սկսեցին վախենալ, որ ԱՄՀ-ի ղեկավար օդակների քաղաքականությունը տանում է դեպի «եզիպտացման»<sup>30</sup>: Միավորումից անմիջապես հետո Սիրիայի բանակային վերնախավը փոխարինվեց եզիպտականով, իսկ բարձրաստիճան սպաների մեծ մասը տեղափոխվեց քաղաքացիական պաշտոնների: ԱՄՀ-ի սիրիական ՁՈւ-ի հրամանատար նշանակվեց գեներալ Ջամալ Ֆեյսալ<sup>31</sup>:

ԱՄՀ-ի նախագահ Գամալ Արդել Նասերը, որպեսզի ամրոցվի իր հսկողության տակ պահեր սիրիական բանակը, դիմեց այնպիսի միջոցի, ինչպիսին էր սիրիական սպաների զանգվածային տեղափոխումը ծառայության եզիպտական շրջան, որտեղ նրանք չէին ստանում բարձրաստիճան պաշտոններ կամ զրկվում աշխատանքից: Սիրիական սպաներին պաշտոնաթող էին անում՝ ուշադրություն չդարձնելով նրանց տարիքին, երբեմն տեղափոխում էին քաղաքացիական պաշտոնների<sup>32</sup>: Եզիպտոսի հետ միավորման շրջանում սիրիական բանակից

<sup>29</sup> Palmer 1966: 56.

<sup>30</sup> Abu Jaber Kamel 1966: 63.

<sup>31</sup> 284 .1991 ٤٤٥

<sup>32</sup> Kyum 1976: 82-83.

հեռացվել էր ավելի քան 1100 ավագ և 3000 կրտսեր սպա, իսկ 500-ը ծառայության էր տեղափոխվել եզիպտական շրջան<sup>23</sup>:

Այսպիսով, 1950-ական թվականներին արաբական ժողովուրդների առջև հառնած բազում մարտահրավերները նրանց մոտ ուժեղացրեց միասնության ձգտումը: Դրա հետևանքը հանդիսացավ 1958 թ. Սիրիայի և Եգիպտոսի միավորումը մեկ միասնական ունիտար պետության մեջ: Այդ հարցում ևս սիրիական բանակն ասաց իր խոսքը: Չջանկանալով դաշնային հիմունքների վրա կատարել Եգիպտոսի հետ միավորումը՝ սիրիական զինվորականության մեծամասնությունը պահանջեց ամբողջական միավորում: Միավորումից և Արաբական Միացյալ Հանրապետության ստեղծումից հետո Եգիպտոսը, փաստորեն, իր վերահսկողությունը հաստատեց սիրիական բանակի վրա՝ զգալիորոն սահմանափակելով նրա դերը: Միավորումից անմիջապես հետո սիրիական բանակի ղեկավարությունը փոխարինվեց եգիպտականում, իսկ բարձրաստիճան սպաների մեծ մասը տեղափոխվեց քաղաքացիական պաշտոնների: Նման քաղաքականությունը քնականաբար առաջ էր բերելու սիրիական բանակի դժգոհությունը: Այս պայմաններում Սիրիան, հենվելով հայրենի զինված ուժերի վրա, 1961 թ. սեպտեմբերի 28-ին ռազմական հեղաշրջման միջոցով դուրս եկավ ԱՄՀ կազմից: Գամալ Աբդել Նասերը նույնիսկ հրամայեց Լաթաքիա ուղարկել Հատուկ զորքերի օդադեսանտային երկու գունդ: Ռազմական պատրաստվածության բերվեցին նաև ԱՄՀ ռազմածովային ուժերը, որոնք պետք է Հատուկ զորքերն իջեցնեին Լաթաքիա:

<sup>23</sup> Himebusch 1990: 85.

Սակայն Հալեպի և Լաթաքիայի զորամասերի՝ ապրտամբներին միանալուց հետո Արզն Լասերը հրամայեց զորքերին՝ վերադառնալ<sup>34</sup>։ Անկասկած, այդ իրադարձությունը ծանր հարված էր արաբական միասնության գաղափարին և, առհասարակ, արաբական ազգայնականության գաղափարախոսությանը՝ պանարաբիզմին։ Կարծես թե վերստին հաստատվում էր լորդ Քերզընի այն հայտնի ասույթը, որ եթե հնարավոր է Արաբիայի ավազներից պարան հյուսել և այդ պարանով կապել ինչ-որ քան, ապա հնարավոր է, ուրեմն, արաբների միասնությունը։

1962 թ. մարտի 28-ին Սիրիայում տեղի ունեցավ հերթական ռազմական հեղաշրջում՝ Արզ Ալ-Քարիմ Ան-Լահլաուվի գլխավորությամբ։ Սիրիական բանակի հրամանատար գեներալ Ջահր Ադ-Դինը լուծարեց Սահմանադիր ժողովը։ Նախագահ Նազիմ Ալ-Կուդսին հարկադրված հրաժարական տվեց, իսկ Մարուֆ Ադ-Դավալիբին և այլ քաղաքական գործիչներ ձերբակալվեցին<sup>35</sup>։ Այս հեղաշրջումը ևս երկրին հանգստություն չբերեց. մարտի 31-ին Ջասիմ Ալվանի համախոհները՝ Ռազմական կոմիտեի<sup>36</sup> սպաների աջակցությամբ, գրավեցին Հալեպի ռադիոկայանը և պահանջեցին անհապաղ միանալ Եզիպտոսի հետ։ Գնդապետ Ջասիմ Ալվանը, ով Հալեպի կայազորի հրամանատարն էր, հայտարարեց, որ Սիրիան ԱՄՀ-ի հյուսիսային նահանգն է։ Այդ հայ-

<sup>34</sup> Саадыш 1984: 137.

<sup>35</sup> 297-296 .1999 ھجری

<sup>36</sup> 1959 թ. ամռանը՝ սպաների Եզիպտոս տեղափոխելուց հետո, քառասական փոքրաթիվ սպաների կողմից ձևավորվեց գաղտնի մի ռազմական կազմակերպություն, որը հետագայում հայտնի դարձավ որպես Ռազմական կոմիտե (*القوة العسكرية*):

տարարությունը շարժումից հեռացրեց որոշ սպաների, որոնք դեմ դուրս եկան Եզիպտոսի հետ միավորման շուտափույթ վերականգնմանը, ինչը և շարժման անկման պատճառներից մեկն էր: Այդ ժամանակ ՌԿ-ի սպաները փորձեցին համագործակցել Ամին Ալ-Հաֆեզի<sup>37</sup>

<sup>37</sup> 1963 թ. մարտի 8-ին Սիրիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջումից հետո ՆԳ նախարար Նշանակվեց Ամին Ալ-Հաֆեզը, ով միաժամանակ իրականացրեց նաև Պաղեստինյան ռազմական նահանգապետի պարտականությունները: Այնուհետև Հեղափոխական հրամանատարության ազգային խորհրդի նախագահ Լուայ Ալ-Աթասին պաշտպանության նախարար Նշանակեց Ամին Ալ-Հաֆեզին, ով դարձավ այդ ժամանակաշրջանի Սիրիայի ամենաազդեցիկ մարդկանցից մեկը: 1964 թ. նախագահական խորհուրդ ընտրվեց, որի կազմի մեջ մտավ Ամին Ալ-Հաֆեզը՝ որպես նախագահ: 1966 թ. փետրվարի 23-ին զինվորական միավորումները՝ լուծարված «Բասսի» մարզային ղեկավարության անդամների հրամանատարությամբ, հեղաշրջում կատարեցին: Միջել Աֆլակը, Սալահ Ադ-Դին Ալ-Քիտարը, Մունիֆ Բազազը և գեներալ Մուհամմադ Ումրանը տեսյուն կայանքի ենթարկվեցին, իսկ Ամին Ալ-Հաֆեզը, ով զինված դիմադրություն էր ցույց տվել հեղաշրջման ժամանակ՝ ձերբակալվեց: Որոշ հետազոտողներ գրում են, որ Արգենտինայում եղած ժամանակ Ամին Ալ-Հաֆեզը ծանոթացել էր սիրիացի հարուստ գործարար Քամիլ Ամին Թաթեթի հետ, ով իսրայելական «Մոսսադի» հետախույզ էլի Կոնեն էր, և Ամին Ալ-Հաֆեզի կտավարման ժամանակ դարձել էր Սիրիայի ՊՆ խորհրդական, ում 1965 թ. Դամասկոսում հրապարակային մահապատժի ենթարկվեցին: Այս կապակցությամբ 2001 թ. «Ալ-Ջազիրային» տված հարցազրույցում գեներալ Ամին Ալ-Հաֆեզն ասաց, որ նա երբևէ չի հանդիպել էլի Կոնեին Արգենտինայում (ինչպես նշում է Սիրիայի նախկին պաշտպանության նախարար Մուստաֆա Տլանս իր «Իմ կյանքի հայելին» աշխատությունում .573 .1995 ատ): Մանրամասն

متصور أ، الانقلابات في سوريا كما يراها أمين الحافظ، 2001.06.18  
<https://www.aljazeera.net/programs/countrywitness/2015/1/10/%D8%A7%D9%84%D8%A7%D9%86%D9%87%D9%84%D8%A7%D8%A8%D8%A7%D8%A9%D9%81%D9%8A-%D8%B3%D9%88%D8%B1%D9%8A%D8%A7-%D9%83%D9%85%D8%A7->

հետ, ասկայն նա բանակից ազատվեց և տեղափոխվեց Արզնետինա, որտեղ նշանակվեց ռազմական կցորդ<sup>36</sup>:

1963 թ. փետրվարի 8-ի իրաքյան հեղաշրջումից ուղիղ մեկ ամիս անց՝ 1963 թ. մարտի 8-ին<sup>39</sup>, Սիրիայում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում<sup>40</sup>: Նախագահ Նազիմ Ալ-Կուդային, գեներալ Ջահր Ադ-Դիներ, Ակրան Հաուրանին և այլք ձերբակալվեցին, իսկ վարչապետ Խալեդ Ալ-Ազմն իր ընտանիքով ապաստան գտավ թուրքական դեսպանատանը<sup>41</sup>: Այդ ժամանակ Սիրիայի զինված ուժերի թիվը մոտ 65 000 էր: Ձինված ուժերը կազմված էին ցամաքային զորքերից, ռազմաօդային և փոքրաթիվ ռազմածովային ուժերից: Ռազմաօդային ուժերում կար 113 ինքնաթիռ, իսկ ռազմածովայինում՝ 123 տորպեդային ռազմանավակ<sup>42</sup>:

1967 թ. պատերազմում պարտության և ձախբասականների կողմից վարվող քաղաքականության նկատմամբ անհանդուրժողականության պատճառով բանակը հայտնվեց բարոյական և հոգեբանական ճգնաժամի մեջ: Բանակն արտացոլում էր Սիրիայում տիրող դժգոհությունն ու անվստահության մթնոլորտը երկրի ձախբասական ղեկավարության նկատմամբ: Բանակային

---

[%D9%8A%D8%B1%D8%A7%D9%87%D8%A7-](#)

[%D8%A3%D9%85%D9%8A%D9%86-](#)

[%D8%A7%D9%84%D8%AD%D8%A7%D9%81%D8%8B-%D8%AD13](#)

<sup>36</sup> 89-88 .1969 جندی

<sup>39</sup> 1963 թ. մարտի 8-ի հեղաշրջումից 43 տարի անց՝ նույն օրը՝ 1920թ. մարտի 8-ին, հայտարարվեց Սիրիական ազգային կոնգրեսի որոշումը Սիրիայի միասնական ու անկախ պետության ստեղծման և Ֆեյսալ բին Ալ-Հուսեյնին նրա թագավոր հռչակվելու մասին: Տե՛ս 279 .1987 سلطان

<sup>40</sup> 149 .2011 حبش

<sup>41</sup> Русь 1971: 303.

<sup>42</sup> Юрченко 2004: 35.

շրջանակն ավելի սթափ էր գնահատում Սիրիային սպառնացող այն վտանգը, որը թաքնված էր ժողովրդա-ազատագրական պատերազմի հայեցակարգի պահանջ-ներին համապատասխան Իսրայելի դեմ զինված պայ-քարի քաղաքականության շարունակման փորձում՝ միջ-արաբական ասպարեզում երկրի աճող մեկուսացման պայմաններում: Ի տարբերություն Ճափ թևի ներկայա-ցուցիչների՝ Ալ-Մադն ու Նրա կողմնակիցները գտնում էին, որ ժողովրդաազատագրական պատերազմն ու ան-կանոն զինված խմբավորումների միջոցով պայքարն Իս-րայելի դեմ Սիրիային ոչինչ չի տա: Նրանք անհրաժեշտ էին համարում Նախ և առաջ ստեղծել ուժեղ և մար-տունակ բանակ, ձեռք բերել անհրաժեշտ սպառազի-նություն, որի միջոցով էլ հնարավոր կլիներ ազատագրել կորցրած տարածքները: Իրեն վերապահելով մերձա-վորարևելյան ճգնաժամի ռազմական բնույթի հարցերի լուծման առաջնայնությունը՝ զինվորական խմբավորումը պահանջում էր ցուցաբերել առավել սթափ և իրատե-սական մոտեցում Սիրիայի միջարաբական քաղաքա-կանության խնդիրներում, քարելավել հարաբերություն-ներն Իսրայելին դիմագրավող և արաբական աշխար-հում Սիրիային ռազմավարական թիկունք ապահովելու ընդունակ երկրների՝ Եգիպտոսի, Հորդանանի և Իրաքի հետ: Բանակի վերահսկողության տակ դնել բոլոր սիրիական զինվորական կազմավորումները, այդ թվում նաև Սիրիայի տարածքից գործող պաղեստինյան հա-դուկներին<sup>41</sup>:

«Բասս» կուսակցության զինվորական թևը պահան-ջում էր ավելի շատ ուշադրություն դարձնել Սիրիայի քա-

<sup>41</sup> Գրիգորյան 1987, 58-59:

նակի ամրապնդման գործին<sup>44</sup>: Այս և մի շարք այլ պահանջներ առաջադրվեցին 1968 թ. սեպտեմբերին տեղի ունեցած «Բաասի» 4-րդ մարզային համագումարի պատվիրակների քննարկմանը<sup>45</sup>:

1969 թ. հուլիսի 8-ին Դամասկոսում կայացավ Սիրիայի, ԱՄՀ-ի, Իրաքի և Հորդանանի բանակների շտաբի պետերի հանդիպումը, որտեղ քննարկվեցին արևելյան և արևմտյան ուղղափառների և առհասարակ արաբական պետությունների միջև ավելի սերտ ուղղման համագործակցություն հաստատելու հարցերը<sup>46</sup>:

1970 թ. նոյեմբերի 13-ին գեներալ Հաֆեզ Ալ-Ասադի գլխավորությամբ բանակն իր վերահսկողությունը հաստատեց երկրի ներքաղաքական իրավիճակի վրա<sup>47</sup>: Բանակը զբաղեցրեց Դամասկոսի ռադիոկայանը և հեռուստաընկերությունը: Մինչ այդ Ալ-Ասադը բազմաթիվ սպաների տեղափոխություններ էր անցկացրել բանակում՝ բոլոր զորամասերը դնելով իր հսկողության տակ: ՍԱՀ նախագահ Նուր Ադ-Դին Ալ-Աթասին և «Բաասի» սիրիական մասնաճյուղի գլխավոր ընտանուկար Սալահ Ջադիդը ձերբակալվեցին, իսկ ԱԳ նախկին նախարար Իբրահիմ Մախտարը փախուստի դիմեց՝ հաստատվելով Ալ-

<sup>44</sup> **Камбар 1997:** 49.

<sup>45</sup> **حزب البعث العربي الاشتراكي 1972:** 109.

<sup>46</sup> **Фий-Розуторова 1978:** 93: Խորհրդային Միությունը նույնպես մեծ օգնություն ցույց տվեց Սիրիային բանակի սպառազինման հարցում: 1973 թ. արաբ-իսրայելական պատերազմի շեմին Սիրիայի բանակում արդեն կային «Ռվին» և «Լուլզա» տեսակի 12 գեներալ-մայորային դիվիզիոններ, S-62 տանկեր, տորպեդավոր ռազմանավեր, սուզանավեր և ակամազերծիչներ:

<sup>47</sup> **Маурекс 1988:** 48.

ժիրում: Նոյեմբերի 16-ին ստեղծվեց «Բաասի» ժամանակավոր երկրամասային ղեկավարությունը<sup>40</sup>:

Այսպիսով, Սիրիայում անարյուն հեղաշրջում կատարվեց: Այս կապակցությանը Հաֆեզ Ալ-Ասադն ասել է, որ 1970 թ. նոյեմբերի 16-ի շարժումը փրկարար շարժում է, և որ «Ուղղիչ շարժումը» կուսակցության, հայրենիքի փրկության համար միակ ելքն է<sup>41</sup>: Այստեղից էլ այն ստացավ «Ուղղիչ շարժում» անունը: «Ուղղիչ շարժման» հիմնական նպատակը վերադարձն էր «Բաասի» հիմնարար սկզբունքներին և գաղափարախոսությանը, որից շեղվել էր նախորդ ձախրաստական վարչակարգը<sup>42</sup>:

Ինչպես նշում է Սիրիայի ՋՈւ գեղապետ Մուստաֆա Ֆաուազը, նոր իշխանությունը մեծ ուշադրություն էր դարձնում բանակաշինության գործընթացին, բանակում տիրող բարոյաժողովրդական վիճակին, այն ժամանակակից զենքով ու զինամթերքով ապահովելու խնդրին<sup>43</sup>: Առաջ էր քաշվում «գաղափարական բանակ» ունենալու կարգախոսը: Բանակի զենեքայի բարձրագույն զինվորական աստիճան ունեցող Հաֆեզ Ալ-Ասադն ասում էր, որ Սիրիայի բանակի սպան պետք է հավատարիմ լինի իր հավատամքին, սկզբունքներին, համառորեն կատարի իր պարտականությունները, որովհետև նա է ամենատեղ զենքը զինված ուժերում<sup>44</sup>: Նոր բանակը պետք է տոգորված լիներ «Բաաս» կուսակցության գաղափարախոսությամբ, պաշտպաններ երկրում նրա գործունեության միջոցով արձանագրած ձեռքբերումները՝ հանդի-

<sup>40</sup> توركي، 31.

<sup>41</sup> Xycéin 1995: 55.

<sup>42</sup> Torrey 1975: 160.

<sup>43</sup> Фавас 1998: 122.

<sup>44</sup> Xeyn A., Iun 1998: 3.



սանալով նոր վարչակարգի և կուսակցության ամուր հենարան: Իրավացի է Բազու Յասիրը, երբ գրում է, որ սիրիական բանակն ամբողջությամբ պետք է ծառայի իր ազգին, որովհետև այն ազգի մի մասնիկն է<sup>53</sup>:

Սիրիայի բանակն ու նրա սպայական կազմը համալրվեց պալմիական համայնքի ներկայացուցիչներով: «Բաաս» կուսակցության իշխանության գալուց հետո բանակի կարևորագույն և ամենամարտունակ զորամասերը դրված էին պալմիների հրամանատարության տակ: ՁՆ-ի հավաքագրումը իրականացվում էր համընդհանուր զինվորական պարտականության հիման վրա, իսկ ժամկետային զինծառայությունը սահմանված էր 30 ամիս: Սիրիայում ոչ բոլոր զինվորներն ու սպաներն էին պարտավոր հանդիսանալ «Բաաս» կուսակցության անդամ, սակայն նրանք պետք է հավատարիմ լիեթին «Բաասի» գաղափարախոսությանը<sup>54</sup>: ՁՆ-ի կարևորագույն զորագնդերի և դիվիզիաների հրամանատարները սերում էին պալմիական համայնքից, ուլթեր շահագրգռված էին վարչակարգի պահպանմամբ, որը նրանց ապահովում էր սոցիալ-տնտեսական բարենպաստ պայմաններ և արտոնյալ դիրք հասարակությունում<sup>55</sup>: Բանակի հեն մեկտեղ առանցքային նշանակություն էր վերագրված նաև Սիրիայի անվտանգության և հատուկ ծառայությունների համակարգին:

1971 թ.-ին, երբ Հաֆեզ Ալ-Ասադն ընտրվեց ՍԱՀ նախագահ, զինված ուժերը հաշվվում էին 111,7 հազար հոգի (ցամաքայի ուժերը՝ 100 հազար, ռազմաօդային և հակաօդային ուժերը՝ 10 հազար, ռազմածովային ուժերը՝

<sup>53</sup> Ясир 1998: 143.

<sup>54</sup> Хамиди 1994: 9.

<sup>55</sup> Александров 2002: 158.

1,7 հազար): Բանակն ուներ 780 տանկ, 210 ինքնաթիռ, 700 հրետանային հրանոթ, 10 ռազմանավ<sup>56</sup>: Սիրիային անհրաժեշտ էր անհապաղ ռազմատեխնիկական և մասնագիտական օգնություն՝ զինված ուժերի վերակազմավորման, ժամանակակից զենքի ապահովման և բանակի մարտունակության բարձրացման համար:

1973 թ. սկզբին Սիրիայի զինված ուժերը կազմում էին 140 հազար: Սիրիական զինված ուժերն իր տրամադրության տակ ուներ 1320 տանկ, 675 թնդանոթ, 1300 ռազմական մեքենա, 275 ռազմական ինքնաթիռ, 30 ռազմանավ<sup>57</sup>: 1967 թ. պատերազմից հետո Սիրիային հաջողվեց ամբողջովին վերականգնել երկրի զինված ուժերը և ձևավորել ազելի ժամանակակից բանակ, որը կարողացավ իրեն դրսևորել 1973 թ. արաբ-իսրայելական չորրորդ պատերազմի ընթացքում: Բոլոր պահեստային բրիգադները տեղափոխվել էին կանոնավոր կարգավիճակի, իսկ 1968 թ. արդեն կազմավորվել էին 7, 5, 3-րդ դիվիզիաները և 78, 12, 43, 47-րդ տանկային զնդերը: Մեծ նշանակություն ունեցան ՄՏՈւ-55 տեսակի տանկային կամուրջ-հենակետերը, որոնք կարևոր դեր խաղացին 1973 թ. հոկտեմբերյան պատերազմի ընթացքում: 1973 թ. սկզբներին բավական սրվել էր իրադրությունը սիրիա-իսրայելական սահմանում: Նույն թվականի հոկտեմբերի 6-ին 700 սիրիական տանկեր հետևակի աջակցությամբ գրոհեցին իսրայելական դիրքերը Գոլանի բարձունքներում: Սիրիական զորքերը երկու օր հաջողությամբ հարձակվում էին, սակայն իրադրությունը

<sup>56</sup> Багдасаров, «Взвешив 1998»: 56.

<sup>57</sup> Меньшов 2010: 56.

կտրուկ փոխվեց՝ եզիպտական զորքերի հարձակման անսպասելի դադարի պատճառով:

Ուշադրության է արժանի ՍԱՀ ՁՈւ գործողությունները, որի մեջ իր ստեղծման պատմության մեջ առաջին անգամ մասնակցեց Հատուկ զորքերի «Կոմանդոս» ստորաբաժանումը, որն իր առաջին մարտական գործողությունն իրականացրեց հոկտեմբերի 9-ի առավոտյան ժամը 6-ին: Ջարալ Աշ-Շեյխում իրականացրած ուժգնական գործողություններն ապացուցեցին Սիրիայի ՁՈւ Հատուկ զորքերի՝ հակառակորդի դեմ օգտագործելու բարձր արդյունավետությունը: Հատուկ նշանակության ուժերը կատարեցին հրամանատարության կողմից իրենց առջև դրված մարտական առաջադրանքը՝ զգալի վնաս հասցնելով իսրայելական զինված ուժերին, և ապահովեցին ցամաքային զորքերի առաջխաղացումը: Այդ շրջանում Հատուկ զորքերի ստորաբաժանումներից մեկի հրամանատարն Ալի Ումրանն էր, ով ծագում էր ազդեցիկ պալիական խայատին տոհմից<sup>56</sup>:

1973 թ. հոկտեմբերյան պատերազմում Սիրիայի մարդկային կորուստները կազմում էին 3500 զոհված և 9000 վիրավոր: Սիրիական զինված ուժերը կորցրեցին 160 ինքնաթիռ, Սիրիան և Եզիպտոսը միասին կորցրեցին 1800 տանկ: 1973 թ. պատերազմը ցույց տվեց, որ սիրիական բանակի մարտունակությունը և ընդհանուր պատրաստվածությունն ավելի բարձր էր, քան 1967 թ. պատերազմի ընթացքում: 1973 թ. արաբ-իսրայելական պատերազմի հետևանքով Սիրիային հաջողվեց ազատագրել 1967 թ. Իսրայելի կողմից գրավված որոշ սի-

<sup>56</sup> *Batafu 1981*: 332.

րիական տարածքներ, այդ թվում՝ Գոլանի բարձունքների վարչական կենտրոն Ալ-Կունեյտրան:

Սիրիան 1976 թ. հունվարին անմիջականորեն միջամտեց լիբանանյան դեպքերին՝ այնտեղ ուղարկելով «Պաղեստինյան ազատագրության բանակի» Յարմուք բրիգադի մի քանի ջոկատներ: Լիբանանում իրավիճակը դուրս էր եկել թույլատրելի սահմաններից, իսկ երկրի կառավարությունն այլևս չէր վերահսկում տեղի ունեցող իրադարձությունները: 1976 թ. մայիսի 31-ի գիշերը հունիսի 1-ի առավոտյան սիրիական բանակը մուտք գործեց Լիբանան՝ կարգուկանոն հաստատելու նպատակով: Ներխուժումից կարճ ժամանակ անց Լիբանանի մեծ մասը հայտնվեց սիրիական հսկողության տակ<sup>50</sup>: Սիրիական 30 հազարանոց զորքի մեջ էին նաև 200 Հատուկ զորքերի ստորաբաժանումները: Սիրիայի ռազմական միջամտությունը լիբանանյան հակամարտությանը խոր դժգոհություն առաջացրեց արաբական մի շարք երկրներում: Եգիպտոսը դատապարտեց Սիրիայի՝ արաբական երկրների հետ չհամաձայնեցրած քայլը և խզեց Դամասկոսի հետ դիվանագիտական հարաբերությունները, իսկ Իրաքն իր զորքերն ուղարկեց սիրիաիրաքյան սահմանի մոտ:

1982 թ. փետրվարին Համայում ճնշվեց «Մուսուլման եղբայրների» բարձրացրած ապստամբությունը: Խոռվարարների դեմ դուրս եկան «պաշտպանական ջոկատը» (جناح الدفاع), որի հրամանատարը նախագահի եղբայր Ռիֆաթ Ալ-Ասադն էր, գեներալ Ալի Հայդարի հրամանատարության ներքո գտնվող Հատուկ զորքերը, ինչպես նաև գեղապետներ Նադիմ Աբբասի և Ֆուադ Իսմայիլի

<sup>50</sup> Востриков 1991: 132.

47-րդ տանկային և 21-րդ մեքենայացված բրիգադները: Համայն ապստամբությունը ճնշելու համար տեղում էին նաև գնդապետ Յահյա Ձեյդանի ղեկավարած ռազմական հետախուզության զորամիավորումները: Իշխանության զորքերի թվաքանակը տարբեր տվյալներով կազմում էր 25 հազար<sup>60</sup>:

Բանակի մասնակցությունն այդ ապստամբության ճնշմանը ևս մեկ անգամ ապացուցեց, որ Սիրիայի զինված ուժերը ոչ միայն ազգային տարածքի պաշտպան են, այլ նաև կարող են օգտագործվել ներքին ընդդիմությանը ճնշելու համար:

1982 թ. իսրայելական ազրեսիան Լիբանանում կամ «արաբ-իսրայելական 5-րդ պատերազմի» ժամանակ իսրայելական և սիրիական զորքերի միջև առաջին բախումը տեղի ունեցավ հունիսի 7-ին Խաաբաի քաղաքի մոտ: ԱՄՆ-ի միջնորդությամբ Դամասկոսին առաջարկություն արվեց իր հսկողության տակ վերցնել ՊՍԿ-ի ռազմական կառույցները և թույլ չտալ նրանց հրթիռակոծել Արևելյան Գալիլեան: Ի պատասխան Սիրիայի մերժմանը՝ իսրայելական ռազմաօդային ուժերը ոչնչացրին 34 սիրիական կործանիչ: Լիբանանում ստեղծված իրավիճակի համար Եզհպտոսը մեղադրեց Սիրիային, փաստարկելով, որ այդ երկրում զորքեր պահելով Դամասկոսը մեկ անգամ ևս արհեստական լարվածություն է ստեղծում այդ երկրում: Եթե 1973 թ. արաբ-իսրայելական պատերազմի ժամանակ Իսրայելի զինված ուժերում հաշվվում էր 6 մարտական օդադեսանտային գումարտակ, ապա 1982 թ. պատերազմի ընթացքում իսրայելական բանակն արդեն ուներ 5 օդադեսանտային բրի-

<sup>60</sup> Glenn Feldman, 1995, 167.

գաղ: ՁՈւ հրամանատարությունը Բեյրութ ուղարկեց սիրիական Հատուկ զորքերի 36 «Կոմանդոս» զույգ, որոնք բաղկացած էին 569-րդ դիվիզիայի տանկերից և հակատանկային համակարգերից: Հաշվի առնելով այն, որ սիրիական զորքերը Լիբանանում էին գտնվում ներքին անվտանգության ապահովման համար, Հատուկ զորքերն այդ պատերազմում օգտագործվեցին որպես հասարակ մոտոհրաձգային զնդեր: Հատկանշական է Հատուկ զորքերի 569-րդ դիվիզիայի ուժեղացված գումարտակի և «Կոմանդոս» գումարտակի 40 օր տևած մարտական պաշտպանողական գործողությունները, որի ընթացքում Հատուկ զորքերի հրամանատարության մարտավարական ճիշտ հաշվարկի արդյունքում հակատանկային ականների տեղադրմամբ պայթեցվեց հակատակորդի 40 տանկ:

ՍԱՀ ՁՈւ Հատուկ զորքերը համեմատաբար երիտասարդ էին, որի զինվորները համարվում էին ինչպես հրաձիգ, այնպես էլ՝ ականազերծող, հետախույզ, հրանոթի հրամանատար, վարորդ և այլն: Հատուկ զորքերի կյանքում նոր շրջան է սկսվում 1982 թ. արաբ-իսրայելական պատերազմից հետո: 1984 թ. փետրվարին Դամասկոսում Ալի Հայդարի Հատուկ զորքերը և Ռիֆաթ Ալ-Ասադի պաշտպանական ջոկատները կանգնած էին միմյանց դեմ՝ սպասելով մարտական հրամանի: Սակայն տեղի ունեցավ «Բաաս» կուսակցության տարածաշրջանային ղեկավարության արտակարգ նիստ և նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի մարտի 11-ի հրամանագրով ստեղծվեց երեք փոխնախագահի պաշտոն: Այդ պաշտոնները զբաղեցրին Աբդ Ալ-Հայիմ Խադդամը, Ռիֆաթ Ալ-Ասադը և Ջուհայր Մաշարիկան: Մարտի 30-ին Ռիֆաթ Ալ-Ասադը հրաման տվեց պաշտպանական ջոկատներին տեղա-

կայվել Դամասկոսի կենտրոնական շրջաններում: Նրա S-72 տանկային դիվիզիան տեղակայված էր օդանավակայանի ճանապարհի մոտ Քաֆար Սուս կոչվող վայրում, որտեղ գտնվում էր գլխավոր հետախուզական վարչության շտաբկայանը, իսկ հրետանային ուժերը հաստատվել էին Կասյուն լեռան ստորոտին: Մեծ քանակությամբ զինվորականներ կուտակվել էին Շերատոն հյուրանոցի շրջակայքում, իսկ Մերիդիեն հյուրանոցը և «Բաաս» կուսակցության տարածաշրջանային ղեկավարության քյուրոները շրջապատել էին հետևակային զորքերը: Ընդդեմ այդ ջոկատների կանգնած էին Ալի Հայդարի հրամանատարության տակ գտնվող Հատուկ զորքերը և Շաֆիկ Ֆայադի տանկային դիվիզիան: Այս կապակցությամբ Պատրիկ Սիլն իր «Ասադ. պայքար Մերձավոր Արևելքի համար» հայտնի աշխատության մեջ գրում է, որ դա նման էր քաղաքացիական պատերազմի, և Դամասկոսում հավատարմագրված օտարերկրյա դեսպանությունների ռազմական կցորդները հեռադիտակներով հետևում էին պայթյունավտանգ իրավիճակին<sup>61</sup>: Այնուամենայնիվ, ռազմական բախում տեղի չունեցավ, իսկ պաշտպանական ջոկատները կազմալուծվեցին և դրանց մի մասը միավորվեց Հատուկ զորքերին ու նախագահական զվարդիային, իսկ մյուս մասի հիմքի վրա ձևավորվեց 569-րդ տանկային դիվիզիոնը, որը հետագայում դարձավ 4-րդ տանկային դիվիզիոն<sup>62</sup>:

Հաֆեզ Ալ-Ասադի վարչակարգի ամենամուր հետևանքները հետևյալ ուժային կառույցներն էին՝ զինված ուժերի հետախուզությունը, որը ղեկավարում էր Ալի Դու-

<sup>61</sup> Seal 1989: 430–433.

<sup>62</sup> Holiday 2013a: 44.

բան, ռազմաօդային ուժերի հետախուզությունը՝ ղեկավար Մուհամմադ Ալ-Խուլին, քաղաքացիական հետախուզությունը՝ Ֆուադ Աբսիի և նրա անվտանգության գծով տեղակալ Մուհամմադ Լասիֆի գլխավորությամբ, 10-15 հազարանոց Հատուկ զորքերը, որի հրամանատարն էր գեներալ Ալի Հայդարը: Հաջորդ զորամիավորումը 10 հազարանոց նախագահական կամ հանրապետական զվարդիան էր (الحرس الجمهوري), որը ղեկավարում էր Ադնան Ալ-Մախլուֆը: Մյուս զորամիավորումը՝ «<պայքարի ջոկատներ>> (مرايا الصراع), որը ղեկավարվում էր Ադնան Ալ-Սաադի կողմից<sup>65</sup>: Պաշտպանական հատուկ նշանակության ջոկատները ստեղծվել էին Հաֆեզ Ալ-Սաադին վարչակարգի անվտանգության ապահովման նպատակով: Բացի վերոնշյալ ուժային կառույցների ղեկավարներից և գինված ջոկատների հրամանատարներից, Հաֆեզ Ալ-Սաադը վստահում էր նաև պլավի գեներալներ՝ Ջուս Գլխավոր շտաբի պետի տեղակալ Ալի Ասլանին, երրորդ բանակային դիվիզիայի հրամանատար Շաֆիկ Ֆայադին, հակահրթիռային պաշտպանության կորպուսի հրամանատար Ալի Սալիհին և երկրորդ բանակային դիվիզիայի հրամանատար Իբրահիմ Սաֆիին<sup>66</sup>: Իրականում Ջուս Հատուկ զորքերը Սիրիայի ամենալավ և մարտունակ ուժերն էին, որոնք գինված էին ժամանակակից զենքով ու ռազմական տեխնիկայով:

1987 թ. հունվարին պաշտոնանկ արվեց ռազմաօդային հետախուզության ղեկավար գեներալ Մուհամմադ Ալ-Խուլին, ապա Ալ-Սաադի հրամանով բանտարկվեց.

<sup>65</sup> سجن 696-695 .2007.

<sup>66</sup> Լույս տեղում, 696-697:



իսկ փետրվարին նախագահի որդի Բասիլ Ալ-Ասադը նշանակվեց պաշտպանական ջոկատների հրամանատար: Երկու թվականի հոկտեմբերին վարչապետ Աբդ Աու-Ռաուֆ Ալ-Կասսին փոխարինեց Ժողովրդական Ժողովի նախագահ Մահմուդ Ազ-Չուբին: Պաշտպանության նախարարը Մուստաֆա Տլասն էր, ԵԳ նախարարը Ֆարուկ Աշ-Շարան: Այդ ժամանակ Սիրիան ուներ 800 հազարանոց բանակ (ներառյալ պահեստային)<sup>65</sup>, 4100 տանկ, ռազմական ինքնաթիռներ և այլն<sup>66</sup>:

Սիրիայում քաղաքական և զինվորական իշխանությունը սերտաճած էին: Երանք հսկայական ազդեցություն ունեին երկրի թե՛ ներքին, և թե՛ արտաքին քաղաքականության ձևավորման գործընթացի վրա: Առանց զինվորական վերնախավի համաձայնության երկրում քաղաքական հարցերը գրեթե չէին լուծվում: 1990-ական թթ. կեսերին Սիրիայի զինված ուժերը հաշվվում էին շուրջ 400 հազար<sup>67</sup>:

1994 թ. նախագահի հետնորդ համարվող Բաշար Ալ-Ասադը ծանրաբեռնվում է զինվորական և պետական տարրեր խնդիրներով: Լոնդոնից Սիրիա վերադառնալուց հետո նա անցնում է տանկային զոմարտակի հրամանատարության դասընթացներ և արդեն 1994 թ. եռյամբերին նշանակվում զոմարտակի հրամանատար, իսկ 1995 թ. Բաշար Ալ-Ասադին շնորհվում է մայորի աստիճան: 1996 թ. Բաշար Ալ-Ասադը մասնակցում է Բարձրագույն ռազմական ակադեմիայի հրամանատարության և գլխավոր շտաբի դասընթացներին, որը պատվոգրով ավարտում է 1997 թ. և ստանում գեղապետի աստիճան:

<sup>65</sup> Katz 1988: 18.

<sup>66</sup> Levran, Eytan 1988: 399-400.

<sup>67</sup> Файна 1997: 102.

Բաշարին աջակցում էր նրա կրտսեր եղբայրը՝ Մահիդը, ով զինվորական քնազավառում նույնպես ակտիվ գործունեություն էր ծավալում: Ստանալով բանակի և անվտանգության մարմինների աջակցությունը Բաշար Ալ-Ասադը 1998 թ. սկսել էր ամրապնդել իր դիրքերը սիրիական ղեկավարության շրջանում<sup>66</sup>:

1993 թ. սկսած Հաֆեզ Ալ-Ասադն աստիճանաբար ձեռնամուխ եղավ զինված ուժերի բարձրագույն հրամանատարության կազմի նորացմանը: Որպես նախագահական գվարդիայի ղեկավարության անդամ և նախագահի անվտանգության կորպուսի ղեկավար, Բասիլ Ալ-Ասադին էր վստահվել նաև հանրապետական գվարդիայի կազմում էլիտար մի զորախմբի հրամանատարությունը՝ ջնայած որ նա դեռ կրում էր մայրի զինվորական կոչում: 1994 թ. նախագահը պաշտոնից ազատել էր երկար տարիներ հատուկ նշանակության ուժերի՝ Հատուկ զորքերի հրամանատար, գեներալ-մայոր Ալի Հայդարին և ձերբակալել ու տնային կալանքի ենթարկել այն բանից հետո, երբ վերջինս կասկած էր հայտնել նախագահի ընտրության ժառանգական սկզբունքի կապակցությամբ: Ալի Հայդարի ձերբակալության մյուս պատճառը նրա դիրքորոշումն էր Բարայեյի հետ բանակցությունների խնդրում: Սիրիայի ՊՆ գլխավոր շտաբի պետ գեներալ Հիքմեթ Շիհաբիի հետ ղեկավար սպաների հանդիպման ժամանակ, որտեղ քննարկվում էր Բարայեյի հետ խաղաղության համաձայնագրի կնքումից հետո տարածաշրջանի անվտանգության համակարգի հնարավոր տարբերակները, Ալի Հայդարը նշել էր, թե իրենք՝ ալավիները, որ ստեղծել են այդ վարչակարգը,

<sup>66</sup> 59-57, 2005 زيمبر

ցանկանում են անմիջականորեն մասնակցել խաղաղության գործընթացին: Հայդարի այս ելույթն այդ ժամանակ ընկալվեց որպես Հաֆեզ Ալ-Ասադի կողմից Իսրայելի հետ խաղաղության բանակցությունների գնալու քաղաքական գծի քննադատություն<sup>69</sup>: Այի Հայդարի պաշտոնանկությունը սիրիական բարձրաստիճան սպայական վերնախավում որոշակի լարվածություն առաջացրեց: 10-15 հազարանոց էլիտար զորախմբի՝ ՍԱՀ ՁՈւ Հատուկ զորքերի հրամանատար Այի Հայդարը ծագում էր ազդեցիկ ալավիական Հադդադին տոհմի Դիր ընտանիքից: Ռազմական քոլեջն ավարտել էր Եգիպտոսում և հատուկ դասընթացներ էր անցել արտասահմանում, որից հետո մտել էր <<Բասա>> կուսակցություն: Նա մասնակցել էր 1970-ական թթ. իրադարձություններին, 1982 թ. լիբանանյան պատերազմին, Համա քաղաքում «Մուսուլման եղբայրների» ապստամբության ճնշմանը, ինչպես նաև 1984 թ. Ռիֆաթ Ալ-Ասադի կողմից Հաֆեզ Ալ-Ասադի դեմ կազմակերպած դավադրության ձախույժմանը: Նա բազմիցս ցույց էր տվել իր հավատարմությունն ու նվիրվածությունը Հաֆեզ Ալ-Ասադին: Այի Հայդարի և նախագահի միջև ձևավորվել էին սերտ հարաբերություններ: Այի Հայդարին փոխարինեց և ՍԱՀ ՁՈւ Հատուկ զորքերի հրամանատար նշանակվեց ալավիական Մատավիա տոհմից գեներալ-մայոր Այի Հաբիբը, ով 1990-1991 թթ. հակաիրաքյան դաշինքի ուժերի կազմում սիրիական զորքերի հրամանատարն էր<sup>70</sup>, որից հետո 2004 թ. նշանակվեց ՁՈւ գլխավոր շտաբի պետ.

<sup>69</sup> Van Dam 2011: 129-131.

<sup>70</sup> Ахмедов 2003: 82-83.

իսկ 2009 թ.-ին՝ պաշտպանության նախարար<sup>71</sup>: Հատուկ զորքերը կազմված էին երեք գումարտակով օդադեսանտային զնդից, հրետանային և հակատանկային դիվիզիոնից, ինչպես նաև հետախուզական, կառավարման, ինժեներական, քիմիական ու կապի վաշտերից, որոնք իրենց մեջ ներառում էին զենիթահրթիռային համակարգեր և տարրեր նշանակության ռազմական տեխնիկա:

Հաֆեզ Ալ-Ասադի ստեղծած «կիսառազմական» վարչակարգը և ուժային կառույցների ներգրավվածության բարձր աստիճանը Սիրիայի բաղաձեական կյանքում չափազանց կարևոր էին դարձնում բանակի և անվտանգության մարմինների աջակցության նախապայմանը որևէ նախագահի իշխանության պահպանման հարցում:

Նախագահ Ալ-Ասադը մահացավ 2000 թ. հունիսի 10-ին: Սիրիայի բանակի կյանքում, որն անցել էր անկախության համար պայքարի և ռազմական հեղաշրջումների ճանապարհով, նոր շրջան սկսվեց: Չնայած ստեղծված բարդ իրավիճակին՝ իշխանության փոխանցումը Բաշար Ալ-Ասադին բավականին սահուն կերպով իրականացավ: Հաֆեզ Ալ-Ասադի մահվան հաջորդ օրը փոխնախագահ Աբդ Ալ-Հալիմ խադդամը, որը, Սահմանադրության համաձայն, իրականացնելու էր նախագահի պարտականությունները մինչև նոր ընտրությունները, Բաշար Ալ-Ասադին նշանակեց զինված ուժերի գլխավոր հրամանատար՝ նրան շնորհելով բանակի զենեքայի (سلاح) բարձրագույն զինվորական աստիճան, որը մինչ այդ Հաֆեզ Ալ-Ասադի մենաշնորհն էր: Այնուհետև Ազգային ժողովը, փոփոխություններ կատարելով Սահմանադրու-

<sup>71</sup> Van Dam 2011: 209, 2020 թ. մարտի 20-ին 81 տարեկանում մահացավ նախկին ՊՆ զենեքայ կի Հաֆիզը:

թունում, օրինականացրեց երեսուներորսամյա Բաշար Ալ-Ասադի նախագահի թեկնածու արձանագրվելը<sup>72</sup>:

Բանակի քարձրաստիճան սպայական կազմը ՊՆ Մուտաֆա Տլասի և գլխավոր շտաբի պետ Ալի Ալանի գլխավորությամբ՝ իսկույն իրենց հավատարմությունը հայտնեցին Բաշար Ալ-Ասադին: «Բաաս» կուսակցության համագումարը Նրան ընտրեց կուսակցության գլխավոր քարտուղար: Համաժողովի ավարտին «Բաաս» կուսակցության տարածաշրջանային ղեկավարությունը 2000 թ. հունիսի 20-ին Բաշար Ալ-Ասադին առաջադրեց նախագահի թեկնածու: Հուլիսի 10-ին կայացավ հանրաքվե, և Բաշար Ալ-Ասադն իր պարտականությունների կատարմանն անցավ 2000 թ. հուլիսի 17-ին՝ ժողովրդական ժողովում պաշտոնավարման երդման արարողությունից հետո<sup>73</sup>:

Ուժային կառույցներում ամենանշանակալից փոփոխությունը թերևս երկար տարիներ «անփոխարինելի» պաշտպանության նախարար՝ 73 ամյա կորպուսային գեներալ Մուտաֆա Տլասի հրաժարականն էր 2004 թ. մայիսի 11-ին, ով այդ պաշտոնում էր 1974 թ.-ից: Նրան այդ պաշտոնում փոխարինեց Հասան Թուրքմանին, իսկ գլխավոր շտաբի պետ նշանակվեց Ալի Հաբիբը<sup>74</sup>:

Լիբանանում էին տեղակայված ՍԱՀ ՁՈւ Հատուկ զորքերի ութ գումարտակ, որից երեքը Տրիպոլիում, հինգը՝ Բեյրութում: Փորձելով արդարացնել սիրիական ներկայությունը՝ 2001 թ. փետրվարին «Աշ-Շարկ Ալ-Աուստին» տված հարցազրույցում Բաշար Ալ-Ասադն իր տեսակետը փաստարկում է, ստելով, որ սիրիական զոր-

<sup>72</sup> Пир-Будгова 2015: 312.

<sup>73</sup> 80-79 - 2005 زيمر

<sup>74</sup> Ахмедов 2010: 138-139.

քերը լիբանանում իրականացնում են երկու կարևոր առաքելություն. վերականգնում են «քաղաքական խաղաղությունը»՝ համաձայն Տաիֆի համաձայնագրում Դամասկոսին տրված մանդատի և արձագանքում Իսրայելի հետ «ոչ խաղաղություն, ոչ պատերազմ» իրավիճակին<sup>75</sup>: Այնուամենայնիվ, 2005 թ. ապրիլի 26-ին Լիբանանի տարածքը լքեց վերջին սիրիացի զինվորը:

2010 թ. վերջին և 2011 թ. սկզբին խաթարվեց արաբական պետությունների ներքին կայունության երկարատև շրջանը: Արաբական աշխարհում սկսված հեղափոխական շարժումների ալիքը 2011 թ. տարածվեց նաև Սիրիայում, որն, այսպես կոչված, «Արաբական գարնան» ծավալման հետևանքն էր: 2011 թ. մարտին Դարաա քաղաքում առաջին անգամ ընդհարումներ տեղի ունեցան ցուցարարների և զինված ուժերի ստորաբաժանումների միջև, ինչն առաջացրեց սիրիական հասարակության տարբեր շրջանակների դժգոհությունը: Այդ ժամանակ հարձակումներ եղան նաև «Բաաս» կուսակցության շտաբի վրա: Անվտանգության և ՁՈՒ-ի ստորաբաժանումների կողմից Դարաայում, Բանիասում և այլ շրջաններում իրականացվեցին համապատասխան միջոցառումներ՝ զինված խմբավորումներին հայտնաբերելու և վնասազերծելու ուղղությամբ: Խռովարարների դեմ դուրս եկավ ՁՈՒ Հատուկ զորքերի 4-րդ դիվիզիան և հանրապետական զվարդիան, որի հրամանատարը Բաշար Ալ-Ասադի եղբայր Մահիթր Ալ-Ասադն էր<sup>76</sup>: ՍԱՀ ՁՈՒ Հատուկ զորքերի կյանքում, որն անցել էր արաբ-խա-

<sup>75</sup> مقابلة السيد الرئيس بشار الأسد مع صحيفة الشرق الأوسط بتاريخ 6 شباط 2001, [http://www.presidentassad.net/index.php?option=com\\_content&view=article&id=944:6-2001&catid=293&Itemid=462](http://www.presidentassad.net/index.php?option=com_content&view=article&id=944:6-2001&catid=293&Itemid=462)

<sup>76</sup> Ахмедов 2018: 62.

րայելական պատերազմների, «Մուսուլման եղբայրների» ապստամբության ճնշման և Ալ-Սաադների «եղբայրը եղբոր դեմ» հակամարտության ճանապարհով, նոր շրջան սկսվեց: Հատուկ նշանակության ամենաէփտար, ամենագովարանված զորամիավորման հատուկչոկատայինները ներքաշվեցին լայնամասշտաբ քաղաքացիական պատերազմի մեջ:

2011 թ. Սիրիայի ՁՌ-ի թիվը 295 000 էր<sup>77</sup>: ՁՌ-ի կարևորագույն զորագնդերի և դիվիզիաների հրամանատարները սերում էին ալավիական համայնքից, ովքեր շահագրգռված էին վարչակարգի պահպանմամբ: Եթե ջիհներ նման կազմով սիրիական բանակը, ապա դժվար թե քաղաքական իշխանությունը Սիրիայում այսքան երկար գտնվեր ալավիների ձեռքում: Ինչպես զինվորականները, այնպես էլ երկրի հատուկ ծառայությունների համակարգի աշխատակիցները նույնպես ունեին արտոնյալ կարգավիճակ և հսկայական ազդեցություն Սիրիայի հասարակական-քաղաքական կյանքում: Պատահական չէ, որ սիրիական բանակի կազմավորման 66-րդ տարեկիցի առթիվ Բաշար Ալ-Ասադը նշեց, որ նրանց գործունեությունից էր կախված երկրում հակաիշխանական տրամադրությունների, վարվող քաղաքականության դեմ բողոքի կամ որևէ ընդդիմության, լիներ դա քաղաքական կամ կրոնական, առաջացման կանխարգելում ու չեզոքացումը<sup>78</sup>:

---

<sup>77</sup> Nerguizian A., *Instability in Syria: Assessing the Risks of Military Intervention*, December 13, 2011,

[http://csis.org/files/publication/111213\\_SyriaMilitaryIntervention.pdf](http://csis.org/files/publication/111213_SyriaMilitaryIntervention.pdf)

<sup>78</sup> President Al-Assad's Army Day Speech 2011,

[http://www.presidentassad.net/index.php?option=com\\_content&view=article&id=360-president-al-assad-s-army-day-speech-2011&catid=117&Itemid=496](http://www.presidentassad.net/index.php?option=com_content&view=article&id=360-president-al-assad-s-army-day-speech-2011&catid=117&Itemid=496)

2011 թ. նոյեմբերին հարձակման ենթարկվեց Դամասկոսին մոտ գտնվող Հարաստա քաղաքում տեղակայված սիրիական օդուժի հետախուզության կենտրոնակայանը: Դամասկոսը հարձակումների համար մեղադրում էր ամերիկյան, իսրայելական ու թուրքական հատուկ ծառայություններին: Դեկտեմբերի 3-ին Սիրիայի Պալմիրա քաղաքի մոտ քանակի լայնամասշտաբ զորավարժությունների ժամանակ փորձարկվեցին «երկիր-երկիր» տեսակի մինչև 200 կմ հեռահարություն ունեցող հրթիռներ: Դեկտեմբերի 6-ին Բեյրութում՝ «Հիզբալլահի» կազմակերպած հանրահավաքի ժամանակ, հանրության առջև ելույթ ունեցավ շարժման գլխավոր քարտուղար Հասան Լասրալլահը՝ հայտարարելով, որ «Հիզբալլահը» աստարում է Բաշար Ալ-Ասադին: Սիրիական բանակի ստորաբաժանումներն, անցնելով զինված խմբավորումների դեմ վճռական ռազմական գործողությունների, մեկը մյուսի հետևից վերականգնեցին վերահսկողությունն ընդդիմադիրների հիմնական հենակետերի վրա՝ նախ վերջին շրջանում Հոմսը, ապա թուրք-սիրիական սահմանի մերձակայքում գտնվող Իդլիբը, ինչպես նաև դրանց հետևած Դեյր Ազ-Ձորը, Հալեպը և այլն: Արյունալի ընդհարումներ տեղի ունեցան նաև Ջիսր Ալ-Շուդուրում: Այս երևույթը խթանեց սիրիական տարբեր քաղաքներում ևս հակակառավարական դժգոհությունների ծավալմանը:

2013 թ. մարտին քրիտանական "The Sunday Times"-ին տված հարցազրույցում Բաշար Ալ-Ասադն ասաց, որ ով իսկապես ցանկանում է օգնել Սիրիային, պետք է պահանջի Թուրքիայից, Կատարից և Սաուդյան Արաբիայից վերջ դնել Սիրիայում ահաբեկիչների ֆինանսավորմանը: Նա նշեց, որ «Ալ-Կաիդա» ահաբեկչական



կազմակերպությունը վտանգ է ներկայացնում ոչ միայն Սիրիայի, այլև ամբողջ տարածաշրջանի համար, և որ Սիրիան երբեք բանակցություններ չի վարի ահաբեկիչների հետ: Անդրադառնալով «Հիզբալլահի», Իրանի և Ռուսաստանի աջակցությանը Սիրիայի ժողովրդին՝ բարձր գնահատեց Մոսկվայի անփոփոխ դիրքորոշումը սիրիական ճգնաժամին<sup>79</sup>: Նա ասաց, որ Սիրիան, ունենալով հզոր ազգային բանակ և ոստիկանություն, սեփական հայրենիքը պաշտպանելու համար օտարերկրյա զինվորների կարիք չի զգում և որ ուշադրությունը պետք է կենտրոնացնել մի շարք երկրների՝ ինչպես Կատարի, Թուրքիայի, Սաուդյան Արաբիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ունեցած դերակատարության վրա, որոնք ուղղակի և անուղղակի Սիրիայում զինում ու աջակցում են ահաբեկիչներին<sup>80</sup>: Այնուամենայնիվ, ստիպված եղավ դիմել արտաքին զինված ուժերի օգնությանը՝ ներառյալ Իրանի բանակի հատուկ նշանակության 65-րդ օդադեսանտային բրիգադի զորքերին<sup>81</sup>:

2020 թ. մարտին մոսկովյան համաձայնագրով Ռուսաստանը և Թուրքիան դարձան Իդլիբում ռազմական գործողությունների դադարեցման երաշխավորը: Կողմերը պարտավորվեցին դադարեցնել բոլոր տեսակի ռազմական գործողությունները՝ նկատի առնելով 2017 թ.

<sup>79</sup> Հակաօդային պաշտպանության կարողությունները բարձրացնելու համար Սիրիան Ռուսաստանից ստացավ U-300 զենիթահրթիռային համակարգեր:

<sup>80</sup> Bashar Al-Assad's Interview with The Sunday Times, <https://www.voltairenet.org/article177726.html>

<sup>81</sup> Гамиев Т., Задонский С., Карякин В., *Военная мощь Исламской Республики Иран*, 2019, с. 206, <http://booktimes.ru/wp-content/uploads/main/308b/Gamiev/Iran/vol2.pdf>

Ատոնայի և 2018 թ. Սոչիի հուշագրերը: Այս կապակցությամբ Քաշար Ալ-Ասադը նշեց, որ անհասկանալի էր, թե թուրքական բանակը ինչ էր անում Սիրիայում, ինչու էին զոհվում թուրք զինվորները Սիրիայում և, որ միակ խնդիրը «Մուսուլման եղբայրներն» էին<sup>82</sup>:

Չինված ուժերի Հատուկ զորքերի հրամանատարությունն իր երեք գնդերով տեղակայված էր Լիբանանի սահմանի մոտ գտնվող Ադ-Դրեյջ ռազմակայանում, իսկ Հատուկ զորքերի 15-րդ դիվիզիոնը և երեք գնդերը Հորդանանի սահմանին<sup>83</sup>: Հատուկ զորքերի գնդերը մասնակցեցին նաև Հոմսի ռազմական գործողությանը<sup>84</sup>, իսկ Համայում՝ Հատուկ զորքերի 47-րդ գունդը մասնակցեց Դարաայի դեպքերից հետո<sup>85</sup>: Սիրիայում տեղի ունեցան բազմաթիվ ահաբեկչական գործողություններ, խաղաղ բնակիչների առանգումներ ու սպանություններ: Ահաբեկչություններ եղան Դամասկոսում, Հալեպում, Հոմսում, Համայում և այլուր, որոնց ընթացքում եղան բազմաթիվ զոհեր ու վիրավորներ<sup>86</sup>:

Այսպիսով, սիրիական բանակից հեռացած ընդդիմության համակիր զինվորականները կարողացան կազմել

<sup>82</sup> Primakov Y., *President Bashar Al-Assad's Interview with Russia* 24, March 5, 2020,

[http://www.presidentassad.net/index.php?option=com\\_content&view=article&id=1675-president-bashar-al-assad-s-interview-with-russia-24-march-5-2020&catid=336&Itemid=468](http://www.presidentassad.net/index.php?option=com_content&view=article&id=1675-president-bashar-al-assad-s-interview-with-russia-24-march-5-2020&catid=336&Itemid=468)

<sup>83</sup> **Holiday 2013b**: 8.

<sup>84</sup> **Holiday 2013a**: 14.

<sup>85</sup> **Լոսի սեզոն**, 32:

<sup>86</sup> 2019 թ. փետրվարի 8-ից ՀՀ-ի հումանիտար ականագերծողները և թիշկները մարդասիրական առաքելություն են իրականացնում ԱԱՀ-ում, որի արդյունքում 2020 թ. ապրիլ ամսվա դրությամբ ականագերծվել է շուրջ 150 000 ըմ տարածք և թշվառական օգնություն է ցուցաբերվել ընդհանուր առմամբ 12 000 հիվանդի:

իրենց գորամիավորումները և անհրաժեշտ ուժանմթերք ու տեխնիկական օժանդակություն ստանալով՝ Սիրիայում ռազմական հեղաշրջման անհաջող փորձ կատարեցին: Քանի որ Սիրիայի իշխանության և քանակի սպայական վերնախավի հիմնական կորիզն այսփիներ էին, որոնք ղեկավարում էին երկրի տուննի մեծամասնությանը, ապա քանակը չէր կարող չսատարել իշխանությանը, որովհետև սերտաճած էր նրա հետ: Ի տարբերություն մյուս արաբական երկրների՝ սիրիական քանակի սպայական վերնախավն ու զինվորականության մեծամասնությունը հավատարիմ մնացին Նախագահին: Այ-Ասադների հիսունամյա ղեկավարման ժամանակաշրջանում Սիրիայի քաղաքական համակարգի առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ զինված ուժերը ամբողջությամբ անհնար էր տարանջատել վարչակարգից և Նախագահից, իսկ վարչակարգի տապալումը կնշանակեր «զաղափարական» քանակի տապալում: Սիրիական ընդդիմության գործողությունները վերաճել էին ներքին զինված հակամարտության՝ իշխող վարչակարգի և արտաքին ուժերի ռազմական հովանավորությունը կրող զինված խմբավորումների միջև: Ներսիրիական ճգնաժամը վերաճել էր ազգային զինված ապստամբության, քաղաքացիական պատերազմի և միջազգային հակամարտության, որի մեջ ներգրավվել էին ուժային տարբեր կենտրոններ, որոնք փորձում էին Բաշար Ալ-Ասադի վարչակարգի պահպանմամբ կամ տապալմամբ լուծել իրենց արտաքին քաղաքական խնդիրները:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Գրիգորյան Հ. 1987**, Սիրիայի ծախրաստական ղեկավարության դիրքորոշումը մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ (1967-1970 թթ.), Մերձավոր և Միջին Արևելյի երկրներ և ժողովուրդներ, հատոր 14-րդ, երևան, էջ 30-75:
- Սարգսյան Հ. 1974**, Սովետա-սիրիական տնտեսական ու տեխնիկական համագործակցությունը (1955-1970 թթ.), Մերձավոր և Միջին Արևելյի երկրներ և ժողովուրդներ, հատոր 6-րդ, երևան, էջ 84-99:
- Փիր-Քուդադոլա Է. 1978**, Բաղաբական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում (1962-1970 թթ.), Մերձավոր և Միջին Արևելյի երկրներ և ժողովուրդներ, հատոր 9-րդ, երևան, էջ 27-96:
- Алиев Б. Р. 2001**, Северокавказская диаспора: История и современность, Маджчала.
- Ахмедов В. 2002**, Армия и Политика в Современной Сирии, Армения и Власть на Ближнем Востоке: от Авторитаризма к Демократии (сборник статей), Москва.
- Ахмедов В. 2003**, Сирия на рубеже столетий, власть и политика, Москва.
- Ахмедов В. 2010**, Современная Сирия: история, политика, экономика, Москва.
- Ахмедов В. 2018**, Сирийское восстание: история, политика, идеология, Москва.
- Багдасаров С., Чавушян А. 1998**, Военный и военно-экономический потенциал стран Ближнего и Среднего Востока, информационно-аналитический справочник, Москва.
- Востриков С. 1991**, Роль армии во внешней и внутренней политике Сирийской Арабской Республики (1970-1990 гг.), Москва.
- Ганиев Т., Задонский С., Карякин В.**, *Военная мощь Исламской Республики Иран*, 2019, <http://book.times.ru/wp-content/uploads/main/308bGanievIran/vol2.pdf>
- Зейн Ал-Дин Ю. 1998**, Совершенствование процесса воспитания дисциплинированности у курсантов ВУЗов Вооруженных Сил САР, Москва.

- Ильяс Р. 1990.** Военно-историческое исследование арабо-израильских войн 1948-1982 гг., Москва.
- Канбар М. К. 1997.** Совершенствование подготовки курсантов вузов к воспитательной деятельности в частях Вооруженных Сил Сирийской Арабской Республики, Москва.
- Кантар М. А. 1991.** Сирия в борьбе за укрепление политической независимости и национальной государственности (1946-1967 гг.), Москва.
- Клюшнин В. 1978.** Советско-сирийские отношения 1966-1976 гг., Киев.
- Кугейн А. У. 2001.** Средства массовой информации и их роль в обеспечении управления военной организацией Сирийской Арабской Республики, Москва.
- Кучин В. 1976.** Сирийская Арабская Республика и ее Вооруженные Силы, Москва.
- Махлюф В. 1998.** Сирия и Советский Союз, Проблемы политического взаимодействия (20-е-начало 90-х гг.), Москва.
- Меньшов А. 2010.** Эволюция военно-технического сотрудничества государств Ближнего Востока во второй половине 20 в., Москва.
- Мирский Г. 1976.** Третий мир: общество, власть, армия, Москва.
- Мирский Г. 1988.** Проблемы социалистической ориентации в арабских странах и роль военных, Проблемы современной советской Арабистике, Ереван.
- Мухалла А. Х. 1993.** Профессиональный психологический отбор военнослужащих ВС САР, Москва.
- Пир-Будагова Э. 1978.** Сирия в борьбе за укрепление национальной независимости (1945-1966 гг.), Москва.
- Пир-Будагова Э. 2015.** История Сирии XX век, Москва.
- Рысь Э. 1971.** Политическая борьба в Сирии в 1946-1963 гг., Москва.
- Саадуи Ю. 1984.** Социально-политическое развитие Сирии в 1954-1963 гг., Москва.
- Файал М. С. 1997.** Общие черты и характерные особенности политических режимов в Ираке, Сирии, Ливане, Москва.
- Фауаз М. 1998.** Опыт советской спецпропаганды на Среднем Востоке в годы Второй мировой войны и возможности его использования в Сирийских Арабских Вооруженных Силах, Москва.

- Хамади А. 1994.** Формирование и развитие навыков и умений воспитательной работы у молодых офицеров Вооруженных Сил САР, Москва.
- Хрулева В. 1971.** Сирия в составе Объединенной Арабской Республики (1958-1961 гг.), Москва.
- Хусейн Х. 1995.** Сирия: социально-политическое развитие 1963-1993 гг., Москва.
- Юрченко В. 2004.** Сирия: Проблемы Национальной Безопасности (Военная Политика и Военная Строительство в Период Правления ПАСВ 1963-2004 гг.), Москва.
- Ясир Б. 1998.** Психологическая адаптация курсантов ВУЗов Сирийской Арабской Республики к воинской службе, Москва.
- Abu Jaber Kamel S. 1966.** The Arab Ba'ath Socialist Party: History, Ideology, and Organization, New York.
- Al-Qawuqji F. 1972.** Memoirs 1948, Journal of Palestine Studies, Part 1, Vol. 1 No. 4, pp. 27-58.
- Al-Qawuqji F. 1972.** Memoirs 1948, Journal of Palestine Studies, Part 2, Vol. 2, No. 1, pp. 3-33.
- Van Dusen M. 1971.** Intra-and Inter-Generational Conflict in the Syrian Army, Maryland.
- Batatu H. 1981.** Some Observations on the Social Roots of Syria's Ruling, Military Group and the Causes for its Dominance, Middle East Journal, Vol. 35, No. 3, 331-344.
- Hinnebusch R. 1990.** Authoritarian Power and State Formation in Ba'athist Syria: Army, Party and Peasant, San Francisco & Oxford.
- Holliday J. 2013.** The Assad Regime, Middle East Security Report 8, Washington.
- Holliday J. 2013.** The Syrian Army, Institute for the Study of War.
- Katz S. 1988.** Arab Armies of the Middle East Wars, V. 2, London.
- Levrin A., Eytan Z. 1988.** The Middle East Military Balance 1987-1988: A Comprehensive Data Base & In-Depth Analysis of Regional Strategic Issues, Tel Aviv.
- Nerguizian A.,** Instability in Syria: Assessing the Risks of Military Intervention, December 13, 2011, [http://esis.org/files/publication/111213\\_SyriaMilitaryIntervention.pdf](http://esis.org/files/publication/111213_SyriaMilitaryIntervention.pdf)
- Palmer M. 1966.** The United Arab Republic, An Assessment of its Failure, Middle East Journal, Volume 20, N. 4, A., pp. 50-67.
- Primakov Y.,** *President Bashar Al-Assad's Interview with Russia 24*, March 5, 2020,

[http://www.presidentassad.net/index.php?option=com\\_content&view=article&id=1675-president-bashar-al-assad-s-interview-with-russia-24-march-5-2020&catid=336&Itemid=468](http://www.presidentassad.net/index.php?option=com_content&view=article&id=1675-president-bashar-al-assad-s-interview-with-russia-24-march-5-2020&catid=336&Itemid=468)

- Ramet P. 1990**, The Soviet-Syrian Relationship since 1955, San Francisco & Oxford.
- Seale P. 1989**, Asad. The Struggle for the Middle East, Los Angeles.
- Torrey G. 1975**, Aspects of the Political Elite in Syria, Political Elites in the Middle East, Washington.
- Van Dam N. 2011**, The Struggle for Power in Syria: Politics and Society under Asad and the Ba'ath Party, London.
- ارسال الأمير عائل 1983، مذكرات الأمير عائل ارسال، الجزء الثاني، 1950-1946، بيروت.
- الأتاسي محمد رضوان 2007، هاشم الأتاسي، حياته وعصره 1873-1960، دمشق.
- الجندي أدهم 1960، تاريخ الثورات السورية في عهد الكتاب الفرنسي، الجندي ساسي 1968، عرب ويهود، بيروت.
- الجندي ساسي 1969، البعث، بيروت.
- الحكيم دعد 1999، أوراق ومذكرات فكري البارودي، 1887-1966، خمسون عاماً من حياة الوطن، القسم الثاني، دمشق.
- الخبر هاني 1994، أنيب الشيشكلي، صاحب الانقلاب الثالث في سوريا، البداية والنهاية، دمشق.
- المعني سليمان، منقليخي عثمان 2009، هؤلاء حكموا سورية، دمشق.
- المعلم وايد 1985، سوريا 1918-1958، دمشق.
- المعني ملكة 22 حزيران 1991، حديث مع عفيف البيزري، دمشق.
- توركمان حسن، تاريخ الجيش العربي السوري، الجلد الثالث، 1970-2001، مركز الدراسات الاستراتيجية.
- حيش مروان 2011، البيعت وثورة آذار، جميع الحقوق محفوظة للمؤلف.
- حزب البعث العربي الاشتراكي 1972، القيادة القومية، دراسة تاريخية تحليلية موجزة لنضال حزب البعث العربي الاشتراكي 1943-1971، دمشق.
- راشيل أندرو 1997، الحرب الخفية في الشرق الأوسط، الصراع السري على سورية 1949-1961، جميع الحقوق محفوظة، توزيع دار سلمية.
- زكريا غسان 1991، السلطان الأحمر، الضيعة الأولى لنن.
- زيمر إيل 2005، بشار الأسد السنوات الأولى في الحكم، القاهرة.
- سلطان علي 1987، تاريخ سورية 1918-1920، حكم فيصل بن الحسين، دمشق.
- سول باتريك 2007، الأسد، الصراع على الشرق الأوسط، بيروت.
- طلح مصطفى، تاريخ الجيش العربي السوري 1949-1970، الجلد الثاني.
- عبد الكريم أحمد 1994، حصائد سنين خصبة وأيام مررة، جميع الحقوق محفوظة، بيسان للنشر والتوزيع.
- علي مازن 2008، سورية والعلاقات السياسية السورية المصرية من الانقلاب العسكري الثالث عام 1954 حتى قيام الحركة التصحيحية عام 1970، بحث، جامعة دمشق.

فان دام نيقولاوس 1995، الصراع على السكّطة في سورية، الطائفية والإقليمية والعشائرية في السياسة 1961-1995، القاهرة.  
قصة نذير 1982، أيام حسني الزعيم، 137 يوماً هزت سوريا، دار الألفاق الجديدة، بيروت.  
مردم بك سلمى 1994، استقلال سورية 1939-1945، أوراق جميل مردم بك، بيروت.  
محمد إبراهيم 1997، مقدمات الوحدة المصرية السورية 1943-1958، مطابع الهيئة المصرية العامة للكتاب.

Հայկ Սամսոնյան, պ.գ.թ.,

« ՀԱՍ արևելագիտության ինստիտուտ,  
Արարական երկրների բաժին,  
ավագ գիտաշխատող,  
hayksamsonian@gmail.com

## SPECIAL TROOPS OF THE ARMED FORCES OF THE SYRIAN ARAB REPUBLIC

**Keywords:** *Armed Forces, Special Troops, Arab-Israeli War, United Arab Republic, Special Forces, "Baath" party, Alawi Officers, Al-Assads, "Muslim Brotherhood", Arab Spring, Civil War, Syrian Crisis.*

In any other Arabic country the army did not play such an outstanding role in the political life as it was in case of Syria. This research deals with certain aspects of the formation of Syrian army, its officer stratum, as well as discusses issues dealing with military overturns in Syria, their reasons and aftermath for the country in the post-independent period, as well as investigates both ethnic and confessional background of the Syrian army.

The most valuable link in military forces was the officer stratum, which was integral part of the governmental system. The Syrian army gradually turned into a serious political factor what is proved by military overturns that occurred in Syria.

The Syrian army and its officer corpus were supplied by members of the Alawite community. After the "Baath" party came to power the most important and skillful divisions of the



Syrian army were put under the Alawite rule. If the Syrian army would not have such a staff, it would be hardly possible for the Alawites to keep in their hands the political power in Syria for such a long period of time.

**Hayk Samsonyan** - *PhD,*  
*Institute of Oriental Studies NAS RA,*  
*Department of Arab Countries, Senior Researcher,*  
[hayksamsonian@gmail.com](mailto:hayksamsonian@gmail.com)

ԱԳՐԻՔԵՋԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԻՐԱՆԻ  
ԱՏՐՊԱՏԱԿԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ  
ԱՆՋԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ  
(ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՈՒՋԻՆ  
ՏԱՍՆԱՄՅԱԿՈՒՄ)\*

ԱՐՄԵՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

**Բանալի բառեր՝** Իրան, Ադրբեջան, Իլիամ Ալիև, ազարի, Արևելյան Արրպապական, թյուրքականություն, անջապողականություն, «Մեծ Ադրբեջան»:

Հոդվածն Իրանում անջապողականության դրսևորումներին Ադրբեջանի մասնակցության մասին է: Հոդվածում ներկայացվում են Իլիամ Ալիևի նախագահության առաջին շրջանում (2003-2013 թթ.) Ադրբեջանի Հանրապետության (ԱՀ) իշխանությունների իրականացրած այն գործողությունները, որոնք փաստում են Իրանում անջապողականության դրսևորումներում Բաքվի ունեցած ուղղակի և անուղղակի մասնակցությունը: Ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրակացությանը, որ Իլիամ Ալիևի նախագահության շրջանում ադրբեջանցիների ինքնության ամրապնդման գործընթացը դրվել է ինստիտուցիոնալ մակարդակի վրա: Այդ գործընթացների արդյունքում առաջացել են այնպիսի իրողություններ, որոնք ընկալվում են որպես Ադրբեջանի մասնակցություն՝ Իրանի անջապողականությանը: Մասնավորապես Ադրբեջանի էլիտայի և քաղաքացիական հասարակության շրջանում արմավացել է այն

\* Հոդվածը ներկայացվել է 31.03.2020: Գրախոսվել է 25.04.2020:

համոզմունքը, որ Իրանի հյուսիսային նահանգները «Մեծ Աղբրեջանի» մի մասն են, իսկ իրանցի թյուրքախոս արքայազարականցիները՝ աղբրեջանցիների հայրենակիցները: Իրանի և Աղբրեջանի հարաբարեություններում առաջացող լարվածության պայմաններում, հափկապես, երբ ի պատահան Բաքվի գործողությունների, Իրանը մեծացնում էր ազդեցությունն Աղբրեջանի շիաների վրա, Բաքուն էլ իր հերթին անջափողականության հարցը օգտագործում էր որպես ճնշման գործիք՝ ընդդեմ Թեհրանի:

Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) փամանակակից պատմագիտական ուսումնասիրություններում Ատրպատական նահանգում (ներկայիս ԻԻՀ Արևելյան Արքայազարական և Արևմտյան Արքայազարական նահանգները) անջատողականությանն առնչվող հանգամանքները կապվում են 20-րդ դարի սկզբին տարածաշրջանում տեղի ունեցած զարգացումների ազդեցությամբ Շեյխ Մոհամմադ Խիաբանիի ապստամբության հետ, որի վերաբերյալ առկա են հակասական գնահատականներ: Պատմագիտական հոդվածների մեծ մասի համաձայն՝ Խիաբանիի գործունեությունը որակվում է որպես Իրանի տարածքային ամբողջականությունն արտաքին սպառնալիքներից պաշտպանելուն ուղղված քայլ՝, իսկ Իրանի անջատողական շրջանակները, այդ թվում աղբրեջանական քարոզչությունը՝ «Հարավային Աղբրեջանում» (Իրանի հյուսիսային թյուրքախոս նա-

---

<sup>1</sup> 134-99-1392-1146

*հանգևերը*) ազգային-ազատագրական յուրօրինակ պայքար<sup>2</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ Իրանի մտավորական, գիտական, ինչպես նաև ազգայնական շրջանակները<sup>3</sup>, իրենց մտահոգությունը հայտնելով 1918 թ. Արաբսի հյուսիսում պետական նոր կազմավորման ստեղծման առնչությամբ<sup>4</sup>, պատմական հիմնավորումներով<sup>5</sup> «Աղրբեջանը» համարում էին իրանական տարածք: Ներքին և արտաքին բազում հիմնախնդիրների մեջ ընկրմված Ղաջարական Իրանը չուներ այն հզորությունը, որ կարողանար պատշաճ արձագանքել ի հայտ եկած նոր իրողության պայմաններում երկրի տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգներին:<sup>6</sup>

Աղրբեջանի Ժողովրդական Հանրապետության ձևավորումից (1918 թ.) ի վեր ևս Ատրպատականի և Իրանի թյուրքախոս բնակչության ինքնությանն<sup>7</sup> առնչվող հարցերը շահարկվել են Խորհրդային Աղրբեջանի, ապա նաև Աղրբեջանական Հանրապետության կողմից, և, չարժանանալով Իրանի համարժեք գնահատականին և արձագանքին, այսօր արդեն Ատրպատականում անջատողականության դրսևորումներն ընկալվում են որպես «Իրանի 25 մլն աղրբեջանցիների» լեգիտիմ իրավունքի իրացում:

Աղրբեջանի անկախացումից (1991 թ.) հետո այդ երկրի բոլոր նախագահների պաշտոնավարման շրջա-

<sup>2</sup> بررسی کتاب های درسی جمهوری آذربایجان، 2015، <https://bit.ly/39x9yL9>

<sup>3</sup> **Էնայթոլլա** 2003, 35:

<sup>4</sup> 29، 1381، آنگی

<sup>5</sup> 11، 1922، روزانه

<sup>6</sup> **EHog** 2013: 29:

<sup>7</sup> **SE'n Anetkım** 2014: 3-10.

նում Իրանի թյուրքախոս բնակչության առնչվող հարցերը մշտապես գտնվել են Բաքվի օրակարգում<sup>8</sup>: Արուֆազ Էլչիբեի (1992-1993 թթ.) իշխանությունը, հիմնված լինելով թյուրքականության գաղափարախոսության վրա, բացահայտ սպառնում էր Իրանի տարածքային ամբողջականությանը՝ ջթաբցնելով «Հարավային Ադրբեջանը» Ադրբեջանին միացնելու նպատակադրությունը<sup>9</sup>:

Հեյդար Ալիևը (1993-2003 թթ.), թեև իր նախագահության առաջին շրջանում վերանայեց իր նախորդի հակաիրանական քաղաքականությունը, սակայն նրա պաշտոնավարման վերջին տարիներին պաշտոնական Բաքուն ոչ միայն զերծ չմնաց Ատրպատականի անջատողականներին աջակցելուց, այլ ԱՀ-ն իշխանության ամենաբարձր մակարդակով հովանավորում էր Իրանի թյուրքախոս նահագներին սերող անջատողականներին, ինչպիսիք Մահմուդ Ալի Չեհրեզանին և Փիրուզ Դիլենչին են<sup>10</sup>:

Իլհամ Ալիևի նախագահության առաջին տասնամյակում (2003-2013 թթ.) ադրբեջանցիների՝ որպես տարածաշրջանի «տեղաբնիկ» և «բազմադարյա» պատմություն ունեցող ժողովրդի ինքնագիտակցությունը բարձրացնելն ուղղված հատուկ քաղաքականություն մշակվեց, որի առաջնային նպատակները հայտարարվեցին Իրանի պատմական ազդեցությունից դուրս ադրբեջանական «սեփական» պատմություն ստեղծելն ու ադրբեջանական ինքնությունը թուրքերի հետ չնույնացնելը:

<sup>8</sup> 102 - 1388 سائقی نیا

<sup>9</sup> Բայրուրդյան 2003, 10:

<sup>10</sup> Heydor Əliyev İrandan Gisas Allir: 1999, <https://bit.ly/3cMfDWA>

Ի. Ալիևի նախագահության առաջին տասնամյակն Իրանի և Ադրբեջանի հարաբերությունների թերևս ամենաբարդ ժամանակաշրջաններից էր<sup>11</sup>:

Իրանի նկատմամբ միջազգային խիստ ճնշումների և սպառնալիքների ֆոնին Ադրբեջանի տարածքը դիտարկվում էր որպես Իրանի վրա ռազմական հարձակման հարթակ: Իսրայելի ազդեցությունը բավական մեծացել էր Ադրբեջանի հասարակական-քաղաքական կյանքում՝ դառնալով Իրանի ռազմաքաղաքական դեկավարության՝ ԱՀ իշխանությունների նկատմամբ անվտանգության պատճառ:

ԱՀ իշխանություններն էլ իրենց հերթին երկրի ներքին կայունությունն ապահովելու, իշխանությունն ամրապնդելու, քաղաքական կյանքում կրոնի ունեցած դերակատարությունը նվազեցնելու, և այդ համատեքստում Ադրբեջանի իսլամական կուսակցության ղեկավար կազմի վրա Իրանի ազդեցությունը թուլացնելու նպատակով խստորեն վերահսկում և սահմանափակում էին շիայական խմբերի գործունեությունը, ինչն էլ հարուցում էր ԻԻՀ խիստ մտահոգությունը<sup>12</sup>:

Իլիամ Ալիևի նախագահության շրջանում հայր Ալիևի սկսած «Ադրբեջանի պատմության» ստեղծման գործընթացն<sup>13</sup> ավելի համակարգված բնույթ ստացավ՝ դրվելով ինստիտուցիոնալ հիմքերի վրա: Մասնավորապես ԱՀ դպրոցական դասագրքերի պատմության ծրագիրը վերանայվեց, իսկ ԱՀ գիտությունների ազգային ակադեմիայի առջև խնդիր դրվեց՝ ստեղծել Ադրբեջանի նոր

<sup>11</sup> Cornell 2011: 333-336.

<sup>12</sup> Խոսքիցս 2016, 199-215:

<sup>13</sup> علی‌اف، ما اثرهای سیاسی نهادیم تورک لوستیم، 2018, <https://bit.ly/2NvKULY>

պատմությունը<sup>14</sup>։ Այդ գործընթացի արդյունքում ոչ միայն աղավաղվեց տարածաշրջանի երկրների և տեղաբնիկ ժողովուրդների պատմությունը<sup>15</sup>, այլև Ադրբեջանը գիտական մակարդակով տարածքային պահանջներ ներկայացրեց հարավային հարևան Իրանի Իսլամական Հանրապետությանը։

ԱՀ դպրոցական դասագրքերում Իրանը համարվում է «ագրեսոր», իսկ քարտեզներում Իրանի հյուսիսային նահանգները ներկայացվում որպես «Հարավային Ադրբեջան», հետևաբար՝ «ադրբեջանական» պատմական հողերն «ագրեսորից» ազատագրելն ու «Մեծ Ադրբեջանի» սահմաններում «Հյուսիսային Ադրբեջանի» (ժամանակակից Ադրբեջանական Հանրապետությունը) և «Հարավային Ադրբեջանի» միավորումը հռչակվում է որպես ազգային նպատակ<sup>16</sup>։

Ադրբեջանի այդ քաղաքականության ազդեցությամբ պայմանավորված ադրբեջանական մամուլում և գիտական գրականության մեջ սկսվեց լայնորեն շրջանառվել «պարսկական շովինիզմի» մասին թեզը, ըստ որի՝ «Ռեզա շահի կառավարման շրջանից ի վեր մինչ օրս ոչ պարսկախոս ժողովուրդները՝ այդ թվում ադրբեջանցիները (Իրանի թյուրքախոս ազրոպարսկանցիները - Ա.Բ.), խորական վերաբերմունքի են արժանանում Իրանում»<sup>17</sup>։ Դրանով փորձ է կատարվում քարոզչական դաշտում լեզվոտիմացնել արդեն իսկ գիտական մակարդա-

<sup>14</sup> 2016, Ին Եստոր Էլամ Ելի Լեբ Իրայ Ժեմհորի Ինգո Թարիխ Զեմեդ Լոշտե Մի Տուդ, <https://bit.ly/2Jh5Zht>

<sup>15</sup> Yaqub Mahmudov: Azərbaycan tarixi yenidən yazılır: 2018, <https://bit.ly/2urHQa8>

<sup>16</sup> احمدی 1990, 163-162

<sup>17</sup> Yusifli 2009: 12-41.

կում Ադրբեջանի պատմության և մշակույթի վերաբերյալ պատրաստված թեզերը, որոնք մամուլում շրջանառվելուց կարճ ժամանակ անց իրենց տեղը գտան ադրբեջանցի քաղաքական գործիչների քաղաքական խոսքում՝ մեծ ազդեցություն գործելով հասարակական կարծիքի վրա<sup>16</sup>:

ԱՀ ձեռնարկած վերոնշյալ գործընթացները վերլուծելով՝ կարող ենք եզրակացնել, որ Իրանում անջատողական գործընթացներին Ադրբեջանի առնչությունն առաջին հերթին այդ գործողությունների արդյունքում է ի հայտ գալիս<sup>17</sup>:

Սակայն այնպիսի իրավիճակներում, երբ անհրաժեշտություն է առաջանում հակազդելու Ադրբեջանի շիայական խմբերի վրա Իրանի ազդեցության մեծացմանը, Բաքուն անջատողականության հարցն օգտագործում է որպես ճնշման գործիք: Այդ նպատակով 2000-ական թվականներից սկսած Ադրբեջանի իշխանությունները սկսեցին ուղղակի և անուղղակի աջակցություն ցուցաբերել Իրանի տարածքում կամ դրանից դուրս գործող կազմակերպություններին և անջատողական խմբավորումներին («Հարավային Ադրբեջանի ազգային վերածնունդ շարժում» (GAMON)<sup>18</sup>, «Ադրբեջանի ազգային-ազատագրական ճակատ»):

Բաքվի նախաձեռնությամբ և հովանավորությամբ նաև ձևավորվեցին մի շարք կազմակերպություններ

<sup>16</sup> «İRANLI DEPUTAT HAKİMİYYƏTƏ YENİ MÜRACİƏT YOLLADI»: 2013, <https://bit.ly/2jKZc1l>

<sup>17</sup> «جمهوری اسلامی به ستوای کنگره دوم آزادیجاتی نمی جهان اعتراض کرد», 2006, <https://www.radiofarda.com/a/277367.html>

<sup>18</sup> «Араншәәзһр»: «Официальный Баку ведет антииранскую пропаганду против территориальной целостности Ирана»: 2010, <https://bit.ly/2UDyDRR>



(«Արտերկրում ապրող աղբրեջանցիների հետ համագործակցության պետական կոմիտե», «Աշխարհի աղբրեջանցիների կոնգրես»<sup>21</sup>), որոնք մինչ օրս ինչպես տարածաշրջանում, այնպես էլ միջազգային հարթակներում զբաղված են տարածաշրջանի բնիկ ժողովուրդների պատմությունը խեղաթյուրելու Բաքվի քաղաքականության լեզվի սեփականում<sup>22</sup>:

Վերոնշյալ կառույցների նպատակները, եթե փորձենք ընդհանրական ներկայացնել, ապա դրանք երկու՝ կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակ ունեն սկզբնական փուլում նախատեսվում է Ատրպատականի մասնատում, իսկ վերջնական փուլը միասնական «Մեծ Աղբրեջանի» ձևավորում է նախատեսում: Եվ որքան էլ Աղբրեջանի իշխանությունները հայտարարում էին, թե նշված կազմակերպությունների գործունեության հետ Բաքուն կապ չունի, միևնույն է, Աղբրեջանի կողմից իրականացված գործընթացներն այլ իրողության մասին են վկայում՝ հաստատելով Իրանում անջատողականությանն ԱՀ մասնակցության փաստը<sup>23</sup>:

Մասնավորապես 2012 թ. ԱՀ խորհրդարանի իշխող խմբակցության պատգամավոր Ս. Նովրուզովի նախաձեռնությամբ երկիրը «Հյուսիսային Աղբրեջան» անվանափոխելու նախաձեռնություն սկսվեց՝ այն հիմնավորմամբ, թե 19-րդ դարի սկզբին տեղի ունեցած պատմական գործընթացների արդյունքում Աղբրեջանը կիսվել է երկու մասի, որի մի հատվածում Արաքսից հարավ

الهام علی قبادر مراسم افتتاحیه سومین همایش به استصلاح آذربایجانى های جهان مسفرانى کرد  
2011, <http://fa.arannews.com/News/23878/>

اسمى 141، 2015

2011, پیام تبریک نوروزی نماینده مجلس شورای اسلامی به مردم جمهوری آذربایجان  
<http://fa.arannews.com/News/36922/>

ընկած «Հարավային Ադրբեջանում» ապրում է «Ադրբեջանի» քնակչության 2/3-ը<sup>24</sup>;

Բաքվի նման գործողություններն Իրանում հատկապես անվտանգության համար պատասխանատու ուժերի մոտ այն ընկալումն էր ձևավորել, որ անջատողական խմբավորումների միջոցով Ադրբեջանը նպատակ ունի մասնատել Իրանը, և այդ մտահոգությունից ելնելով էլ պաշտոնական Թեհրանը պարբերաբար իր բողոքն է ներկայացնում Ադրբեջանին:

Մասնավորապես ԻԻՀ-ԱՀ հարաբերություններում առաջացած հերթական լարված շրջափուլերից մեկի ընթացքում 2011 թ. Իրանի ՁՈւ ԳՇ պետ Սեյյեդ Հասան Ֆիրուզբադին (1989-2016 թթ.) Ադրբեջանի նախագահ Իլիամ Ալիևին հղած խիստ նախազգուշացման մեջ, կասկածի տակ դնելով «Ադրբեջան» անվամբ պետության գոյությունը, Արաքսի հյուսիսում գտնվող պետական կազմավորումը «Արրան», իսկ այնտեղ քնակվող ժողովրդին՝ իրանցի էր անվանել<sup>25</sup>:

Բացի նմանատիպ նախազգուշացումներից՝ Իրանը տարածքային ամբողջականությանը սպառնացող վտանգները չեզոքացնելուն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ է ձեռնարկում: Դրանք տեղի են ունեցել ինչպես 20-րդ դարի 90-ականների սկզբին՝ Արցախյան հակամարտության ժամանակ, այնպես էլ մեր ուսումնասիրության ժամանակաշրջանում: 1993 թ. Իրանն Արևելյան Աստղատակյան (East Azerbaijan) նահանգի ցամաքային սահմանն Ադրբեջանական Հանրապետու-

<sup>24</sup> 2011, درخواست پارلمان جمهوری آذربایجان به تغییر نام این کشور به آذربایجان شمالی, <https://www.icasna.ir/Fa/News/1820/88/>

<sup>25</sup> 2011, فیروزبادی خطاب به امام علی-الله: بیادری مرمم قابل سرکوب نیست, <https://www.icasna.ir/news/9005-12364/>

թյան հետ փոքրացնելու նպատակով վարչատարածքային բաժանում էր կատարել, ինչի արդյունքում ձևավորվել էր ներկայիս Արդարիկ նահանգը<sup>26</sup>: Իսկ 2010-ական թվականներին Իրանի թյուրքախոս նահանգներից ընտրված պատգամավորները հանդես էին գալիս Արևելյան Ատրպատականի հյուսիսային հատվածներում «Հյուսիսային Ատրպատական» կամ «Արասարան» անվամբ նահանգ ձևավորելու մասին նախաձեռնություններով<sup>27</sup>:

Իլիամ Ալինի նախազախության առաջին շրջանում Իրանում իրականացված անջատողական գործողություններին Ադրբեջանի մասնակցությունը դրսևորում էր նաև երրորդ կողմի գործոնի ազդեցությամբ:

Ադրբեջանը, նկատելով թյուրքականության գործոնի շահարկման արդյունավետությունը, Իրանի հետ ունեցած լարված հարաբերությունների ընթացքում որպես ճնշման գործիք օգտագործելիս այդ գործընթացում ներգրավեց նաև երրորդ կողմին՝ երկակի խաղ խաղալով, մի կողմից ԱՄՆ-ին և Իսրայելին<sup>28</sup> ցույց տալով, որ մեծ հնարավորություն ունի՝ ազդելու Իրանի վրա, իսկ մյուս կողմից՝ անջատողականության հարցն Իրանի հետ քանակցություններում օգտագործում էր որպես սակարկման առարկա՝ փորձելով թյուրքական գործոնի շահարկման դիմաց՝ այլ ոլորտում Իրանից զիջումներ կորզել<sup>29</sup>:

Իրանի անջատողական գործընթացներում Ադրբեջանի ունեցած ազդեցության մասին են վկայում ամե-

<sup>26</sup> Sadri, Entessar 2009: 64-65.

<sup>27</sup> مطرح تشکیل استان آذربایجان شمالی کلید خورد 2017, <http://www.abamews.ir/26475/>

<sup>28</sup> قبی یور انور 2003, 174-170.

<sup>29</sup> Shaffer 2010: 472.

րիկացի կոնգրեսականների և փորձագետների<sup>30</sup> նախա-  
ձեռնությունները, որոնք արժանանում էին Բաքվի բա-  
ցահայտ և քողարկված աջակցությանը:

ԱՄՆ կոնգրեսական Դ. Ռոհրաբաքերը 2012 թ. պետ-  
քարտուղար Հ. Քլինթոնին հղած նամակում առաջար-  
կում էր իրանցի թյուրքախոս ազարիներին օգնել անկա-  
խություն ձեռք բերելու գործում<sup>31</sup>: Ընդ որում ամերիկացի  
կոնգրեսականը հատկապես ընդգծում էր Ադրբեջանի  
դերակատարությունը, որի օրենսդիրները պարբերաբար  
բարձրաձայնում էին «Հյուսիսային Ադրբեջանը» և «Հա-  
րավային Ադրբեջանը» միավորելու մասին<sup>32</sup>:

Բացի վերոնշյալ նախաձեռնությունից՝ կոնգրեսական  
Ռոհրաբաքերը 2013 թ. ԱՄՆ Կոնգրեսին էր ներկայաց-  
րել մի նախագիծ, որը նախատեսում էր Իրանի թյուրքա-  
խոս ազարիներով և բելուջներով բնակեցված նահանգ-  
ներում ամերիկյան ազդեցությունը մեծացնելու և արև-  
մուտյան արժեքները քարոզելու նպատակով ուղիղ և հե-  
ռուստատեսություն հեռարձակել<sup>33</sup>: Թերևս նման նախա-  
ձեռնության հիմնավորումն այն էր, որ Ադրբեջանի ան-  
ուղղակի աջակցությամբ դեռ 2005 թ. արդյունավետ  
գործում էր «Gunaz TV» հեռուստաալիքը, որը մինչ օրս

<sup>30</sup> Azerbaijan and Think Tanks, 2014,

<https://www.nytimes.com/interactive/2014/09/07/us/07thinktank-docs4.html>.

<sup>31</sup> Representative Rohrabacher Introduces Resolution Encouraging the Partition of Iran: 2012, <https://psaia.org/CMS/representative-rohrabacher-introduces-resolution-encouraging-the-partition-of-iran.aspx>

<sup>32</sup> 2012-ci il 1 oktyabr tarixli iclasın stenogramı, 2012, <http://www.meclis.gov.az/?/az/stenogram/311>

<sup>33</sup> Resolution, Expressing the sense of the House of Representatives that the Broadcasting Board of Governors should broadcast and direct Azeri language content into the Islamic Republic of Iran and Baloch language content into the Islamic Republic of Iran and the Islamic Republic of Pakistan, <https://www.congress.gov/bills/113th/congress/house-resolution/183/text>

կարևոր դերակատարություն ունի Իրանի անջատողական գործընթացներում<sup>54</sup>:

Իսկ որպես առարկայական արդյունք՝ կարելի է նշել Ադրբեջանի պետական նավթային ընկերության (SOCAR) տնօրենի խորհրդական, ամերիկացի վերլուծաբան Բրենդա Շաֆերի գործունեությունը, որի ուշադրության կենտրոնում են հայտնվում ոչ միայն Իրանի թյուրքախոս ատրպատականցիների ինքնությանն առնչվող հարցերը, այլև նա Իրանում Ադրբեջանի դեսպան Զավանշիր Ախունդովի (2009-2016 թթ.) հետ համատեղ «Անջատողական շարժումներն Ատրպատականում» թեմայով երկու հատորով գիրք է հրատարակում, որը մեծ ազդեցություն է ունենում Ատրպատականի թյուրքախոս քնակչության ինքնագիտակցության վրա<sup>55</sup>:

Ամփոփելով հոդվածը՝ գալիս ենք այն եզրակացության, որ՝

- Իլհամ Ալիևի նախագահության շրջանում ինստիտուցիոնալ մակարդակում սկզբի է դրվել ադրբեջանցիների ինքնության ամրապնդման գործընթացը, որն էլ իր հերթին հանգեցրել է այնպիսի իրողությունների, որոնք ընկալվում և համարվում են մասնակցություն Իրանում անջատողականության գործընթացին:

- Իլհամ Ալիևի նախագահության շրջանում ինչպես Ադրբեջանի էլիտայի, այնպես էլ քաղաքացիական հասարակության շրջանում արմատացել է այն համոզմունքը, որ Իրանի հյուսիսային նահանգները «Լեճ Ադրբեջանի» մի մասն են, իսկ իրանցի թյուրքախոս ատրպատականցիները՝ ադրբեջանցիների հայրենակիցները:

<sup>54</sup> افشای نقش بنکو در تجزیه ایران و طرح آسویکی، 2013, <https://www.tabnak.ir/fa/news/314619/>

<sup>55</sup> «Mardomsabari» newspaper, No: 5014, 11 Nov 2019, p. 2.

որոնք ապրում են աղբրեջանցիների ընդհանուր հայրենիքի մի հատվածում<sup>36</sup>:

- Իրանի և Աղբրեջանի հարաբարեություններում առաջացող լարվածության պայմաններում, հատկապես, երբ ԱՀ գործողություններով պայմանավորված Իրանը մեծացնում էր ազդեցությունն Աղբրեջանի իսլամական կուսակցության դեկավար կազմի վրա, Աղբրեջանն անջատողականության հարցն օգտագործում էր որպես ճնշման արդյունավետ գործիք՝ ընդդեմ Իրանի:

- Իլիամ Ալիևի նախագահության երկրորդ շրջանում Իրանում անջատողականության գործընթացին մասնակցելու ԱՀ քաղաքականությունը աստիճանաբար վերանայվեց: Գնալով կատարելագործվեցին Բաքվի գործունեության մեթոդները: Ներկայումս Աղբրեջանը նախընտրում է աշխատել անջատողական նոր ուժերի հետ, որոնք այդքան էլ հայտնի չեն, և Թեհրանի կողմից չեն ընկալվում որպես ԱՀ աջակցությամբ գործող անջատողական ուժեր կամ առնվազն դժվար է դրանց հետ Բաքվի կապն ապացուցել:

- Իրանում իսլամական համակարգի տրամաբանությունից բխող սահմանափումներով և սոցիալ-տնտեսական ծանր իրադրությամբ պայմանավորված Իրանի թյուրքախոս քնակության մի հատվածի համար, որն այնքան էլ ծանոթ չէ պատմությանը կամ քաղաքական գործընթացներին, աշխարհիկ Աղբրեջանը գնալով ավելի գրավիչ է դառնում:

- Աղբրեջանն Իրանի անջատողականների վրա ազդեցությունը մեծացնում է նաև փափուկ ուժի կիրառ-

<sup>36</sup> *Hansı məsəvi haqla Azərbaycanı ağıl verisən?*: 2019.  
<http://www.baymedia.az/news/politics/3989.html>

մամբ: ԱՀ քաղաքացիները, ընդգրկվելով Թավրիզի «Traktorsazi» ֆուտբոլային ակումբ, մարզական հարթակն օգտագործում են տեղի թյուրքախոսների շրջանում անջատողական տրամադրությունների ձևավորմանն ու նրանց շրջանում նաև հակահայկական դիրքորոշման ձևավորմանը: Տեղի է ունենում նաև հակառակ գործընթացը, երբ Բաքուն, ֆինանսապես շահագրգռելով իրանցի հայտնի մարզիկներին, նրանց ընդգրկում է Ադրբեջանի ազգային հավաքականների կազմում:

- Իրանի և Ադրբեջանի փոխհարաբերություններում տեղի ունեցող զարգացումները վերլուծելիս նոր միտում ենք նկատում: Ադրբեջանի ազդեցությամբ գործող խմբերը վերջին տարիներին Իրանի իշխանությունների վրա կրոնական քաղաքականության առնչությամբ ճնշում գործադրելուց զատ նաև օգտագործում են հայկական գործոնը՝ Թեհրանին մեղադրելով Իրանի տարածքում հայերին ազատ գործելու հնարավորություն տալու համար:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բայրուրյան Վ. 2003**, Իրան-Ադրբեջան, հարևաններ, թե՛ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, ՄՄԱԵԺ, Հ. 22, Երևան, էջ 7-38:
- Էնայթոլլա Ռ. 2003**, Առանը հնագույն ժամանակներից մինչև մոնղոլները, Երևան, 230 էջ:
- Իսրայելյան Ա.**, Իրանի կրոնական քաղաքականությունն Ադրբեջանի նկատմամբ, ՄՄԱԵԺ, Հ. 30, 2016, էջ 199-215:
- Аветисян Г. 2014**, История формирования этнической идентичности у населения Иранского Азербайджана в XIX-XX вв., Ереван, .

- Официальный Баку ведет антииранскую пропаганду против территориальной целостности Ирана.** <https://bit.ly/2UDrDRR>, (دشمن 27 دسامبر 2020).
- Cornell S. 2011,** Azerbaijan Since Independence, New York, 485 p.
- Elling R. 2013,** Minorities in Iran Nationalism and Ethnicity after Khomeini, New York, Palgrave Macmillan, 276p.
- Shaffer B. 2010,** The formation of Azerbaijani collective identity in Iran, Nationalities Papers, Vol. 28, No. 3, pp. 449-477.
- Sadri H., Entessar N. 2009,** Iranian - Azeri Dynamic relation: Conflict and corporation in in Southern Caucasus, 65 Rivista di Studi Politici Internazionali, Nuova Serie, Vol. 76, No. 1 (301), Gennaio-Marzo, pp. 59-79.
- Representative Rohrabacher Introduces Resolution Encouraging the Partition of Iran** <https://paaia.org/CMS/representative-rohrabacher-introduces-resolution-encouraging-the-partition-of-iran.aspx>, (دشمن 27 دسامبر 2020).
- Resolution expressing the sense of the House of Representatives that the Broadcasting Board of Governors should broadcast and direct Azeri language content into the Islamic Republic of Iran.** <https://www.congress.gov/bills/113/13th-congress/house-resolution/183/text>, (دشمن 27 دسامبر 2020).
- Azerbaijan and Think Tanks.** <https://www.nytimes.com/interactive/2014/09/07/us/07thinktank-docs4.html>, (دشمن 27 دسامبر 2020).
- صادقی نیا حمدالله،** آذربایجان از منظر ناسیونالیسم ایرانی، اصفهان، شماره 2، ص. 106-87 // Sadeghi Nia H., Azerbaijan az manzar-e nasionalism-e Irani, Esfahan, 1388, Shomare 2, s. 87-106.
- اتابکی تورج،** ناسیونالیسم ایرانی و آذربایجان، گفتگو 1381 شماره 33، ص 17-35 // Atabaki T., Nasionalism-e Irani va Azerbaijan, Goftegu, 1381, shomare 33, s. 17-35.
- احمدی حسین،** بررسی کتابهای درسی جمهوری آذربایجان، مطالعات ملی، شماره 2/12، 184-157 // Ahmadi H., Barresi ketabhaye darsi Jomhuri-e Azerbaijan, Motaleat-e melli, shomare 12/2, 1990, s. 184-157.
- احمدی حسین،** جمهوری آذربایجان. 22 سال تکلیف برای دولت و ملت سازی، تهران 374 // Ahmadi H., Jomhuri-e Azerbaijan, 22 sal takapu baraye doulat va melat sazi, Tehran, 2015, s. 374.
- غلی پور آذر،** بررسی نشانگاه های اطلاعاتی - امنیتی رژیم مسیونیستی در جمهوری آذربایجان و امنیت ملی جمهوری اسلامی ایران، شماره 78، 1393، ص. 176-149 // Gholi Pour Azar, barresi-e. neshangah haye etelaati-amniati-e



- rezim-e Sehyonisti dar Jomhuri-e Azerbaijan va amniyat-e melli-e Jomhuri-e Eslami-e Iran, shomareye 78, 1393, s. 149-176.
- زینب محمّد پور، بررسی علل قیام شیخ محمد خیابانی در تبریز، تاریخنامه خوارزمی، 1392، ص 99-134 / Zeinab Mohammad Pour, Barresi-e elal-e Gham-e Sheikh Mohammad Khiabani dar Tabriz, Tarikhnameye Khorezmi, shomare 1, 1392, s. 99-134.
- «Mardomsalari» newspaper, No: 5014, 11 Nov 2019, p. 2.
- بررسی کتاب های درسی جمهوری آذربایجان <https://bit.ly/39x9sU79/> Barresi-e ketabhaye darsi-e Jomhuri-e Azerbaijan (مردوم 26 دماروئ، 2020).
- لها م علی اف در مراسم افتتاحیه سومین همایش به اصطلاح آذربایجانی های جهان // Elham Aliev dar marasem-e efitahiehaye sevomin hamayesh be estelah Azarbayjanihaye jahan sokharrani kard, 2011, <http://fa.arannews.com/News/23878/>, (مردوم 26 دماروئ 2020).
- // اشاره مجیدامین رسولزاده بر جعلی بودن نام جمهوری آذربایجان Eshareye Mamed Amin Rsulzade bar jaali budan nam-e Jomhuri-e Azerbaijan <https://bit.ly/2Q11XXH> (مردوم 26 دماروئ، 2020).
- // جمهوری اسلامی به محتوای کنگره دوم آذربایجانی های جهان اعتراض کرد. 2006 // Jomhuri-e Eslami be mohtavaye kongereye dovom Azarbayjani haye jahan eteraz kard, <https://www.radiofarda.com/a/277367.html>, (مردوم 26 دماروئ، 2020).
- // درخواست پارلمان جمهوری آذربایجان به تغییر نام این کشور به آذربایجان شمالی // Darxhast-e parlem-an-e Jomhuri-e Azerbaijan be taghiir nam-e in keshvar be Azerbaijan-e Shomali, 2011, <https://www.icana.ir/Fa/News/189088/>, (26 دماروئ، 2020).
- // طرح تشکیل استان آذربایجان شمالی کابده خورده Azerbaijan-e Shomali kelid khord, 2017, <http://www.aharnews.ir/26475/>, (مردوم 26 دماروئ، 2020)
- // پیام تبریک نوروزی نماینده مجلس شورای اسلامی به مردم جمهوری آذربایجان Payam-e tabrik-e novruzi-e nemayandeye Majles be mardom-e Azerbaijan, 2011, <http://fa.arannews.com/News/36922/> (مردوم 26 دماروئ، 2020).

- افشای نقش باکو در تجزیه ایران و طرح آمریکایی  
tazkiye Iran va tarh-e Amrikayi 2013,  
<https://www.tabnak.ir/fa/news/314619/>, (մուտք՝ 26 մարտի,  
2020).
- فیروز آبادی، خطاب به الهام علی‌اف: بیداری مردم قابل سرکوب نیست  
khatab be Elham Aliev: Bidari-e mardom ghabel-e sarkub nist,  
2011, <https://www.isna.ir/news/9005-12364/>, (մուտք՝ 26  
մարտի, 2020).
- به دستور الهام علی‌اف برای جمهوری باکو تاریخ جدید نوشته می‌شود  
Be دستور الهام علی‌اف برای جمهوری باکو تاریخ جدید نوشته می‌شود  
Elham Aliev baraye Jomhuri-e Baku tarikh-e jadid neveshte mi  
shaved. 2016, <https://bit.ly/2Jh5Zb1>, (մուտք՝ 26 մարտի 2020)
- Yaqub Mahmudov: Azərbaycan tarixi yenidən yazılır,  
[http://qaynarinfo.az/az/yaqub-mahmudov-azerbaycan-tarixi-  
yeniden-yazilir/](http://qaynarinfo.az/az/yaqub-mahmudov-azerbaycan-tarixi-yeniden-yazilir/), (մուտք՝ 26 մարտի 2020).
- Hansı mədəvi haqla Azərbaycana ağıl verisən?,  
<http://www.baymedia.az/news/politics/3589.html>, (մուտք՝ 26  
մարտի, 2020).
- 2012-ci il 1 oktyabr tarixli iclasın stenogramı,  
<http://www.meclis.gov.az/?az/stenogram/311>, (մուտք՝ 26  
մարտի, 2020).
- Heydər Əliyev İrandan Gisas Alir, 1999, <https://bit.ly/3cMfDWA>,  
(մուտք՝ 26 մարտի, 2020).
- Yusufi M., iran və fars govenizmi, Baku, 2009, pp 3-41.

**Արմեն Իսրայելյան, ք.գ.թ.,**  
«ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,  
Իրանի բաժին, գիտաշխատող  
- Millions Watch Popular Egyptian Talk Show on the Armenian Genocide**, September 10, 2013  
<http://asharez.com/113717/millions-watch-popular-egyptian-talk-show-on-the-armenian-genocide/>
- Turkey begins deploying troops to Libya, says Erdogan**,  
05.01.2020, <https://www.dw.com/en/turkey-begins-deploying-troops-to-libya-says-erdogan/a-51894454>
- Turkish-Emirati tensions continue to simmer**, 04.05.2020,  
<https://www.mei.edu/blog/turkish-emirati-tensions-continue-simmer>
- Melman Y., Israel's Refusal to Recognize the Armenian Genocide Is Indefensible**, Foreign Policy, 24.04.2019,  
<https://foreignpolicy.com/2019/04/24/israels-refusal-to-recognize-the-armenian-genocide-is-shameful-and-immoral-netanyahu-turkey-azerbaijan-vad-vashem-tsitsernakaberd/>
- Shugaryan R. R. 2016**: Contemporary History and Methodology of International Mediation of Armenian-Turkish Relations, Dissertation, 07.00.02 World History, International Relations, applicant for candidate of sciences in history, IOS NAS RA, p. 194.
- Terzyan A. 2016**: The Evolution of Armenia's Foreign Policy Identity: The Conception of Identity Driven Paths. Friends and Foes in Armenian Foreign Policy Discourse, October 2016 in Book: Values And Identity as Sources of Foreign Policy in Armenia and Georgia, 145-183.
- «هل كالتة» بتوكليا... الإمارات تحو الاعتراف ب«الإبادة الأرمنية»  
[https://al-akhbar.com/Arab\\_Island/266368](https://al-akhbar.com/Arab_Island/266368) 16. 02. 2019

مجلس الشعب يتبنى بالإجماع قراراً بدين ويفر جريمة الإبادة الجماعية 15 شباط/2020  
الموثقة بحق الأرمن على يد الدولة العثمانية  
<http://www.parliament.gov.sy/arabic/index.php?node=554&nid=21625&First=0&Last=449&CurrentPage=1&mid=&refBack=>  
Президент Али-Асад принял главу МИД Армении Налбандяна, 27.05.2015, <https://www.sana.sy/ru/?p=38252>

**Mushegh Ghabriyan - PhD,**  
*Institute of Oriental Studies NAS RA,*  
*Department of Arab Countries, Researcher,*  
[mghabriyan@yahoo.com](mailto:mghabriyan@yahoo.com)

## **ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԱՐԱՔԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ**

**Բանալի բառեր՝** Հայոց ցեղասպանություն, արաբական երկրներ, Հայաստան, Թուրքիա, արտաքին քաղաքականություն:

2020 թ. փետրվարին Սիրիայի խորհրդարանում Հայոց ցեղասպանության ճանաչումը Հայաստանի հասարակական-քաղաքական, գիտական շրջանակներում աշխուժացրին արաբական երկրներում ցեղասպանության ճանաչման գործընթացի վերաբերյալ քննարկումները: Սիրիան դարձավ արաբական աշխարհի երկրորդ երկիրը Լիբանանից հետո, որն օրենսդիր մարմնի մակարդակով ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

Վերջին մի քանի տարիներին արաբական մի շարք երկրներում հասարակական, քաղաքական մակարդակներում Հայոց ցեղասպանության հարցի քննարկումները նկատելիորեն հաճախակիացել են:

Այս հոդվածում փորձ է արվում ներկայացնել Հայոց ցեղասպանության ճանաչման հետ կապված միտումները արաբական երկրներում, քննարկել խնդրի շուրջ արաբական երկրների դիրքորոշումների ձևավորման վրա ազդող գործոնները և Հայաստանի վարած քաղաքականությունը:

**Մուշեղ Ղահրիյան, պ.գ.թ.,**  
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,  
Արաբական երկրների բաժին,  
գիտաշխատող,  
mghahriyan@yahoo.com

ՍԱՌՈՂՅԱՆ ԱՐԱՔԻԱՆ ԵՎ «ԱՐԱՔԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ»,  
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆԶԵՎ  
ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ (2011-2013 թթ.)<sup>\*</sup>

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

**Բանալի բառեր<sup>\*</sup>** Սառույան Արաքիա, «արարական գարուն», հեղափոխություն, հակահեղափոխություն, անվրանգություն, երկակի չափորոշիչներ, «Մոսուլման եղբայրներ», ապստամբներ, շիաներ, քիհադական, Արաքական պետությունների լիգա, Իրան, Սիրիա, Եգիպտոս, Լիբիա:

Սառույան Արաքիան արարական այն երկրներից է, որը, ընդհանուր առմամբ, գերծ մնաց «արարական գարնան» վայրիվերումներից, չհաշված երկրի արևելյան շրջաններում սկիզբ առած բողոքի գործողություններն ու առանձին սոցիալական դժգոհությունները: Հողվածի խնդիրներից է՝ վեր հանել Սառույան Արաքիայում «արարական գարնան» գործընթացի առանձնահատկությունները, թագավորական ընտանիքի կենսունակությունը երկրի կայունությունը պահպանելու հարցում, մյուս կողմից, առանձին արարական երկրներում ներքաղաքական անկայունությանն աջակցելու սառույական արտաքին քաղաքականության ուղենիշները: Ցանկանալով ամեն զեռով պահպանել կայունությունը թե՛ սեփական երկրում, թե՛ Ծոցի փարածաշրջանում, մասնավորապես Բահրեյնում, Սառույան Արաքիան, միևնույն ժամանակ, աջակցեց Լիբիայում Մոամար Կադաֆիի և Սիրիայում

<sup>\*</sup> Հողվածը ներկայացվել է 14.06.2020: Գրայնություն է 13.08.2020:

Բաշար Ալ-Ասադի վարչակարգերի ընդդիմադիր ուժերին: Իսկ հետագայում, 2015 թ., Սաուդյան Արաբիան ներգրավվեց Եմենի քաղաքացիական պատերազմում և ղեկավարեց արաբական դաշինքը՝ ընդդեմ շիա-գեոդիական (հուսիական) ուժերի: Իրարում նույնպես Սաուդյան Արաբիան շարունակեց աջակցել սուննի-սալաֆիական ուժերին: «Արաբական գարնան» արդյունքում Սաուդյան Արաբիայի և Իրանի միջև փասնամակներ ի վեր ծնավորված լարվածությունը նոր թափ ստացավ՝ սկիզբ դնելով մի շարք միջնորդավորված պատերազմների: Սաուդյան Արաբիան միջամտեց մի դեպքում արաբական երկրների «հզոր առաջնորդների» (strongmen) իշխանության պահպանմանը, մյուս դեպքում՝ վերջիններիս իշխանության փառալուսանը:

### **«Արաբական գարունը» Սաուդյան Արաբիայում**

«Արաբական գարնան» գործընթացներից արդեն տարիներ անց ակնհայտ է, որ արաբական պահպանողական՝ թագավորական վարչակարգերը լավագույնս դիմագրավեցին ժամանակի վայրիվերումներին: Մոցի տարածաշրջանի արաբական պահպանողական միապետությունների համար ամենալարևոր խնդիրներից մեկը միշտ էլ եղել է անվտանգությունը: Արդեն 1981 թ. ստեղծված Մոցի համագործակցության խորհրդի (ՄՀԽ) իրական նպատակը ոչ միայն համագործակցության սերտացումն էր ամենատարբեր ոլորտներում, այլև Իրանից եկող մարտահրավերները դիմագրավելը<sup>1</sup>: Կազմակերպության շրջանակներում ստեղծվեց պաշտպանական նպատակներ հետապնդող «Թերակղզու վահան» ռազ-

<sup>1</sup> See Valeri 2015: 38–45.



մական կառույցը: 1990 թ. օգոստոսի 2-ին Իրաքի հարձակումը Քուվեյթի վրա և այդ երկրի գրավումը փաստեց, որ քնական ռեսուրսներով հարուստ Մոցի միապետություններն անկարող էին ապահովել սեփական անվտանգությունը: Փաստացիորեն, Մոցի երկրների ազգային անվտանգության հիմնական երաշխավորները շարունակում էին մնալ Արևմուտքն ու ԱՄՆ-ը, որոնք քաղաքական և տնտեսական լայն հետաքրքրություններ ունեին տարածաշրջանում<sup>2</sup>: «Արաբական գարնան» սկզբնական շրջանում արաբական բոլոր երկրներում, այդ թվում՝ Մոցի արաբական միապետություններում, լուրջ անհանգստություն կար անվտանգության հետ կապված: Որոշակի բացառություն էր կազմում աշխարհաքաղաքական մեծ նկրտումներ ունեցող Կատարը, որը իր «ալ-Ջազիրա» հեռուստաընկերությամբ և ամերիկյան ռազմավարական կենտրոնների հետ համագործակցությամբ, ըստ առկա տեղեկությունների, ուղղակիորեն ներգրավված է եղել «արաբական գարնան» գործընթացները խթանելու մեջ<sup>3</sup>:

Հեղափոխությունների ալիքը, որ տարածվեց սկզբում Թունիսում, ապա՝ Եգիպտոսում, Օմանում, Բահրեյնում, Քուվեյթում և այլն, լուրջ մտահոգություն առաջ բերեց Սաուդյան Արաբիայի իշխող վերնախավում: Պատահական չէ, որ իշխանությունն անմիջապես ձեռնամուխ

<sup>2</sup> **Ս. Վ. Ոսկանյան**, Սաուդյան Արաբիան և Իրանը Իրաքի դեմ կռաչիցին ուժերի ռազմական գործողությունների ընթացքում, <http://iraber.asj-sa.am/6515/1/108.pdf>, էջ 108-116 հասանելի է 14.06.2011

<sup>3</sup> **А. Н. Александрова**, Катар и Саудовская Аравия: отношения обостряются, 11 марта, 2014, <http://www.imes.ru/?p=26224> հասանելի է 14.06.2011:

ելավ սոցիալական սիրաշահման քաղաքականությանը<sup>4</sup>: 2011 թ. փետրվարի 22-ին, վերադառնալով երեք ամսյա բուժումից, Արդալլահ թագավորը (2005-2015 թթ.) հայտարարեց ցածր և միջին եկամուտներ ունեցող սառուցի քաղաքացիների համար սոցիալական աջակցության ծրագրերի մասին: Պետական ծառայողների աշխատավարձն ավելացավ տասնհինգ տոկոսով, գործազուրկներին տրվեցին նոր նպաստներ<sup>5</sup>: Արդեն մարտ ամսին Արդալլահ թագավորը խոստացավ առձեռն նվիրատվություններ և առանձնեց հինգ հարյուր հազար բնակարանների շինարարություն՝ ցածր գներով տրամադրվելու համար: Միայն բնակարանային շինարարության համար թագավորական ընտանիքը տրամադրեց 66.7 մլրդ ամերիկյան ամերիկյան դոլար<sup>6</sup>: Սոցիալական ապահովագրության ընդհանուր ծրագրերին հատկացված գումարը 2013 թ. ապրիլի կեսերին, ըստ «ալ-Արաբիայի», 99 մլրդ. դոլար էր: Բացի այդ, ավելացվեցին նաև թագավորական ընտանիքի օրինակարգությանն աջակցող ուլամային տրվող գումարները: 53 միլիոն ամերիկյան դոլար տրամադրվեց կրոնական այն հաստատություններին, որոնք ներգրավված էին Ղուրանի դասընթացներում և լրացուցիչ՝ 26.7 միլիոն ամերիկյան դոլար

<sup>4</sup> Bernard Haykel, Saudi Arabia and Qatar in a Time of Revolution, Gulf Analysis Paper, CSIS, February 19, 2013, [https://csis-website-prod.s3.amazonaws.com/s3fs-public/legacy\\_files/files/publication/130219\\_Haykel\\_SaudiQatar\\_GulfAnalysis.pdf](https://csis-website-prod.s3.amazonaws.com/s3fs-public/legacy_files/files/publication/130219_Haykel_SaudiQatar_GulfAnalysis.pdf) հասանելի է 14.06.2011:

<sup>5</sup> In Search of Stability. Saudi Arabia and the Arab Spring, Gulf Research Center Cambridge, 2013, [https://www.files.ethz.ch/isn/182104/GRM\\_Rieger\\_final\\_09-07-14\\_3405.pdf](https://www.files.ethz.ch/isn/182104/GRM_Rieger_final_09-07-14_3405.pdf) հասանելի է 14.06.2011:

<sup>6</sup> **Լույս տեղում:**

հատկացվեց իսլամական հետազոտություններով զբաղվող ինստիտուտներին<sup>7</sup>:

2011 թ. մարտի 14-ին թագավորական ընտանիքը գինված ուժեր և ռազմական տեխնիկա ուղարկեց Բահրեյն՝ օգնելու նման խնդրանքով հանդես եկած իշխող Ալ խալիֆա ընտանիքին՝ ճնշելու բահրեյնցի շիաների ցույցերը<sup>8</sup>: ԾՀՀ շրջանակներում Արաբական Միացյալ Էմիրությունները Բահրեյն ուղարկեց հինգ հարյուր հոգանոց ոստիկանական ուժեր: Դեպքերին նախորդել էր ԱՄՆ-ի կողմ Մանամային՝ դուրս րերել ռազմական ուժերը փողոցներից: Տույցերն ու բողոքի գործողությունները բավական զրագետ կերպով դեկավարում էին շիայական հասարակական-քաղաքական գործիչներն ու մի շարք կազմակերպություններ, ինչպես օրինակ՝ «Վիֆակը», «Ալ-Հակը» և այլն<sup>9</sup>:

Բահրեյնի ներքաղաքական խնդիրներին միջամտելու և շիայական քաղաքացիական ակտիվությունը ճնշելու շրջանում Սաուդյան Արաբիայի արևելյան նահանգներում սկիզբ առան համերաշխության գործողություններ Բահրեյնի շիաներին աջակցելու նպատակով: Սաուդցի շիաները, որոնք կրոնական, սոցիալական, ազգակցական և այլ կապեր ունենին Բահրեյնի շիաների հետ, դժգոհում էին ոչ միայն Բահրեյնում սաուդական զորքերի ներկայությունից: Շիա ցուցարարները պահանջում էին բարեփոխումներ իրականացնել շիայաբնակ

<sup>7</sup> **Լույս տեղում:**

<sup>8</sup> Gulf States Sent Forces to Bahrain Following Protests, 14 March, 2011, <https://www.bbc.com/news/world-middle-east-12729786> հասանելի է 14.06.2011:

<sup>9</sup> Bahrain: Unrest, Security, US Policy, Congressional Research Service, 2020, <https://fas.org/sgp/crs/mideast/95-1013.pdf> հասանելի է 14.06.2011:

երկրամասում, վերացնել շիաների նկատմամբ տասնամյակներ շարունակ գոյություն ունեցող տարաբնույթ խտրականությունները<sup>10</sup>:

Առաջին ընդլզումը տեղի ունեցավ Սամթահում՝ Ջիզան նահանգում, ինքնահրկիզմամբ, իսկ հետո Ջեդդայում 2011 թ. հունվարի վերջին տեղի ունեցան ելույթներ: Փետրվարին և մարտի սկզբներին հուզումներ տեղի ունեցան Կատիֆում, Հոֆուֆում, ալ-Ավամիայում և Էռ-Ռիպայում<sup>11</sup>: Հայտնի չիա ազդեցիկ հոգևորական Նիմր Ալ-Նիմրը, ով 2016 թ. հունվարի 2-ին մահվան դատապարտվեց սատղական իշխանությունների կողմից, իր հետևորդներին կոչ արեց մասնակցել ոչ բռնի շարժումներին<sup>12</sup>: Դեռևս 2009 թ. չիա հոգևորականը կոչոս քննադատության էր ենթարկել իշխանություններին՝ չիա ազգաբնակչության օրենքներն ու իրավունքները խախտելու համար<sup>13</sup>: Նշենք, որ 2011 թ.-ից մինչև 2013 թ. Արևելյան

<sup>10</sup> The Shiite Question in Saudi Arabia, Middle East Report No. 45, 19 September, 2005, International Crisis Group, [https://www.files.ethz.ch/isn/13612/045\\_shiite\\_question\\_saudi%20arabia.pdf](https://www.files.ethz.ch/isn/13612/045_shiite_question_saudi%20arabia.pdf) հասանելի է 14.06.2011:

<sup>11</sup> Molly Peterson, The Shi'a Spring: Shi'a Resistance and the Arab Spring Movement in the GCC States, Journal of Islamic and Middle Eastern Multidisciplinary Studies, volume 4, Issue 1, 2015, <https://ir.uiowa.edu/cgi/viewcontent.cgi?article=1058&context=matha><https://ir.uiowa.edu/cgi/viewcontent.cgi?article=1058&context=matha> հասանելի է 14.06.2011:

<sup>12</sup> **Tobby Mattheisen**, Domestic Source of Saudi Foreign Policy: Islamists and the State in the Wake of the Arab Uprisings, Project on US Relations with the Islamic World at Brookings, Rethinking Political Islam Series, August, 2015, [https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/07/Saudi-Arabia\\_Mattheisen-FINAL.pdf](https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/07/Saudi-Arabia_Mattheisen-FINAL.pdf) հասանելի է 14.06.2011:

<sup>13</sup> Saudi Government Crack Down on Shiite Dissidents, April 1, 2009, <https://www.sandiegocourieronline.com/sdut-ri-saudi-shiites-040109-2009apr01-story.html> հասանելի է 14.06.2011:

Նահանգի տարբեր քաղաքներում և այլ շրջաններում ժամանակ առ ժամանակ տեղի են ունեցել տարբեր քնույթի բողոքի գործողություններ, որոնք միշտ ավարտվել են ոստիկանական ուժերի կողմից իրականացված բռնի գործողություններով, ձերբակալություններով, քանտարկություններով ու զոհերով:

2011 թ. մարտի կեսին իշխանությունները ճարահատյալ հայտարարեցին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության մասին, որը հետաձգվել էր 2009 թվականից: Հիշեցնենք, որ առաջին անգամ Սաուդյան Արաբիայում ՏԻՄ ընտրություններ տեղի են ունեցել 2005 թ.<sup>14</sup>: 2011 թ. սեպտեմբերին, երկրորդ անգամ հետաձգվելուց հետո, ՏԻՄ ընտրությունները կայացան<sup>15</sup>: Արդյալի թագավորը հայտարարեց, որ 2015 թ. ՏԻՄ ընտրություններին կանայք ոչ միայն կկարողանան քվեարկել, այլև՝ առաջադրվել<sup>16</sup>: 2013 թ. առաջին անգամ կանայք Նշանակումներ ստացան Շուրայի խորհրդում: 150 անդամներից 30-ը կանայք էին<sup>17</sup>: 2011 թ. մինչև 2013 թ. «արաբական գարնան» արդյունքում ի հայտ եկած դժգոհությունների շրջանակներում շարունակվեցին վարորդական իրավունք ձեռք բերելու կանանց շար-

<sup>14</sup> The Municipal Elections in Saudi Arabia, <https://www.arab-reform.net/publication/the-municipal-elections-in-saudi-arabia-2005/> հասանելի է 14.06.2011:

<sup>15</sup> Q&A, Saudi Municipal Elections, September 28, 2011, <https://www.bbc.com/news/world-middle-east-15089937> հասանելի է 14.06.2011:

<sup>16</sup> Women in Saudi Arabia to Vote and Run in Elections, 25 September, September 25, 2011, <https://www.bbc.com/news/world-us-canada-15052030> հասանելի է 14.06.2011:

<sup>17</sup> Saudi Women Voices in Shoura Council Continue to be Heard, <https://www.arabnews.com/node/1261581/saudi-arabia> հասանելի է 14.06.2011:

ժամները, որոնք լուսաբանվում էին միջազգային մամուլում<sup>18</sup>:

Սեփական երկրում ի հայտ եկած դժգոհությունների այլքը հաղթահարելուն զուգահեռ, Սաուդյան Արաբիան աջակցեց, որպեսզի ԾՀԽ շրջանակներում ֆինանսական և այլևայլ օգնություններ ստանան դրա կարիքն ունեցող անդամ պետությունները, ինչպես օրինակ՝ Բահրեյնը և Օմանը: ԾՀԽ-ն աջակցեց Հորդանանին և Մարոկոյին<sup>19</sup>, որոնց, ի դեպ, հրավեր էր ուղարկվել՝ անդամակցել կառույցին<sup>20</sup>: Երկրում սոցիալական ծրագրերի ներդրմամբ և ուստիկանական ուժերի կոպիտ օգտագործմամբ թագավորական ընտանիքին հաջողվեց կանխել իշխանությանը սպառնացող վտանգները:

### ***Սաուդական աջակցությունը Եգիպտոսին***

Արաբական աշխարհում ծավալվող հեղափոխական գործընթացների հարցում Սաուդյան Արաբիան դրսևորեց երկակի չափորոշիչներ: Օրինակ, ամեն կերպ աջակցեց Մուբարաքի վարչակարգին՝ քաղաքական, դիվանագիտական, ֆինանսական և այլևայլ միջոցներով: Էռ-Ռիյադը նույնիսկ փորձեց ամերիկյան վարչակարգին համոզել աջակցել Մուբարաքի վարչակարգին այն քա-

<sup>18</sup> Saudi Woman set to drive in protest and to show their rising clout, October 25, 2013,

<https://www.washingtonpost.com/news/worldviews/wp/2013/10/25/saudi-women-set-to-drive-in-protest-and-to-show-their-rising-clout/> հասանելի է 14.06.2011:

<sup>19</sup> Gulf Council Reaches out to Morocco and Jordan, May 25, 2011, <https://www.nytimes.com/2011/05/26/world/middleeast/26iht-M26-GCC.html> հասանելի է 14.06.2011.

<sup>20</sup> **Luigi Narbone**, The Gulf Region Beyond the Arab Spring: Changes and Challenges, European University Institute, 2015, p. 64 հասանելի է 14.06.2011:

նից հետո, երբ այլևս հստակ էր, որ նախագահ Օբաման հրաժարվում է սատարել հին դաշնակցին և առաջարկում է նրան հեռանալ: Բնականաբար, Սաուդյան Արաբիան մտավախություն ուներ, որ նույն կերպ Վաշինգտոնը կարող է վարվել ՕՀԽ երկրների իր դաշնակիցների հետ: Մտահոգություն կար, որ Եգիպտոսում Մուբարաքի անկումը կարող էր խախտել տարածաշրջանային հավասարակշռությունն ու կայունությունը: Սաուդյան Արաբիայի համագործակցությունը Եգիպտոսի հետ շրջափելի նշանակություն ուներ Իրանի դեմ հակազդեցություն ծավալելու հարցում: Եգիպտոսը տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից կարևորագույն նշանակություն ուներ և պատահական չէ, որ նույնիսկ Մուբարաքի իշխանափոխությունից հետո Սաուդյան Արաբիան 4 մլրդ. ամերիկյան դոլարի ֆինանսական աջակցություն ցույց տվեց Եգիպտոսին՝ ցանկանալով օգնել Կահիրեին՝ դիմագրավելու դժվարությունները<sup>21</sup>:

Հընթացս, Էո-Ռիչարդին մտահոգում էր ոչ պակաս կարևոր այլ հարց ևս՝ կապված Եգիպտոսում «Մուսուլման եղբայրների» իշխանություն գալու հեռանկարի հետ: Սաուդյան Արաբիան պատմական տարբեր ժամանակաշրջաններում գաղափարական և մարտավարական բազմաթիվ հակասություններ է ունեցել շարժման հետ, որին միջազգային ասպարեզում լայնորեն աջակցում և ֆինանսավորում է Կատարը<sup>22</sup>: «Արաբական գարնան» սկզբնական շրջանում Սաուդյան Արաբիան և Արաբա-

<sup>21</sup> **Rene Rieger**, *In Search of Stability: Saudi Arabia and the Arab Spring*, Gulf Research Center, Cambridge, 2013, [https://www.files.ethz.ch/isn/182104/GRM\\_Rieger\\_final\\_09-07-14\\_3405.pdf](https://www.files.ethz.ch/isn/182104/GRM_Rieger_final_09-07-14_3405.pdf) հասանելի է 14.06.2011:

<sup>22</sup> Տե՛ս **Andreotti** 2013: 87-112.

կան Միացյալ Էմիրությունները ճնշումներ էին քանեցնում ԾՀԽ այլ պետությունների վրա, որպեսզի վերջիններս հետապնդեն «Մուսուլման եղբայրներին»՝ ձգտելով տարածաշրջանում ստեղծել անվտանգային կայուն միջավայր<sup>23</sup>։ Մասնավորապես, 2017 թ. հունիսին «Մուսուլման եղբայրներ» շարժման հարցը հեթոթական անգամ դարձավ Սաուդյան Արաբիայի և Նրա տարածաշրջանային դաշնակիցների՝ Կատարի հետ դիվանագիտական հարաբերությունների խզման պատճառներից մեկը։ Էռ-Ռիյադը մտավախություն ուներ, որ եզիպտոսում իշխանության գալով՝ «Մուսուլման եղբայրները» կարող էին չեղարկել Իսրայելի հետ Քեմփ-Դևիդի խաղաղության պայմանագիրը<sup>24</sup>, սերտացնել հարաբերությունները Իրանի, «Համասի» և «Հիզբալլահի» հետ, որի արդյունքում եզիպտոսը դուրս կգար Թեհրանի դեմ հակազդեցության այն առանցքից, որի մաս էին Մոցի արաբական պահպանողական միապետությունները։ Միևնույն ժամանակ, կարևոր է նկատի ունենալ, որ չնայած Մոցի երկրները որոշ չափով զգուշանում էին Իրանից, սակայն ԾՀԽ-ի շրջանակներում Իրանի նկատմամբ ամենակոշտը Սաուդյան Արաբիայի դիրքորոշումն է։ 2012 թ. եզիպտոսում «Մուսուլման եղբայրների» իշխանության գալուց և Մուհամմադ Մուրսիի նախագահ ընտրվելուց հետո Էռ-Ռիյադը պաշտոնական հրավեր ուղարկեց վերջինիս։ 2012 թ. Մուրսիի առաջին արտերկրյա պաշտոնական այցելության ուղղությունը դարձավ Սաուդյան Արաբիան։ 2012 թ. հուլիսին Նրան ընդունեցին Աբդալ-

<sup>23</sup> Hedges, Cafiero 2017: 129.

<sup>24</sup> Saud Mousaed Al-Tamamy 2012: 146-56, 149.



լիս թագավորը և թագաժառանգ Ասլանը<sup>25</sup>: Մուրսին ՍԱԹ-ում կատարեց նաև ումրա՝ ուխտագնացություն սրբազան վայրեր: Ամեն պարագայում, ստատուս քվոյի փոփոխություն տեղի չունեցավ: Եգիպտոս-Իրան հարաբերությունները շարունակվեցին որոշ չափով լարված մնալ: Չփոխվեց նաև Եգիպտոսի դիրքորոշումը ԱՄՆ-ի և Իսրայելի նկատմամբ: 2012-2013 թթ. Էռ-Ռիյադը չարունակեց ներդրումներն ու աջակցության ծրագրերը Եգիպտոսում: Ամեն պարագայում, չնայած նորմալ հարաբերություններին, երկու սրբավայրերի պահապանը մինչև Մուհամմադ Մուրսիի իշխանության ավարտը՝ 2013 թ., երբ զինվորականները երկրում իրականացրեցին ռազմական հեղաշրջում, զգուշությամբ էր մոտենում Կահիրեին:

2014 թ. մայիսին նախագահական ընտրությունների արդյունքում 97 տոկոս ծայներ հավաքած Աբդել Ֆաթահ Ալ-Սիսիի իշխանության գալուց հետո Էռ-Ռիյադի մտահոգությունները, կարելի է ասել, փարատվեցին: Ալ-Սիսին նախագահ Մուրսիի օրոք լինելով երկրի պաշտպանության նախարարը՝ կարողացավ իշխանություններից դժգոհ մյուս ուժերի հետ միասին հեռացնել Մուրսիին և երկրով մեկ ճնշել «Մուսուլման եղբայրների» հուզումները: Ի դեմս Ալ-Սիսիի Էռ-Ռիյադն ունեցավ մի նոր՝ «հզոր առաջնորդ»՝ strongman, որին կարելի էր վստահել: ՍԱԹ-ը 12 մյոդ. ամերիկյան դոլար օգնություն հատկացրեց Եգիպտոսին՝ հորդորելով ԱՄԷ-ին և Քուվեյթին նույնպես միանալ աջակցությանը: Հեղաշրջումից սկսած

<sup>25</sup> Egypt's Mursi to Saudi Arabia on first trip as president, July 08, 2012, <https://www.arabnews.com/saudi-arabia/egypt%27%80%99%-mursi-saudi-arabia-first-trip-president> հասանելի է 14.06.2011:

Շոցի երեք միապետություններից Կահիրեն փաստորեն ստացավ 30 մլրդ. ամերիկյան դոլարի օգնություն<sup>26</sup>:

**Սաուդական աջակցությունը լիբիական և սիրիական ապստամբական շարժումներին**

Որոշակիորեն այլ մոտեցում ունեցավ Սաուդյան Արաբիան 2011 թ.-ից ի վեր Լիբիայում և Սիրիայում ընթացող գործընթացներին: Երկու դեպքում էլ Էռ-Ռիյադն աջակցեց իշխանափոխությանը ամենակոշտ ձևով: Լիբիեյում արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) ամենաազդեցիկ անդամներից մեկը, Էռ-Ռիյադը կազմակերպությունը ծառայեցրեց իր շահերին և հետաքրքրություններին: Մասնավորապես 2011 թ. նախորդող շրջանում Կադաֆին Էռ-Ռիյադի հետ ուներ որոշակի հակասություններ՝ կապված Սաուդյան Արաբիայի ամերիկամետ և արևմտամետ արտաքին քաղաքական ուղենիշերի հետ: Առանց Սաուդյան Արաբիայի միջամտության 2011 թ. փետրվարին 22-ին ԱՊԼ-ն չէր կասեցնի Լիբիայի անդամակցությունը կազմակերպությանը՝ պառճառաբանելով, որ լիբիական վարչակարգը բռնություն է կիրառում սեփական ժողովրդի դեմ<sup>27</sup>: Մարտի 12-ին Արաբական պետությունների լիգան մեկ այլ որոշմամբ խնդրեց ՄԱԿ-ին՝ Լիբիան հայտարարել ոչ թռիչքային գոտի<sup>28</sup>: Չնայած ՍԱԹ-ը չմասնակցեց ՄԱԿ-ի հովանու ներքո ՆԱՏՕ-ի՝ մարտի 19-ին Լիբիայում իրականացված ռազ-

<sup>26</sup> **Mohammed Bazi**, *The Biggest Winners of the Arab Spring? Dictators*, October 09, 2015, <https://www.themation.com/article/archive-the-biggest-winners-of-the-arab-spring-dictators/> հասանելի է 14.06.2011:

<sup>27</sup> Arab League Suspend Libya as Deadly Crackdown Persists, February 22, 2011, <https://www.haaretz.com/1.5126567> հասանելի է 14.06.2011:

<sup>28</sup> Arab League Asks U.N. for No Fly Zone over Libya, March 12, 2011, [https://www.washingtonpost.com/world/Arab-league-asks-un-for-no-fly-zone-over-libya/2011/03/12/AR01e0R\\_story.html](https://www.washingtonpost.com/world/Arab-league-asks-un-for-no-fly-zone-over-libya/2011/03/12/AR01e0R_story.html) հասանելի է 14.06.2011:

մական գործողությանը, դրան մասնակցեցին ԱՄԷ-ն, Կատարը և Հորդանանը: ԱՄԹ-ը ձեռնամուխ եղավ լիբիական ապստամբների զինմանը<sup>29</sup>: Ի վերջո միջազգային դաշինքի օգնությամբ լիբիացի ապստամբները հաղթեցին: 2011 թ. հոկտեմբերի 20-ին Մուամար Կադաֆին սպանվեց, իշխանությունը ստանձնեց Ազգային անցումային խորհուրդը:

Սաուդյան իշխանությունների համար անընդունելի էր Բաշար Ալ-Ասադի վարչակարգի վարած տարածաշրջանային քաղաքականությունը: Երկու սրբավայրերի պահպանին միշտ էլ անհանգստացրել է Թեհրան-Դամասկոս-Հիզբալլահ համագործակցությունը: 2005 թ. Բեյրութում Ռաֆիկ Ալ-Հարիրիի սպանությունը մեծ դժգոհություն առաջացրեց ԱՄԹ-ում, որտեղ վերոհիշյալ իրադարձությունների աննշտությամբ մեղավոր էին համարում նաև Դամասկոսին: 2020 թ. Սաուդյան Արաբիան սպանության մեջ հիմնական մեղավոր համարեց իրանական միլիցիաներին<sup>30</sup>:

Հակակառավարական գործողությունների սկզբում ԱՄԹ-ն աջակցեց Բաշար Ալ-Ասադին, այս մասին խոսեց Աբդալլահ թագավորը: Սակայն սա շատ ձևական էր, քանի որ ուրբաթօրյա կրոնական միջոցառումների ժա-

---

<sup>29</sup> Rene Rieger. *In Search of Stability: Saudi Arabia and the Arab Spring*. Gulf Research Center, Cambridge, 2013. [https://www.files.ethz.ch/isn/182104/GRM\\_Rieger\\_final\\_09-07-14\\_3405.pdf](https://www.files.ethz.ch/isn/182104/GRM_Rieger_final_09-07-14_3405.pdf), p. 13 հասանելի է 14.06.2011:

<sup>30</sup> Iranian militias assassinated Lebanon's Rafik Hariri: Saudi Deputy Defence Minister, February 16, 2020, <https://www.arabnews.com/node/1628516/middle-east> հասանելի է 14.06.2011:

մանակ ապստամբների համար աղոթք էր հնչեցվում<sup>31</sup>: Որոշ ժամանակ անց լուրջություն պահպանելուց հետո Արդալլահ թագավորը զգուշացրեց Ասադին ուժ չկիրառել սեփական ժողովրդի դեմ, բարեփոխումներ իրականացնել, դադարեցնել արյունահեղությունը բանի դեռ ուշ չէ<sup>32</sup>: 2011 թ. օգոստոսի սկզբին Աստղյան Արաբիան հետ կանչեց Դամասկոսից իր դեսպանին: Սիրիայի պարագայում ևս Արաբական պետությունների լիգան գործիք դարձավ ՍԱԹ-ի համար: 2011 թ. նոյեմբերի 12-ին ԱՊԼ-ն կասեցրեց Սիրիայի անդամակցությունը<sup>33</sup>: Աստիճանաբար, ՍԱԹ-ը դարձավ Բաշար Ալ-Ասադին ընդդիմադիր ուժերին հովանավորող պետություններից մեկը՝ բացի Թուրքիան, Կատարը և այլք: 2012 թ. գարնանը Կատարի հետ միասին ՍԱԹ-ը ռազմական և այլևայլ աջակցություն տրամադրեց սիրիական ապստամբներին<sup>34</sup>: Ըստ առանձին տեղեկությունների՝ սիրիացի ապստամբները զենքի առաջին խմբաքանակները սաուդական կողմից ստացել են արդեն 2012 թ. դեկտեմբերին<sup>35</sup>:

<sup>31</sup> **Neil MacFarquhar**, Saudi Arabia Scrambles to Limit Region's Upheaval, May 27, 2011, [http://www.nytimes.com/2011/05/28/world/middleeast/28saudi.html?\\_r=0](http://www.nytimes.com/2011/05/28/world/middleeast/28saudi.html?_r=0) հասանելի է 14.06.2011:

<sup>32</sup> Saudi Arabia recalls Syria envoy as Assad defends crackdown, August 08, 2011, <http://english.ahram.org/NewsContent/2/8/18326/World/Region/Saudi-Arabia-recalls-Syria-envoy-as-Assad-defends.aspx> հասանելի է 14.06.2011:  
<sup>33</sup> Syria Suspended from Arab League, November 12, 2012, <https://www.theguardian.com/world/2011/nov/12/syria-suspended-arab-league> հասանելի է 14.06.2011:

<sup>34</sup> **Hugh Naylor**, Syria Rebels Buy Arms with Gulf and US Help, May 17, 2012, <https://www.thenational.ae/world/mena/syria-rebels-buy-arms-with-gulf-and-us-help-1.396893> հասանելի է 14.06.2011:

<sup>35</sup> **C. J. Chivers and Eric Schmitt**, Saudis Step Up Help for Rebels in Syria With Croatian Arms, February 25, 2013,

Ապստամբներին օգնությունը շարունակվել է 2013 թ. նույնպես՝ ներառելով հակատանկային և հակահրթիռային զենքերի խմբաքանակներ<sup>36</sup>: Էռ-Ռիյադը Սիրիայում աստիճանաբար Իրանի դեմ ներքաշվեց միջնորդավորված պատերազմում: Իր հերթին, Թեհրանը սերտորեն համագործակցում և օժանդակում էր Դամասկոսին բոլոր հնարավոր միջոցներով: Իրանի համար Բաշար Ալ-Ասադի վարչակարգի գոյությունը կարևորագույն ռազմավարական նշանակություն ուներ՝ Մերձավոր Արևելքում իր ազդեցությունը պահպանելու և ընդլայնելու համար: Էռ-Ռիյադը բնականաբար աջակցում էր այն ուժերին, որոնք կապ չունեին «Մուսուլման եղբայրների» հետ, օրինակ, «Ազատ սիրիական բանակին»: «Մուսուլման եղբայրների» սիրիական թևը սիրիական ընդդիմության կարևոր հանգույցներից մեկն էր, եթե հաշվի առնենք նաև կառույցի ընդդիմադիր կեցվածքը և հակակառավարական զինված պայքարի փորձը Սիրիայում հատկապես 1970-ականներին և 1980-ականների սկզբներին, ինչն օրինակարգ էր դարձնում շարժումը սիրիական ընդդիմադիր դաշտում: Հատկանշական է, որ «Մուսուլման եղբայրները» դարձան Թուրքիայում ստեղծված «Սիրիայի ազգային դաշինքի» բաղկացուցիչ ուժերից մեկը, որոնց լայնորեն աջակցում էր թե՛ Թուրքիան, թե՛ Կատարը: Սաուդյան Արաբիայի աջակցությամբ 2013 թ. հուլիսին կառույցի նախագահ ընտրվեց աշխարհիկ համարում ունեցող Ալ-Ջարբան, ով հարթանակ տարավ

---

<https://www.nytimes.com/2013/02/26/world/middleeast/in-shift-saudis-are-aid-to-arm-rebels-in-syria.html> հասանելի է 14.06.2011:

<sup>36</sup> Ian Black, Saudi Arabia: Syria Rebels Must be Armed, June 25, 2013, <https://www.theguardian.com/world/2013/jun/25/saudi-arabia-syria-rebels-armed> հասանելի է 14.06.2011:

գործարար Մուստաֆա Սարադի դեմ<sup>37</sup>: Վերջինս առաջադրվել էր «Մուսուլման երբայրների» կողմից: Սիրիայում ՍԱԹ-ը չէր աջակցում նաև թշնամական հարաբերություններ ունեցող մեկ այլ ուժի՝ «ալ-Կաիդայի» ճյուղավորումներին: Այս հարցում, ինչպես հայտնի է, կար նաև աֆղանական պատերազմի փորձը, երբ մոջահիդներին ֆինանսավորելուց հետո ի հայտ եկավ սատուական իշխող ընտանիքի ամենակոչող քննդատներից մեկը՝ «ալ-Կաիդան»: 2013 թ. ից ՍԱԹ-ը Սիրիայում սկսեց աջակցել «ալ-Կաիդայի» հետ ընդդիմության մեջ գտնվող ջիհադական խմբերին: Սատուական աջակցությամբ 43 զինված խմբավորումներ, որոնք գործում էին Դամասկոսի շրջակայքում, 2013 թ. սեպտեմբերի 29-ին միավորվեցին «Ջեյշ ալ-Իսլամի» մեջ: Կառույցի ղեկավար դարձավ սատուամետ Ջահրան Ալլուշը, ով մինչև այդ համակարգում էր «Լիվան ալ-խլամ» ջիհադական խմբավորումը<sup>38</sup>:

Իսկ արդեն 2014 թ. Արդալլահ թագավորը և ուլաման զգուշացրեցին իրենց քաղաքացիներին՝ չմասնակցել ՍԱԹ-ի սահմաններից դուրս տեղի ունեցող պատերազմական գործողություններին: Փետրվարի 3-ին Արդալլահ թագավորի հրամանով՝ ՍԱԹ-ի քաղաքացիները կրանտարկվեն ընդհուպ մինչև 20 տարի օտար հակամարտություններին մասնակցելու և 30 տարի՝ ծայրահեղական ահաբեկչական խմբավորումներին անդամակցելու

<sup>37</sup> Saudi-Backed Jarba Defeats Qatar's Point Man in Syria Opposition, July 06, 2013, <https://middle-east-online.com/en/saudi-backed-jarba-defeats-qatar%E2%80%99s-point-man-syria-opposition> հասանելի է 14.06.2011:

<sup>38</sup> **Rene Rieger**, *In Search of Stability: Saudi Arabia and the Arab Spring*, Gulf Research Center, Cambridge, 2013, [https://www.files.ethz.ch/isn/182104/GRM\\_Rieger\\_final\\_09-07-14\\_3405.pdf](https://www.files.ethz.ch/isn/182104/GRM_Rieger_final_09-07-14_3405.pdf), p. 18, հասանելի է 14.06.2011:

համար<sup>39</sup>։ Բնական է, որ Սաուդյան Արաբիան չէր ցանկանա, որպեսզի իրենց քաղաքացիները ներգրավվեն այդ շրջանում Մերձավոր Արևելքում թափ հավաքող պատերազմների մեջ, որպեսզի հետո, ցիհադական գաղափարներով տոգորված, հայրենիք վերադառնալուց հետո գլխացավանք չդառնային իշխանությունների համար։

### **Եզրակացություն**

Վերլուծելով սաուդական վարչակարգի քաղաքական վարքաբանությունը «արաբական գարնան» առաջին տարիներին, հարկ է նկատել, որ Էռ-Ռիյադի քաղաքականությունը ոչ միանշանակ է, այն կարելի է բնութագրել որպես ռազմավարական, որը համապատասխանում է պետության ազգային շահերին և հետաքրքրություններին, միևնույն ժամանակ աչքի է ընկնում երկակի չափորոշիչներով։ Օրինակ, Բահրեյնում և Եգիպտոսում Սաուդյան Արաբիայի քաղաքականությունը հակահեղափոխական էր, միտված իշխող վարչակարգերի աջակցությանը, հեղափոխական գործընթացների հակազդեցությանը և ժողովրդական ցույցերի տապալմանը։ Երկու սրբավայրերի պահապանի քաղաքական և դիվանագիտական աջակցությունը Հոսնի Մուբարաքին մինչև 2011 թ. փետրվարի 11-ը վերջինիս հրաժարականը, հակահեղափոխական բնույթ ուներ։ Իշխող թագավորական ընտանիքն աջակցեց շիայական քաղաքացիական ակտիվության ճնշմանը Բահրեյնում՝ բազմակողմանի, այդ թվում՝ ռազմական օգնություն ցույց տալով Ալ Խա-

<sup>39</sup> Saudi King Orders Punishing Jihad Fighters, February 04, 2014, <https://www.thehindu.com/news/international/world/saudi-king-orders-punishing-jihad-fighters/article5651917.ece> հասանելի է 14.06.2011:

լիՖա թագավորական ընտանիքին: Օմանի պարագայում սկիզբ առած հուզումները կանխելու համար Սուլթան Կարուսին Էռ-Ռիյադը ֆինանսական աջակցություն տրամադրեց՝ ամրապնդելով նրա դիրքերը ստեղծված անկայուն իրավիճակում:

Մյուս կողմից, Էռ-Ռիյադը «արաբական գարնան» գործընթացների շրջանակներում պայքարեց Կատարի և Թուրքիայի կողմից աջակցություն ստացող «Մուսուլման եղբայրներ» շարժման դեմ եզիպտոսում: Սիրիայում և այլ շրջաններում Սաուդյան Արաբիան աջակցեց «Մուսուլման եղբայրների» հետ հակազդեցության մեջ գտնվող ուժերին՝ նախապատվությունը տալով սալաֆիներին: «Արաբական գարնան» գործընթացները հերթական լարվածությունն առաջ բերեցին Սաուդյան Արաբիա-Իրան հարաբերություններում՝ ձևավորելով արդեն հայտնի միջնորդավորված պատերազմներ: Իրանի դեմ Էռ-Ռիյադի հակազդեցությունն ավելի սուր ձևով դրսևորվեց հատկապես Բահրեյնում, Սիրիայում, Լիբանանում, Եմենում և Իրաքում՝ սուննիամետ ուժերի աջակցությամբ: Մյուս կողմից, սաուդական իշխող թագավորական ընտանիքը կարողացավ արդյունավետ ձևով հաղթահարել սեփական երկրում ի հայտ եկած դժգոհությունները և ոստիկանական ուժերով ճնշել հուզումները շիաներով քնակեցված արևելյան նահանգներում: Ընդհանրապես, իրավիճակը երկրում կայունացնել հաջողվեց ոչ թե քաղաքական բարեփոխումների, այլ կոշտ քայլերի և ֆինանսական ներդրումների միջոցով: Ամեն պարագայում, սաուդական վարչակարգն ի տարբերություն արաբական այլ երկրների, կարողացավ պահպանել սեփական իշխանությունը և ամրապնդել այն՝ ցուցաբերելով ճկունություն և կենսունակություն: Փաստացիոր-



րեն, Շոցի բռնապետությունները հաղթանակած դուրս եկան ճգնաժամից: Տասնամյակների ընթացքում ծեղք բերելով ազդեցիկ լծակներ նաև տարածաշրջանային կազմակերպություններում, ինչպես նաև ունենալով ֆինանսական, վարչական և այլապիսի անհրաժեշտ միջոցներ, Սաուդյան Արաբիան կարողացավ հաղթահարել ի հայտ եկած խնդիրները՝ հանդես բերելով կենսունակություն և ճկունություն:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ս. Վ. Ոսկանյան**, Սաուդյան Արաբիան և Իրանը Իրաքի դեմ կռաիցիոն ուժերի ռազմական գործողությունների ընթացքում, <http://raber.asj-qa.am/6515/1/108.pdf>, էջ 108-116:
- А. Н. Александрова**, Катар и Саудовская Аравия: отношения обостряются, 11 марта, 2014, <http://www.iimes.ru/?p=20224>
- Andreotti Sebastiano 2013**: The Ikwan Movement and its' Role in Saudi Arabia's State-Building, The Muslim Brotherhood and Saudi Arabia, State Formation and Identity in the Middle East and North Africa, K. Christie, M. Masad (Eds.), Palgrave Macmillan, pp. 87-112.
- Arab League Suspends Libya as Deadly Crackdown Persists**, February 22, 2011, <https://www.haaretz.com/1.5126567>
- Arab League Asks U.N. for No Fly Zone over Libya**, March 12, 2011, [https://www.washingtonpost.com/world/Arab-league-asks-un-for-no-fly-zone-over-libya/2011/03/12/ABojieOR\\_story.html](https://www.washingtonpost.com/world/Arab-league-asks-un-for-no-fly-zone-over-libya/2011/03/12/ABojieOR_story.html)
- Bahrain**: Unrest, Security, US Policy, Congressional Research Service, 2020, <https://fas.org/sgp/crs/mideast/25-1013.pdf>
- Bernard Haykel**, Saudi Arabia and Qatar in a Time of Revolution, Gulf Analysis Paper, CSIS, February 19, 2013, [https://csis-website-prod.s3.amazonaws.com/s3fs-public/legacy\\_files/files/publication/130219\\_Haykel\\_SaudiQatar\\_Gulf\\_Analysis.pdf](https://csis-website-prod.s3.amazonaws.com/s3fs-public/legacy_files/files/publication/130219_Haykel_SaudiQatar_Gulf_Analysis.pdf)
- C. J. Chivers and Eric Schmitt**, Saudis Step Up Help for Rebels in Syria With Croatian Arms, February 25, 2013,

- <https://www.nytimes.com/2013/02/26/world/middleeast/in-shift-saudis-are-said-to-arm-rebels-in-syria.html>
- Egypt's Mursi to Saudi Arabia on first trip as president**, July 08, 2012, <https://www.arabnews.com/saudi-arabia/egypt%27%80%99%99-mursi-saudi-arabia-first-trip-president>
- Gulf Council Reaches out to Morocco and Jordan**, May 25, 2011, <https://www.nytimes.com/2011/05/26/world/middleeast/26iht-M26-GCC.html>
- Gulf States Sent Forces to Bahrain Following Protests**, 14 March, 2011, <https://www.bbc.com/news/world-middle-east-12729786>
- Hugh Naylor**, Syria Rebels Buy Arms with Gulf and US Help, May 17, 2012, <https://www.thenational.ae/world/mena/syria-rebels-buy-arms-with-gulf-and-us-help-1.396893>
- Hedges Matthew, Cafiero Giorgio** 2017: The GCC and the Muslim Brotherhood: What does the Future Hold.
- Ian Black**, Saudi Arabia: Syria Rebels Must be Armed, June 25, 2013, <https://www.theguardian.com/world/2013/jun/25/saudi-arabia-syria-rebels-armed>
- In Search of Stability**. Saudi Arabia and the Arab Spring, Gulf Research Center Cambridge, 2013, [https://www.files.ethz.ch/isn/182104/GRM\\_Rieger\\_final\\_09-07-14\\_3405.pdf](https://www.files.ethz.ch/isn/182104/GRM_Rieger_final_09-07-14_3405.pdf)
- Iranian militias assassinated Lebanon's Rafik Hariri**: Saudi Deputy Defence Minister, February 16, 2020, <https://www.arabnews.com/node/1628516/middle-east>
- Luigi Narbone**, The Gulf Region Beyond the Arab Spring: Changes and Challenges, European University Institute, 2015, p. 64
- Mohammed Bazi**, The Biggest Winners of the Arab Spring? Dictators, October 09, 2015, <https://www.thenation.com/article/archive/the-biggest-winners-of-the-arab-spring-dictators/>
- Molly Peterson**, The Shi'a Spring: Shi'a Resistance and the Arab Spring Movement in the GCC States, Journal of Islamic and Middle Eastern Multidisciplinary Studies, volume 4, Issue 1, 2015, <https://ir.uiowa.edu/cgi/viewcontent.cgi?article=1058&context=mathahttps://ir.uiowa.edu/cgi/viewcontent.cgi?article=1058&context=matha>
- Neil MacFarquhar**, Saudi Arabia Scrambles to Limit Region's Upheaval, May 27, 2011,

[http://www.nytimes.com/2011/05/28/world/middleeast/28saudi.html?\\_r=0](http://www.nytimes.com/2011/05/28/world/middleeast/28saudi.html?_r=0).

- Q&A, Saudi Municipal Elections**, September 28, 2011,  
<https://www.bbc.com/news/world-middle-east-15089937>
- Rene Rieger**, *In Search of Stability: Saudi Arabia and the Arab Spring*, Gulf Research Center, Cambridge, 2013,  
[https://www.files.ethz.ch/isn/182104/GRM\\_Rieger\\_final\\_09-07-14\\_3405.pdf](https://www.files.ethz.ch/isn/182104/GRM_Rieger_final_09-07-14_3405.pdf), p.13
- Rene Rieger**, *In Search of Stability: Saudi Arabia and the Arab Spring*, Gulf Research Center, Cambridge, 2013,  
[https://www.files.ethz.ch/isn/182104/GRM\\_Rieger\\_final\\_09-07-14\\_3405.pdf](https://www.files.ethz.ch/isn/182104/GRM_Rieger_final_09-07-14_3405.pdf)
- Rene Rieger**, *In Search of Stability: Saudi Arabia and the Arab Spring*, Gulf Research Center, Cambridge, 2013,  
[https://www.files.ethz.ch/isn/182104/GRM\\_Rieger\\_final\\_09-07-14\\_3405.pdf](https://www.files.ethz.ch/isn/182104/GRM_Rieger_final_09-07-14_3405.pdf), p. 18.
- Saudi Arabia recalls Syria envoy as Assad defends crackdown**, August 08, 2011,  
<http://english.ahram.org.eg/NewsContent/2/8/18326/World/Region/Saudi-Arabia-recalls-Syria-envoy-as-Assad-defends.aspx>
- Saudi-Backed Jarba Defeats Qatar's Point Man in Syria Opposition**, July 06, 2013, <https://middle-east-online.com/en/saudi-backed-jarba-defeats-qatar%E2%80%99s-point-man-syria-opposition>
- Saudi Government Crack Down on Shi'ite Dissidents**, April 1, 2009,  
<https://www.sandiegouniontribune.com/sdat-ml-saudi-shiites-040109-2009apr01-story.html>
- Saudi King Orders Punishing Jihadi Fighters**, February 04, 2014,  
<https://www.thehindu.com/news/international/world/saudi-king-orders-punishing-jihadi-fighters/article5651917.ece>
- Saud Mousaed Al-Tamamy 2012: Saudi Arabia and the Arab Spring: Opportunities and Challenges of Security**, *Journal of Arabian Studies: Arabia, the Gulf, and the Red Sea* 2, no. 2, pp. 143-156.
- Saudi Women Voices in Shoura Council Continue to be Heard**,  
<https://www.arabnews.com/node/1261581/saudi-arabia>
- Saudi Woman set to drive in protest and to show their rising clout**, October 25, 2013,  
<https://www.washingtonpost.com/news/worldviews/wp/2013/10/2>

[5/saudi-women-set-to-drive-in-protest-and-to-show-their-rising-clout/](#)

**Syria Suspended from Arab League**, November 12, 2012,

<https://www.theguardian.com/world/2011/nov/12/syria-suspended-arab-league>

**The Shiite Question in Saudi Arabia**, Middle East Report No. 45, 19 September, 2005, International Crisis Group,

[https://www.files.ethz.ch/isn/13612/045\\_shiite\\_question\\_saudi%20Arabia.pdf](https://www.files.ethz.ch/isn/13612/045_shiite_question_saudi%20Arabia.pdf)

**The Municipal Elections in Saudi Arabia**, <https://www.arab-reform.net/publication/the-municipal-elections-in-saudi-arabia-2005/>

**Tobby Mattheisen**, Domestic Source of Saudi Foreign Policy: Islamists and the State in the Wake of the Arab Uprisings, Project on US Relations with the Islamic World at Brookings, Rethinking Political Islam Series, August, 2015, [https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/07/Saudi-Arabia\\_Mattheisen-FINAL.pdf](https://www.brookings.edu/wp-content/uploads/2016/07/Saudi-Arabia_Mattheisen-FINAL.pdf)

**Valeri Marc** 2015, The Gulf Monarchies and Iran: Between Confrontation and Geostrategic Realities, The Gulf Monarchies Beyond the Arab Spring: Changes and Challenges, European University Institute, pp. 38-45.

**Women in Saudi Arabia to Vote and Run in Elections**, 25 September, September 25, 2011, <https://www.bbc.com/news/world-us-canada-15052030>

**Արաքս Փաշայան, պ.գ.թ.,**

*«ՉԱԱ արևելագիտության ինստիտուտ,  
Արաքսական երկրների բաժին, առաջատար  
գիտաշխատող,*

*a\_pashayan@hotmail.com*

**THE SAUDI ARABIA AND THE “ARAB SPRING”:**

FROM REVOLUTION TO COUNTERREVOLUTION  
(2011-2013)

**Keywords:** *Saudi Arabia, "Arab Spring", revolution, counterrevolution, security, double standards, "Muslim brotherhood", revolts, Shi'as, jihadists, The League of Arab States, Iran, Syria, Egypt, Libya.*

The paper deals with the political behavior of Saudi Arabia in the region during the first years of the "Arab Spring". The Saudi government's top priority was to safeguard domestic and regime stability. To achieve this objective Saudi Arabia adopted its "tried and tested strategy of buying social peace through co-optation of the population". However, the situation was different with respect to domestic protests in Shi'a populated Eastern Province. Riyadh didn't implement any political reforms and instead took tough action against Shi'ite protestors calling for political and social reforms and anti-Shi'a discrimination within existing monarchical system.

It should be noted that Saudi Arabia's response to the protests and uprisings in the Arab World has both counterrevolutionary and revolutionary elements. Saudi Arabia provided Al Khalifa regime with financial and military support. The Saudi government's diplomatic and political support for President Hosni Mubarak until his forced resignation can also be characterized as counterrevolutionary. In the case of Libya and Syria the Saudi regime became one of the most significant supporters of the anti-Assad and anti-Gaddafi forces. At the same time Riyadh started to back Salafi and other kinds of forces against "Muslim Brotherhood" in the Middle East and beyond.

The processes of the "Arab Spring" also caused a new tension in the Saudi-Iranian relations. In any case, the Saudi autocratic regime addressed the "Arab Spring" very effectively because of necessary financial, administrative and other resources.

Araks Pashayan - PhD,  
Institute of Oriental Studies NAS RA,

**ԱԹՍ-ՆԵՐԻ ՊԱՐՍԵՐԻ ԵՎ ԵՐԱՄՆԵՐԻ  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԴԻՍԵԿՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԵՐՁԱՎՈՐ  
ԱՐԵՎԵԼՔՈՒՄ\***

**ԱՐԾՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**Բանալի բառեր՝** Մերձավոր Արևելք, ԱԹՍ, ԱԹՀ, ՕՀ, ՅՀԿ, ՕՀՄ, Օդոս, կործանիչ, պարս, երամ:

Անցնող չորս-հինգ տարիների ընթացքում Մերձավոր Արևելքում ընթանում են լուրջ քնույթի պրոցեսի և հիր-րիդային պատերազմներ: Այս պատերազմների ընթաց-քում տարբեր կերպ քննության դրվեցին մարտական գործողությունների բազում նոր հայեցակարգեր ու մար-տավարական լուծումներ: Այդ հայեցակարգերի շրջա-նակներում փորձարկվեցին տարատեսակ զինատեսակ-ներ: Նման զինատեսակներից են տարատեսակ, տար-բեր չափերի ու խնդիրների համար նախատեսված ԱԹՍ-ները: Համաշխարհային մամուլը ամեն անգամ ցեցվում է դրանց լուրջ, բայց երբեմն շար արդյունավետ կիրառությունից, ինչի դա բարձրաստիճան պաշտոնյայի կամ ահաբեկչի խոցում, նոր տեսակի ՀՕՊ համակարգի խոցում թե նավթամշակման գործարանի խոցում:

Փորձենք հասկանալ թե նոր սերնդի պատերազմ-ներում ինչ դերակատարություն ունեն ԱԹՍ-ները և ինչ սպասել այս նոր զինատեսակից:

\* Հոդվածը ներկայացվել է 28.07.2020: Գրախոսվել է 11.08.2020:

### ԱԹՍ-ների պատերազմներում

ԱԹՍ-ների կիրառության պատմությունը սկսվում է Վիետնամական պատերազմից, որի ընթացքում ամերիկյան օդային հետախուզության մոտավորապես 80 տոկոսը կատարել էր «AQM-34 Firebee»-ն<sup>1</sup>: 1964 թ. մինչև 1975 թ. նման սարքերը, չունենալով անգամ 10 տոկոս կորուստ, կատարել են մարտական ավելի քան 3400 թռիչք<sup>2</sup>, և որ ամենակարևորն է, դրանց խոցման ժամանակ մարդկային կորուստներ չեն գրանցվել<sup>3</sup>: Հետագայում նման սարքերը կիրառվեցին մարտական ապահովման այլ խնդիրներում ևս: Ինչպես միշտ, մեծ հաջողություններ էր արձանագրում հատկապես Իսրայելը, որն այսօր նման սարքերի ստեղծմամբ և արտահանմամբ ԱՄՆ-ից հետո աշխարհում զբաղեցնում է երկրորդ տեղը<sup>4</sup>:

1973 թ. «Դատաստանի օրվա» պատերազմում իսրայելցիներն անօդաչու սարքերի կիրառմամբ մեծ հաջողությունների հասան: Իսրայելական բանակը հիմնականում կիրառում էր «MQM-74 Chukar» և «AQM-34 Firebee» ամերիկյան ԱԹՍ-ներ, որոնց յուրաքանչյուր տարատեսակին իսրայելցիները տվել էին առանձին անուններ: Նման սարքերի կիրառմամբ իսրայելական բանակը զգալի հաջողություններ ունեցավ: Մինչև ԱԹՍ-ների կիրառումը, հոկտեմբերին իսրայելական ՌՕՌ-ն կորցրել է որոշակի թվաքանակով ինքնաթիռներ: Իրենց համար անթույլատրելի թվաքանակի օդանավեր կորցնելով՝ իսրայելցիները հրաժարվեցին ինքնաթիռների մեծ խմբերով մար-

<sup>1</sup> Амусли, Лосев 2002: 38-41.

<sup>2</sup> Вартанесян 1991: 227.

<sup>3</sup> Амусли, Лосев 2002: 40.

<sup>4</sup> Евграфов 2009: 53.

տական հարվածներ հասցնելու ավանդական դարձած մարտավարությունից և սկսեցին կիրառել հարվածային փոքր խմբեր: Նման փոքր խմբերով հարվածների համար անհրաժեշտ էին հետախուզական ավելի ստույգ տվյալներ, որոնք ապահովում էին ԱԹՍ-ները: Իսկ հարվածային խմբերին պաշտպանելու համար կրկին ԱԹՍ-ներն էին իրենց վրա վերցնում հակառակորդի կրակը: Հայտնի են դեպքեր, երբ մեկ սարքի ուղղությամբ արարներն արձակել են մինչև 30 հրթիռ: Անգամ տասնյակ հրթիռների արձակումներից հետո շատ ԱԹՍ-ներ վերադառնում էին: Արդյունքում արաբական ՁՀՀ-ները, ծախսելով մեծաքանակ հրթիռներ, խոցում էին մի քանի ԱԹՍ:

1973 թ. պատերազմում իսրայելցիները ԱԹՍ-ների կիրառության մեծ փորձ ձեռք բերեցին, ինչը նրանց շատ օգնեց հետագայում: Ըստ իսրայելական տվյալների՝ 1981 թ. մայիսի 14-ին «Scout» ԱԹՍ-ի և սիրիական «Mof-21»-ի միջև նույնիսկ օդային մարտ է տեղի ունեցել, որի ժամանակ կործանիցի օդաչուն, հետապնդելով անօդաչու սարքին, վթարվել է՝ հարվածելով լեռանը: Արաբ-իսրայելական հաջորդ պատերազմում՝ 1982 թ. Բեքաայի հարթավայրում, իսրայելական ԱԹՍ-ները հայտնաբերում էին սիրիական զորքերի տեղակայումները: Մեկ այլ տեսակի ԱԹՍ-ները, լինելով որպես կեղծ թիրախներ, ստիպում էին միացնել սիրիական ՌՏԿ-ները՝ մատնելով դրանց դիրքերը: Հանգամանք, որն օգտագործում էին իսրայելական ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցները և հարվածային ինքնաթիռները: Առանց ժամանակ կորցնելու դրանք խլացնում կամ ոչնչացնում էին ՌՏԿ-ները: Հակառադիոկացիոն հրթիռների հիմնական արքյուր ՌՏԿ-ի անջատման դեպքում ԱԹՍ-ները լազերային լույ-



տով կրկին ուղղորդում էին ինքնաթիռներից արձակված հակառակորդական այլ տեսակի հրթիռները: 1982 թ. դեպքերը հիշարժան են նաև նրանով, որ պատերազմի ժամանակ առաջին անգամ հատուկ ՑՁ-ի համար կիրառվում էին ԱԹՍ-ներ<sup>3</sup>:

«Scout» և «Mastiff» ԱԹՍ-ները կատարում էին հետախուզություն 800-1000 մետր բարձրության վրա: Հայտնաբերելով համապատասխան նշանակետեր՝ սարքը ղեկավարող վերգետնյա օպերատորը հնարավորություն ուներ մեծացնելու տվյալը ճշտելու համար հայտնաբերած ամենատարբեր թիրախների և անգամ մարդու պատկերը: Թիրախը ճանաչվում էր, առանց ժամանակ կորցնելու կորդինատները հաղորդվում էին հրետանային միջոցներին: Դրանք էլ օպերատիվ հարված էին հասցնում թիրախին: Իսրայելցիները համապատասխան կերպով էին վարվում նաև 1983 թ. Բեյրութին հարվածներ հասցնելիս: Միևնույն ժամանակ, ամերիկյան ՑՁ-ն և հատկապես ՌԾՌԻ-ն, գործելով առանց ԱԹՍ-ների հաղորդած հետախուզական տվյալների, զգալի կորուստներ ունեցան և կրակով վնասներ պատճառեցին խաղաղ բնակչությանը: Արդյունքում ԱՄՆ-ում որոշվեց հապճեպ ձեռք բերել հետախուզական փոքր ԱԹՍ-ներ: Իսրայելից գնվեցին մի քանի «Mastiff-3» և այլ ԱԹՍ-ներ: Բեյրութի դեպքերից շատ չանցած՝ 1987 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, ամերիկյան ՌԾՌԻ-ն՝ զինված նման ԱԹՍ-ներով, մարտական գործողություններ վարեց Հորնուզի նեղուցում: Օդում մնալով մոտավորապես 207 ժամ՝ ԱԹՍ-ներն աննկատ մնացին իրանական ՌՏԿ-ների համար: Լիբանանյան վերը նշված պատերազմի ժամանակ սիրիական

<sup>3</sup> Матачинский, Чумак 1996: 93-95.

կողմը ևս կիրառեց խորհրդային արտադրության ԱԹՍ-ներ: Հաջողությունները նոր թափ հաղորդեցին անօդաչու սարքերի զարգացման ոլորտին: ԱԹՍ-ների զարգացումը բավական բարձր աստիճանի էր հատկապես ԱՄՆ-ում, որտեղ ստեղծվել էր նման սարքերի արտադրությամբ զբաղվող գերատեսչություն: 1991 թ. տեղի ունեցած «Փոթորիկ անապատում» գործողության ժամանակ դաշնակիցների հետախուզական ԱԹՍ-ները կատարել են օդային բուսանկարահանումների զգալի մասը, որի միջոցով հայտնաբերվել էին անապատում լավ թաքցված և ջողարկված ռազմական բունկերներ, օդանավակայաններ և տարատեսակ այլ օբյեկտներ<sup>6</sup>: Տարբեր տվյալներով՝ ամերիկյան զորքերը կիրառում էին տարատեսակ՝ հարյուրից ավելի ԱԹՍ-ներ, որոնք, հետախուզական թռիչքներ կատարելով, մինչև 160կմ ներխուժում էին հակառակորդի օդային տարածք, ինչը մարտավարական մեծ խորություն է<sup>7</sup>:

Տարեցտարի ամերիկյան զինվորականներն ավելի հաճախ են դիմում այս փոքր սարքերի օգնությանը: 2002 թ. տվյալներով՝ ամերիկյան ՁՈՒ-ի սպառազինության մեջ կար 95 տեսակի տարբեր ԱԹՍ-ներ<sup>8</sup>: 2010 թ. ԱՄՆ-ի ՁՈՒ-ում կիրառվում էին ավելի քան 4200 միավոր տարատեսակ ԱԹՍ-ներ, այսօր պատկերն ավելի մեծ է՝ մոտավորապես 40.000 ԱԹՍ<sup>9</sup>: Միայն 2010 թ. հունվարին ամերիկյան ԱԹՍ-ները կատարել են ավելի քան 900.000-ժամյա թռիչքներ<sup>10</sup>: Սա նշանակում է, որ

<sup>6</sup> Колтаковцев 1993: 28-30.

<sup>7</sup> Амусин, Лосев 2002: 40.

<sup>8</sup> Белнев 2004: 8-17.

<sup>9</sup> Чесунов 2010: 41.

<sup>10</sup> Լոյսն տեղում:

24 ժամ՝ ամեն վայրկյան, օդում եղել է ավելի քան 1200 նման սարք: Այսօր այդ ցուցանիշները մոտավորապես տասնապատկվել են<sup>11</sup>:

2002 թ. նոյեմբերի 3-ին Եմենի մայրաքաղաք Սանաայից 160կմ արևելյան հեռավորության վրա լեռներում միկրոավտոռոտի վրա կրակ բացեց ամերիկյան «MQ-1/RQ-1 Predator» ԱԹՍ-ն: Մեքենայի վրա արձակվեց երկու «AGM-114 Hellfire» ղեկավարվող հրթիռ: Մեքենայի մեջ գտնվող բոլոր ուղևորները մահացան: Նրանց մեջ էր նաև հայտնի ահարեկիչ Ալի Քայեդ ալ Հարեթին: 2004թ. հոկտեմբերի 2-ին պաղեստինյան «Իսլամական Ջիհադ» գրոհայինների ուղղությամբ իսրայելական ԱԹՍ-ից արձակված հրթիռը սպանեց հինգ մարդ: 2007 թ. նոյեմբերի 7-ին ամերիկյան «MQ-9 Reaper» ԱԹՍ-ն, որը «MQ-1/RQ-1 Predator» շարքի հետագա զարգացումներից է, առաջին անգամ Աֆղանստանում կիրառեց գերճշգրիտ ռումբեր: Արձակված երկու «GBU-12 PAVEWAY II» ռումբերն էլ ճշգրտորեն հարվածել են թիրախներին:

Նույն թվականի սեպտեմբերի 25-ից սկսած՝ նման սարքերի կիրառության դեպքերն Աֆղանստանում ներկայումս հասնում են մի քանի հարյուրի: Վերջին տվյալներով՝ այս շարքի «MQ-9 Reaper», «MQ-1/RQ-1 Predator» ԱԹՍ-ները, որոնք պատկանում են ՌՕՈՒ-ին, ընդհանուր առմամբ, արդեն կատարել են ավելի քան 120 հազար մարտական թռիչք՝ ավելի քան 2 մլն թռիչքաժամով: Այս տվյալները, ի դեպ, շատ արագ են փոխվում, ընդամենը կես տարվա ընթացքում դրանք արդեն կարող են համարվել հնացած: Դրանցից մեկ մեքենան՝ «P107» կո-

<sup>11</sup> **Григорьев 2004:** 6-8, 10-13; **Карпов 2003:** 30-33; **Белзев 2005:** 12-21; **Cook 2000:** 30.

դային համարով «MQ-1/RQ-1 Predator»-ը, 2004 թ. մինչև 2013 թ. մայիսը կատարել էր ռեկորդային՝ 20.000 ժամ թռիչք: Ներկայումս ամերիկյան անօդաչուների մարտական հարվածները հնարավոր չէ հաշվել: Կան ԱԹՍ-ներ, որոնք մի քանի հարված են հասցրել առանց կորուստների<sup>12</sup>: Եվս մեկ աղմկահարույց հարված մարտական ԱԹՍ-ները հասցրել են կրկին Եմենում՝ 2012 թ. հունվարի 31-ին, որի ժամանակ զոհվել է 11 ահաբեկիչ<sup>13</sup>: Ամերիկյան ուժային կառույցները և հատկապես ԿՀՎ-ն արդեն լայնորեն աշխարհի ցանկացած կետում գաղտնի կիրառում են այս հետախույզ մարդասպաններին: Դրանց օրինակները արդեն հասնում են հարյուրների և ոչ մեկին չեն զարմացնում: Վերջին տվյալներով հայտնի է դարձել, որ միայն Օբամայի նախագահության առաջին ժամկետում ամերիկյան ԱԹՍ-ներով Պակիստանի հյուսիսարևմտյան շրջաններում հասցվել է ավելի քան 250 օդային հարված<sup>14</sup>: Ներկայումս այդ թիվը բազմապատկվել է մի քանի անգամ: 2013 թ. փետրվարին ԱՄՆ-ի սենատում հնչած գնահատականներով ԱԹՍ-ների կողմից հասցված հարվածներից մահացել է ավելի քան 4700 մարդ: 2019 թ. ապրիլի դրությամբ նման մի հարված հասցվել էր Սոմալիում: Նման հարվածները գրեթե ամեն օր տեղի են ունենում աշխարհի ամենատարբեր անկյուններում: ԱԹՍ-ների սովորական սպառազինությունը կազմում է չորս «AGM-114 Hellfire» հրթիռ և երկու «GBU-

<sup>12</sup> Загубенное Военное Оборудование 2009: 89-90.

<sup>13</sup> Եմենում անօդաչու սարքի օդային հարվածից զոհվել է «Ալ-Քաիդայի» 11 զինյալ, 31 հունվարի, [http://www.jin.am/arm/world\\_wemikillesat\\_57444.html](http://www.jin.am/arm/world_wemikillesat_57444.html)

<sup>14</sup> Michael Isikoff. U.S. official acknowledges drone strikes, says civilian deaths 'exceedingly rare'. <http://openchannel.msnbc.msn.com/news/2012/04/30/11475659-us-official-acknowledges-drone-strikes-says-civilian-deaths-exceedingly-rare?lite>

12 PAVEWAY II» ռոմբ<sup>15</sup>: Ներկայումս կարող են տեղադրվել նաև այլ հրթիռներ: Արանք արդեն անօդաչու թռչող համալիրներ (այսուհետև՝ ԱԹՀ) են, որոնց վրա, բացի վերը նշված գերճշգրիտ սպառազինությունից, տեղադրվում են նաև բազում այլ գերժամանակակից սարքավորումներ<sup>16</sup>: Այժմ էլ նման ԱԹՍ-ները գերճշգրիտ հարվածներ են հասցնում Իրաքում ծայրահեղականների ուժերին, իսկ ԱՄՆ-ում ավելի շատ են խոսում հակա-անօդաչուների շարժումների մասին: Դրանով, փաստորեն, հեղափոխություն է տեղի ունենում ոչ միայն ԹՍ-ների կիրառության, այլև այլ երկրների գործերին միջամտելու ասպարեզում, որն ավանդաբար ամերիկացիների համար կարևորվել է: Որոշ մասնագետներ պնդում են, որ ամերիկյան այս ամենաթողությունը շատ վտանգավոր է աշխարհի համար: Մասնագիտական տեսանկյունից միայն կարող ենք ասել, որ այս սարքերի շնորհիվ նրանք ամեն ինչ անում են ավելի անվտանգ և ավելի մեծ մասշտաբներով: Վերջին ծրագրերի համաձայն՝ ԱՄՆ-ն իր ՁՈՒ-ի տարբեր զորատեսակների համար գնում է ավելի քան 100.000 ԱԹՍ: Իսկ 30 տարի անց կարող են գործարկվել արդեն արհեստական բանականությամբ ԱԹՍ-ներ, որոնք կլինեն յիովին ինքնուրույն<sup>17</sup>: Տարբեր հաշվարկներով՝ այդ 100.000-ից մոտավորապես 25-30 հազարը կլինեն հարվածային բազմանպատակ բարձրակարգ սարքեր: Ներկայումս ամերիկյան բանակում կիրառվում է մոտավորապես 50.000 տարատեսակ ԱԹՍ,

<sup>15</sup> *Носов* 2010: 81.

<sup>16</sup> *Саво.а.с.т.с.о* 2010: 81.

<sup>17</sup> ԱՄՆ-ը 30 տարուց հետո կակաի օգտագործել արհեստական ինտելեկտով կառավարվող անօդաչու սարքեր, երեքշաբթի, 31 Հունվարի, [http://www.fjn.am/arm/world\\_wars\\_57510.html](http://www.fjn.am/arm/world_wars_57510.html)

որոնց թվաքանակը արագորեն աճում է: Դա նշանակում է, որ ամերիկյան ՌՕՈՒ-ն ավելի արագ է դառնում անօդաչու, քան կռահում էին բոլոր կանխատեսողները: Անգամ ամերիկյան զենեքալեռներն արդեն բողբոջում են ԱԹՍ-ների այս մակարդակից՝ պահանջելով կրճատել դրանց թվաքանակը և մեծացնել հնարավորությունները՝ մասնավորապես մարտական ԱԹՍ-ների<sup>15</sup>: Որոշ ժամանակ անց արդեն զարմանալի չեն լինի մարտական ԱԹՍ-ները, որոնք իրենց տվյալներով գրեթե լիովին կփոխարինեն կործանիչներին: Փաստորեն կարող է ստացվել այնպես, որ 6-րդ սերնդի կործանիչների անցումը լինի շատ սահուն և դրանք միաժամանակ հայտնվեն 5-րդ սերնդի հետ:

#### **ԱԹՍ-ների կիրառության պարսերի և երամների հայեցակարգերը**

2019 թ. սկզբին ԱՄՆ-ը ցուցադրեց նոր «XQ-58A» մարտական ԱԹՍ, որը կատարեց մի քանի փորձնական թռիչք: Իսկ օգոստոսի սկզբին իր առաջին թռիչքը կատարեց ռուսական «С-70 Охотник» ԱԹՍ-ն: Երկուսն էլ իրենցից ներկայացնում են հարվածային ԱԹ<-ներ, թե որը ինչ կյանք կունենա դեռ պարզ չէ: Մի քան պարզ է, որ ռուսական համալիրը ևս ստեղծված է ամերիկյան Սթեյվ տեխնոլոգիաների որոշակի կանոններով, չնայած շարժիչները չեն համապատասխանում: Այն իրենից ներկայացնում է ավելի վաղ նախագծված, սակայն կյանքի չկոչված «Скат» նախագծի շարունակությունը:

Լոյն շարքից է նաև արդեն նշված «Predator C Avenger»-ը, որն ունի ավելի քարելավված որոշ տվյալ-

<sup>15</sup> Генерал ВВС США назвал Б.Л.А «Предейтор» бесполоземом, <http://www.warandpeace.ru/ru/news/view/83937/>

ներ: Նման ԱԹՍ-ների ստեղծման համար նկատառվում են նաև օդում վերափոխվող վելու, կառուցվածքային մոդուլների միջոցով թռիչքային ժամանակի և կրվող սպառազինության թվաքանակի փոխհարաբերության արագ փոփոխման հնարավորությունները և այլն: Որոշ մասնագետների կարծիքով՝ դրանք ապագայի մարտական օդային հարթակների (այսուհետև՝ ՕՀ) հիմնական տեսակներն են: Նման հարթակներն իրենք կարող են լինել ԱԹՍ-ների կրողներ, ավելին՝ հավանաբար հարթակների համար առաջնային միջոցը հրթիռների հետ հավասար լինելու են նաև փոքրիկ ԱԹՍ-ները: Բացառված չէ, որ նույնիսկ հիպերձայնային սարքերը լինեն ԱԹՀ-ների<sup>19</sup>: Ի դեպ, 2013 թ. իր հերթական հաջող փորձարկումն անցավ ամերիկյան փորձնական «X-51A» ԱԹՍ-ն, որի արագությունը 6000 կմ/ժ ավելի է<sup>20</sup>:

Հետևապես հետաքրքիր է ռադիոէլեկտրոնային պայքարի համար ԱԹՍ-ների կիրառությունը, ինչը քոլորովին նոր դրակ է ԱԹՍ-ների համար: Բանն այն է, որ նման սարքերը, լինելով ավանդական ԹՍ-ներից փոքր, ՌՏԿ-ների համար ավելի դժվար հայտնաբերվող են: Հետևաբար, ԱԹՍ-ներն ավելի շատ կարող են մտնել ԱԹՍ-ների մեջ, դրանով ավելի շատ ազդել վերջիններիս վրա՝ ծախսելով ավելի քիչ էներգիա: ՌՏԿ-ներին մոտիկ գտնվելը հնարավորություն է տալիս նաև ավելի արագ գտնելու հետարձակվող ամենաթույլ այիքներն անգամ, որոնց վրա ազդելը հեռվից դժվար է: Ժամանակակից ԱԹՍ-ները բարձր տեխնոլոգիական, գերճշգրիտ և հուսալի համակարգեր են, որոնց հիմնական աշխատան-

<sup>19</sup> Мельник 2006: 48-51.

<sup>20</sup> Якович 2006: 38-43.

քում մարդկային գործոնը հասցված է նվազագույնի, իսկ անհաջողության դեպքում մարդկային կորուստները գրեթե լիովին բացառված են: Հենց այս ամենն է երաշխավորում էլ ավելի բարձրացնել ընդհանուր ԹՍ-ների արդյունավետությունը: Վարուց աշխատանքներ են կատարվում հակառադիոլոկացիոն ԱԹՍ-ների ստեղծման ուղղությամբ<sup>21</sup>: Հատկապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում անօդաչու ուղղաթիռները, որոնք լայնորեն կարող են կիրառվել ծովում, լեռներում, քաղաքներում և այլն: Դրանց չափերն այնքան էլ մեծ չեն: ԱՄՆ-ի ՌԾՈՒ-ն արդեն պատվիրել է 120 նման ուղղաթիռ, որոնք կոչվում են «RQ-8A Fire Scout»<sup>22</sup>: Անօդաչու ուղղաթիռները 2005 թ. անցկացված բազում փորձարկումներից մեկի ժամանակ անզամ «օդ-երկիր» հրթիռով խոցել էին պայմանական թիրախները: Սարքն ունի մոտավորապես 1000 կգ քաշ, կարող է բարձրանալ մինչև 6կմ և կատարել 5-ժամյա թռիչք՝ վերցնելով մինչև 120կգ օգտակար բեռնվածություն<sup>23</sup>: Այս սարքերն արդեն հասցրել են մարտական կիրառություն ունենալ: Ներկայումս ակտիվորեն փորձարկվող բազմազան ԱԹՍ-ների մեջ մեծ տեղ են զբաղեցնում նաև ուղղաթիռները:

Ամերիկյան հայտնի ռազմական տեսաբան Ջոն Վերդերը կարծում էր, որ 2025 թ. ամերիկյան ՌԾՈՒ-ի մոտավորապես 90 տոկոսը կկազմեն ԱԹՍ-ները<sup>24</sup>: Մենք մեր կողմից կարող ենք ավելացնել, որ այս թիվը այնքան էլ զարմանալի չէ՝ արդեն: Բոլոր տեսակի ԱԹՍ-ները այդ

<sup>21</sup> **Космос 1995**, 87-89.

<sup>22</sup> **Итерфакс 2003**, 19-23.

<sup>23</sup> **Upgraded «MQ-8B Fire Scout» Flown**. AIR International. February, 2007, p. 13.

<sup>24</sup> **Հովակիմյան 2002**, 100-103:



ժամանակ կկազմեն մեկ ցանցային համակարգ և կգործեն ընդհանուր կամ լոկալ օդային զերակայության տիրույթում, որտեղ կործանիչները, օդային ղեկավարման կետերը և այլն կկառավարեն միկրոդրոններից մինչև մեծ ինքնաթիռներ:

ԱՄՆ-ում ԱԹՍ-ների բնագավառի լայնածավալ աշխատանքները և դրամական միջոցների մեծ հատկացումները շատ են հետաքրքրում որոշ պետությունների: Մինչև Զ. Վերդերի նշված ժամանակը ամերիկյան յուրաքանչյուր զինվոր կարող է ունենալ իր սեփական հետախուզական ԱԹՍ-ն: ԱՄՆ-ում հասել են այնպիսի արդյունքների, որ մեկ ԱԹՍ-ն, հետախուզելով տեղանքը, տվյալներ է հաղորդում մյուսին և ուղղորդում վերջինիս հարվածը, իսկ մարտական գործողությանը հետևող ու ղեկավարող օպերատորը գտնվում է ավելի քան 10.000 կմ հեռավորության վրա: ԱՄՆ-ում փորձարկվել են այնպիսի նորույթներ, ինչպիսիք են ԱԹՍ-ների ղեկավարումը սուզանավից՝ ստորջրյա իրադրությունից, լեզվակառավարման համակարգի ներդրումը անօդաչու սարքերի վրա, փորձարկվել է հակաուղղաթիռային «Helix» հատուկ ԱԹՍ-ն: Ամերիկյան «Lockheed» ընկերության «Skunk works» բաժինը ստեղծել է ԱԹՍ, որը կարճակվի սուզանավերից՝ ստորջրյա իրադրությունից: Իսրայելում ներկայումս ակտիվորեն աշխատում են ԱԹՍ-ների՝ օդում վերալիցքավորվելու հնարավորության ուղղությամբ: Կան ավելի մեծ ու հետաքրքիր նախագծեր ևս:

Պետագոնի անվտանգության ծառայության հրապարակած հաշվետվությունում ընդգծվում է, որ դատելով գործունեության ինտենսիվությունից՝ քառակի աճել են արտասահմանյան հետախուզական գործակալու-

թյունների հետաքրքրությունները ԱԹՍ-ների ստեղծման գաղտնի տեղեկատվության նկատմամբ<sup>25</sup>:

Այնքան է ավելացել մարտական պայմաններում կիրառվող հիմնականում հետախուզական ԱԹՍ-ների թվաքանակը, որ զինվորականները երբեմն չեն հասցնում ճիշտ ժամանակին ամբողջացնել, վերլուծել և օգտագործել նրանց «մատակարարած» հետախուզական ահռելի տեղեկատվությունը: Լինում են նաև դեպքեր, երբ հակառակորդը տեխնիկական տարբեր հնարքներով օգտվում է ԱԹՍ-ների մատակարարած տեղեկատվությունից, այսպես ասած, գողանում այն և ըստ իրենց նպատակի օգտագործում: Նման դեպքեր գրանցվել են, օրինակ, Իրաքում: Այսօր ԱԹՍ-ները և թոշող տարբեր հարթակները մեծապես ինտեգրվում են ցանցակենտրոն պատերազմներում և հիմնականում պետք է կիրառվեն համակարգային ավելի կազմակերպված գործողություններով:

Ամերիկյան ՌՕՈՒ-ի հրամանատարությունը և քանակի ողջ ղեկավարությունը մեծ տեղ են հատկացնում ԱԹՍ-ների և դրանց հիման վրա ստեղծված բազմազան ԹՍ-ների ու ՕՀ-ի գործունեությանը, որոնք անհատական և համակարգային կիրառության ժամանակ այսօր չափազանց բարդ ու կարևոր խնդիրներ են լուծում, և դրանց մեծ տեղ է հատկացվում ցանցակենտրոն պատերազմներում: Իրականացվում են պարսերով ու նրաներով գործող ԱԹՍ-ների և ՕՀ-ների ստեղծման լայնածավալ աշխատանքներ: Օպերատիվ մակարդակում նման նախագծերը շատ են՝ օրինակ «Predator C» (նկ. 4), «X-

<sup>25</sup> «Հայ զինվոր», № 21, 2007, 2-9 հունիսի, էջ 13:

61A Gremlins» (նկ. 1)<sup>26</sup>, «LOCUST» (նկ. 3)<sup>27</sup>, «Perdix» (նկ. 2) և այլն: Նշվածներից վերջինը արձակվում է ամերիկյան կործանիչներից, ունի ընդամենը 300գ քաշ և կարող է թռչել մինչև 50 կմ.<sup>28</sup> քսան ռուպեի ընթացքում<sup>29</sup>: Կործանիչից արձակվող նման սարքերի քանակը կարող է կազմել մի քանի հազար միավոր: Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում «X-61A Gremlins» նախագիծը: Այս ԱԹՍ-ները արձակվում են մեծ բեռնատար ինքնաթիռներից, օդում կազմում են ցանց, գործում համատեղ, իսկ վերջում մարտական խնդիրը ավարտելով վերադառնում են և մտնում բեռնատար ինքնաթիռի մեջ: ԱՄՆ ՑՁ-երը, այսինքն քանակը 2020 թ. ներկայացրել է «Air Launch Effects (ALE)» հայեցակարգը, որի համաձայն քանակի ուղղաթիռներից, ԱԹՍ-ներից և այլ միջոցներից հարթակային արձակումներ են իրականացվելու, կիրառվելու են «ALE-DILR», «LRPM» և այլ հետախուզական ու հարվածային ԹՍ-ներ, ՕՀ-ներ և այլն, որոնց զործողության շտաբիորը կազմում է մի քանի հարյուր կիլոմետր: Այս ամենը հենց հարթակի գաղափարի և մեր կողմից առաջ քաշված ՑՀԿ հայեցակարգի դրսևորման իդեալական օրինակ է<sup>29</sup>:

<sup>26</sup> Gremlins Program Completes First Flight Test for X-61A Vehicle  
1/17/2020. <https://www.darpa.mil/news-events/2020-01-17>

<sup>27</sup> Mind of the swarm. 03/20/2020.

<https://www.raytheonids.com/news/feature/mind-swarm>

<sup>28</sup> D. Lamotte. Watch Perdix, the secretive Pentagon program dropping tiny

drones from jets. March 8, 2016.

<https://www.washingtonpost.com/news/checkpoint/wp/2016/03/08/watch-perdix-the-secretive-pentagon-program-dropping-tiny-drones-from-jets/>, **I.**

**Demerby** Watch U.S. F/A-18 Hornets Unleash Swarm of Mini-Drones in First

Test. January 11, 2017. <https://theaviationist.com/2017/01/11/watch-u-s-fa-18-hornets-unleash-swarm-of-mini-drones-in-first-test/>

<sup>29</sup> ՑՀԿ պատերազմների մասին մանրամասն տե՛ս Հովհաննիսյան 2017:

Աշխարհի տարբեր հատվածներում ԱԹՍ-ներն առանձին օդային գերակայություն են ապահովում, հատկապես երբ խոսքը գնում է թույլ ՀՕՊ-ի մասին: Առաջիկայում դրանք կարող են ինքնուրույն գործալ օդային գերակայություն ապահովել և գործել անզամ գերիագեցած ՀՕՊ-ի պայմաններում: Վերը նշված նախագծերը օպերատիվ մակարդակում նախատեսված են «Aegis»-ի նման ՀՕՊ-ՀՀՊ համակարգերի պաշտպանությունը ճեղքելու համար, այսինքն այնպիսի ՀՕՊ-ի, որը ունի մի քանի հարյուր նշանակետային ուղի:

Տարբեր ՕՀ-ներից արձակված քազմաքանակ ԱԹՍ-ները կարող են խմբային ու առանձին խնդիրներ լուծել: Մի քանի նման ՕՀ-ները կարող են օպերատիվ գոտի մտնել ու միասին մի քանի հարյուր մինի ու միկրո ԱԹՍ-ներ արձակել, որոնք ուղղակի կկուրացնեն ու կխոցեն ցանկացած դասական ՋՀՀ-ը կամ ՀՕՊ միջոց: Դրանց գործողության շտապիդն ու ինքնուրույնությունը չափազանց բարձր է: Դրանք միասին կարող են լուծել մեծ խնդիրներ, սակայն միաժամանակ ամեն մեկը ի վիճակի է կատարել նաև անհատական մարտական խնդիրներ, ընդհուպ մինչև ամեն մեկն առանձին թիրախների որոնում ու ոչնչացում: Ամեն մեկն ի վիճակի է առանձին որս կազմակերպել առանձին տեխնիկաների, զինատեսակների և անձանց ուղղությամբ: ԱՄՆ-ի կողմից աշխարհի տարբեր հատվածներում ստեղծված և ստեղծվող ռազմաքազաները հնարավորություն են ընձեռում ԱԹՍ-ներ կիրառելու գրեթե ամենուր: ԱԹՍ-ի կիրառությունը վկայում է, որ այն նոր իրողություն մտցրեց օդային գերակայության ավանդական պատկերացումներում: Որպես օդային գերակայության առանձին արտահայտություն՝ այն դարձավ ամբողջ աշխարհի գործերին, այսպես

ասած, ծածուկ խառնվելու միջոց: Մոլորակի երկրների գերակշիռ մասը չի կարող պայքարել դրա դեմ: Դրանց շնորհիվ ԱՄՆ-ը հնարավորություն ստացավ հսկողություն իրականացնելու և հարվածներ հասցնելու գրեթե ամենուր: Միաժամանակ դրանք, անհրաժեշտության դեպքում, ինտեգրված են ընդհանուր օդային գերակայությանը և կրառնան կործանիչների ու օդային ղեկավարման մեծ կետերի գործիքները, իսկ իրենց չափերի փոքրությունը թույլ կտա կիրառվող ԱԹՍ-ների քանակը հասցնել տասնյակ հազարների, որին չի կարող դիմանալ ոչ մի օպերացիոն մակարդակի ՀՕՊ, եթե անգամ դրանք հայտնաբերվեն:

ԱԹՍ-ները նախ և առաջ ստեղծում են տեղեկատվական լրացուցիչ հսկա ցանց, որի շնորհիվ լուծվում է օդային հիմնական և օժանդակ գերակայության հարցը: ԱԹՍ-ները կարողանում են աշխատել ինչպես առանձին, այնպես էլ արբանյակային ցանցի հետ: Ներկայումս կործանիչ ինքնաթիռից արծակվում են մի քանի տասնյակ փոքր ԱԹՍ-ներ, որոնք կարող են լուծել մարտավարական տիրույթի օդային գերակայության հիմնական հարցերը: Ամերիկյան ԱԹՍ-ի գերակայությունը այսօր լայնորեն տարածվում է, օրինակ են վերցնում նաև այլ երկրներ<sup>30</sup>: ԱԹՍ-ները արդեն մեծ հաջողությամբ կիրառում է Իսրայելը, Ռուսաստանը, Իրանը, Թուրքիան և այլն<sup>31</sup>:

<sup>30</sup> **The Drone Wars Are Already Here**, October 30, 2019, <https://www.bloomberg.com/news/articles/2019-10-30/the-drones-wars-are-here-and-they-re-escalating>

<sup>31</sup> **S. Roblin**, Mar 2, 2020, Turkish Drones and Artillery Are Devastating Assad's Forces In Idlib Province-Here's Why, <https://www.forbes.com/sites/sebastianroblin/2020/03/02/idlib-onslaught-turkish-drones-artillery-and-f-16s-just-destroyed-over-100-armored-vehicles-in-syria-and-downed-two-jets/#5ed54476cd32>

Առհասարակ 2000 թ. հետո ԱԹՍ-ների զարգացման համար բուռն ժամանակներ եղան, իսկ 2015-2020 թթ. մարտական գործողություններում արդեն մարտական ԱԹՍ-ների կիրառությունը մեծ թափ ստացավ<sup>22</sup>։ Սակայն պետք է փաստել մի հստակ կանոն. ցանկացած օդային գերակայություն, այդ թվում նաև ԱԹՍ-ներով ապահովվող, նախ և առաջ լուծվում, հաստատվում կամ չեզոքացվում է օդում, որտեղ գլխավոր դերակատարները կործանիչներն են, օդաչուով թե անօդաչու, բայց կործանիչները։

**ԱԹՍ-ների հայեցակարգերի լոկալ փորձարկումը Մերձավոր Արևելքում 2015-2020 թթ.։ Դրանց հեռանկարները մեզ համար։**

Վերջին հինգ տարում Սիրիայում, Իրաքում, Լիբիայում և այլ երկրներում լայն մարտական կիրառություն ունեցան տարատեսակ իսրայելական, ամերիկյան, ռուսական, թուրքական, իրանյան ԱԹՍ-ները։ Այս սարքերը հետախուզությունից լայն անցում կատարեցին դեպի մարտական խնդիրներ։ 2019-2020 թթ. տարբեր բարդ օդային հարվածների ընթացքում երանով օդային հարվածներ հասցրեցին հատկապես իսրայելական և թուրքական ԱԹՍ-ները։ Հարվածների թիրախում հայտնվեցին ռուսական ՀՕՊ համակարգերը, սիրիական ՁՈւ-երի տարբեր ստորաբաժանումներ և այլն։ Այս հարվածների ժամանակ փոքր, երբեմն դանդաղաչարժ ԱԹՍ-ները գրեթե չեն հայտնաբերվում վերգետնյա ՀՕՊ և ՌԷՊ համակարգերի կողմից, իսկ եթե անգամ հայտնաբերվում են, ապա դրանց քանակը ուղղակի խեղդում է այդ միջոցների կապուլիների հնարավորությունները։ Ար-

<sup>22</sup> *Ժոքթրն* 2017. 38-75, 76-106.

դյունքում ԱԹՄ-ների պարսերը իրենց մարտական խնդիրը լուծում են: Առանձնակի արդյունավետ էր իրանյան ԱԹՄ-ների համակարգված օդային հարվածը Սաուդյան Արաբիայի Նավթամշակման գործարանի վրա: 2019 թ. սեպտեմբերի 4-ին Սաուդյան Արաբիայում անհայտ հանգամանքներում Արևելյան և Խուրայսի Նավթամշակման գործարաններին հասցվեցին օդային կետային, գերճշգրիտ հարվածներ: Ամեն մեկ իրթիռը կամ ԱԹՄ-ն կոնկրետ հարվածել էր իր թիրախին: Ըստ պաշտոնական տեղեկությունների Արևելյան գործարանին հարված հասցրել են 18 միավոր մարտական ԱԹՄ-ները, իսկ Խուրայսի գործարանին հարվածել են 7 միավոր ԹՀ-ներ, որոնցից 4-ն են միայն տեղ հասել: Տեղ չհասած ԹՀ-ները իրենցից ներկայացնում են իրանյան “Quds” ԹՀ-ներ, որոնք էլ իրենց հերթին խորհրդային “X-55”-երի պարզագույն իրանական կրկնօրինակներն են:

Ըստ պաշտոնական տեղեկությունների սաուդական ՀՕՊ-ը գինված է ամերիկյան “Patriot” ՁՀՀ-ների “PAC-2”, “PAC-3” տարատեսակների 36 մարտկոցով, որոնց աջակցում են 17 միավոր հեռակա հայտնաբերման “AN/FPS-117” ՌՏԿ-ներ: Սաուդական ՀՕՊ-ը հագեցած է նաև օդային հայտնաբերման միջոցներով, կործանիչներով և այլն: Բնականաբար այս բավականին արդյունավետ հարվածը առաջացրեց բազում ոգևորություններ ու հիասթափություններ տարբեր կողմերում: Մի կողմ թողնենք, որ այս հարվածը բավականին լավ էր կազմակերպված, այն անսպասելի է եղել արաբների համար, որ իրականում ՀՕՊ միջոցների քանակը շատ քիչ է այս երկրի բավականին մեծ տարածքի համար, որ հեռակա հայտնաբերման միջոցները քիչ են և այլն, հարցն այստեղ այլ է: Կարծում ենք, եթե անգամ սաուդական

ՀՕՊ-ը լինել մի քանի անգամ ավելի մեծ ու հզոր, հագեցած լինել ամերիկյան, ռուսական կամ այլ երկրի սպառազինությամբ, միևնույնն է ցամաքային ՀՕՊ-ը ի վիճակի չէ հետ մղել նման գրագետ կազմակերպված օդային թեկուզ ոչ մեծ ուժերով կազմակերպված հարվածը, մանավանդ երբ այն չսպասված է: Ցամաքային որևէ որակի ՀՕՊ և ՌԷՊ ի վիճակի չէ հակադարձել նման կազմակերպված օդային հարվածը: Այստեղ միակ հարցն այն է, որ այդ հարվածի ուղղորդման կազմակերպումը ոչ Հուսիսների և ոչ էլ անգամ Իրանի համար հասանելի չեն: Այստեղ հարկավոր են այլ մակարդակի հայտնաբերման, ուղղորդման և վերահսկման համակարգեր: Այս հարվածը հետաքրքիր է նաև նրանով, որ փաստորեն միայն ԱԹՍ-ների ասիմանափակ ուժերով էլ կարելի է հասցնել ուժգին հարվածներ, եթե հատկապես դրանք նավթամթերքի հետ կապ ունեցող ռազմավարական օբյեկտներ են: Այս ամենը հետաքրքիր է նաև մեր դեպքում:

Բազմաշերտ և անվիճելիորեն արդյունավետ այդ հարվածների կազմակերպման ու ճշտության ապահովման համար մեծ դեր կարող են խաղալ ինչպես հետախուզական, այնպես էլ տարատեսակ, տարբեր չափերի դասական ԱԹՍ-ները, ԱԹՀ, ՕՀ-ները, փոքր դրոնները և այլն: Դրանք կկառավարեն հրթիռահրետանային կրակը և անհրաժեշտության դեպքում հակառակորդին կխոցեն սեփական հարվածներով (համատեղված ավիացիոն և հրթիռահրետանային հարվածներն իրենցից ներկայացնում են մի առանձին ու հետաքրքիր թեմա): Այստեղ հաջողությամբ կարող է կիրառվել ռուսական «P-90» ԱԹՍ-ն, որը, տվյալներ հաղորդելով իր արձակման կայանին, կուղղորդի «Смерч» (9К58) հեռահար կրակը:



Նման միջոցները արդեն բազմատեսակ են: Հետախուզական բազմատեսակ համակարգերի և համալիրների կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ մարտական ԱԲՄ-ները հասցնում են հարվածներ: Մարտական ԱԲՄ-ներն ավելի օպերատիվ գործելու համար կարող են հետախուզման ընթացքում արդեն գտնվել օդում, տվյալ կամ նշված մոտակա շրջանում և նշանակետի մասին հրամանատարական կետի հետ միաժամանակ ստանալ համաժամանակյա տեղեկատվություն: Համակարգային կիրառությունը հնարավորություն կտա ստացված հետախուզական տվյալների մշակումը և տարբեր ստորաբաժանումների համագործակցությանը միտված գործողությունները մանրամասնելու՝ կրճատելով ժամանակը, նվազեցնելով նաև կապից սպասվող արտահոսքի վտանգը: ԱԲՄ-ների մարտական այդպիսի կիրառությունը շահագործման պարզության, տեղափոխելու հարմարավետության և արագության հաշվին մարտական գործողությունների ժամանակ կարող է անհրաժեշտ տեղամասում ապահովել քանակական առավելություն հակառակորդի ավիացիայի նկատմամբ: Նման խելամիտ կիրառությունը և տեխնիկական հնարավորությունները կարող են ապահովել հաղթանակ նույնիսկ դասական ինքնաթիռների և ուղղաթիռների նկատմամբ: Օրինակ, համագորային զորամասի կամ զորամիավորման հրամանատարը, ունենալով մարտական ԱԲՄ-ների տասնյակին մոտ համալիրներ, կարող է նշված վայրում և նշված պահին ապահովել հարվածներ մինչև հարյուրին հասնող ԱԲՄ-ներով: Հարվածները կարող են լինել մարտավարական և անգամ օպերատիվ մարտավարական խորությամբ, կիրառման զանազան խաբուսիկ, շեղող և օգնող հնարքներով, դասական ավիացիայի և

հրթիռահրետանային հարվածների հետ համատեղ: Գումարտակներում նման սարքերը և տարատեսակ այլ փոքր ու մեծ «դրոնները» կարող են լինել արդեն մի քանի տասնյակ: Եթե այս խտությունը հաշվենք արդեն ստացվում է, որ ամենափոքր կվադրոկոպտերներով և միջին չափերի ԱԹՍ-ներով գնդի տեղամասում կարող է մեկ օրում մարտական և հետախուզական թռիչքներ կատարեն մինչև 500 ԹՍ-ներ: Սա արդեն չափազանց մեծ խտություն է, որը պահանջելու է կիրառման մանրակրկիտ պլանավորում և համակարգում: Սակայն նաև մեծ հնարավորություն է տալու այս տարատեսակ ԹՍ-ների երամներին, պարսերին ու խմբերին լուծել մարտական խնդիրներ մարտավարական խորությունից մինչև օպերատիվ խորությունը: Կիրառության մարտավարական բազմազանությունը մեծ հնարավորություններ է տալիս: ԲԿ-ի կամ օպերացիոն ուղղության դեպքում այդ թռիչքների քանակը օրական կարող է կազմել մի քանի հազարից մինչև տասնյակ հազարներ: ԱԹՍ-ների խմբերը, պարսերը անհատական կամ ցանցային կառավարմամբ, համագործակցված, տարատեսակ մարտավարական հնարքների կիրառմամբ կարող են դառնալ հիմնական հարվածային միջոցները կամ լրացնել հիմնականներին: Ոչ մի զորամիավորում այլևս ի վիճակի չէ նման քանակի ՕՀՄ-ների դեմ պայքարել զուտ սեփական ՀՕՊ կամ ՌԷՊ միջոցներով: Տվյալ դեպքում խոսքը գնում է մեկ մետր և ավելի չափեր ունեցող ԱԹՍ-ների մասին, իսկ ավելի փոքր չափեր ունեցող դրոնների դեպքում, առհասարակ անիմաստ է խոսել ՀՕՊ-ի կամ ՌԷՊ-ի մասին: Մենք նշեցինք նման սարքերի երամների մասին, դրանք գերփոքր են, կարող են մարդու ափի մեջ տեղակայվել մի քանի նման ԱԹՍ-ներ, դրանք կարող են տեղակայվել

հրետանային արկերի մեջ, ավիացիոն ռումբերի ու հրթիռների մեջ և այլն: Մեծ բարձրության վրա նման արկերն ու տարատեսակ կրիչները կրազվեն ու իրենցից կարծակեն հազարավոր նման փոքր խոցման միջոցներ, որոնք մի քանի կմ հեռավորություն կարող են անցնել և անհատապես գրոհել մարդկանց վրա, կամ մարտական տեխնիկայի վրա: Մի քանի նման արկերի կամ այլ կրիչներից միաժամանակ դեպի թիրախները կարող են գնալ մի քանի տասնյակ հազարավոր գերփոքր ԱՐՁԱ-ներ: Այդ քանակի սարքերը կարող են գործել լիովին անհատական, կամ խմբային հարվածի ծրագրով, իրար մեջ կարող են փոխանակել տեղեկություններ և կառավարվել ցանցով՝ ինչպես ներքին ցանցով, այնպես էլ արտաքին կառավարման համակարգերով: Նման խմբերում լինելու են լիդեր սարքեր, որոնցից ամեն մեկի կորստից հետո այդ դերը ստանձնում է մեկ այլ սարք: Այսինքն, այս խմբերը գործելու են մեղուների պարսերի սկզբունքով, որոնք դրսևորում են կոլեկտիվ գիտակցություն: Այս սարքերը ըստ ծրագրավորման գործելու են հենց այդպես: 2020 թ. հուլիսին ՀՀ սահմանին տեղի ունեցած լուրջ մարտերի ժամանակ աղբրեջանական ՁՈւ-երը փորձեցին ԱՐՁԱ-ները կիրառել ցանցային կառավարման համակարգով, սակայն ՀՀ ՁՈւ-երի գրազետ հակազործողությունների արդյունքում պարտություն կրեցին: Այս ամենը փաստեց, որ աղբրեջանական ՁՈւ-երը ուղղակի պատրաստ չեն ՑՀԿ հայեցակարգի կիրառությանը: Առանձին դետալների կիրառությունը դեռ հաջողության երաշխիք չէ:

Այսինքն ԱՐՁԱ-ները և այլ անօդաչու համակարգերը դառնում են ինքնուրույն օդային գերակայության գործիքներ և կազմում են գլոբալ օդային գերակայության

մասնիկ: Այդ օղային գերակայությունը այլևս դառնալու է որոշիչ ռաճագործողության համար: Օղային գերակայության ապահովման կանոնները ոչ մի կերպ չեն փոխվելու, ուղղակի միջոցների չափերն են փոխվելու, արագությունն ու խտությունն է մեծանալու: Կհայտնվեն մասսայական կործանիչ ԱԹՍ-ներ, իրական մեծ կործանիչների հնարավորությունները ավելի կհզորանան: Հենց ԱԹՍ-ներով ու ավելի փոքր օդ-օդ խոցման միջոցներով հագեցվելու շնորհիվ դասական կործանիչները ավելի հեռվից, միաժամանակ ավելի շատ օղային թիրախներ կխոցեն: Ցանցային հետախուզությունն ու կառավարումը, ցանցային կիրառությունը ԱԹՍ-ների պարսերին ու խմբերին կդարձնեն շատ վտանգավոր, արագ գործող ու հեռահար հարվածող միջոցներ: Այդ օղային գերակայությունը դասականի նման լուծվելու է օդում, իսկ վերգենտյա համակարգերը՝ խոցման միջոցները, ՌԷՊ միջոցները և այլն, ընդամենը օգնելու են: ԱԹՍ-ների քոլոր տեսակները անկախ իրենց չափերից գործելու են օղային գերակայության մեջ, կործանիչների վերադասության տակ, ցանցահարթակակենտրոն պատերազմների(ՑՀԿ) պայմաններում, հանդիսանալով այդ տեսակի պատերազմի իրականացման լավագույն գործիքներից մեկը:

Այս ամենը նշանակում է, որ համագորային ստորաբաժանումները, զորամասերը, զորամիավորումները ականայից հայտնվում են օղային գերակայության տիրույթ, պետք է ստանան օղային պայքարի միջոցներ, ավելի լավ հասկանան օղային գործողությունները, մասնակցեն դրանց պլանավորմանը, ավելի լավ համագործակցեն օդուժի հետ և այլն: Սա նշանակում է, որ խառը զորատեսակներով ստորաբաժանումների և միավորների դերը գնալով մեծանում է: Ապագայում կարող է այլևս

չինել տանկային, հրետանային կամ մոտոհետևակային գունդ հասկացություն, խառը զորատեսակները ավելի արդյունավետ կարող են լինել: Ռազմագիտական այս հարցը սակայն մանրամասն քննարկման այլ հարց է<sup>33</sup>:

#### **Վերջաբան**

Մենք 2010-2012 թթ. բազմիցս անդրադարձել ենք ԱՐԾՍ-ների կարևոր դերակատարությանը<sup>34</sup>, իսկ 2016 թ. հունվարին նշել էինք, որ Ադրբեջանը անցում է կատարում մարտական ԱՐԾՍ-ներին, ինչով կարող է լուրջ առավելություն ստանալ: Այժմ էլ նշում ենք, որ հետագա քայլերը կարող են բերել համակարգային կիրառության, ինչը հրետանու և օդուժի հետ ինտեգրման քարձր մակարդակի շնորհիվ կարող է մեծ առավելություն տալ ադրբեջանական բանակին: Արդեն հստակ երևում են օդուժը գերճշգրիտ միջոցներով հագեցնելու քայլերը, գրոհիչներից փորձում են արձակել օպերատիվ հեռահարության ԹՀ-ներ, ուղղաթիռներից արձակվում են 10-15 կմ հեռահարության «օդ-երկիր» դասի հրթիռներ, փորձում են յուրացնել լազերային ուղղորդմամբ միջոցներ: Այս ամենը կարևոր հետևությունների տեղիք է տալիս: ՀՀ ՁՈւ-երը պետք է համապատասխան եզրակացություն կատարեն աշխարհում արդեն լայն տարածում գտնող ԱՐԾՍ-ների պարսային, երամային կիրառությունից:

1. ԱՐԾՍ-ները դառնում են ՕՀՄ-ների կարևոր տեսակներ, դրանց տեսականին շատ մեծ է:

2. Դրանք գործում են ինչպես առանձին մարտավարական հարվածների ժամանակ, այնպես էլ համակարգ-

<sup>33</sup> Այս ամենի մասին մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան 2017**:

<sup>34</sup> 24.06.2010 **Անօդաչու թռչող սարքերի կիրառության հեռակար-  
ները մեր տարածաշրջանում**՝ Արժրուս Հովհաննիսյան,  
[http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=4892](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4892)

ված բարդ օդային հարվածների ժամանակ:

3. Նման բարձրակարգ կազմակերպված ու բազմատեսակ ՕՀՄ-ներով հասցված հարվածները հետ մղելու համար դասական ՀՕՊ-ն ու ՌԷՊ-ը այլևս ի վիճակի չեն լուծել պաշտպանական խոչնդները:

4. Որպես օդային գերակայության կարևոր գործիքները այս միջոցները ՑՀԿ պատերազմների հայեցակարգում լայնորեն համագործակցում են կործանիչների և օդային ղեկավարման կետերի հետ, ստեղծելով հարվածային միջոցների ցանց:

5. Հասունանում է օդուժ-հրետանի-ՀՕՊ-ՌԷՊ զորատեսակների որևէ ֆորմատով միավորման խնդրի հրատապությունը, թեկուզ առանձին դետալներով կամ առանձին ռազմագործողությունների ժամանակ:

6. Բարդանում են ՑԶ-երի հրամանատարության կողմից այլ զորատեսակների հետ գործողությունների պլանավորման և համագործակցության հարցերը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**ԱՄՆ-ը 30 տարուց հետո կակի օգտագործել արհեստական ինտելեկտով կառավարվող անօդաչու սարքեր, երեքշաբթի, 31 հունվարի,**

[http://www.1in.am/arm/world\\_wusa\\_57510.html](http://www.1in.am/arm/world_wusa_57510.html)

**Եմենում անօդաչու սարքի օդային հարվածից զոհվել է «Ալ-Քաիդայի» 11 զինյալ, 31 հունվարի, [http://www.1in.am/arm/world\\_wmidleeast\\_57444.html](http://www.1in.am/arm/world_wmidleeast_57444.html)**

**«Հայ զինվոր»** թերթ, № 21, 2007, 2-9 հունիսի, էջ 13:

**Հովակիմյան Ա. Տ. 2002**, Ռազմական բնագավառի նորությունը, «Հայկական բանակ», № 3 (33), էջ 100-103:

**Հովհաննիսյան Ա. 2017**, Ռազմարվեստ. Հատոր Առաջին: Օդային գերակայություն: Երևան, 816 էջ:

24.06.2010 Անօդայու թռչող սարքերի կիրառության հեռանկարները մեր տարածաշրջանում. Արծրուն Հովհաննիսյան;

[http://www.ncravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=4892](http://www.ncravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4892)

**Амусин Б., Лосен Е. 2002.** Летящие роботы, Армейский Сборник № 2, с. 38-41.

**Беляев В. 2004.** Война в воздухе, Новая угроза, Современные зарубежные БПЛА и перспективы их развития, Хищник выходит на охоту, Авиация и Космонавтика, № 4, с. 8-17.

**Беляев В. 2005.** Война в воздухе, Новая угроза, Современные зарубежные БПЛА и перспективы их развития, Хищник выходит на охоту, Авиация и Космонавтика, № 1, с. 12-21.

**Вартанесян В. А. 1991.** Радиоэлектронная разведка, Москва, 462 с.

**Генерал ВВС США назвал БЛА «Предейтор» бесполезным,** <http://www.warandpeace.ru/ru/news/view/83937/>

**Григорьев П. 2004.** Глобал Хок пилотируется с земли, Авиа Панорама, сентябрь-октябрь, с. 6-8, 10-13;

**Догерти М. 2017.** Дроны, Москва, 222 стр.

**Евграфов В. 2009.** Перспективы использования зарубежными вооруженными силами БЛА для решения задач РЭБ. ЗВО. 2009.

**Каримов А. 2003.** Беспилотные летательные аппараты большой высоты и продолжительности полета: уникальность и эффективность. Авиация и Космонавтика, № 4, с. 30-33;

**Кишини В. 1995.** Беспилотные камикадзе, Армейский Сборник, № 4, с. 87-89.

**Колтакснев И. 1993.** Бумеранг. Техника Молодежи, № 9, с. 28-30.

**Манащинский А., Чумак В. 1996.** Беспилотники над барханами, Армейский Сборник № 8, с. 93-95.

**Мельник П. 2006.** Предвстники восстания машин, Авиа Панорама, ноябрь-декабрь, с. 48-51.

**Носов О. 2010.** США удвоят парк БЛА. Ривер. ЗВО. 4, с. 81.

**Самолетов С. 2010.** Гиперспектральный разведкомплекс компании Рейтеон. 4, с. 81.

**Чекунов Е. 2010.** Применение БЛА ВС США в военных конфликтах. ЗВО. 7, с. 41.

**Щербаков Р. 2003.** Перспективные беспилотные летательные аппараты вертолетного типа, Зарубежное Военное Обозрение,

- Яценюч Ю. 2006.** БЛА ОКБ имени А. С. Яковлева, Вестник Воздушного Флота, июль-август, с. 38-43.
- Cook N. 2000.** UK set to accelerate Watchkeeper ISTAR UAV programme. Jane's defence weekly. 1 November, p. 30.
- D. Lamothe. Watch Perdix, the secretive Pentagon program dropping tiny drones from jets.** March 8, 2016.  
<https://www.washingtonpost.com/news/checkpoint/wp/2016/03/08/watch-perdix-the-secretive-pentagon-program-dropping-tiny-drones-from-jets/>
- Gremlins Program Completes First Flight Test for X-61A Vehicle. 1/17/2020. <https://www.darpa.mil/news-events/2020-01-17>
- Mind of the swarm. 03/20/2020.  
<https://www.raytheonmissilesanddefense.com/news/feature/in-ind-swarm>
- Michael Isikoff.** U.S. official acknowledges drone strikes, says civilian deaths 'exceedingly rare'.  
[http://openchannel.msnbc.msn.com/\\_news/2012/04/30/11475659-us-official-acknowledges-drone-strikes-says-civilian-deaths-exceedingly-rare?lite](http://openchannel.msnbc.msn.com/_news/2012/04/30/11475659-us-official-acknowledges-drone-strikes-says-civilian-deaths-exceedingly-rare?lite)
- S. Roblin. Mar 2, 2020,** Turkish Drones and Artillery Are Devastating Assad's Forces In Idlib Province-Here's Why.  
<https://www.forbes.com/sites/sebastianroblin/2020/03/02/idlib-onslaught-turkish-drones-artillery-and-f-16s-just-destroyed-over-100-armored-vehicles-in-syria-and-downed-two-jets/#5ed54476cd32>
- T. Demerly.** Watch U.S. F/A-18 Hornets Unleash Swarm of Mini-Drones in First Test. **January 11, 2017**  
<https://theaviationist.com/2017/01/11/watch-u-s-fa-18-hornets-unleash-swarm-of-mini-drones-in-first-test/>
- The Drone Wars Are Already Here.** October 30, 2019.  
<https://www.bloomberg.com/news/articles/2019-10-30/the-drone-wars-are-here-and-they-re-escalating>
- Upgraded «MQ-8B Fire Scout» Flown.** AIR International. February. 2007, p. 13.

**Արծրուն Հովհաննիսյան, պ.գ.թ.,**  
*նազմական վերլուծաբան*  
[arcunhovhannisyan@gmail.com](mailto:arcunhovhannisyan@gmail.com)



## THE MANIFESTATION OF CONCEPTS OF UAV SWARMS AND CLUSTERS IN THE MIDDLE EAST

**Keywords:** *Middle East, UAV, Swarms, Clusters, plane, attack, fighters.*

For nearly the past half a decade, hybrid wars of a local proxy nature have been taking place in the Middle East. Various weapons have been applied in testing out various concepts. Among these are UAVs of different kinds and sizes in efforts to resolve a variety of challenges. Whether in the event of strikes on a high ranking official or terrorist, a strike on a new type of air defense system or a strike on an oil refinery, international media is shocked each time it hears of the effectiveness of UAVs used in attacks. In the past five years, a large variety of Israeli, American, Russian, Turkish and Iranian-made UAVs were widely applied in combat in Syria, Iraq, Libya, as well as other countries. The devices made a wide transition from merely being used for intelligence to being applied in combat. In 2019-2020, during various complicated air attacks, clusters of UAVs were used, particularly using Israeli and Turkish-made ones. Use of UAVs in swarms and clusters is new to the world of warfare, and they lead to a change in perceptions of warfare from the classic view.

*Artsrun Hovhannisyanyan - PhD,  
Military analyst,  
arcrunhovhannisyanyan@gmail.com*

**Uq. 1. X-61 Gremlin**



Նկ. 2. Perdix



Նկ. 3. Locust a)



b)



#### Uq. 4. Predator



---

---

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ  
ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

---

---

---

---

ИСТОЧНИКОВЕДЕНИЕ И ФИЛОЛОГИЯ

---

---

---

---

SOURCE STUDY AND PHILOLOGY

---

---

ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊՒ ՊԱՏՄԱԿԱՆ  
ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, ԽԱՂԱՆԻ ՇԻՐՎԱՆԻԻ  
ԾՆՆԴԱՎԱՅՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ\*

ԱՐՏՅՈՒ ՏՈՒՈՅԱՆ

**Բանալի բառեր՝** *Խաղանի Շիրվանի, Բաղր Շիրվանի, Շիրվան, Շամախի, Մախամ, բանավոր ավանդույթ, թաթ:*

*Շիրվանի միջնադարյան պարսկական գրականության հայտնի ներկայացուցիչ Խաղանի Շիրվանիի (1126-1199 թթ.) ծննդավայրի խնդիրը երկար ժամանակ չի եղել առանձին ուսումնասիրության առարկա:*

*Հոդվածը Խաղանիի ծննդավայրի խնդրի վերջնական լուծման փորձ է, որը հիմնված է Լահիջի թաթախոս բնակչության շրջանում պահպանված րեղական բանավոր ավանդույթների, ինչպես նաև Բաղր Շիրվանիի (14-15-րդ դար) Դիվանի րվալների վրա:*

Հանրահայտ փաստ է, որ բանավոր ավանդությունները, պատումները, հեքիաթներն ու առասպելները շատ հաճախ անգիր ժողովրդի պատմության մույթ խորքերը

---

\* Հոդվածը ներկայացվել է 12.05.2020: Գրայնություն է 29.05.2020:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 18T-6F376 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում: Տողերի հեղինակը խնդրի առարկա թեմային առաջին անգամ անդրադարձել է 2016 թ. Եղյանների 18-ին՝ ԵՊՀ իրանագիտության ամբիոնում «Քննարկում և Persophone Starvate» խորագրի ներքո անցկացված միջազգային գիտաժողովում (տե՛ս **Տոնյան 2016**, 33-34):

քափանցելու եզակի միջոց են<sup>1</sup>, բացառիկ սկզբնաղբյուր գրային ավանդույթից զուրկ ժողովուրդների պատմության<sup>2</sup>, նրանց առնչվող պատմական տարբեր իրադարձությունների ուսումնասիրության համար<sup>3</sup>:

Թեև Արևելյան Այսրկովկասում բնակվող իրանական ժողովուրդների, այդ թվում կովկասյան պարսիկների կամ թաթերի բանավոր ավանդություններին նշվածի

---

<sup>1</sup> Բանավոր ավանդությունների բացառիկ սկզբնաղբյուրային արժեքը և դրա՝ հնարավոր պատմական իրականություն արտացոլելու եզակի նշանակությունը հատկապես անզիր ժողովուրդների պատմությանը վերաբերող հարցերի լուսաբանման և մեկնաբանման առումով համաշխարհային գիտության մեջ լայն ըննարկման առարկա է դարձել հատկապես 20-րդ դարի կեսերին՝ այն քանից հետո, երբ 1947 թ. ապրիլի 28-ին Լորվեգացի ազգագրագետ և հնագետ Թուր Հեյերդալը ապացուցելու համար Պոլինեզիայի տեղաբնիկներից իր լսած և գրառած մի բանավոր ավանդության իսկությունը, համաձայն որի նրանց գաղթը եղել էր արևելքից (*Հարավամերիկյան ափ - Ա. Տ.*), իր նախագծած «Կոն-Տիկի» լաստանավով դուրս եկավ պերուական Կայայո Լավահանգստից և 101 օրվա ընթացքում անցնելով 6900 կմ տարածություն Խաղաղ օվկիանոսի վրա, օգոստոսի 7-ին ափ դուրս եկավ Պոլինեզիայում (տե՛ս **Heyerdahl 1951**: 20-41): Թուր Հեյերդալն իր այս ճանապարհորդությամբ, որով նաև գործնականում ապացուցեց իր գրառած բանավոր ավանդության՝ իրականությանը համապատասխանելու հնարավորությունը, հիմք դրեց Պոլինեզիայի բնակիչների ծագման և գաղթի ուղիների մասին մի տեսության, որը գիտության մեջ հայտնի է «Կոն-Տիկիի տեսություն» անվամբ (տեսության մանրամասների և դրա դե՛ռ հնչած ըննադատական մտեցումների մասին տե՛ս **De Jong 1953**: 1-22):

<sup>2</sup> **Showren 2014**: 478-481:

<sup>3</sup> Ինդոլի ամենահեղինակավոր ուսումնասիրողներից էր քեյզիացի պատմաբան և մարդաբան **Յան Վանսինս** (1929-2017 թթ.), ում հեղինակած «De la tradition orale: Essai de methode historique» գիրքը շարունակում է մնալ բանավոր ավանդությունների ուսումնասիրությամբ զբաղվողների համար լավագույն դասագրքերից (**Vansina 1961**):

համատեքստում երբևէ իրանագետների կողմից առանձնահատուկ ուշադրություն չի դարձվել<sup>4</sup>, սակայն այս ժողովրդի պատմության և անցյալի ժառանգության տարբեր խնդիրների ուսումնասիրության հարցում ևս դրանք կարող են ունենալ հավաստի սկզբնաղբյուրային նշանակություն:

Ավաճառի լավագույն օրինակներից է Խաղանի Շիրվանի անվամբ հռչակված 12-րդ դարի բանաստեղծ Աֆգալադդին Իբրահիմ իբն Ալիի ձևնդավայրի խնդիրը<sup>5</sup>, որի մասին Լահիջի բնակիչների շրջանում պահպանված և ժամանակին գրի առնված բանավոր ավանդություններն ունեն հավաստի սկզբնաղբյուրային արժեք:

1928 թ.-ին, երբ խորհրդային հայտնի իրանագետ, արևելապարկովկասյան իրանական լեզուներից կովկասյան պարսկերենի և թալիշերենի ուսումնասիրող Բորիս Միլլերը դաշտային աշխատանքներ էր իրականացնում Ադրբեջանի Խորհրդային Հանրապետությունում և գրա-

<sup>4</sup> Արևմտաիրանական լեզուներով խոսող ժողովուրդներից լավ է ուսումնասիրված հատկապես Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի ջրդախտ, Իրանական արաբարթի պարսկախոս և բելուջախոս, Կենտրոնական Ասիայի տաջկախոս հանրությունների շրջանում պահպանված և ժամանակին գրանված բանավոր գրականությունը (թեմայի ուսումնասիրության վեոաբեդյալ գրականության բովանդակ մի ցանկ տե՛ս **Kreyenbroek 2010**: 323-379):

<sup>5</sup> Խաղանի Շիրվանիի (1126-1199 թթ.) ձևնդավայրի հարցի շուրջ գիտական գրականության մեջ տարբեր ժամանակներում շրջանառվել է երեք հիմնական վարկած՝ **ա) Կովկասյան Գանձակ** ճաղաքը (**Khanakof 1864**, **Zaenenan 1875**). **բ) Շամախի** ճաղաքը (**Browne 1906**: 392-399), **գ) քեղհանրական Շիրվան** երկրամասը, որը կարող էր ներառել և Շամախին, և սույն հոդվածում քննարկվող Մալիամ գյուղը (**Бегринец 1962**: 50-65): Ինքը՝ Խաղանին իր հեղինակած «Tobīat al-‘Erāqayn» (تحفة العراقين) երկի մեջ որպես իր ձևնդավայր նշում է Շիրվան երկրամասը (۴۴: ۱۲۵۷ تحفة العراقين):

ունում այդ երկրի հարավային (Ապշերոն (ներառյալ Սուրախանիի և Բալախանիի խոսվածքները), Լաիջ, Մալհամ), կենտրոնական (Արիսուշ-Դաղղուչու, Իսիզի) և հյուսիսային (Ղուբա, Շարրան, Ղոնաղբենդ, Ղըրմըզը Ղասաբա)<sup>6</sup> թաթական բարբառների լեզվական նյութը, լսում է մի ավանդություն և զետեղում այն մեկ տարի անց՝ 1929 թ.-ին հրատարակած իր աշխատանքում:<sup>7</sup>

Ք. Միլլերը նշված գրքում, խոսելով Շամախիին մոտ գտնվող Մալհամ գյուղի թաթերի լեզվի մասին, ի միջի այլոց, նաև նշում է. «Ընդ որում, Մալհամի մասին մի հեղափոխիչ բան է պատմել ինձ Աղանը, մալհամցիների մոտ պահպանվում է մի ավանդություն, համաձայն որի՝ իրենց գյուղից է արմարներով 12-րդ դարի պարսից հոչակավոր քանասրերձ խաղանին: Եթե այդ ավանդությունը հաստատվեր, ապա կարացվեր, որ խաղանին ծագումով թաթ է»<sup>8</sup>:

---

<sup>6</sup> Թաթական բարբառների նուախումք դասակարգման քերված մոդելը Մ. Հաջինին է (տե՛ս **Իսախանյան 1995b**: 18), որը կենտրոնական և հյուսիսային խմբերի առումով նույնությամբ և առանց փոփոխության վերցված է Ա. Գրյունբերգից (**Грюнбергер 1963**: 8), իսկ հարավային խմբի մեջ ավելացվել են խորհրդային հայտնի թաթագետի հետազոտության ասպարեզից դուրս մնացած Լաիջի և Մալհամի բարբառները: Մ. Հաջինի մոդելը հետագայում «Մուսուլմանական թաթական բարբառներ» անվան տակ նույնությամբ կրկնել է Մ. Ալինը (**Әліев 2006**: 210): Տողերի հեղինակը 2015 թ. իր թեկնածուական ատենախոսության մեջ, ելնելով կովկասյան պարսկերենի բարբառների հնչյունական, քերականական և քառային առանձնահատկություններից, առաջարկել է դրանց դասակարգման այլ մոդել, որով առանձնացվել է բարբառների ոչ թե երեք, այլ հինգ պայմանական խումբ (**Տոնյան 2015**, 15-22):

<sup>7</sup> **Մուսոբ 1929**: 12.

<sup>8</sup> **Լույն տեղում**, 13:



Բ. Միլլերի գրառումից 75 տարի անց՝ 1999թ., դարձյալ Իսմայիլի շրջանի Լահիջ ավանում այս անգամ 61 ամյա Անվար Բալանից նույնարվանդակ մի քանակոր հաղորդում է գրառում և 2002թ. հրատարակում կովկասյան պարսկերենի բարբառների ուսումնասիրությանը զբաղվող Գյուլում Հուսեյնովան<sup>9</sup>: Թաթերենի Լահիջի բարբառով ասված քանակոր հաղորդման մեջ հետաքրքիր անդրադարձ կա, ընդ որում, ոչ միայն Խաղանիի ծննդավայրի հարցին, այլ նաև Լահիջից ոչ շատ մոտ հեռավորության վրա գտնվող Մալիամ գյուղի քնակիչների պատմական անցյալի, գյուղի թաթական բարբառի և այդ տեղանվան ժողովրդական ստուգաբանության մասին: Հաղորդման մեջ, մասնավորապես, նշվել է. «Մալիամում բնակվող մարդիկ մոտ 900 փարի առաջ Լահիջի մոտ գտնվող Խիմրանից են այնտեղ տեղափոխվել: Իսկ դա եղել է այն պարճառով, որ խիմրանցիները ծմեռելու և անասունները պահելու համար միշտ Շամախի կողմերն են գնացել: Այդ տեղն էլ Օմարի որդիներ Օսմանն ու Ալին են ընկրել: Օսմանը թժիշկ է եղել: Տեսել է, որ այնտեղ միսը<sup>10</sup> ուշ է փշանում: Այդ պարճառով ասել է, «Մի՞թե այս տեղը բալասան (աղբբեջաններն «մալիամ» - Ա.Տ.) է»: Ու այսպես այդ վայրի անունը «Մալիամ» է մտացել: Կամաց-կամաց այն գյուղ է դարձել: Այսօր Մալիամը Շամախիի ամենամեծ գյուղերից է: Աֆգալադին Խաղանի Շիրվանին այնտեղ է ծնվել: Նրա պապը Օմարն է եղել, հայրը՝ հյուսն Ալին, իսկ հորեղ-

<sup>9</sup> **Нусейнова 2002**

<sup>10</sup> Ժողովրդական ստուգաբանությունը Մալիամ քնականունը կապում է մի կողմից արաբերեն *ماليوم* «միս» բառի, մյուս կողմից նույն արաբերեն «միս» բառի հետ ստուգաբանական կապ ունեցող աղբբեջաներեն **malhom** «բուլ, քայտուղ, քայլամ, քայասան» բառի հետ:

բայրը՝ Արևելքում Աբու Ալի Սինայից հեպո ամենահայտնի բժիշկ Օսման իբն Օմարն է եղել: Այսօր էլ Մալիամի ու Խիմրանի քնակիչների միջև սերտ բարեկամությունը չի խամրել: Ասում են, որ այդ երկու գյուղերի մարդկանց բարբառը չի փոխվել<sup>11</sup>:

Բ. Միլլերի և Գ. Հուսեյնովայի՝ 20-րդ դարակզրի և նույն դարավերջի այս երկու դաշտային գրառումներին, որոնց աղբյուրները, ըստ հետազոտողների բերած տեղեկությունների, եղել են տարբեր բանավոր պատումներ պատմական Լեռնային Շիրվանի Լահիջ ավանից, թերևս հնարավոր է ավելացնել ևս մեկը՝ որն ամենայն հավանականությամբ, որպես բանավոր սկզբաղբյուր, պետք է հիմք ծառայած լինի Աղրբեջանում պատմահոր հուշակ վայելող Աբասղույի աղա Բակիխանովի (1794-1847 թթ.)՝ 1841 թ. պարսկերենով հեղինակած, իր իսկ կողմից իր ծառայակից ընկերոջ՝ Վասիլի Կուզմինի օգնությամբ 1844 թ. ռուսերեն թարգմանված և առաջին անգամ միայն 1926 թ. հենց ռուսերենով լույս տեսած «Գյուլիսթան-ի իրամ» երկասիրության՝ խաղանկի ձևնդավայրին վերաբերող հատվածի համար<sup>12</sup>: Արժեքա-

<sup>11</sup> Hüseyinova 2002: 143-144.

<sup>12</sup> Бахчанов 1926. Ռուսերեն այս տարբերակը Մ. Ասգարիի կողմից թարգմանվել է աղրբեջաներեն և լույս տեսել 1951 թ. Բաքվում՝ Ա. Ալասգարզադեի խմբագրությամբ և Մ. Շարիֆիի առաջաքանով (Бахчанов 1951): Աղրբեջաներեն տարբերակը, լատինագրի փոխած, նույնությամբ վերահրատարակվել է 2010 թ.՝ Բաքվում (Бахчанов 2010): Աղրբեջանի ԳԱԱ Ձեռագրերի ինստիտուտի գրադարանում М-49/6258, Б-2268/2313, Б-2236/2954, Б-2002/9226 և Б-19/3312 շիֆրերի տակ պահվող պարսկերեն 5 ձեռագրերի հիման վրա Ա. Ալիզադեի, Մ. Սոլթանովի, Մ. Ազարիի, Ա. Մալաբադեի, Ֆ. Բաբանի համահեղինակությամբ պատրաստված պարսկերեն գիտաքննական քննադիրը լույս է տեսել 1970 թ. Բաքվում (1970 باخچانوف): Իսկ 1991 թ.

վոր այս աշխատության՝ Խաղանիին վերաբերող հատվածում, որտեղ բերված են բանաստեղծից որոշ կենսագրական տվյալներ, մասնավորապես նշված է. «Հասան ալ-Աջամ Խաղանի Շիրվանի, Իրրահիմ բին Ալի Նաջջար: Նրա հայրը եղել է իրան Մալիամյու (ռուս. քն. Мохаммед - U.S.) գյուղում՝ Շամախի քաղաքից վերև»:<sup>13</sup>

Արասղոյի աղա Բակիխանովի՝ «Գյուլիսթան-ի իրան» (բառ. թրգմն.՝ «Դրախտային ծաղկանոց») գրքի նշված հատվածը, 1950-ականներից սկսած, իր կողմն է գրավում Ադրբեջանի գիտական շրջանակների հետաքրքրությունը և մոտավորապես երկու տասնամյակ տարբեր հեղինակների աշխատանքներում օգտագործվում է Խաղանիի ծննդավայրի հարցը քննելիս:

Մ. Սուլթանովը 1954 թ.<sup>14</sup> և Ֆ. Քոչարլին 1978 թ.<sup>15</sup>, հավանաբար նույնացնելով հենց Ա. Բակիխանովի մոտ Շամախի քաղաքից վերև հիշատակվող «Մալիամյու»

---

դարձյալ Բաքվում, այս անգամ Ձիյա Բուեյաղովի խմբագրությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով չոյս է տեսել Վրաստանի՝ Կորնեյի Կեկելիձեի անվան ձեռագրերի ազգային կենտրոնում պահվող և Բակիխանովի ձեռագրով գրված 340 թղթից բաղկացած ռուսերեն տարբերակը, որը Բակիխանովի՝ պարսկերենից կատարած թարգմանությունն է՝ իր ծառայակից ընկերոջ՝ Վասիլի Կուզմանի և Ձ. Բուեյաղովի ներթադրությամբ նաև (Թադեոշ Լադյա-Չաբլոցկիի օժանդակությամբ (Բակիխանով 1991):

<sup>13</sup> Թարգմանությունը տրված է ըստ Վրաստանի՝ Կորնեյի Կեկելիձեի անվան ձեռագրերի ազգային կենտրոնի Արևելյան ֆոնդի ռուսերեն քաժնի № 370 փաստաթղթի, որն առաջին անգամ ներառվել է Բակիխանովի «Գյուլիսթան-ի Իրան» աշխատության՝ 1926 թ. Հրատարակված ռուսերեն տարբերակում (Բակիխանով 1926: 166, իսկ երկրորդ անգամ նույնությամբ և առանց փոփոխությունների, հրատարակվել է 1983 թ. (Բակիխանով 1983: 264):

<sup>14</sup> Султанов 1954: 18.

<sup>15</sup> Кочарли 1978: 139.

տեղանունը Շամախիի՝ այժմ թաթաբնակ Մալիամ գյուղի հետ. իրենց աշխատանքներում Իսաղանիի ծննդավայր են համարում Շամախիի Մալիամ գյուղը:

1966 թ. ազգությամբ կովկասյան պարսիկ Մաղսուդ Հաջիևը, ով 1960-ականների սկզբներին դաշտային աշխատանքներ է իրականացրել Մալիամ գյուղում՝ գրտեռով պարսկերենի Մալիամի խոսվածքի լեզվական նյութը<sup>16</sup>, հրապարակում է մի հոդված՝ վերնագրված «Որտե՛ն է ծնվել Իսաղանի Շիրվանին»<sup>17</sup>, որում անդրադառնալով գյուղի պատմական որոշ հուշարձանների և գերեզմանատան թվագրության խնդիրներին, եկել է եզրակացության, որ գյուղն ունի մոտավորապես 300-400 տարվա պատմություն, հետևաբար Բակիխանովի հայտնած տեղեկությունը, որ Իսաղանին ծնվել է Մալիամում (իսնա՝ «Մալիամլու»՝ ըստ Բակիխանովի տեքստի) չի կարող համապատասխանել իրականությանը<sup>18</sup>:

<sup>16</sup> Մ. Հաջիևի՝ Մալիամում իրականացրած դաշտային աշխատանքների արդյունքները Շամախիի Մաղրասա գյուղի թաթախոս հայերից գրտած լեզվական նյութի հետ միասին ներկայացվել են նրա կողմից 1995 թ. հրապարակված ժողովածուի մեջ (**Կապև 1995a**: 112-142, **տպիի՝ 2009**: 286-320), որը լինելով Մալիամի խոսվածքից լեզվական նյութ պարունակող և ցարդ հրապարակում հայտնված միակ աշխատանքը, քաջազիկ կարևորություն ունի այդ խոսվածքի և կովկասյան պարսկերենի համեմատական քաղաքագիտական ուսումնասիրությանը զբաղվողների համար:

<sup>17</sup> **Կապև 1966**: 82-83.

<sup>18</sup> Մ. Հաջիևի եզրահանգումներն ակնհայտ հակասության մեջ են Մալիամի բնակիչների այն հարրորդումների հետ, որ գյուղի դիրքը վերջին մի քանի հարյուր տարվա ընթացքում փոխվել է մի քանի անգամ: Օրինակ, ըստ 1960-ական թվականներին Մալիամ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնում աշխատած և Մ. Հաջիևի հետ անձնական շփումներ ունեցած **Իսլամ Հասանովի** (ծնվ. 1927 թ.)՝ 2007 թ. հրապարակած տեղեկությունների, մինչև իր ծնվելը իր

Ավելի ուշ՝ 1970 թ., Ղաֆար Քանդի-Հարիսչին իր ղոկտորական ատենախոսության մեջ առաջ է քաշում վարկած, համաձայն որի Մալիամի բնակիչները Շամախիի մերձակայք են տեղափոխվել միայն 16-րդ դարում Աղդաշի<sup>19</sup> մոտ գտնվող համանուն բնակավայրից. երբ Շիրվանշահական տան վերջին իշխողի և Սեֆյան Շահ Թամասապի միջև տեղի ունեցած բախման արդյունքում այն վերջնականապես ավերվել էր<sup>20</sup>: Հետևաբար, ըստ Ղ. Քանդի-Հարիսչիի առաջ քաշած վարկածի, Խաղանիի ծննդավայր Մալիամը 11-12-րդ դարերում պետք է փնտրել ոչ թե Շամախիի, այլ՝ դրանից արևմուտք՝ Աղդաշի շրջանում:

Խաղանիի ծննդավայրի վերաբերյալ Բ. Միլլերի՝ 1929 թ. հաղորդումը անտեսած և Բակիխանովի՝ առանց սկզբնաղբյուրի հիշատակության թողած մի տեղեկության վրա Աղդրեջանի մասնագետների շրջանում ընթացող քննարկումները վերջնականապես ընդհատվում են, երբ Աբուֆազ Ռահիմովը Շամախիում ծնված, Շիրվանի

---

նախնիները 4 անգամ փոխել են իրենց բնակության վայրը, որոնցից ամենաինչը գտնվում է գյուղի այժմյան տեղից 3 կմ հեռավորության վրա, և որի շրջակայքում կան պահպանված հին մի մզկիթի հետքեր և որոշ հին գերեզմաններ (Հարցագրույց Մալիամի բնակիչ Քալամ Հասանովի հետ, «Աղաչաթ» օրաթերթի 2007 թ. օգոստոսի 1-ի համար): Մ. Հաջիևի պնդումները չեն հաստատվում նաև Հ. Ջիդդիի կատարած հնագիտական պեղումների և ուսումնասիրությունների նյութով, համաձայն որոնց՝ Շամախիի Մալիամ գյուղը գոյություն է ունեցել առվազն 11-12-րդ դարերից (մանրամասն տե՛ս **Ciddi 1981**: 49):

<sup>19</sup> Մ. Երեմյանը Աղդաշում է տեղադրել պատմական Աղվանքի Քաղաղաղաշում գտնված Քաղբերդ ամրոցը (**Երեմյան 1963**, 89):

<sup>20</sup> **Kandli-Harisci 1970**: 45-46: Ատենախոսությունը 1988 թ. Հրատարակվել է Քաջվում (**Ռույսի**՝ 1988), իսկ պարսկերեն թարգմանությամբ՝ 2007 թ. Թեհրանում (کتابخانه گنجینه):

գրական դպրոցի հայտնի ներկայացուցիչ Բաղդ Շիրվանիի (1387-1450 թթ.)՝ Ուզբեկստանի ԳԱ Ալ-Բիրունիի անվան արևելագիտության ինստիտուտի գրադարանում 132 շիֆրի տակ պահվող եզակի ձեռագրի (17-րդ դարի արտագրություն) հիման վրա 1985 թ. Մոսկվայում հրատարակում է նրա «Դիվանը»<sup>21</sup>, որի առաջաբանում<sup>22</sup> անդրադառնում է «Դիվանում» հանդիպող և Խաղանիի ծննդավայրի հարցին վերջնական լուծում տվող երկու բացատիկ հիշատակության<sup>23</sup>:

15-րդ դարի սկզբում ստեղծագործել սկսած Բաղդ Շիրվանին իր «Դիվան»-ում, համեմատելով իրեն Խաղանիի հետ, գրում է.

Պարսկերեն բնագիր <sup>24</sup>	Տառադարձում
رفت خاقانی و من مداح خاقانم گون تست کسی امروز تر علم سخن همتای من	Raft Xāqānī wa man maddāḥ-i xāqānam kunūn Nīst kaśi imrūz dar `ilm-i suxan hamtāy-i man
من مه تر محکم و زان روستایی منع چند	Man ma az Mall[a]hānam wa z-an rūstāyī tab` čand
مولدم خاک شامی، تخت شروان جای من.	Mōwlidam xāk-i Šamāyī, taxt-i Šarwān

<sup>21</sup> Բաբուս 1985.

<sup>22</sup> Լույս տեսում, 3-8:

<sup>23</sup> Ամենայն հավանականությամբ հենց Բաղդ Շիրվանիի «Դիվան»-ի նյութի օգտագործմամբ Արուժազ Ռաֆիմովը մինչև դրա հրատարակումը ևս երկու անգամ անդրադարձել է այդ խնդրին՝ մեկ անգամ 1976 թ. (**Արուժազ Ռաֆիմով**, Բաղդ Շիրվանիի «Միրատուս Սաֆա»-ի անհայտ ընդօրինակությունը և որոշ դիտողություններ Խաղանիի մասին, ջաղվ.՝ **Չորսույան 1980**, 313) և մեկ անգամ՝ 1980 թ. (**Արուժազ Ռաֆիմով**, Կրկին Խաղանիի ծննդավայրի մասին, ջաղվ.՝ **Չորսույան 1982**, 233), որոնք, ցավոք, հորվածի պատրաստման ժամանակ ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության և գրադարանների փակ լինելու պատճառով մնացին չտատմասիրված:

<sup>24</sup> Բաբուս 1985: 67.

**Հայերն թարգմանություն**

Գեաց Խաղանին, ես եմ հիմա ծոն ասողը խաղանի,  
 Չկա այսօր հավասար ինձ տաղատության արվեստում,  
 Ո՛չ Մալխանից եմ, և ո՛չ էլ գեղջկաբարոններից այն,  
 Շամախու ծնունդ եմ ես, տեղն իմ գահն է Շիրվանի:

Բերված հատվածից պարզ է, որ Բադր Շիրվանին, ինքն իրեն համեմատելով Խաղանիի հետ և ակնարկելով, որ Խաղանիից հետո ինքն է հոչակավոր քանաստեղծը պալատի, «Մալխան» բառի տակ նկատի ունի Խաղանիի իրական ծննդավայրը: Բադր Շիրվանին, ծնված լինելով հենց Շամախի քաղաքում, իրեն, որպես շիրվանշահական մայրաքաղաքի բնիկի, առավել է տեսնում, փաստորեն, Խաղանիից, ով, ըստ Բադրի ոչ թե Շամախիի ծնունդ է, այլ՝ «Մալխան» անունով գյուղի:

«Իվան»-ում Բադր Շիրվանին մեկ անգամ ևս խոսում է Խաղանիի ծննդավայրի մասին և արդեն քացահայտ հայտարարում, որ Խաղանին ծնվել է հենց Մալխանում.

Պարսկերեն բնագիր <sup>25</sup>	Տառադարձում
خاقانی ملخان ومان بود مالک ملک سخن ز انفس او دور زمان عالم معطر باقه	Xāqānī Malḫān-watan būd mālāk-i mulk-i suxan Z-anfās-i ō dūr-zamān ʿālam muʿattar yāfā.
Հայերն թարգմանություն	
Մալխանն էր հայրենիքը Խաղանու՝ տաղերգության իշխանի Նրա ջեյից քույր էին ամել [յուր օրերի] ժամանակը, աշխարհը:	

<sup>25</sup> Նույն տեղում, 20:

Բարդ Շիրվանիի՝ 1985 թ. միայն լույս ընծայված «Դիվան»-ի այս երկու հատվածներն են ահա, որ, անկասկած գալիս են հաստատելու Լեոնային Շիրվանում Բ. Միլլերի՝ 1928 թ. և Գ. Հուսեյնովայի՝ 1999 թ. գրառած բանավոր պատմաների իսկությունը, համաձայն որոնց՝ Խաղանիի ծննդավայրը Մալիամն է: Բարդ է պնդել, որ Բարդ Շիրվանիի մոտ վկայած Մալիան քնակավայրը եղել է հենց այն տեղում, որտեղ այսօրվա Մալիամն է<sup>20</sup>, բայց այն որ վերջինը ստուգաբանորեն կապված է առաջինի հետ, թվում է ակնհայտ. բացի այն, որ քառավերջում \*->ո անցումը անձանոթ երևույթ չէ իրանական լեզուներում՝ ըստ պատմական ավելի վաղ շրջանների հատկանվանական նյութի (օր. Vahran>Bahram) և Արևելյան Այսրկովկասի իրանական լեզուների դեպքում այդ երևույթը կա նաև այսօր ոչ միայն հատկանունների դեպքում (ինչպես օր.՝ կովկասյան պարսկերենում, թալիշերենում և այս երկուսի ազդեցությամբ նաև խոսակցական աղբյուրներում՝ **məšələm** «օրինակ»՝ գրական **məšəlān** (իմնտ. արաբ., պրսկ. مَشَا) բառի փոխարեն), Մալիան տեղանունից Մալիամ տարբերակի առաջա-

<sup>20</sup> 26.04.2020 թ. մասնավոր գրույցի ընթացքում Մալիան տեղանվան ստուգաբանության նախնական աշխատանքային մի տարբերակ մեզ առաջարկեց պրոֆ. Վ. Ոսկանյանը: Համաձայն այդ տարբերակի՝ տեղանվան հիմքում կարող է ընկած լինել դեռ դասական պարսկերենում գործածական արաբ. مَشَا [mašā] «աղ, աղի» և مَشَا [mašā] «աղբու» բառը, որին միացել է իրանական -ān տեղանվանակերտ վերջածանցը (իմնտ. Գիլան, Լախիջան, Դեյլիջան են): Ընդ որում, այս ստուգաբանության հաստատվելու դեպքում, ըստ Վ. Ոսկանյանի, Բարդ Շիրվանիի վկայած *Mašān* տեղանունը կազմության տիպաբանությամբ և քովանդակությամբ հնարավոր կլինի համեմատել *Աղտանք* երկրանվան հետ:



ցումը կարող էր պայմանավորված լինել և՛ ժողովրդական ստուգաբանությունների ազդեցությամբ<sup>27</sup>:

Բաղր Շիրվանիի «Դիվան»-ի հայտնաբերմանը և հրատարակությանը, ըստ էության, որոշակիանում է նաև Խաղանիի ծննդավայրի վերաբերյալ Բակիխանովի հաղորդած տեղեկության սկզբնաղբյուրի հարցը: Բակիխանովը թեև ուներ որոշակի տեղեկություններ Բաղր Շիրվանիի կյանքի որոշ դրվագների և նրա գործունեության վերաբերյալ<sup>28</sup>, սակայն նա չի տեսել Բաղրի «Դիվան»-ը, որը, սակայն, անթաքույց կերպով խեղաթյուրելու փորձ է կատարել Զ. Բունյադովը 1991 թ. Բակիխանովի՝ Վրաստանի Կոնստի Կեկելիձեի անվան ձեռագրերի ազգային կենտրոնում պահվող «Գյուլիստան-ի իրամ»-ի ռուսերեն տարբերակը հրատարակելիս: Զ. Բունյադովի «խմբագրած» այս հրատարակության մեջ Խաղանիի ծննդավայրը նշված է «Магхан», որը եթե նույնությամբ համապատասխաններ ձեռագրում տրված տարբերակին, ապա հնարավոր էր ենթադրել, որ Բակիխանովի հաղորդած տեղեկության սկզբնաղբյուրը եղել է հենց Բաղր Շիրվանիի «Դիվանը»: Սակայն, «Գյուլիստան-ի իրամ»-ից պահպանված թղթը ձեռագրերում, ներառյալ և այն օրինակը, որի հիման վրա այն հրատարակել է Զ. Բունյադովը, վկայված է Խաղանիի ծննդավայրի միայն մի տարբերակ՝ պարսկերենով պահպանված և Աղբրեջանի ԳԱԱ ձեռագրերի ինստիտուտի գրադարանում պահվող թղթը 5 ձեռագրերում՝ *مالخانو* [Malhamā]<sup>29</sup> և Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ազգային կենտրոնի Արևելյան ֆոն-

<sup>27</sup> Տե՛ս *Մանրագրություն 10*:

<sup>28</sup> Бахчанов 1991: 202.

<sup>29</sup> *مالخانو*: 202: 1970

դի ուսերեն բաժնի №370 ձեռագրում՝ ուսերենով *Moxomy*, որը բացարձակ նույնական է պարսկերեն տարբերակի հետ<sup>30</sup>: Հետևաբար, ակնհայտ է, որ Չ. Բունյադովի «խմբագրման» հիմքում ընկած է եղել 1991 թ.-ի հրատարակությունից մի քանի տարի առաջ տպագրված Բադր Շիրվանիի «Դիվան»-ի՝ Խաղանիի ձևնդավայրի մասին քերած նորությունը:

Սրանից բացի՝ Բադրի «Դիվան»-ում հանդիպող տարբերակում տեղանունը գրված է առավելապես արաբական փոխատություններում հանդիպող «ز» [z] տառով՝ *زحل* [*Mal:ṣḥ*], այնինչ Բակիխանովի աշխատության գիտաբնական քննադրի համար հիմք ծառայած բոլոր 5 ձեռագրերում հանդիպում է պարսկերենի այբուբենի մեկ այլ՝ «» տառով՝ *محل* [*Molhomā*], որը խոսում է այն մասին, որ Բակիխանովին հայտնի չէր տեղանվան պատմական գրությունը:

Վերջին կետը ևս խոսում է այն մասին, որ Բակիխանովի աղբյուրն ամենայն հավանականությամբ եղել է Շիրվանում Խաղանիի ձևնդավայրի մասին պահպանված տեղական ավանդությունը:

Ամփոփելով պետք է նշել՝

- Խաղանիի ձևնդավայրի մասին կա գրառված և մեզ հասած շիրվանական ստնվազն երեք բանավոր ավանդություն, որոնցից ամենահինը գրված է 1841 թ. Աբասդովի աղա Բակիխանովի ձեռքով:

- Բոլոր երեք տարբերակները փաստում են, որ Խաղանի Շիրվանիի ձևնդավայրը եղել է Շամախիի մոտ գտնվող թաթաբնակ Մալիամ գյուղը:

<sup>30</sup> Ахмедова 1983: 264.

- Նշված բանավոր ավանդություններում հաղորդվող տեղեկությունը ստուգապես հաստատվում է 15-րդ դարի բանաստեղծ Բադր Շիրվանիի՝ 1985 թ. Մովկայում հրատարակված «Դիվան»-ի շնորհիվ:

- Խաղանի Շիրվանիի ծննդավայրի քննության օրինակը ցույց է տալիս, որ իրանական ժողովուրդների, այդ թվում կովկասյան պարսիկների մոտ պահպանվող բանավոր ավանդությունները ունեն սկզբնաղբյուրային բացառիկ նշանակություն հարյուրամյակների վաղեմությամբ իրադարձությունների քննության համար և արժանի են առավել մանրամասն ու խորքային ուսումնասիրության:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**Երեմյան Ա. 1963.** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրության հիմքի վրա), Երևան, ՀՍՍՀ ԳԱԱ հրատարակչություն:

**Չոբանյան Պ. 1980.** Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագրի» կովկասագիտական-արևելագիտական նյութերը (1975-1978 թթ.), ՊԲՀ, 3, էջ 307-316.

**Չոբանյան Պ. 1982.** Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագրի» կովկասագիտական-արևելագիտական նյութերը (1979-1980 թթ.), ՊԲՀ, 2, էջ 229-233:

**Տոնոյան Ա. 2015.** Կովկասյան պարսկերեն. Պատմահամեմատական քննություն (թեկնածուական ատենախոսություն), Երևան, անտիպ:

**Տոնոյան Ա. 2016.** Խաղանիի ծննդավայրի հիմնահարցը. քաթական ավանդությունից պատմական իրականություն, «Խաղանին և պարսկախոս Շիրվանը» գիտաժողովի ծրագիր և թեզիսներ, Երևան, էջ 33-34:

- Бакханов А. 1926:** Гюлистан-и Ирам, Труды Общества обследования и изучения Азербайджана, вып. IV, Баку, Издание Общества обследования и изучения Азербайджана.
- Бакханов А. 1951:** Гюлистан-Ирам (на азерб. языке), Баку, Azərbaycan SSR Elmlər Akademiyası nəşriyyatı.
- Бакханов А. 1983:** Сочинения, записки, письма, сост., пред. и комм. Э. Ахмедовой, Баку, Издательство «Эльм».
- Бакханов А. 1991:** Гюлистан-и Ирам, ред., комм., прим. и указ. Э. Бунитова, Баку, Издательство «Эльм».
- Бертельс Е. 1962:** Избранные труды. Нивами и Фузули, Москва, Издательство восточной литературы.
- Грюнберг А. 1963:** Язык североазербайджанских татов, Ленинград, Издательство Академии Наук СССР.
- Залеман К. 1875:** Четверостишия Хагани, Санкт-Петербург, Типография Императорской Академии Наук.
- Миллер Б. 1929:** Таты, их расселение и говоры, Известия Общества обследования и изучения Азербайджана, вып. VIII, Баку, Издание Общества обследования и изучения Азербайджана.
- Рагимов А. 1985:** Бадр Ширвани, Диван, Москва, Наука.
- Bakhanov A. 2010:** *Gülüstanı-İrəm*, Bakı, Xatun Pilyus.
- Browne E. 1906:** A literature history, vol. II, Cambridge.
- Ciddi H. 1981:** Orta əsr Şamaxı şəhəri (tərxı-ərxəolojı tədqıqat), Bakı, Elm.
- De Jong P. E. 1953:** The "Kon-Tiki" Theory of Pacific Migrations, "Bijdragen Tot De Taal-, Land- En Volkenkunde", vol. 109(1), pp. 1-22.
- Əliyev M. 2006:** Azərbaycan tatları, Bakı, "MBM" nəşriyyatı.
- Насыев М. 1966:** Хагани Ширвани харادا доғулмушдур?, "Azərbaycan SSR EA Məruzələri", N 5, ss. 82-83.
- Насыев М. 1995a:** *Töy-düyün xəzinəmizdən*, Bakı.
- Насыев М. 1995b:** *Azərbaycan tatlarmın dili*, Bakı, 2-ci nəşr, Bakı, Mütərcim.
- Насыев М. 2009:** *Tatların tərxı-ətnoqrafıx oçerki*, Bakı, Mütərcim.
- Heyerdahl T. 1951:** The Voyage of the Raft Kon-Tiki, "The Geographical Journal", vol. 115(1/3), pp. 20-41.
- Kandlı-Həriscı Q. 1970:** *Хагани Ширвани (һəyatı, дəврү və мһити)*. Filologiya elmləri доктору alimlik дərəəcəсі almaq üçün dissertasiya, Bakı.

- Kandli-Harisçi Q. 1988:** Xaqani Şirvani: həyatı, dövrü və mühtəi, Bakı, Elm.
- Khanikof N. 1864:** Mémoire sur Khâcâni, poète persan du XIIe siècle, "Journal Asiatique", vol. 6/4, pp. 137-200, 6/5, pp. 296-367; pub. as monograph, Paris, 1865.
- Köçerli F. 1978:** Azərbaycan ədəbiyyatı, I cild, Bakı, Elm.
- Kreyenbroek Ph., Marzolph UL (eds.) 2010:** Oral Literature of Iranian Languages: Kurdish, Pashto, Balochi, Ossetic, Persian and Tajik: Vol XVIII (A History of Persian Literature), London/New York, I.B.Tauris & Co. Ltd.
- Hüseynova G. 2002:** Lahic talarının dili, Bakı, Nurlan.
- Showren T. 2014:** Oral Traditions: Method to Adoption of Construction of the History of Non-Literate Tribes, "International Journal of Social Science and Humanity", vol. 4(6), pp. 478- 481.
- Sultanov M. 1954:** Xaqani Şirvani, Bakı, Azərbaç.
- Vansina J. 1961:** De la tradion orale: essai de method historique, Ter-vuren: Muse'e royal de l'Afrique Centrale, Annales, Série in-8°, Sciences humaines, 36, Paris.
- Vansina J. 1965:** Oral Tradition: A Study in Historical Methodology, London, Routledge & Kegan Paul, 2<sup>nd</sup> ed. New Brunswick: Aldine Transaction, 2006.
- پاکختوف ع. ۱۹۷۰، گستان ارد، داکو، اداره انتشارات "علم"  
تحفه العراقین ۱۳۵۷، بهنگارش حکیم خفائی، تهران.  
کنلی هریسچی غ. ۱۳۷۴، خفائی شروقی (حیات زمان و محیط او)، تهران.

**Արտյոմ Տոնյան, p. q. p. ,**  
 Երևանի պետական համալսարան,  
 Իրանագիտության ամբիոն  
[artyom.tonyan@ysu.am](mailto:artyom.tonyan@ysu.am)

**FROM ORAL TRADITION TO HISTORICAL REALITY:  
 ON THE CASE OF KHĀQĀNĪ ŚIRWĀNĪ'S BIRTHPLACE**

**Keywords:** *Khāqānī Śirwānī, Badr Śirwānī, Śerwān, Śamāğī, Malham, Oral Tradition, Non-literary language, Caucasian Tat.*

The problem of the birthplace of Khāqānī Šīrwānī (1126-1199), a well-known representative of Shirvan's medieval Persian literature, has not been the subject of a separate study for a long time.

In this article, an attempt is made to provide a final solution to the problem of Khāqānī's birthplace. The version suggested in the article is based on a local oral traditions preserved among the persophons of Lahīj, as well as on the data of Badr Šīrwānī's (14-15<sup>th</sup> century) Divan.

**Artyom Tonoyan** - *PhD, Yerevan State University,  
Department of Iranian Studies*  
[artyom.tonoyan@ysu.am](mailto:artyom.tonoyan@ysu.am)

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ  
ԻՆՏԵՏՈՒՑԻ 1713 ԵՎ ՍԱՌՒԴ ԹԱԳԱՎՈՐ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 6770 ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ  
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ<sup>2</sup>

ՎԱՇՇ ՀԱԿՈՐՅԱՆ

**Քանայի քառեր**<sup>1</sup> հանաֆիական մազհաք, «Ծովերի միաձուլում», գլուխ, ձեռագիր, համեմատություն, գրիչ, մուսուլմանական իրավունք, րեքսպր, էջ, հիշարակարան:

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել հանաֆիական մազհաքի<sup>1</sup> ներկայացուցիչ, մուսուլման ականավոր կրոնաիրավագետ Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Իբրահիմ ալ-Հալաբիի "Multoqa ol-Ձեհար" («Ծովերի միաձուլում») աշխատության<sup>2</sup> նրկու տարբեր գրիչների կողմից գրված ձեռագիր տարբերակներն ու ներկայացնել դրանց համեմատական բնութագիրը՝ ներառյալ ձեռագրերի թե՛ նկարագրական, և թե՛ բովանդակային տարբերություններն ու նմանությունները:

Ուսումնասիրության առարկա է հանդիսանում Մետրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտում (Մարենադարան) պահվող "Multoqa ol-Ձեհար" («Ծովերի միաձուլում») աշխատության համանուն ձեռագիր տարբերակը (թիվ 1713) և Սաուտ թագավոր համալսարանում

<sup>\*</sup> Հոդվածը ներկայացվել է 28.06.2020: Գրախոսվել է 03.09.2020:

<sup>1</sup> Մազհաք (mazhab) քառն արաբերենից թարգմանաբար նշանակում է ուղի, ուսմունք կամ դոկտրինա, որին պետք է հետևի մուսուլմանը:

<sup>2</sup> Օրինակը «Սաուտ թագավոր» համալսարանի գրադարանի (այսուհետ՝ **ՍԹՀ**) 6770 համարի տակ պահվող ձեռագիրն է, որը մեզ հասանելի է դարձել Ալ-Մուսուաֆա էլեկտրոնային գրադարանի միջո-

պահվող վերոնշյալ աշխարհության համանուն ձեռագիր փարթերակը (թիվ 6770): Մալոնադարանում պահվող արաբերեն ձեռագրերի ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի հայ արաբագիտության համար, քանի որ այնտեղ պահվող արաբերեն շուրջ 2000 ձեռագրերի շարքում մուսուլմանական իրավունքին նվիրված ձեռագրերն ուսումնասիրված և գիտականորեն նկարագրված չեն, և դրանց՝ աշխարհի համար հասանելի դարձնելը արդի արաբագիտության կարևոր խնդիրներից մեկն է: Ձեռագրերի համակողմանի և քննական վերլուծությունն ու գիտական նկարագրությունն ունեն նաև աղբյուրագիտական կարևոր նշանակություն, որը հնարավորություն է ընձեռում լուսարանելու արաբամուսուլմանական մշակութային ժառանգությանը վերաբերող խնդիրները: Այսպիսով, նման ձեռագրերի առկայությունը մեկ անգամ ևս ապացուցում է Հայաստանի միջմշակութային հարդրղակցության կարևոր հանգույց լինելու փաստը: Հողվածում կիրառված է *“Encyclopaedia of Arabic Language and Linguistics (EALL)”* փառադարձման համակարգը:

Իբրահիմ իբն ալ-Հալաբի, ամբողջական անունն է Իբրահիմ իբն Մուհամմադ իբն Իբրահիմ ալ-Հալաբի<sup>3</sup>, ծնվել է 864/1460 թվականին Հալեպում, մահացել է

---

ցով, որի կողմից էլ թվայնացվել է այդ օրինակը: Գրադարանը աշխարհի տարբեր գրադարաններում պահվող իսլամական ձեռագրերի լուսանկարված ֆոնդ է առեղծել:

[www.al-mostafa.com](http://www.al-mostafa.com)

<sup>3</sup> Որոշ աղբյուրներ, մասնավորապես՝ **Jalāl al-Dīn Al-Suyūfī 1975**, *“Al-Tabaḥḥuṭ bi ni‘mat Allāh”*, al-Qāhira, էջ 70, ավելացնում են նաև Բուրհան ալ-Դիև անվանակոչումը, որը պատվանուն էր, ինչն Ալ-Հալաբին ստացել էր եզիպտոսում:



956/1549 թվականին Սուամբուլում: Ալ-Հայաբին ծագումով Հայեպից էր: Նա հանաֆիական մագհաբի հետևորդ է: Ակզբնական կրոնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում: Հիմնական կրթությանը զուգահեռ մասնակցել է տարբեր դասալսումների Դամասկոս քաղաքում<sup>4</sup>: Նա ուսանել է մի շարք նշանավոր գիտնականների մոտ, որոնցից հայտնի էին Բուրհան ալ-Ռուհավին, Աբու Դահր իբն ալ-Հաֆիզ Բուրհան ալ-Դին իբն ալ-Բուֆը, ինչպես նաև հայտնի գիտնական Ջալալ ալ-Դին ալ-Սուլուադի (911/1505) մոտ, ով հայտնի էր Ղուրանի և հադիսների իր մեկնություններով: Այս ամենի արդյունքում Ալ-Հայաբին Հալեպ քաղաքում վաստակեց առաջատար ֆակիհի համբավ: Վերջինիս գրչին է պատկանում «Multaqā al-ṣḥūr» («Շուվերի միածուլում») աշխատությունը, որի շնորհիվ հեղինակը մեծ համբավ ձեռք բերեց և դասվեց լավագույն կրոնաիրավագետների շարքին: Աշխատությունը դարձավ հանաֆիական իրավական դպրոցի հիմնական ձեռնարկներից և ժամանակի լավագույն աշխատություններից մեկը: Այն հակիրճ ու րովանդակ է և գրված է պարզ ոճով՝ պարունակելով դրույթներ մարդու գործունեության գրեթե բոլոր ոլորտների վերաբերյալ՝ ներառյալ երկրագոյության, ընտանեկան հարաբերությունների, ժառանգության, առևտրային գործարքների և հանցագործությունների վերաբերյալ: «Multaqā al-ṣḥūr» աշխատությունը հեղինակը բաժանել է ճիշտ այնպես, ինչպես բաժանված է հանաֆիների ֆիկհի հիմնարար գրքերում ու աղբյուրներում: Սակայն կան աննշան տարբերություններ կապված որոշ բաժինների ավելի վաղ կամ ուշ հիշատակման հետ:

<sup>4</sup> الأعلام، قسوس تراجم خير الدين الزركلي، ص. 568.

Աշխատությունը դասակարգված է համաձայն հանա-  
ֆիական իրավունքի դասական բաժանման: Այն կազմ-  
ված է գլուխներից, որոնք էլ իրենց հերթին բաժանվում  
են ենթագլուխների ու մասերի: Աշխատանքի ատանձ-  
նահատկություններից մեկը կրոնական և իրավական  
տեքնիկների օգտագործումն է, ինչը չի արվել Ալ-Հա-  
լաբիի նախորդների կողմից: Աշխատությունը բաղկա-  
ցած է 57 գլխից:

Մատենադարանում պահվող ձեռագիրը (այսուհետ՝  
առաջին) բաղկացած է երկու հարյուր քսաներկու թեր-  
թից: Առաջին ձեռագրի գրիչն է Իբրահիմ իբն Սալեհ իբն  
Հասանը: Ձեռագիրը գրվել է հիջրայի Ռաջաբ ամսվա  
1080 թվականին (մեր թվարկության 1669 թվականի նո-  
յեմբեր ամսին)՝ Դամասկոսի Սուլեյմանյա խան դպրո-  
ցում: Ձեռագիրը Մատենադարանի արաբատառ ֆոնդի  
թիվ 1713 ձեռագիրն է՝ գրված նասի (nass) արաբական  
ձեռագրատեսակով: Ձեռագրի էջի չափերն են 15,8\*9,5  
սմ, իսկ գրադաշտի չափերը՝ 11,5\*5,5 սմ՝ առնված սև և  
ոսկի շրջանակի մեջ: Ձեռագրի թուղթն արևելյան տե-  
սակի է, կազմը կաշեպատ սովաբաթուղթ է, ունի  
դոնակ, շրջանակված սև և ոսկե զոյներով ու նախշա-  
զարդ բուսական տարրերով: Կազմ-աստաղը մուգ կար-  
միր թուղթ է: Առկա են կնքադրոշմեր: 1ա էջում առկա է  
հինգ կնքադրոշմ, 7ա էջում՝ 1 կնքադրոշմ: Դրանցից 4-ն  
անընթեռնելի են, 1-ը՝ ընթեռնելի, որի վրա գրված է  
Մուհամմադ ալ-Սաիդ Ռուշդիի անունը, որն, ըստ ձեռա-  
գրագիտության ավանդույթի, վկայում է այն մասին, որ  
դա հերթական սեփականատիրոջ ձեռագիրն է: Ձեռա-  
գրի բովանդակության ցանկը նշված է 1բ-4բ էջերի վրա:  
Սկիզբը ճակատազարդ է, վարդագույն, կանաչ, կարմիր,  
կապույտ, սև, սպիտակ, ոսկի բուսական տարրերով:

Հիշատակարանը 222ա էջի վրա է: Առաջին ձեռագրի գրությունը սև թանաք է, գլուխների վերնագրերը՝ կարմիր, ձայնավորված նախով: Կան կապող բառեր:

Երկրորդ ձեռագիրը ԱԹՀ 6770 ձեռագիրն է (այսուհետ՝ երկրորդ): Ձեռագրի գրիչը Ալի իբն Աբդ Ալլահն է՝ հիջրայի 1133 թվականին (մեր թվարկության 1721): Գրված է նախով: Ալիգրը ճակատագարոջ չէ: Տեքստը առնված չէ շրջանակների մեջ: Կան ծաղկազարդ տարրեր, կապող բառեր: Ձեռագրի էջի չափերն են՝ 20,5\*16 սմ: Հիշատակարանը գտնվում է վերջին՝ 138-րդ էջի վրա: Երկրորդ ձեռագրի գրությունը սև թանաք է, գլուխների վերնագրերը՝ կարմիր, ձայնավորված չէ, կան կապող բառեր:

Բովանդակության ցանկերը տարբեր են: Առաջին ձեռագրի բովանդակության ցանկում էջերի համարակալումը համապատասխանում է, սակայն երկրորդ ձեռագրում այդ համընկնումը խախտված է: Օրինակ՝ երկրորդ ձեռագրում ամուսնալուծության մասին գլուխը բովանդակության ցանկում էջակալված է 36-րդ էջում, իսկ ձեռագրում այն 39-րդ էջի վրա է<sup>5</sup>:

Երկրորդ ձեռագրի բովանդակության ցանկը պատկերված է իրարահավասար կարմիր եզրագծեր ունեցող վանդակներով, որոնց ներսում գրված են գլուխների և ենթագլուխների վերնագրերը թեքությամբ ու սև գույնով: Յուրաքանչյուր վանդակում նշված է գլուխը, ենթագլուխը և էջահամարը՝ սև թանաքով: Ի տարբերություն երկրորդ ձեռագրի, առաջին ձեռագրի բովանդակության ցանկը առնված է սև և ոսկի շրջանակի մեջ, գլուխների վերնագրերը գրված են կարմիր թանաքով, ենթագլուխներինը՝

<sup>5</sup> ԱԹՀ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 39ա; քով. ցանկ:

սև թանաքով, իսկ էջերի համարները՝ կարմիր թանաքով: Ստորև կներկայացվի երկու ձեռագրերի ամբողջական համեմատական քննազոյրը:

• Առաջին ձեռագիրը գրված է առափել պարզ, համառոտ և դյուրըմբռնելի ձևով, ի տարբերություն երկրորդ ձեռագրի:

• Կա տարբերություն էջերի պարունակության ծավալի և տառաչափերի մեծ ու փոքր լինելու հետ կապված, որն էլ իր հերթին պայմանավորված է յուրաքանչյուր ձեռագրի առանձնահատկությամբ:

• Երկրորդ ձեռագրում առկա է գլուխների և ենթագլուխների էջերի համարակալման տարբերություն, ինչը շփոթեցնում է այդ երկու օրինակների համեմատողին: Երկրորդ ձեռագրում ծիսական մաքրության գլուխը գտնվում է երրորդ էջի վրա, աղոթքի մասին գլուխը՝ վեցերորդ էջի վրա, թաղման արարողակարգին վերաբերող գլուխը՝ տասնչորսերորդ էջի վրա: Առաջին ձեռագրում էջերի համարակալումը հստակ է և բովանդակության ցանկն ամբողջովին համապատասխանում է ձեռագրի էջերին: Մաքրության գլուխն առաջին ձեռագրում գտնվում է առաջին էջի վրա, աղոթքի մասին գլուխը՝ յոթերորդ էջի վրա, թաղման արարողակարգին վերաբերող գլուխը՝ քսաներկուերորդ էջի վրա, որոնք իրենց հերթին համընկնում են բովանդակության ցանկում իրենց համարակալված էջերին:

• Ձեռագրերում որոշ ենթավերնագրեր տարբեր ձևակերպումներ ունեն, ինչպես, օրինակ, առաջին ձեռագրում առկա է ենթագլուխ հնազանդության մասին<sup>6</sup>, մինչդեռ երկրորդ ձեռագրում նույն ենթավերնագիրը

<sup>6</sup> ՄԲ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 1բ:

նշված է հետևյալ կերպ՝ ենթազույգ հնազանդվելու անհրաժեշտության մասին: Այս ամենից զատ երկու ձեռագրերի բովանդակության ցանկերում կան զանազան բառային, բայց ոչ իմաստային տարբերություններ: Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ընդհանուր միտքն ու բովանդակությունը համընկնում են:

- Առաջին ձեռագրի բովանդակության ցանկը հիշատակում է դաշտանային ցիկլին վերաբերող առանձին երեք ենթաբաժիններ<sup>7</sup>, ի տարբերություն երկրորդ ձեռագրի, որն այդ ամենն ընդհանրացնում է մեկ ենթագլխով<sup>8</sup>:

- Երկրորդ ձեռագրի ծիսական մաքրության գլխում «ականջներ» բառը գրված է տեքստից դուրս ընկած հատվածում<sup>9</sup>, մինչդեռ առաջին ձեռագրում այն տեքստի մեջ է<sup>10</sup>:

- Ծիսական մաքրության գլխում ձեռագրերի միջև առկա է բառային տարբերություն՝ մասնավորապես խելագարություն և հարբեցողություն<sup>11</sup> ու խելագարություն և հարբեցող<sup>12</sup> բառերի միջև: Առաջին ձեռագրում հարբեցողություն բառով քննազգրվում է ալկոհոլ չարաշահած մարդը, որից հետո նա պետք է ծիսական մաքրում անցնի, իսկ երկրորդ ձեռագրում հարբեցող բառը վերաբերում է ընդհանրապես ալկոհոլ օգտագործած մարդուն, և եթե մարդ օգտագործում է այն թեկուզ շատ չնչին չա-

<sup>7</sup> **ՍԹՀ**, Ձեռ. 6770 (արաբ.), բով. ցանկ:

<sup>8</sup> **ՄՄ**, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 1բ:

<sup>9</sup> **ՍԹՀ**, Ձեռ. 6770 (արաբ.), բով. ցանկ:

<sup>10</sup> **Լույս տեղում**, էջ 1բ:

<sup>11</sup> **ՄՄ**, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 8բ:

<sup>12</sup> **Լույս տեղում**, էջ 8բ:

<sup>13</sup> **ՍԹՀ**, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 2ա:

վարածնով, ապա պետք է ծիսական մաքրման ենթարկվի՝ համաձայն երկրորդ ձեռագրի:

• Առաջին ձեռագիրը ծիսական մաքրության գլխի որոշակի հատվածում ներկայացնում է «կանգնած»<sup>14</sup> (qā'im) բառը, մինչդեռ երկրորդ ձեռագրում նույն հատվածը նկարագրելիս նշված են «կանգնած» (qā'im), «նստած» (qā'id), «խոնարհված» (rāki') և «ծնկաչոք» (sājid) բառերը<sup>15</sup>:

• Երկրորդ ձեռագրի ծիսական մաքրության գլխում թույլատրելի արարքներին վերաբերող ենթազվիտում, ապուր բառից հետո առկա է հետևյալ նախադասությունը՝ «... և ոչ թե ծառից կամ պտուղից բամված ջրով»<sup>16</sup>, որը բացակայում է առաջին ձեռագրում<sup>17</sup>:

• Երկու ձեռագրերի միջև չնչին տարբերություն կա աղոթքի կանչման ենթազվիտում: Երկրորդ ձեռագրի գրիչը բաց է թողել «աղոթքի ջի կանչում» հատվածի ժխտական մասնիկը<sup>18</sup>, ինչն առկա է առաջին ձեռագրում<sup>19</sup>: Երկրորդ ձեռագրի գրիչի մոտ նկատվեց գրված և իր կողմից ջնջված բառեր:

• Կենդանիներին ողորմություն հանձնելու ենթազվիտում առկա է տարբերություն հետևյալ հատվածում. առաջին ձեռագրում նշվում է, որ յուրաքանչյուր հարյուր քառասունհինգ անասունից զոհաբերման բաժին հանել երկու՝ երեք տարին բոլորած էգ ուղտ և մեկ տարին

<sup>14</sup> ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 9ա:

<sup>15</sup> ՍԹՀ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 2ա:

<sup>16</sup> Լույս տեղում, էջ 2բ:

<sup>17</sup> ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 10ա:

<sup>18</sup> ՍԹՀ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 7բ:

<sup>19</sup> ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 15ա:

բոլորած մեկ ուղտ<sup>20</sup>, մինչդեռ երկրորդ ձեռագրում առկա է նույն հատվածը մեկ տարբերությամբ. այն է՝ հարյուր քառասունհինգ անասունի փոխարեն նշված է հարյուր քառասուն անասունից զրոհաբերման բաժին հանել երկու՝ երեք տարին բոլորած էգ ուղտ և մեկ տարին բոլորած մեկ ուղտ<sup>21</sup>:

- Նախաճաշի թույլատրման ենթազուխը առաջին ձեռագրում ներկայացված է առավել ճշգրիտ ձևով, քան երկրորդ ձեռագրում, որի գրիչը պակասեցնում ու ավելացնում է որոշակի հատվածներ, մասնավորապես կրկնողության եղանակով. «Եթե ճանապարհորդը մտադրվում է նախաճաշել» հատվածը երկրորդ ձեռագրում կրկնվում է երկու անգամ<sup>22</sup>, մինչդեռ առաջին ձեռագրում այն հիշատակվում է ընդամենը մեկ անգամ<sup>23</sup>:

- Ամուսնության ու զույգերի՝ բոլոր հարցերում միմյանց համապատասխանելու մասին զրուխներում առաջին<sup>24</sup> և երկրորդ<sup>25</sup> ձեռագրերի միջև րովանդակային որևէ տարբերություն առկա չէ:

- Կրծքով կերակրելու մասին գլխում երկու ձեռագրերի միջև րովանդակային տարբերություն չկա, թեև առաջին ձեռագրի գրիչը գլխի վերնագիրը կարմիր թանաքով զետեղել է ձեռագրի մեջ<sup>26</sup>, ի տարբերություն երկրորդ ձեռագրի գրիչի, ով այն գրել է ձեռագրի տեքստից դուրս ընկած հատվածում՝ այն մատնանշելով գծիկի

<sup>20</sup> **Նույն տեղում**, էջ 32բ:

<sup>21</sup> **ՍԹՀ**, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 20բ:

<sup>22</sup> **Նույն տեղում**, էջ 26ա:

<sup>23</sup> **ՄԲ**, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 39բ:

<sup>24</sup> **Նույն տեղում**, էջ 49բ; 52ա:

<sup>25</sup> **ՍԹՀ**, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 33բ; 35բ:

<sup>26</sup> **ՄԲ**, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 56բ:

միջոցով<sup>27</sup>:

- Երկրորդ ձեռագրի անունալուծության իրավունքի վերապահման ենթագլխում առկա են որոշ բառերի բացթողումներ և իմաստային ոչ ամբողջական պարզաբանումներ, ինչպես նաև երկրորդ ձեռագրում գրիչը հիշատակել է «երեք օր»<sup>28</sup> բառակապակցությունը, ի տարբերություն առաջին ձեռագրի, որի նույն հատվածում գրիչն օգտագործում է «երեք անգամ» բառակապակցությունը<sup>29</sup>:

- Անուննու կողմից անառակության մեղադրանքով կնոջը նզովելու մասին ենթագլխում երկու ձեռագրերի միջև բովանդակային տարբերություն չկա<sup>30</sup>:

- Վարկաբեկման արգելքի ու պատժամիջոցի մասին ենթագլխում բովանդակային մասը տույն է, բացառությամբ մի հատվածի բառերի հերթագայության: Առաջին ձեռագրում հերթականությունը հետևյալն է՝ ազատ, իրավահավասար, մուսուլման, առաքինի<sup>31</sup>, ի տարբերություն երկրորդ ձեռագրի, որտեղ հերթականությունը հետևյալն է՝ իրավահավասար, ազատ, մուսուլման, առաքինի<sup>32</sup>:

- Կորուսյալի մասին գլխում առաջին ձեռագրի վերջին հատվածում առկա է «մահվան դեպքում»<sup>33</sup> բառակապակցությունը: Դա վերաբերում է կորուսյալին, որի դեպքում նրա կինը կարող է ամուսնանալ իր անուննու

<sup>27</sup> ՍԹՀ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 39բ:

<sup>28</sup> Լույս տեղում, էջ 41բ:

<sup>29</sup> ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 60ա:

<sup>30</sup> ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 66բ: ՍԹՀ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 47բ:

<sup>31</sup> ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 83բ:

<sup>32</sup> ՍԹՀ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 61ա:

<sup>33</sup> ՄՄ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 94բ:



մահվան դատավճռի հրապարակումից հետո (այդ ժամանակահատվածը տևում է չորս ամիս տասը օր): Մյուս ձեռագրում այդ բառակապակցությունը նշված չէ<sup>34</sup>:

• Առջ ու վաճառքի լիազորման ենթազվտում երկու ձեռագրերի միջև բովանդակային տարբերություն չկա, թեև երկրորդ ձեռագրի գրիչը տեքստային որոշ հատվածներ զետեղել է տեքստից դուրս՝ մեկնաբանությունների համար նախատեսված մասում<sup>35</sup>, ի տարբերություն առաջին ձեռագրի, որի տեքստն ամբողջապես տեղադրված է նախատեսված հատվածում<sup>36</sup>:

• Սահմանափակումների ու պատժամիջոցների մասին գլխում երկու ձեռագրերի բովանդակային մասը համապատասխանում է մեկը մյուսին, բացառությամբ մեկ տարբերության. առաջին ձեռագրի գրիչը իսլամի հինգ հիմնասյուններից պարտադիր հարկը ներկայացրել է «zakwa»<sup>37</sup>՝ Սուրբ գրքին քնորոշ ձևով, մինչդեռ երկրորդ ձեռագրում այն նշված է «zakāt»<sup>38</sup> տարբերակով:

• Գրավադրման մասին գլխում երկու ձեռագրերի բովանդակային հատվածում առկա է միայն մեկ տարբերություն. առաջին ձեռագրում առկա է հետևյալ նախադասությունը՝ «գրավ ընդունողը երաշխիքի դիմաց գրավատուին է հանձնում»<sup>39</sup>, ի տարբերություն երկրորդ ձեռագրի, որի նույն հատվածում գրիչը «գրավատու» բառի փոխարեն օգտագործում է կցական դերանուն՝ «գրավ

<sup>34</sup> ՍԹՀ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 68բ:

<sup>35</sup> Լույս տեղում, էջ 86ա:

<sup>36</sup> ՄԲ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 124ա:

<sup>37</sup> Լույս տեղում, էջ 159ա:

<sup>38</sup> ՍԹՀ, Ձեռ. 6770 (արաբ.), էջ 103բ:

<sup>39</sup> ՄԲ, Ձեռ. 1713 (արաբ.), էջ 185բ:

ընդունողը երաշխիքի դիմաց նրան է հանձնում»<sup>40</sup>:

• Գլուխ հեմոֆրոդիտի մասին (մարդ, ով միաժամանակ ունի տղամարդու և կնոջ սեռական օրգաններ). վերը նշված գլխում երկու ձեռագրերի քովանդակությունները համընկնում են:

Տարբերվում են նաև երկու ձեռագրերի հիշատակարանները: Առաջին ձեռագրի գրիչ Իբրահիմ իբն Սալեհ իբն Հասանը հիշատակարանում գրել է ձեռագրի գրի առնման ու ավարտի մասին, նշել է իր անունը, ծագումը և այն վայրը, որտեղ արտագրել է ձեռագիրը (Սուլեյման խանի դպրոց) և ձեռագրի գրի առնման տարեթիվն ու ամիսը. միևնույն ժամանակ աղոթք է հղել առ Աստված՝ հայցելով Տիրոջ բարեգոթությունն ու ներողամտությունը: Իսկ երկրորդ ձեռագրում գրիչը հիշատակարանում խոսել է բացառապես աշխատության հեղինակ Ալ-Հալաբիից՝ գովեստի խոսքեր հնչեցնելով վերջինիս հասցեին ու խաղաղություն մաղթելով մարգարեին ու նրա հետևորդներին: Եվ միայն վերջում է նա հիշատակել իր անունը՝ ասելով, որ դատարկ էջերը լրացվել են իր կողմից:

Այսպիսով, եթե հիշատակենք երկու ձեռագրերի միջև առկա տարբերություններն, ապա կտեսնենք, որ դրանք շատ չեն, ինչն արդյունք է ձեռագրերի գրիչների տարբերության: Եվ ամփոփելով այս ամենը կարելի է ասել, որ հիմնական տարբերությունները տեքստերում օգտագործված բառերի և բառակապակցությունների, դրանց կիրառման հերթականության մեջ են, որոնք, սակայն, որևէ ազդեցություն չեն ունենում ձեռագրերի քովանդակության վրա:

<sup>40</sup> ՍԹՀ, Ձեռ. 6770 (արար.), էջ 119ա:



COMPARATIVE DESCRIPTION BETWEEN THE 1713  
MANUSCRIPT KEPT AT THE MESROP MASHTOTS IN-  
STITUTE OF ANCIENT MANUSCRIPTS (MATENA-  
DARAN) AND THE 6770 MANUSCRIPT KEPT AT THE  
KING SAUD UNIVERSITY

**Keywords:** *Hanafi madhab, "Merging of the Seas", chapter, manuscript, comparison, writer, Muslim law, text, page, memoir.*

The aim of this article is to study the manuscript versions written by two different writers of the work "Multaqā al-ābḥūr" ("Merging of the Seas") of a famous representative of the Hanafi madḥab, a prominent Muslim faqīh (an expert of Islamic jurisprudence) Ibrahim ibn Muhammad ibn Ibrahim al-Halabi and present their comparative characteristics, including both descriptive and substantive differences and similarities between the two manuscripts.

The subject of the study is the manuscript version of the work "Multaqā al-ābḥūr" kept at the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts (Matenadaran, No. 1713) and the manuscript of the same work kept at King Saud University (No. 6770).

It should be noted that the main differences are between the words and expressions and the ways of their usage in the texts, which, however, do not affect the content of the manuscripts.

**Vahe Hakobyab** - *Assistant and Ph.D. researcher at the  
chair of Arabic Studies,  
Faculty of Oriental Studies, Yerevan State University*  
[vahe.hakobyan@yahoo.com](mailto:vahe.hakobyan@yahoo.com)

ՄԱՏՆԵԱԴԱՐԱՆԻ ՊԱՐԱԿԵՐՆԵ ՎԱՎԵՐԱԳԵՐՆԸ  
ԱԳՈՒԼԻՍԻ XVII ԴԱՐԻ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ\*

**ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ**

**Բանալի քառեր՝** Ազուլիս, վաճառական, խոջա, առևտուր, Սեֆյան Իրան, Նախիջևան, մուսուլման, մեքաբաւ:

*Հողվածում Մալոնեադարանի պարսկերեն փաստաթղթերի ու այլ աղբյուրների փոխվերքի համադրությամբ հետազոտվում են Սեֆյան պետության գերիշխանության ներքո Ազուլիսում 17-րդ դարում գործող մեծահարուստ հայ վաճառականների անունները, նրանց վարչապետ-սական, առևտրական գործունեության որոշ առանձնահատկություններն ու մանրամասները, լուսաբանվում դրանց խոչընդոտող կրոնաքաղաքական հանգամանքները<sup>2</sup>:*

Սեֆյան պետության կազմավորումը համեմատաբար կայուն դրություն է ապահովում XVI դարի սկզբից նրա տիրապետության տակ անցած Նախիջևանի և հարակից տարածքների համար՝ նպաստելով նրա առևտրատնտեսական զարգացմանը: Ինչպես ժամանակին, իրավացի կերպով նկատել է Լեոն, Սեֆյան պետության հենց սկզբնական շրջանից «Արաքսի միջին հովտում, Նախճավանից դեպի արևելք, Սյունիքի լեռնաշղթայի և Արաքսի ձախ ափի մեջ, Նախճավանից մինչև վերջին քարավազները... որտեղ ցրված են Ջուղա, Շահկերտ, Ծղնա,

\* Հողվածը ներկայացվել է 03.08.2020 թ.: Գրախուսվել է 12.08.2020:

<sup>2</sup> Հողվածը հրատարակվում է ՀՀ գիտության կոմիտեի N 187-ՃԱ179 թեմատիկ ծրագրի շրջանակներում:

Դաշո, Դաստակ, Ազուլիս, Որդուբաթ, Մեղրի, Կալեր և այլ գյուղերն ու ավանները»։ Նկատվում է առևտրի ու տնտեսության որոշ աշխուժացում<sup>1</sup>։

Այս շրջանն իր աշխարհագրական դիրքով գտնվում էր հում մետաքսի առևտրի երեք հիմնական ուղիների խաչմերուկում և մասնակից էր դրանցով կատարվող առևտրական գործընթացներին։ Այդ երեք ուղիներից ամենազվախափորը ըստ Հ. Քյուրտյանի ձգվում էր «Կովկասեան Հայաստանէն Թավրիզի վրայով Հալեպ անկից ալ Տրոպոլիս կամ Ալեքսանդրիդ Միջերկրական ծովու Հայակիլիկեան փոքր նաահանգիստները ուրկէ նաեւրով ապրանքը գլխատրաբար Վենետիկ կը տարուէր»<sup>2</sup>։ Երկրորդ ուղին Թավրիզ – Կ. Պոլիս զինն էր, ցամաքի ճանապարհը, որի զվաճվոր արտահանման կետերից էր նաև Ջյուտնիան (Իզմիր)<sup>3</sup>։ Հարկ է նշել, որ XVII դարի կեսերից առավել քանով էր այս ճանապարհի Թավրիզ-Էրզրում-Թոխաթ-Ջյուտնիա հատվածը, որից օգտվում էր Ջաքարիա Ազուլեցին, և որը ավելի անվտանգ էր, քան հարավային ուղին այդ շրջանում և Իրանի համար առևտրի զվաճվոր ճանապարհն էր, առհասարակ<sup>4</sup>։ Իրանի սահմաններում առաջին և երկրորդ ուղիները միանալով՝ կազմում էին Նախիջևան-Թավրիզ-Ղազվին-Սպահան մայրուղին<sup>5</sup>։ Ջաքարիա Ազուլեցու և Ժամանակի այլ աղբյուրների տվյալների հիման վրա կատարված առևտրական ուղիների վ. Փափազյանի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Նախիջևանի մի

<sup>1</sup> Լեո 1934, 55:

<sup>2</sup> Քյուրտյան 1944ա, 58:

<sup>3</sup> Լույս տեղում:

<sup>4</sup> Հովհաննիսյան 2017, 106:

<sup>5</sup> Լույս տեղում, 105:

շարք բնակավայրեր, այդ թվում՝ Նախիջևան քաղաքը, Ղարղաքազարը, Լեհրամը (Նեհրամ), Յայջին, Ջուլան, Ազառը և Ազուլխը առաձին օժանդակ ճանապարհով կապված էին Նախիջևանով անցնող առևտրական այդ մայրուղուն<sup>6</sup>:

Առևտրական երրորդ ուղին Կասպից ծովի վրայով ձգվում էր դեպի Աստրախան և Ռուսաստանով՝ Մոսկվայի գծով դեպի Անգլիա և Հոլանդիա<sup>7</sup>: Նախիջևանի նշված տարածքի, հատկապես Հին Ջուղայի հայ վաճառականները կարևոր միջնորդներ էին XVI դարում Իրանի և Ռուսաստանի միջև առևտրական կապերի, այսպես կոչված հյուսիսային առևտրական ճանապարհի զարգացման գործում<sup>8</sup>: Այս հյուսիսային առևտրական մայրուղին XVII դարում հանդես էր գալիս որպես Իրանում արտադրվող մետաքսի ու այլ թանկարժեք կտորեղենի դեպի եվրոպական երկրներ արտահանման այլընտրանքային ճանապարհի հատկապես թուրք-իրանական պատերազմների ու օսմանյան տարածքներով անցնող հիմնական առևտրական ճանապարհի խաթարման շրջաններում<sup>9</sup>:

Նախիջևանի նշված շրջանը միաժամանակ նաև մասնագիտացած էր բնական մետաքսի ու այլ արհեստագործական արտադրության մեջ<sup>10</sup>: Մասնավորապես, XVI-XVII դդ. անգլիացի ուղեգիրների աշխատություններում Նախիջևանի գավառը՝ Հին Ջուղայից մինչև Գանձակ, ներառյալ Նախիջևան, Օրդուբադ քաղաքներն ու

<sup>6</sup> Փափագյան 1990, ներդիր քարտեզ:

<sup>7</sup> Քիլբուեան 1944թ. 8:

<sup>8</sup> Mathee 1994: 741:

<sup>9</sup> Hanway 1753: 44:

<sup>10</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Հովհաննիսյան 2017, 31-33:

Վերին Ազուլիսը, Երևանի, Թիֆլիսի ու Շամախու գավառների հետ միասին համարվում էր մետաքսի արտադրության կարևոր շրջան<sup>11</sup>:

XVII դարի սկզբին Ջուղան, Աստապատը, Շոտթը ու Նախիջևանի բազմաթիվ այլ բնակավայրեր ծանր հարված են կրում թուրք-իրանական նոր պատերազմի և հատկապես շահ Աքբաս I-ի իրականացրած բռնագաղթների հետևանքով:

Ազուլիսը XVII դարի սկզբին եվրոպացի ճանապարհորդ դե Գուվեան նշում է որպես շահ Աքբաս I-ի կողմից Նախիջևանում Օրդուբադից հետո հեշտությամբ նվաճված բնակավայր, որից հետո շահը մտնում է Ջուղա, որտեղ երեք օր մնալուց և հայերի շքեղ հյուրընկալությունը վայելելուց հետո շարժվում է դեպի Նախիջևան քաղաքը, որը ամբողջովին հայաբնակ էր<sup>12</sup>: Նույն եվրոպացի ճանապարհորդը Ազուլիսը թվարկում է հայկական գլխավոր քաղաքների՝ Երևանի, Նախիջևանի, Շարուրի կողքին<sup>13</sup>:

Ազուլիսը Նախիջևանի այն եզակի բնակավայրերից էր, որը թերևս գերծ է մնում շահ Աքբաս I-ի կողմից արտագաղթելու հարկադրանքից, կամ էլ դրանից հետո շատ արագ վերականգնվում է: Թեև հարկ է հիշել, որ նրա մոտ գտնվող Դաշտ բնակավայրի (որը հետագայում կոչվում է Ներքին Ազուլիս) բնակչության մի մասը Սպահան էր տեղափոխվել դեռևս նախքան շահ Աքբաս I-ի իրականացրած բռնագաղթը: «Շանր հարկապահանջության» պատճառով նրա բնակիչները հեռացել էին Իրան

<sup>11</sup> Քիստեան 1944թ., 93:

<sup>12</sup> Ջուլայան 1990, 138-9:

<sup>13</sup> Նույն տեղում. 148, 268:



և շահի թույլտվությամբ հաստատվել Ալախանում<sup>14</sup>: Այն մասին, որ Ազուլիսի հայությունը խուսափել էր բռնագաղթից, փաստում են շահ Աբբաս I-ի 1604 և 1606 թթ. հրովարտականները, որոնք Ազուլիսի Ս. Թովմա Առաքյալի վանքին պատկանող վակֆային մուլքերի հարկերը Ազուլիսի համայնքից գանձվող հարկերի ընդհանուր գումարի մեջ մտցնելու և համատեղ գանձելու մասին են<sup>15</sup>:

Ազուլիսը ինչպես և նրան մոտ գտնվող Մեղրի, Շոռոթ, Լեհրամ (կամ Նեհրամ) և Աստապատ բնակավայրերը XVII դարում պատկանում էին Սեֆյան արքունիքի խաս հողերի թվին<sup>16</sup>, այսինքն համարվում էին շահական ընտանիքի տիրույթը<sup>17</sup>: Խաս գյուղերն ունեին որոշ արտոնություններ, ավելի հարուստ էին և համեմատաբար հեռու Օսմանյան կայսրության հետ սահմանից<sup>18</sup>: Դրանք գտնվելով Սեֆյան կենտրոնական իշխանության անմիջական վերահսկողության ներքո՝ պաշտպանված էին տեղական իշխանությունների չարաշահումներից ու կամայականություններից: Շահ Աբբաս I-ը հատուկ ուշադրություն էր դարձնում կենտրոնական իշխանության ամրապնդմանը և հրովարտակով կարգադրել էր, որ պետքի թիովները<sup>19</sup> իրանական զինվորականներին ու

<sup>14</sup> Առաքել Գավիթեցի 1990, 63-4:

<sup>15</sup> Փափագյան 1959, վավ. 4, 6:

<sup>16</sup> Չաքարիա Ազուլեցի 1938, 134:

<sup>17</sup> Haseanu 1972: 108.

<sup>18</sup> Լոյն տեղում, 110.

<sup>19</sup> Թիուլ (ساق) - XVI - XVII դարերում ֆեոդալական պարզական հողատիրության տարածված ձևերից մեկը: Պետական և զինվորական ծառայության դիմաց թիուլներ էին տրվում ինչպես ամրոցական գյուղեր (եթե դրանք պետական «դիվանի» գյուղեր էին), այնպես նաև առանձին մուլքային գյուղերից և այլ հարկատու օբյեկտներից ստաց-

ազնվականությանը ծառայության դիմաց շնորհվելին միայն դիվանի հողերից<sup>20</sup>:

Այն, որ Ազուլիսը շեն բնակավայր էր 1617 թ., փաստում է նաև Առաքել Դավրիժեցին, որը նկարագրում է շահ Աբբասի այցը Ազուլիս<sup>21</sup> և քահանա Անդրեասի նահատակությունը:

Հետագա շրջանում մինչև 18-րդ դարի սկիզբը Ազուլիսի առևտրատնտեսական դերը տարածաշրջանում էլ ավելի է բարձրանում:

Ազուլիսի XVII դարի հայ վաճառականության տնտեսական գործունեության մասին որոշակի պատկերացում է տալիս Ջաքարիա Ազուլեցու օրագրությունը: Ջաքարիա Ազուլեցին 1664 թ. դադարեցնում է իր առևտրական ուղևորությունները՝ բավարարվելով միայն իր դրամագլխի շրջանառության մեջ դնելով և վաշխատությամբ<sup>22</sup>, որի պատճառը թերևս այդ ժամանակաշրջանից սկսված Սեֆյան պետության ներսում անհանգստությունների և ճանապարհների անապահովության աճն էր:

Դ. Ալիշանի դիտարկմամբ ազուլեցի վաճառականների կողմից վաճառքի համար Ռուսաստան և այլուր արտահանվող հիմնական ապրանքը մետաքսն էր «արգասիքը ընտիր թթենեաց իրեանց», իսկ Ռուսաստանի տիրապետության շրջանում ազուլեցիներն արդեն իրենք էին մշակում այն և գործում մետաքսը, թեև նրանց «գործարաններն» ըստ Ալիշանի գիջում էին Օրդուբադի արտադրությանը: Բացի մետաքսից նրանք վաճառքի էին

---

վող պետական հարկերը կամ նրանց մի մասը (Փափազյան 1959, 216):

<sup>20</sup> *История* 1972: 109.

<sup>21</sup> *Առաքել Դավրիժեցի 1990*, 287-9:

<sup>22</sup> *Հովհաննիսյան 2017*, 20-22:

տանում բամբակ, կտավ (չիթ) և մեղր: Սակայն, այնուամենայնիվ, Ալիշանի հավաստմամբ իր ժամանակի ազուլեցիները «ոչ կարեն հասասարել յաջողութեան և հարըստութեան նախնեաց իրեանց, որք ոչ միայն ի Ռուսաստան այլ և ի գանազան կողմանս և շահաստանս երուպիոյ երթենեկէին»: Ըստ ամենայնի, Ազուլիսի հարմար աշխարհագրական դիրքը՝ պայմանավորված տարանջիկ առևտրի ճանապարհին նրա գտնվելով՝ հնարավորություն էր տալիս այնտեղի վաճառականներին հանդես գալու որպես առևտրական միջնորդներ: Չաքարիա Ազուլեցու օրագրությունից ակներև է ազուլեցի խոջաների կապը թե՛ իրանական Թավրիզ, Ռեշտ, Երևան և Սպահան, և թե՛ օսմանյան՝ Էրզրում, Արծն, Թոքաթ, Իզմիր, Բուրսա, Մոդանա, Ստանբուլ առևտրի կենտրոնների հետ<sup>25</sup>:

Ազուլիսի հայ վաճառականության մասին որոշ տեղեկություններ են բովանդակում նաև Մատենադարանի XVII դարի մի քանի պարսկերեն վավերագրերը, որոնք հնագույն են այնտեղի վաճառականներին վերաբերող փաստաթղթերի մեջ: Դրանք հիմնականում գանազան գործարքներ արձանագրող շարիաթական-նոտարական փաստաթղթեր են, որոնց մեծ մասը պահվելիս լինելով Մատենադարանի կաթողիկոսական դիվանի 1է թղթապանակի մինչև 2017 թ. դեռևս անմշակ ֆոնդում, հայտնի չեն եղել ուսումնասիրողներին: Այդ վավերագրերի տվյալների համադրումը այլ աղբյուրների տեղեկությունների հետ որոշ պատկերացում է տալիս նրանց կողմից իրականացված տնտեսական գործունեության վերաբերյալ:

<sup>25</sup> Լոպս տեղում, 36:

Լեոն, խոսելով Նախիջևանի հիշյալ շրջանում իրենց առևտրատնտեսական գործունեությունը ծավալած անձանց մասին, նշում է, որ նրանք կոչվում էին խոջաներ սկսած «գյուղական մանր փերեզակից մինչև խոշոր առևտրի ներկայացուցիչները»<sup>24</sup>: Սակայն կարծում ենք այս եզրույթի XVII դարի նշանակության պարզաբանման հարցում ավելի ճշգրիտ է Հ. Փափազյանի քննորոշումը, ըստ որի պարսկերեն «խոջա» եզրույթը (ճիշտը՝ խաջե (خواجه)) նշում է մեծահարուստ վաճառականներին ու դրամատերերին: Այն խոջաները, որոնք առևտրի քնազավառում ձեռք բերած հարստությամբ սկսում էին զանձագին կալվածներ կամ «մոլքեր» գնել, հաճախ ազդեցիկ դիրք էին զրավում արքունիքում, զբաղեցնելով բարձր, մինչև անգամ ֆինանսների նախարարի՝ «սահիբ դիվանի» պաշտոնը<sup>25</sup>: Իսկ այն հանգամանքը, որ «խոջա» տիտղոսը խիստ տարածված էր Նախիջևանի հայ առևտրականների շրջանում և հաճախ առկա է Ազուլիսի, Ցոլնայի, Խոշկաշենի ու շրջակա մյուս նշանավոր քնազավայրերի վիմագիր արձանագրություններում<sup>26</sup>, թերևս մատնանշում է նրանց շրջանում մեծահարուստ վաճառականների գոյության փաստը:

Հիշենք, որ XVII դարի վաճառական-մատենագիր Չաքարիա Ազուլեցին իրեն իր օրագրության մեջ երբևէ «խոջա» չի անվանում, թեև մանրամասն նկարագրում է իր առևտրական գործունեությունը: Այդ տիտղոսը չկա նաև նրա զրառումներում և ստորագրություններում, որոնք առկա են, մասնավորապես, Առաքել Դավրիժեցու

<sup>24</sup> Լեո 1934, 56:

<sup>25</sup> Փափազյան 1956ա, 111:

<sup>26</sup> Այվազյան 2008: Այվազյան 2009:

պատմության ձեռագրի էջ 418 բ-ին. «ՌՃԺԷ (1668) տո-  
յեմբերի մէկն երեսն: Ես՝ Արզուկեցի Քուրդունց մղոսի  
Աղամիրի որդի Ջաքարիայ այս Պատմագիրքս բերի  
Ազուխս վասն օրինակելոյ»<sup>27</sup>:

«Խոջա» եզրույթը բացակայում է նրա նաև պարս-  
կերեն ստորագրության մեջ: Աղամիրի որդի Ջաքարիա-  
յի՝ որպես վկայի պարսկերեն ստորագրությունը գտնում  
ենք Սատենադարանի 1672, 1673 թվականների երկու  
պարսկերեն վավերագրերի վրա: Դրանցից առաջինը  
շարի՛աթական<sup>28</sup> դատարանի արձանագրություն է, որով  
Ազուխցի Խոջա Ոսկանի որդիներ Խոջա Ամիլվեյին,  
Մաղսուդն ու Հայրապետը համաձայնագիր են կնքում  
իրենց հայրական ժառանգության բաժանման վերաբեր-  
յալ<sup>29</sup>, մյուսը՝ Ազուխցի քրիստոնյա Ոսկանի որդի Խոջա  
Հայրապետի գրավոր համաձայնագիրն է առ այն, որ  
հնուց ի վեր դեպի իր պապենական այգին հոսող Նուրիի  
ջրանցքը իր կարիքների համար օգտագործելուց հետո  
հարևանների կողմը հոսի<sup>30</sup>: Ինչպես տեսնում ենք, չնա-  
յած Ջաքարիայի առևտրական որոշակի գործունեությա-  
նը, նա իրեն չի անվանում «խոջա» ոչ այդ փաստաթղթե-  
րում, ոչ ձեռագրերի հիշատակարաններում, մինչդեռ վե-

<sup>27</sup> Եգանեան 2009, 1158:

<sup>28</sup> Շարի՛աթ (شريت) - մուսուլմանական կրոնական օրենքներ  
հաստատված տրամեր, որոնցով առաջնորդվում էր հոգևորականների  
քարծրագույն կրոնական - դատական առյանը: Այս հաստատու-  
թյունը հաճախ անվանվում էր հենց այդ օրենքների անունով, սակայն  
սովորաբար այն կոչվում էր «Շարի՛»: Շարի՛աթի կամ Շարի՛ի հոգևոր  
ատյաններում էին ընկնում մեծ մասամբ տնտեսական հարցերի շուրջ  
քաղաքացիների միջև առաջացած վեճերը (Փափագյան 1959, 227):

<sup>29</sup> Մատենադարան (ՄԱ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ր, վավ. 155:

<sup>30</sup> ՄԱ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1Է, վավ. 1088:

րոհիշյալ փաստաթղթերի ոչ միայն բուն բովանդակության մեջ, այլև վկաների թվում նշվում են խոջաներ՝ իրենց անուններով ու հայրանուններով: «Խոջա Ռսկանի որդի Խոջա Ամիլվեյի, Ղուլիի որդի Խոջա Ղուկաս, Սարգսի որդի Խոջա Ալեքսան, Պետրոսի որդի Խոջա Պողոս»<sup>31</sup>: Ընդ որում հետագա շրջանի, մասնավորապես XVIII դարի փաստաթղթերում հանդես է գալիս նաև «քազազ» եզրույթը, որը մատնանշում էր տարածաշրջանում զարգացող մանուֆակտուրային արտադրության առկայությունը և տվյալ անձանց մասնագիտացվածությունը մանուֆակտուրային արտադրանքի առևտրի մեջ: Այդ եզրույթը մասնավորապես կիրառվում է 1711 թ. Ազուլիսում կայացված առքուվաճառքի մի գործարքի պարսկերեն փաստաթղթում, որի վկաների թվում նշվում են «նախկին քալանթար Ավին և Պետրոսի որդի Խոջա Նիկողոսը, Ռսկանի որդի Անդրիասը, Նիկողոսի որդի Խոջա Պետրոսը, Ջաքարիայի որդի Ավետիսը, Բազազ Ավանը, Բազազ Հայրունը» և այլ շուրջ 40 անձանց անուններ ու կնիքներ<sup>32</sup>:

Ազուլիսի, ինչպես նաև Արևելյան Հայաստանի մյուս շրջանների վաճառականներն իրենց առևտրական գործունեությունը Սեֆյան իշխանությունների տիրապետության ներքո առավելապես պաշտպանելու ու ապահովելու նպատակով հաճախ առևտուրը համատեղում էին վարչական աշխատանքի հետ կամ օգտվում իրենց ազգակից բարձրաստիճան պաշտոնյայի հովանավորությունից: Հատկանշական է Ջաքարիայի դիտարկումը իր եղբոր կողմից մի քանի պաշտոնների համատեղման և

<sup>31</sup> ԱՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ, 1թ, վավ, 155:

<sup>32</sup> ԱՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ, 1թ, վավ, 237:

առևտրի համար այդ հանգամանքի շահավետության արդիվ «գառաֆխանէն»<sup>33</sup>, համ ըուսիտարխանեն»<sup>34</sup> սորայ ծեռացն էր, շատ շատ շահավետ էր վաճառականի որ առուտրի... նաև գարաջարաղն»<sup>35</sup> էր»<sup>36</sup>: Փաստորեն Չաքարիայի եղբայր Շմափոնը տնօրինում էր Երևանի դրամահատարանը, ճանապարհային մաքսային ծառայությունը, ինչպես նաև արքունի մատակարարն էր, որը մասնավորապես Իրանի՝ Ռուսաստանով կատարվող առևտրում որոշակի արտոնություններ ուներ և ազատված էր առևտրական տուրքերից<sup>37</sup>:

Նշված բոլոր երեք պաշտոններն էլ բավականին եկամտաբեր էին և նպաստում էին առևտրական դրամազվյի արագ աճին ու անխափան շրջանառությանը:

Այնուամենայնիվ, Սեֆյան Իրանի իշխանությունները, որոնք XVII դարի երկրորդ կեսից բռնում են կրոնական անհանդուրժողականության ուղին<sup>38</sup>, երկար չէին կարող հանդուրժել հայ քրիստոնյայի կողմից նման բարձր պաշ-

<sup>33</sup> Չառաֆխանն - (غراب خاندان) - Դրամահատարան:

<sup>34</sup> Ռաիդադխանն (رايدادخان) - Ճանապարհի մաքսային ծառայության պահակակետը:

<sup>35</sup> Գարաջարաղների - (گراجر افان) - Սեֆյան արքունիքի պաշտոնյաներից էին, որոնց դիրքը հավասար էր վեզիրների դիրքին: Նրանք «վեզիրների ու ամիրների» հետ ապրանքներ էին ուղարկում նահանգներին: Նրանք ըստ երևույթին որոշ տեսակի մատակարարներ էին, ուղարկված քոյուբաթի կողմից, որոնք հասկանում էին որոշ տեսակի մթերքների որակից: Վեզիրները, աշխատողները և գարաջարաղները հավասար կերպով, մթերքից բացի հարյուրին մեկ աշխատավարձ էին ստանում (**Կոտիկյան, Միլչեսեքսյան 2019, 218**):

<sup>36</sup> **Չաքարիա Ազուզեի 1938, 81, 95:**

<sup>37</sup> **Костиков, Ястребова 2019: 123.**

<sup>38</sup> Այս մասին տե՛ս **Savory 2003: 453.**

տոնների գրադեցումը: Այս առումով զարմանալի չէ Հաբարիա Ագուլեցու եղբոր՝ Շմավոնի հետագա ճակատագիրը: Շմավոնին իսկամ ընդունել է պարտադրում Թավրիզի Ալի Ղուլի խանը և հրաժարվում վերադարձնել նրանից վերցված պարտքը<sup>30</sup>: Շմավոնը հրաժարվում է իսկամն ընդունել և կորցնում է գումարը: Էլ ավելի տխուր է նրա վախճանը Սպահանում 1670 թ. անհայտ հանգամանքներում<sup>40</sup> և նրանից հետո իր եղբոր վրա ծանրացած պարտքերը, որոնք խիստ զարմանալի ու անհասկանալի են նրա գրադեցրած բարձր ու եկամտաբեր պաշտոնների դեպքում:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերում պահպանվել են Ագուլիսի XVII դարի հայ խոջաների անունները, որոնց մասին տեղեկություններ կան նաև ժամանակաշրջանի այլ աղբյուրներում:

Ագուլիսի XVII դարի սկզբի խոջաներից Խոջա Էվազի, Խոջա Ոսկանի, Խոջա Հախնազարի անունները նշված են եղել Ագուլիսի Ս. Հակոբ Ալփիան եկեղեցու աջակողմյան խորանի ճակատի 1630 թ. արձանագրության մեջ<sup>41</sup>:

Վերոհիշյալ Խոջա Ոսկանի ավագ որդին էր Միրվելին (կամ Ամիլվելին), որին Ջուրայի Խոջա Նազարի, Խոջա Սուլթանումի և Մելիք Հայկազի հետ հիշատակում է Առաքել Դավրիժեցին շահ Աբբաս I-ի խորհրդականների և երևելիների շարքում<sup>42</sup>: Պահպանվել է Խոջա Ամիլվելիի հոր՝ Խոջա Ոսկանի ժառանգության քաժան-

<sup>30</sup> Հաբարիա Ագուլեցի 1938, 160-161:

<sup>40</sup> Լույս տեղում, 95:

<sup>41</sup> Այվազյան 2005, 97:

<sup>42</sup> Առաքել Դավրիժեցի 1990, 195:



ման 1672 թ. շարիաթական փաստաթուղթը, որի համաձայն Խոջա Ամիլվեյիին է հասնում հոր ունեցվածքի մեծ մասը, տունը, այգին, ախոռը, ցրի բաժնով<sup>43</sup>: Այդ գործարքի վկաների թվում հիշատակված են Ղուլիի որդի Խոջա Ղուկասի, Սարգսի որդի Խոջա Ալեքսանի, Պետրոսի որդի Խոջա Պողոսի անունները:

Զաքարիա Ագուլեցու հետևյալ հաղորդումը թերևս վկաների թվում վերը նշված Խոջա Ղուկասի մասին է. «1129 (1680) թ. հունիսի Ժ (10) ումն Աքուլիս, որ արուլեցի խօջայ Ղօզազն առ Աստուած փոխեցաւ, շատ պարանքի, ըոզակի<sup>44</sup> տէր էր: Սայ սարքարութիւն արաւ, որ Վերի թարյի եկեղեցին շինեց»<sup>45</sup>: Ագուլիսի Վերին թաղում է կառուցված Ս. Քրիստափոր եկեղեցին<sup>46</sup>, որի հարավային որմնում տեղադրված 1673 թ. մի խաչքարի արձանագրության մեջ հիշատակվում է Ղուլիի որդի Խոջա Ղուկասի անունը. «Խ(Ա)ՉԱ Յ(Ի)Շ(ԱՏԱ)Կ Է ՂՈՒԼԻ ՈՐԴԻ ԽՕՁԱ ՂՈՒԿԱՍԻՆ ԵՒ ՈՐԴՈՅՆ ՊԵՏՐՈՍԻՆ... (1673)»<sup>47</sup>:

Նույն եկեղեցու հարավային որմի 1673 թ. մեկ այլ արձանագրության մեջ առկա է նաև Խոջա Պողոսի ու նրա հոր՝ Պետրոսի անունները: Այս խոջայի, ինչպես նաև Ղուլիի որդի Խոջա Ղուկասի անունները նշված են նաև 1673 թ. մեկ այլ փաստաթղթի վկաների թվում Աղամիրի որդի Զաքարիայի (Զաքարիա Ագուլեցու) անվան կողքին: Այդ փաստաթուղթն էլ կազմվել է Ոսկանի որդի Խոջա Հայրապետի անունից՝ դեպի իր պապենական այ-

<sup>43</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1թ. վկավ. 155:

<sup>44</sup> Հոդգայ, պարսկ. բառ մանր:

<sup>45</sup> Զաքարիա Ագուլեցի 1938, 149:

<sup>46</sup> Այվազյան 2005, 28:

<sup>47</sup> Նույն տեղում, 72:

զին հոսող Նուրիի ջրանցքից օգտվելու կարգի կապակցությամբ<sup>43</sup>:

Ալիշանը նշում է, որ Վենետիկի արխիվում և Հայոց Ս. Խաչ եկեղեցում կան բազում հիշատակություններ Ազուլեցի վաճառականների մասին<sup>44</sup> և թվարկում մի քանիսին, որոնցից են «Մելգոն Մելիքեան կամ Մալումեան, որ յամի 1660 գործակալ իւր կարգէ զ'Լազար որդի Պետրոսի և դատավար ընդդէմ Թոմայի որդոյ Ոսկանայ, եւ զԱղաւետ կամ Աղապէկ որդի Աղամայի, վասն այլոյ ինչ խնդրոյ, ի միտում ամի ի նաւելն ի Զմիտեիա հղանդացի նաւո՛ւ մեռանի ի ծովու: Նուրի Նուրենց, որը մահացել է քաղաքի մաքսատան կղզակում 1676 թ., և անդէն թաղեալ և տապանագրեալ. «Այս է տապան Ազուլեցի Նուրենց Մարտիրոսի որդի Նուրին. Թ ՌՃԻԷ (1678)»<sup>45</sup>:

Ալիշանը հիշում է նաև «Ոսկան (Գոստանդին) մականաւնեալ Ազուլ, որդի Տէր Մարտիրոսի որ ի բազում դէպս յիշի ի քաղաքիս՝ յամէ 1674 ցամ մահուանն (80 ամենի) ի 1721, սա գատ ի սպասուց նուիրելոց յեկեղեցին Հայոց, իւրովք ծախուք տայ տպագրել ի Վենետիկ Աւետարան յամի 1686, ընտիր տառիւք»<sup>46</sup>:

Ալիշանը թվարկում է Վենետիկում XVII դարում (1694-1697 թթ.) իրենց առևտրական գործունեությամբ հայտնի մի քանի ազուլեցիների անուններ. Մարկոս որդի Յովհաննու, Եաղմուր, Խաչատուր, եւ այլն: Նա հատկապես զովեստով է խոսում Գովնազարի որդի Նահապետի մասին, որ «յիշի յամէ 1653 ցամն 1694. բազում սպասս նուի-

<sup>43</sup> ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1088:

<sup>44</sup> Ալիշան 1893, 333:

<sup>45</sup> Նույն տեղում:

<sup>46</sup> Նույն տեղում:

րեալ է ազգային եկեղեցոյն Ա. Խաչի, զատ յայլոց Յայսմատորք մի տունալ գրել ի Կ. Պոլիս յամի 1676, ծախեալ 110 դուրուշ...»:<sup>52</sup> Այս մեծահարուստ խոջան դրամ ու հարստություն էր կուտակել Հոլանդիայում, Ֆրանսիայում և Իտալիայում: Նահապետը Վենետիկում հիմնելով տպարան՝ 1687 թ. տպագրում է «Պարզաբանութիւն սաղմոսացն [Դավթի]» գիրքը, որի սկզբում խոջայի դիմանկարն է՝ չալմայով և խալաթով, նրա ծախսով 1695 թ. լույս է տեսնում նաև «Դաշանց թոռթը»:<sup>53</sup> Նահապետն իր հոգու փրկութեան համար պատվիրում է, որ կարճ ժամանակամիջոցում 2000 պատարագ մատուցվի, նաև, իր միակ ժառանգը լինի դստեր՝ Թա՛րիֆի և նրա ամուսնու՝ Ազուլեցի Թեսայի որդին՝ Առաքելը: Սակայն, չնայած այն հանգամանքին, որ կտակել էր իրեն թաղել Ա. Խաչ եկեղեցում, որի համար 200 դրովատ գումար էր հատկացրել, սակայն թաղվել է «ի մերձաւոր»<sup>54</sup> Ա. Յուլիանոս թաղերիցական եկեղեցոջ Լատինաց: Ափշանը հավաստում է, որ նրա հարստություններն ու զոյքը ցրված էին Կ. Պոլսում, Ջմիւռնիայում, Հոլանդիայում և Լիվոնոյում<sup>55</sup>:

Խոջա Նահապետի ժառանգներն իրենց հայրենիքում բախվում են իմամ Ջա՛ֆարի օրենքի<sup>56</sup> ծանր հե-

<sup>52</sup> **Նոյն տեղում**, 334:

<sup>53</sup> **Հովհաննիսոս 2017**, 41:

<sup>54</sup> **Ափշան 1893**, 335:

<sup>55</sup> **Նոյն տեղում**, 336:

<sup>56</sup> Խոսքը մահացած քրիստոնյաների ունեցվածքի նկատմամբ նրանց իսլամադավան ազգականների իրավունքների գերակայությունը հաստատող շիա իսլամի օրենքի մասին է, որով մինչև 7 պրոտ հեռու ազգականը կարող էր տեր դառնալ իր քրիստոնյա ազգականի ունեցվածքին, զրկելով ժառանգությունից ավելի մոտ քրիստոնյա

տւանքների հետ, որի մասին փաստում է նրանց վերաբերող Մատենադարանի պարսկերեն շարի'աթական փաստաթուղթը՝ կազմված 1694 թ.: Խոջա Նահապետի մահվանից անմիջապես հետո նրա իսլամ ընդունած (ջադիդ ալ-իսլամ) ազգականներ Շահիջանը, Արեզու խանումն ու նրանց որդի Միր Մուհամմադը հավակնություններ հանդես բերելով իրենց հարուստ ազգականի ունեցվածքի նկատմամբ՝ շարի' դատարանում վեճ են սկսում Խոջա Նահապետի դստեր Թա'րիֆ աղայի ու նրա որդի Առաքելի դեմ: Վեճը հանգուցալուծվում է վերոհիշյալ փաստաթղթում արձանագրված փոխհատուցվող նվիրատվության (հորբե) գործարքով, ըստ որի որոշակի գումար է վճարվում հավակնորդներին՝ Միր Մուհամմադին 16 թուման, Շահիջանին և Արեզու խանումին՝ 8-ական թուման, որի դիմաց նրանք նվիրատվության ձևակերպմամբ հանձնում են (հորբե են անում) Նահապետի որջ ունեցվածքը (ապրանքները, տնային կահ-կարասին, կանխիկ գումարը, տները, այգիները, խանութները, քարվանսարան, արհեստանոցը Ազուխում և այն, ինչ հիշյալ Առաքելին էր փոխանցվել «Փարանգի երկրից, Ստամբուլից ու Ռումի այլ վայրերից») անցնում է նրա ժառանգ Առաքելին:

Այս փաստաթուղթը ևս մեկ անգամ փաստում է Իմամ Ջա'ֆարի օրենքի խրախուսմամբ հայերի իսլամացման և ունեղոր հայերին սպառնացող ունեզրկման մասին, որին տվյալ դեպքում հայ ժառանգները կարողանում են հակազդել՝ իրենց իսլամ ընդունած ազգականի հետ որոշ գումարի դիմաց համաձայնության գալով և իրենց օրի-

---

ժառանգներին (այս օրենքի մասին մանրամասն տե՛ս **Փափազյան 1956թ: Կարապետյան 1988**):

նական ժառանգությունը ստանալ նրանց կողմից նվիրատվության (հորքե) ձևակերպմամբ, որը մեկն էր հայերի ունեցվածքի պաշտպանության օրինական ճանապարհներից: Իսկ այն, որ «հորքե» կոչված գործարքի միջոցով որպես նվիրատվություն փոխանցված ունեցվածքը չէր կարող խլվել իսկամ ընդունած ժառանգների կողմից, ձևակերպված է նաև իսկամական հոգևորականության մի ֆաթվայով<sup>57</sup>, որ հաստատված է շահ Աբբաս II-ի 1658 թ. հրովարտակով<sup>58</sup>: Ատորև ներկայացվող փաստաթղթով փոխանակման հորքե (հորքե-ե մուավեզե - «معوضه») է կնքվում մի կողմից Խոջա Նահապետի անմիջական ժառանգներ դուստր Թա'րիֆի ու նրա որդի Առաքելի և մյուս կողմից նրա հեռավոր մահմեդականացած ազգականներ Միր Մուհամմադ Բեկի ու նրա քույրեր Շահիջանի, Արեզու խանումի միջև, որոնց որոշակի գումար է վճարվում, և նրանք դրա դիմաց իրենց կողմից վիճարկվող ունեցվածքը նվիրատվությամբ հանձնում են նախնական տերերին՝ քրիստոնյա ժառանգներին:

Ներկայացված աղբյուրագիտական փաստերն ու տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ Ազուլիսի XVII դարի հայ վաճառականները բավականին կարևոր դեր էին խաղում մետաքսի տարանցիկ առևտրում և իրենց առևտրական գործունեությամբ հայտնի էին եվրոպական երկրներում: Նրանց մեջ կային հարուստ խոջաներ, որոնք զբաղեցնում էին բարձր պաշտոններ Սեֆյան վարչական համակարգում, մասնակից էին տարա-

<sup>57</sup> Ֆաթվա- (فتوا) - Մուսուլման կրոնապետների՝ «շեյխ-ու-իլամների» և «մուֆթիների», ինչպես նաև կրոնական բարձրագույն աստիճանի՝ շար'ի կողմից այս կամ այն հարցի մասին տրված վերջնական վճիռ, որը օրենքի ուժ ունի (Փափագյան 1956ա, 123):

<sup>58</sup> Կոտիկյան, Գևորգյան 2018, 64, 70-72:

ծառչանի ու իրենց բնակավայրի սոցիալ-տնտեսական կյանքին, հայոց եկեղեցիների նորոգմանը: Միևնույն ժամանակ Ազուլիսի հայ խոջաները բախվում էին որոշ խընդիրների իրենց դավանական պատկանելության պատճառով: Ժամանակ առ ժամանակ նրանց ներկայացվում էր մահմեդականացման պարտադրանք, կամ էլ նրանց ժառանգները կանգնում էին ունեզրկման վտանգի առաջ, երբ որևէ ազգական մահմեդականանալով և օգտվելով Իմամ Ջաֆարի օրենքի կիրառումից, որոշում էր տեր դառնալ նրանց ողջ ժառանգությանը:

#### ԹԱՐԳՄԱՆՈՒՅՈՒՆ

ՄԱ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1107, կնիքով հաստատված նոտարական պատճեն, շիքասթե, մեծ. 24,5 x 45սմ, նորոգված

Փառաքանումից հետո՝ այս թերթին շարադրված *շարի'աթական* տողերի գրության պատճառը հետևյալն է. այն քանից հետո, երբ Ազուլիսի *խասսե-ե շարիֆների* բարձրատիճան *ջեզայերի անդազ*<sup>59</sup> *ջադիդ ալ-իսլամ*<sup>60</sup> Միր Մոհամմադ Բեկը, որը բարեկարգ քաղաք Օրդուբադի ամենալուսավոր *շար'ի* առջանում անձամբ ու իր ընդեր Մոհամմադ Ամին *ջադիդ ալ-իսլամի* դուստրեր Շահիջանի ու Արեզու Խանումի լիազորությամբ Ազուլիսցի բրիտանյա Գյուլնազարի որդի Խոջա Նահապետի դստեր՝ Թա'րիֆի հետ ստորև գրավոր ներկայացված ձևով առանձին վեճ սկսեց և

<sup>59</sup> Ջեզայերի անդազ (جذایر) - Սեֆյան շրջանում գործող հասուկ ռազմական գնդի զինվոր, հրետանավոր:

<sup>60</sup> Ջադիդ ալ-իսլամ (جدد الإسلام) - Նոր մահմեդականություն ընդունած: Այսպես էին կոչվում այն բրիտանյաններն ու այլադավանները, որոնք հասուն տարիքում հավատափոխ էին փնում և իսլամ ընդունում (Փափազյան 1959, 228):

իր պահանջը վստահելի վկաներով սրբազնագույն *շար'ի*<sup>61</sup> և հիշյալ գյուղի քրիստոնյա ու մահմեդական մեծամեծերի, ազնվականների ու հեղինակավոր անձանց բազմության ներկայությամբ հաստատելով ու *շար'ով* օրինականացնելով՝ կտրեց ու սեփականացրեց այն ամենը, ինչ որ վերոհիշյալ անհավատ հանգուցյալ Նահապետի *մուքերից*<sup>62</sup>, տներին, խանութներին, ապրանքներից ու այլ գույքից Նահապետի դուստր Թա'րիֆի ամուսին Թեսալիի որդի Առաքելի *գարթոս*<sup>63</sup> էր գտնվում, և ստորև նշված օրը ներկայացավ վերոհիշյալ բարձրաստիճան անձը նշված մեծաշուք քաղաքի լուսավոր հավատքի ճշմարիտ ու անրիժ *շար'ի* բարձր առյան, և անձամբ՝ իր ու ջուրերի՝ վերոհիշյալ Շահիջանի ու Արեզու խանումի կողմից հաստատված ու անմիջական լիազորությամբ, իր կողմից ճիշտ ու հավաստի կերպով հնչեցված թղթը *շարի'աթական* պայմաններով և ձևաուցման հայտնի խոսքով փոխանակման *հորքե* արեց ու իր հոժար կամքով, առանց բռնության ու կատապի փոխանցեց իր ժառանգություն ստացած ամբողջ ունեցվածքը, ապրանքներն ու տնային կահ-կարասին, կանխիկ գումարը, տները, այգիները, խանութները, քարվանսարան, արհեստանոցն ու այլ նման [գույքը] Ազուլխում և այն, ինչ հիշյալ Առաքելին էր փոխանցվել Ֆարանգի երկրից, Ստամբուլից ու Ռումի այլ վայրերից կանխիկ գումարով կամ ապրանքով՝ ամբողջությամբ, ներառյալ ամենաչնչին իրը, որ հանձնվել

<sup>61</sup> Շար' (شرع) - Մուսուլմանական գլխավոր, կրոնական, հոգևոր օրենսդրական դատական խորհուրդ, որին մասնակցում էին տվյալ վայրի բարձրաստիճան հոգևորականները (Փափագյան 1956ա, 117):

<sup>62</sup> Մուք (مُك) - Սեփականություն, տիրույթ, ժառանգաբար ստացած կամ դրամով գնած ու սեփականություն դարձրած հող կամ այլ անշարժ կալված (Փափագյան 1956ա, 115):

<sup>63</sup> Զարթո (ضرت) - Տվյալ հարկատու օբյեկտից պետական հարկերի տեսրիման իրավունքը:

եր նշված բարձրաստիճան լջադիդ, ալ-իւլամին] ու նրա ըույրերին, Նահապետի դուստր վերոհիշյալ Թա՛րիֆին՝ իրեն օրինական պատկանող ու վերաբերող ամեն ինչով, լանկախ նրաւից] հորբեի ունեցվածքի ու սեփականության թվարկման մեջ նշված լինի, թե ոչ: Վերոհիշյալ Առաքելը *հորբեն* ստացող Թա՛րիֆի անունից ընդունեց այն և որպես նվեր վերոհիշյալ նվիրատուին անձամբ ու [Թա՛րիֆի] լիազորությամբ բարձրաստիճան անձին Նահապետից հատկացված բաժնի դիմաց տվեց 16 թալիիզի թուման, իսկ վերոհիշյալ լիազորի միջոցով հանդես եկող անձանց բաժնի դիմաց՝ յուրաքանչյուրին 8 թալիիզի թուման:

Բարձրաստիճան Միդ Մուհամմադ Բեկի բաժինն է 16 թուման, Շահիջանիւր՝ 8 թուման Արեզու խանումիւր՝ 8 թուման:

Փոխանակման *հորբե* կնքվեց իր բոլոր կանոններով ու կետերով՝ անթերի ու արդար, կեղծիքից ու սխալից զերծ, առանց յուրացման ու վնասի, բարերաշտների փառաբանյալ հովանավոր, օրինյալ մարգարեի ճշմարիտ ու հին հավատքի կարգին համապատասխան, և վերոհիշյալ նվիրատուն անձամբ ու լըույրերի լիազորությամբ հանձնեց լիազորագրված Առաքելին *շար՛ին* համապատասխան, և դրա դիմաց փոխհատուցումը դեմատղեմ տեղում տրվեց անթերի կերպով: Նվիրատուն նվիրատվության գործարքի կնքման ժամանակ այն ընդունողի լիազորվածի ձեռքից դատարանի բարձր ատյանում այն լիատուցումը] ստացավ ու դատական բարձր ատյանում համաձայնություն կնքվեց, որպեսզի այն ամենը, որ նշված Նահապետից մնացել է և նվիրատուին ու նրան լիազորողների *զարթին* ու տնօրինմանն է հանձնվել կանխիկ գումարով, ապրանքով, *մուքերով* և այլն, հանձնըվի նվիրատվությունը ստացողի վերոհիշյալ լիազորին: *Շա-*



րի՛աթական սիրե՞՞՞ արաբերեն ու պարսկերեն արտահայտություններով ընթերցվեց և գործարկվեց: Այժմ այս նկարագրված գործարքին համապատասխան, եթե օրերից մի օր վերոհիշյալ նվիրատուն, կամ նրան լիազորողները վերոհիշյալ նվիրատվությունը ստացողի, նրա ամուսնու, Առաքելի կամ լիազորի դեմ վեճ սկսեն սույն գրության բովանդակությանը և պայմանագրին հակառակ, անվավեր ու անհիմն է ճանաչվելու: Գործադրվեց 1106 թ. հաղթական սաֆար ամսին<sup>65</sup>:

[Լուսանցքում]

Միր Մուհամմադ Բեկի կնիքի տեղը:

Նա է հավերժ իմաստուն

Նրա փառաբանումից հետո, ով ենթադրվում է որպես այս *շարի՛աթով* ճիշտ փոխհատուցվող *հորքեի* և դատական մյուս հանգամանքների, սկզբի ու վերջի միջև [նշված] փոխհատուցման [գումարի] ստացականի, սկզբից մինչև վերջ շարադրված *շարի՛աթական* ու իսլամական գրության հանգամանքները կարգավորող և պատասխանատու, [հաստատում է], որ թե՛ անձամբ ու թե՛ լիազորագրով նշվածը իմ ձեռքով պայծառ ու պատվարժան *շարի՛աթին* համապատասխան շարադրեցի և պատասխանատվությամբ ստորագրեցի: Գրեց թագավորական փառահեղ վեհապետական պետության հարատևման համար աղոթող Էնայաթլլա ալ-Բարի ալ-Թուսի<sup>66</sup>:

<sup>64</sup> Սիրե (سیرة) - Մահմեդական լեզվական քանոն, որ ընթերցվում է, որևէ գործարք, մասնավորապես նաև ժամանակավոր ամուսնություն կնքելիս:

<sup>65</sup> 1694 թ. սեպտեմբերի 21 - հոկտեմբերի 20:

<sup>66</sup> Այս արաբերեն հասվածի ընթերցման ու թարգմանության հարցում ցուցաբերած օգնության համար շնորհակալություն ենք հայտնում Մ. Մինայայանին:

Պատճենը համապատասխանում է պատճենին ///,  
[կնիք]:///

Նա է: Ամենանվաստ Միր Մուհամմադ *խասսե-ե շարիֆի ջեզայերի անդազն*՝ անձամբ՝ իր անունից և իր ընդերքի լիազորությամբ սույն գրությանը համապատասխան փոխհատուցվող *հորբե* արեց և *մուսայեհեով* նախատեսվող ամբողջ գումարը *հորբեն* ստացողի անուսին [sic!] Առաքելից ստացավ և *շարի* ստացական տվեց: Կնիքի տեղը:

Նա է, Ամենաարդար դատավորը:

Սույնի վկա շիա Ֆերիդուն Աղա:

Սույնի վկա Ֆարիադ Ազուլխսու: որդի Մուհամմադ Հաշեմ: Կնիքի տեղը:

Սույնի վկա /// Սաֆարի որդի Խոջա Նազար:

Նա է: Գրության մեջ նշվող բարձրաստիճան Փիր [sic!] Մուհամմադ Բեկն՝ անձամբ ու լիազորությամբ ընդունեց և տեղեկացրեց փոխհատուցվող *հորբեի* մասին և ստացավ փոխհատուցումը: Արդ ալ-Բադի Օրդուբադի:

Սույնի վկա գրավագործ Աղա Մուհամմադ Օրդուբադին:

Սույնի վկա Մուհամմադ Սելիմ իբն Մուհամմադ Նադի Օրդուբադի: Կնիքի տեղը:

Սույնի վկա Հաջի Աղա Մուսավիի որդի Հաջի Հաթեմ: Կնիքի տեղը:

Սույնի վկա Աբդ ալ-Մաթար Օրդուբադի: Կնիքի տեղը:

Պատճենը համապատասխանում է քնօրինակին,  
[կնիք]. Ով Շաֆի՝:

Այս թերթին շարադրված բովանդակությունը սկզբից մինչև վերջ համապատասխանում է վեճի իսկությանը, իմ ձեռքով գրեցի. Մուհամմադ Մո՛մեն Իսֆահանիի կնիքի տեղ:

Նա է: Կենդանի է:

կնքվեց փոխհատուցվող *հորթ* ըստ գրված կարգի սկզբից մինչև վերջ: Իմ ձեռքով գրեցի. Մոսկվանա Իսմայիլի կնիքի տեղը:

Նա է: *Շարիաթով* հստակ և ճիշտ փոխհատուցվող *հորթ* կնքվեց ինչպես, որ ստորև նշվեց, գրի արևելեց ու րովանդակում է, [այնպես էլ] ամենավառտ ողորմելի Հաջի Մուհամմադ Իսանի ներկայությամբ առյանում տեղի ունեցավ: Այսպանը, Արգալահ, կնիքի տեղը:

بعد الحمد و الصلوة باعت بر تسطين اين بطور شرعيه اللذلات كه بر سطح اين صحيفه تسميته است الميت كه بعد از آنكه رفعت پناه مير مجد بيك جديد الاسلام جزايرى انداز خامسه شريفه اگتيس باسالت خود و يوكلات ذابته لوكلته عصمت پناهان شاهيجان و آرزو خلم بنشان مجد امين جديد الاسلام اگتيس همشيره هاى حقيقه خود در دار السراى شرع انور قصده طيبه اردوداد با مسماء تعريف بلكت خواجه نهايت ولد كاتظور ميمى اگتيس دعوى قرابت بشرح مجله مقوله عظيمه نموده و دعوى خود را مشهود موفقه معتبره در حضور اهالى شرع اقدس و اعيان و اشرفا و معتبرين و جمع كثرى از جماعت اسلامى و ميمى قريه مزبوره بدرجه ثبوت و لزوم شرعى رساليد و تماميت آنچه از نهايت مونه كفره مجرد عن املاك و بيتوات و دكاكين و اجناس و غير ذلك مخلف كشته و از اكل ولد تسلى ميمى زوج تعريف مزبوره صديه نهايت مذكور فاطميت مخلفات او را ضبط نموده كل آنها را از مومى اليه اتزاج و در حيطه تصرف و تملك خود منتظم و مملك گرداننده بود كه بتاريخ ذيل التكاتب حاضر شد رفعت پناه مومى اليه بعالمجله شرع اطير و اسنى محفل دين انور قصده تعليمه مذكوره باصلافت خود و يوكلات صحيفه صريحه ثابتنه همشيره هاى مزبوران خود شاهيجان و آرزو خلم مومى اليهما در حالتي كه جميع اقرار بر شرعيه و اعترافات بينه و عيه از مومى اليهم صحيح و منطذ و معتبره مسموع بود هبه معروضه منجره مصرحه نمود و از كمل طوع و رعت بلا مظنه جبر و كراهت اجبار و فكاخت تمامت و همكى اموال و اجناس و ثات البيت و نفود و بيتوات و باعالت و دكاكين و كازو انسوا و پيشه كاه و غير ذلك كه از نهايت مذكور در فريه اكلهين و غير هم مخلف كشته و خواه آنچه از مومى اليه بنفعات از نفود و اجناس از ولايت فرنگ و استنبول و ساير بلاد ولايت روم باز اكل مزبور فرستاده نظيرا "و فلسطين" تمامت و همكى لها بر سالك المللكى بر رفعت پناه مومى اليه و همشيره هاى مزبوران او انتقال يافته بمسماء تعريف مزبوره صديه نهايت مذكور جميع توابع شرعيه و لواحق مائه رفها ذكر اولم بنكر سمت ام لم بسم بحت الماله و الملكه شرعيه و از اكل مزبور بر كالت تعريف ميبه زوجه خود قبول هبه و عطيه و اهب مشار اليه اصاله و وكالة نموده در عرض و مقابل رسد مختصه رفعت پناه و اهب مزبور از نهايت مذكور كه بلو ميرسيد مبلغ شائزده لومان تيريزى و در ازا حصه موكلتان مزبوران او بغير يك مبلغ هشت لومان تيريزى بنينوجب:

رسد رفعت پناه میر محمد نیک - 16 تومان، رسد شاهجان - 8 تومان، رسد لرزو

خاتم - 8 تومان

داده عدت موافقه معوضه مشتمله بتامه شرایط و قراعت و ارکان خلیفه از کل نواقص و مزلخص و مفاسد و یطلان فرغه از حیف و میل و خسران حالیّه بز نهب دین قدیم و مملکت مستقیم حضرت سید المرسلین علیه وآله افضل الصلوات و الحمد للسلام بین الواهب المزبور اصلاته و وكالة اراکیل الکرکلی جریان شرعی و وقوع دینی یافت و تعامت عرض خصوص علیه مذکور فیه را مراجعیه و مشایخه وقعه و اصلا بدون الفحص و اهاب منکر در حق عدت موافقه ازید وکیل متبینه مسفوره قبض و اخذ شرعی در عالیهمکنه علیه عالیّه نمودند تصرف و تملک خود را از کل مهورات و اهاب مزبور باصالت و وکالت تامه الکرکله موکلتان خود فتره و تقید گردانید، فطیبت آنچه از نهایت مذکور معقب و بحیطه منضبط و تصرف و اهاب مزبور و موکلتان او در آمده بود از نفوذ و اجناس و املاک و غیره ننگ بتصرف وکیل متبینه مزبور داده صیغه شرعیّه مشتمله بالعربیّه و الفارسیه بینهما جاری و واقع شد اکنون بموجب این عدت مقوله اگر یوما\* من الایام و عاماً\* من الاعوام و اهاب مشارائیه یا موکلتان او یا متبینه مزبوره یا اراکیل زوج و وکیل او دعوی و گنگوی در مراتب مزبوره بخلاف مضمون مسطور و عدت مزبور بمصلحه ظهور رسانند باطل و از درجه اعتبار ساقط و هابط خواهد بود. قد جری فی شهر صفر المظفر من شهر سنه مائه مائه و الف سنه 1106

[در حاشیه]

محل میر میر محمد نیک

هو الابدی له الفصل

بعد الحمد و الصلوة ما هو المضمون و المدرج فی طی هذه الرزقه الشرعیّه و الطلین الاسلامی من الفاتحه الی الخاتمه من الجهة المعوضه الصحیحه للشرعیّه و سایر المقدمات المحکیه و قبض العوض الموصوف تماماً و کمالاً اصلاته و وكالة جری لدی و اسبطه بین بدی و اخریت علیه مقتضی الشریعه الشرعیّه لغراً من الائتلاف و الامضاء مستقلاً و کتبه الداعی الیاد الدوله البیهه العالیّه الجلیله الخالقیه عنایت الله البصری الطوسی.

محل میر عالیحضرت ساسی رئیس اقصی الحقایق.

هو. الشواد مع الشواد مطابق و معادل [مهر]://.

هو. کمترین میر محمد جدید الاسلام جزایری انداز خلاصه شریفه باصالت خود و بوکالت همشیره، های خود حسب المسطور المکتوبه مع معوضه نموده تعامت وجه متن المصلحه را از اراکیل زوج متبینه اخذ و قبض شرعی نمود. محل میر.

هو. اقصی الحقایق.

شهد بمافیه فریدون آقا متجمله عالیحضرت مرتضی.

شهد بمافیه میر هاشم ولد فرهاد کلیسی. محل میر.

شهد بمافیه خواجه نظر ولد صفر /// محل میر.

هو. رفعت پناه میر [sic] میر نیک مزبور متن اقرار و اعتراف اصلاته و وكالة بیهه معوضه و اخذ عرض نمود. العبد عبدالباقی اردوبادی.

شهد بمافیه آقا میر کلاه نوز اردوبادی.

شهيد بىمقايمە محمد سالىم ابن محمد ئىبنى اردوبىلى. مەھل مېھ-  
 شهيد ئەمەلىيە حاجى ھاتىم ولد حاجى ئالا مۇسۋى. مەھل مېھ-  
 شهيد بىمقايمە عبدالمطلب اردوبىلى. مەھل مېھ-  
 مۇراد مۇتاپق و موافق اصل است. حرره [مېھ]: يا شقيق!!!  
 مذلول ما حق المحكى في هذه الصحيفه المنسق من البدايه الى النهايه حرى لى و  
 كانه مەھل مېھ محمد مۇزىن اصلىئى.  
 هو. حى. وقعت المواهب المعروضه على النهج المنسطور فيه من الفتحة الى الخاتمه  
 لى محوره. مەھل مېھ مولانا اسمعيل.  
 ما هو المحكى فيه و المعطى فى طيبه من المواهب المعروضه و المصالحه المائيه و  
 ساير المقدمات المزبوره حرى لى مەھل مېھ محمد ئىبنى  
 هو. مواهب معروضه صحيفه صريحه شرعيه بنحوى كه در متن و عنوان مزبور و  
 مشتمل كائنه در حضور اخبر عبد الله ابن مزبور [sic] مغفور حاجى محمد خان غنى  
 عههما فى الدار متن واقع شد. بوضه عبدالله مەھل مېھ.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ալիշան Ղ. 1893**, Սիսական, Տեղագրություն Սիւնեաց աշխար-  
 հի, Կենտրոնիկ, ի Մխիթարայ վանս ի Ս. Դազար:  
**Ալվազյան Ա. 2005**, Նախիջևանի վիմագրական ժառանգու-  
 թյունը, հ. Բ, Ազուլիս, Անթիլիաս:  
**Ալվազյան Ա. 2008**, Նախիջևանի վիմագրական ժառանգու-  
 թյունը, հ. Գ, Երնջակ գավառ, Երևան,  
**Ալվազյան Ա. 2009**, Նախիջևանի վիմագրական ժառանգու-  
 թյունը, հ. Ե, Նախնական, Շարուր գավառներ, Երևան:  
**Առաքել Դավրիժեցի 1990**, Գիրք պատմությանը, աշխ. Լ. Ա.  
 Խանյարյանի, Երևան:  
**Եգանեան Օ. 2009**, Մայր Տուգակ Հայերեն Ձեռագրաց Մաշ-  
 տոցի անուան Մատենադարանի, հ. Ե, Երևան:  
**Չաքարիա Ազուլեցի 1938**, Որագրություն, Երևան:  
**Չուլալյան Մ. 1990**, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատ-  
 մության հարցերը ըստ եկրոպացի հեղինակների, Երևան:  
**Լեո 1934**, Խոջայական կապիտալ, Յերեվան:  
**Կարապետյան Մ. 1988**, Իման Ջաֆարի օրենքը և արևելա-  
 հայերը, Պատմա-քանասիրական հանդես, թիվ 1, էջ 219-  
 221:

- Կոստիկյան Ք., Գևորգյան Հ. 2018.** Սեֆյան շահերի նորահայտ հրովարտակները Մատենադարանի կաթողիկոսական դիվանում, Բանբեր Մատենադարանի, 26, Երևան, էջ 58-76:
- Կոստիկյան Ք., Միշքանբարյան Ժ. 2019.** Միրզա Սամի'ա, Թագվիրաթ ալ-մուլուք, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 18, Պարսկական աղբյուրներ, Ա, Երևան,
- Հովհաննիսյան Ա. 2017.** Զաքարիա Ագուլեցին և իր ժամանակը, Երևան:
- Մատենադարան (ՄՄ), Կաթողիկոսական դիվան,** թղթ. 1ր. վավ. 155, 237, թղթ. 1տ, վավ. 1088, 1107:
- Փափազյան Հ. 1956ա.** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
- Փափազյան Հ. 1956բ.** Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, Բանբեր Մատենադարանի, Երևան, № 3, էջ 85-99:
- Փափազյան Հ. 1959.** Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, պրակ Բ, Երևան:
- Փափազյան Վ. 1990.** Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI-XVII դարերում, Երևան:
- Քիրոսեան Յ. 1944ա.** Նիսբեր Հայ վաճառականության պատմության համար. Հում մետաքսի վաճառականությունը եւ հայերը, հ. 3, էջ 51-65:
- Քիրոսեան Յ. 1944բ.** Նիսբեր Հայ վաճառականության պատմության համար. Հում մետաքսի վաճառականությունը եւ հայերը, հ. 4, էջ 81-99:
- Костиков С., Ястребова О. 2019.** Челобитные иранского купчины Хваджи Рахмата царю Михаилу Федоровичу (1613-1645) из Российского государственного архива древних актов (Письменные памятники Востока, том 16, № 2 (вып. 37), с. 122-146.
- Панаэян А. 1972.** Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках, Ереван.

- Hanway J. 1753**, *An Historical Account of the British Trade over the Caspian Sea*, vol. 1, London.
- Matthee R. 1994**, *Anti-Ottoman Politics and Transit Rights: The Seventeenth Century Trade in Silk between Safavid Iran and Muscovy*, *Cahiers du Monde russe*, Vol. 35, No. 4, pp. 739-761.
- Savory R. 2003**, "Relations between Safavid State and its Non-Muslim Minorities I", *Islam and Christian-Muslim Relations*, 14:4, 435-458.

**Քրիստինե Կոստիկյան**, պ. գ. դ.,  
«ՀԱԱ արևելագիտության ինստիտուտ»,  
Արևելյան արքայազգիտության և սլավոնագրության  
բաժին,  
ստաջավար գիտաշխատող,  
kkostikyan@yahoo.com

#### THE PERSIAN DOCUMENTS OF THE MATENADARAN ABOUT THE ARMENIAN MERCHANTS OF AGULIS IN XVII CENTURY

**Keywords:** *Agulis, merchant, khoja, trade, Safavid Iran, Nakhichevan, Muslim, silk.*

The article considers some issues referring to the social-economic activities of the Armenian merchants of Agulis on the basis of the information and data contained in the Persian documents of the Matenadaran. These documents, composed as various civil contracts, deeds of purchase and testaments, have kept the names of the khojas and other merchants from Agulis, which supplement and confirm the data of the Armenian epigraphic inscriptions and the diary of Zakaria Aguletsi, and allows study and reveal interesting details about their trade, social-economic position and various problems under Safavid rule. The information and data of the Persian documents confirm that only rich merchants holding high positions in Safavid administration had the title of khojas. Their trade activities stretched to the distant

countries in the West and East. They tried to strengthen their position with purchase of land estates and other property, and also secure their trade with high positions held in Safavid administration like the management of zarrābkhāne (mint), rahdarkhane (roadguard-stations) and the office of garakyarāqs (court supplier), which also was a source of profit. Nevertheless in the second half of XVII century, when the influence of Muslim clergy in Safavid state increased, these khojas often were to face with compulsion to adopt Islam, which sometimes was done in open and sometimes - through the implementation of the law of Imam Ja'far. The law gave an opportunity to the greedy relatives of the rich merchants to claim upon their property after Islamization. The document presented in the article with its Armenian translation witness about such case happened to the immediate heirs of Khoja Nahapet. The real heirs managed to keep their property received from the rich khoja concluding a contract, called hobbe muaveze (exchanged endowment), by which they paid a considerable sum to their Islamized relatives and they granted the whole property to Khoja Nahapet's Christian daughter and her son.

**Kristine Kostikyan** - *Doctor of Sciences in History,*  
*Institute of Oriental Studies NAS RA,*  
*Department of Eastern Sources and Historiography,*  
*Leading Researcher,*  
[kkostikyan@yahoo.com](mailto:kkostikyan@yahoo.com)



Handwritten text in Arabic script, likely a manuscript or document, showing dense cursive writing across the page. The text is arranged in several columns, with some lines appearing to be part of a list or a structured document. The paper is aged and shows signs of wear, including creases and discoloration. There are some faint markings and possibly a small stamp or seal near the top center.

**ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ XIX-XX ԴԴ. (ԱԿՆԱՐԿ)\***

**ԱՐՄԱՆՈՒՇ ԿՈՉՄՈՅԱՆ**

**Բանալի բառեր՝** Իրան, մշակույթ, Ղաջարյան, Փափախի, վեպերնիզացիա, Իսլամական հեղափոխություն, ավանդույթ, ժառանգականություն:

*Հոդվածը լուսարանում է Իրանի մշակույթի զարգացման ընթացքը, հիմնական միտումները՝ ավանդույթի և նորի սինթեզը: Պատմական լայնությունը ընդգրկում է եվրոպամեծ ֆաթիայի շահի մշակութային քաղաքականության շրջանից մինչև Փափախիների «միրասե ֆարհանգի» դոկտրինի իրականացում և իսլամական հեղափոխական արժեքներ: Իրանի մշակույթը ուղղորդում են սոցիալ-քաղաքական տեղաշարժերը, ինչպես նաև տաղանդավոր սրբեծագործ անհատականությունները:*

18-րդ դարի ավարտին, Իրանի դաջարական շրջանի սոցիալ-պատմական բարդ ու անկայուն իրավիճակները պայմանավորում էին մշակութային դաշտի ձևավորումը, նրանում շեշտադրումների և ոլորտների առաջնայնության փոփոխությունները: Դրան նպաստում էին Ֆաթիայի շահի կրթված և առաջադեմ միջավայրի արևմտամետ կողմնորոշումները: Տնտեսական անկման պայմաններում գիտությունը, մոնումենտալ ճարտարապետությունը և այլ քնազավառներ մեծ նվաճումներ չեն արձա-

\* Հոդվածը ներկայացվել է 25.06.2020: Գրախոսվել է 03.08.2020:

նագրում: Ավելին, 1905-1911 թթ. հեղափոխության շրջանում պետության կողմից անուշադրության էին մատնված քաղմաթիվ ճարտարապետական հուշարձաններ և կառույցներ: Այնուհանդերձ, ֆունկցիոնալ կենտրոնների՝ շուկաների, արևելյան բաղնիքների, իջևանատների, հրապարակների (մեյդան), կրոնական կառույցների (Թեմիրանի, Ղազվինի շահական մզկիթներ են) և՛ արտաքին և՛ ներքին հարդարանքի ոճը հիմնականում նախորդ ավանդույթների բնականոն շարունակությունն էր: Ղաջարական տիրապետության վերջին շրջանում արևմտյան ոճի դիմագիծն առավել ակնհայտ էր դառնում: Ճարտարապետությունը մեծ զարգացում ստացավ Ռեզա Շահ Փահլավի և նրա որդու՝ Մուհամադի օրոք: «Մեծ» ճարտարապետությունը դրսևորվեց ժամանակակից ճանապարհների, կամուրջների, պետական հասարակական շինությունների՝ պալատների, դամբարանների, հուշարձանների, համալիրների, հյուրանոցների կառուցողական արվեստում, որում կարևոր դեր ունեին եվրոպայից հրավիրված ճարտարապետներն ու ինժեներները (Անդրե Գոդար, Մաքսիմ Սիրու): Ռեզա Փահլավին առավել ընդգծված էր տանում Իրանի վեստերնիզացման քաղաքականությունը, այդ է պատճառը, որ մշակույթի բոլոր ոլորտներում այդ ամենը հաճախ վերածվում էր սինթեզի՝ ազգային և եվրոպականի միասնությամբ:

Կարելի է փաստել, որ ղաջարական հարստության շրջանում առավել շարժուն էին փոքր և նորը արվեստները: Շահական պալատը թելադրում էր իր պահանջները: Ճիշտ այնպես, ինչպես ղաջարական արքունական գրականության թեմաները, մոտիվները, պատկերային համակարգը և ժանրային ձևերին տրվող գերակայու-

թյուններն էին մեծապես ուղղորդվում ազնվականների նախասիրություններով, նույն ազդակներով էլ կողմնորոշվում էին արվեստի մյուս ճյուղերի զարգացումները: Առաջնային էին գեղանկարչությունը, կիրառական դեկորատիվ արվեստը, ավանդական գորգագործությունը, գեղագրությունը, լաբապատման գործը, լիտոգրաֆիան, որը, ի դեպ, առաջընթաց էր ապրում և առավել որակյալ դարձրեց գրքերի ձևավորման և նկարազարդման գործը:

Դեռևս 7-րդ դարից սկսած՝ իսլամի և արաբական գրի ընդունումից հետո, գեղագրությունը (հուն. Kalligraphia) ուղեկցում էր պարսից մշակույթի ամենաբազմազան ճյուղերը: Արաբական ճկուն գիրը ժամանակի ընթացքում դարձավ զարդանախշ, արաբեսկ և մինչև օրս կատարում է իր և՛ գեղագիտական և՛ զաղափարական (այսթներ Ղուրանից) առաքելությունը՝ զարդարելով մզկիթների հզոր գմբեթներ և քազմապիսի կառույցներ, նուրբ արվեստների գործեր, գրքեր, ինչպես նաև կիրառական-դեկորատիվ իրեր (օրինակ՝ «դալամբար» կոչվող գործվածքներ, որոնք գունազարդվում էին նախշերով և տարբեր բովանդակությամբ դրվագներով): Հայտնի է մի ասացվածք, որն ազդարարում է. ով տեսնում է գեղագիր նմուշ, գրագետ լինի թե անգրագետ, մնում է՝ զմայլված:

19-20-րդ դդ. առաջընթաց ապրեց գեղանկարչությունը, հատկապես դիմանկարի ժանրը, որը հիմնականում պատվերի բնույթ էր կրում և, բնականաբար, ուղեկցվում էր տոնական տրամադրությամբ ու արքունիքին վայել գունային վառ կոլորիտով: Դիմանկարի ժանրը կարևորվեց և մուտք գործեց նաև մանրանկարչություն, որն այդ շրջանում իր ավանդույթների՝ իսպահանյան, հերաթյան և թավրիզյան դպրոցների միտումներն էր շարունակում:

Դիմանկարը որպես ժանր արտացոլում էր ողջ արքունական կոլորիտը, օգտագործվում էր պալատների ներքին ձևավորումներում և դառնում ազգային արժեք, ինչպես հայտնի պարսից գորգերը, կարպետները և մանրանկարները: Այդ է պատճառը, որ դիմանկարներ էին նվիրում Իրան ժամանած դիվանագետներին և պատվարժան հյուրերին: Արդյունքում, դաջարական շրջանի արվեստի բազմաթիվ նմուշներ հանգրվանել են աշխարհի լավագույն թանգարաններում: Օրինակ՝ Ֆաթիայի շահի դիմանկարները՝ կատարված արքունական գեղանկարիչ Միիր Ալիի ձեռամբ՝ Լուվրում և Էրմիտաժում:

Ուշ շրջանի դաջարական գեղանկարչությունը երկփեղկված էր: Այն մի կողմից շարունակում էր հին ավանդույթները, մյուս կողմից՝ ներառում եվրոպական ազդեցությունը<sup>1</sup>: Այստեղ տեսնում ենք հայտնի Դար օր Ֆունունի՝ գիտությունների քոլեջի մեծ դերը պարսից արվեստում եվրոպական ոճի ձևավորման կայացման գործում: Վերջինիս ամենահայտնի ներկայացուցիչն էր Մուհամադ արու ալ Հասան Ղաֆարին, որի տիտղոսն էր՝ «Բյամալ ալ մոլլ-համայն կատարելություն»: Ղաֆարին ռեալիզմի ճշմարիտ կրողն էր, որից հետո ակադեմիական խիստ ոճը հանձնում էր իր դիրքերը: «Մոդեռնը» սկսում էր իր հարթարշավը: Վեստերնիզացիայի ջատագով Ռեզա Փահլավիի օրոք դուրս էր մղվում «չայխանաների» պատերը նկարազարդելու արվեստը: Նորը, որը դասական ավանդականի հետ ուներ որոշ հակասություններ և դեռևս չէր վերածվել սինթեզի, անհատ տաղանդների ջանքերով ստեղծում էր սեփական ոճը: Դրա փայլուն ներկայացուցիչն էր Մահմուդ Ֆարշչիյանը:

<sup>1</sup> The arts of Persia, 1989: 229.

Քիչ ուշ, յոթ անկախ արվեստագետների խումբը (Նամի, Մոմայեզ, Փիլարամ, Արաբշահի, Դարյաբեզզի, Մելքոնյան, Գրիգորյան) պարսից գեղանկարչությունը հասցրեց համաշխարհային ճանաչման: Անգնահատելի է հայազգի Մարկոս Գրիգորյանի (Մարկո) դերը, որը մեծ արվեստագետ-նորարար էր և հայտնի գործիչ:<sup>2</sup>

Հետաքրքիր է մի հանգամանք, որ Իսլամական հեղափոխությունից հետո՝ իսլամի և շարիաթի գերակայության շրջանում, դիմանկարի զարգացումը որոշակի հակասության մեջ մտավ դասական իսլամում օրենքի ուժ ստացած դիմանկարի արգելքի հետ: Սակայն ժամանակի հրամայականը կոնֆորմացնում էր արգելքը, բացի այդ, շիա ուղղությունը կարծես չէր էլ խրախուսում այն և Խոմենիիի, Նրա զինակիցների, ինչպես նաև սուրբ շահիդների և իսլամի մեծ ջատագովների դիմանկարները դառնում էին հաճո:

Այսօր Իրանի ժամանակակից գեղարվեստը համահունչ է համաշխարհային արվեստի ընդհանուր զարգացումներին, և դրա ներկայացուցիչներից մեկն է քանդակագործ Փարվիզ Թանավոլին, արվեստի աշխարհում հայտնի՝ «Հիչ-ոչինչ» շարքով: Անհնար է այս կապակցությամբ չիիշել «խայամյան» նիհիլիստական ռոբայիների շարքը, հատկապես, «հիչ ասթ-ոչինչ է» կրկներգը: «Ոնայնություն ոնայնությանց» աստվածաշնչյան գաղափարը տիպաբանորեն հարազատ է բոլոր ժամանակներին և բոլոր ժողովուրդներին:

Ուշագրավ փաստ է նաև իրանական ֆոտոարվեստի ծնավորումը: Արտասահմանից՝ Նասեր ադ Դին շահի պալատ էր հրավիրվել և նրա կողմից հովանավորվում էր

<sup>2</sup> Tajaryan 2007: 7.

լուսանկարիչ, հայազգի՝ Անթուան Բան Սևրյուզինը: Առօրյայի ակնհայտ և տեսանելի պահերը ֆոտոարվեստում կտրվում էին ընդհանուր համատեքստից, որի արդյունքում ի հայտ էին գալիս սովորական աչքի համար աննկատ՝ դիմազիծ, զգացմունք, հույզ, տրամադրություն: Ինոր դրամատիզմով հագեցած բազմաթիվ լուսանկարներ է թողել Անթուան Խանը (օր՝ Թեոթանի մուրացկանը), որոնք ցուցադրվում են աշխարհի ամենահեղինակավոր սրահներում: Նրա որդին՝ (Արթուր Սևրյուզիան) Դարվիշը, հայտնի նկարիչ է և ձևավորել է պարսից դասական պոեզիայի մի ողջ շարք (Խայամ, Հաֆեզ ևն):

Ժամանակակից Իրանի լուսանկարիչները (Բահման Ջալալի, Հասան Սարբախշյան) աշխարհին ներկայացրեցին իրանա-իրաքյան պատերազմի (1980-1988 թթ.) իրական դեմքը: Իրավանք, լուսանկարչական արվեստի առջև չվան փակ դռներ:

Պարսից թատրոնը հնում ձևավորվում էր կատակածու արտիստների խաղի, սովերների և տիկնիկային թատրոնների հիմքի վրա, երբ ժողովրդական «Մեհրգան» կամ «Ջաշնէ սադա» խանդավառ տոների ժամանակ զանգվածները նույնպես դառնում էին թատերական գործողությունների մասնակից: Իսլամի ընդունումից հետո՝ աշխարհիկ ներկայացումներին զուգընթաց զարգանում էր նաև «Թազիե» կոչվող միջնադարյան կրոնական դրաման: Թազիե-միստերիաները, որոնք ձևավորվեցին Ալիի որդու՝ էմամ Հոսեյնի մահից հետո, մեծ զարգացում ապրեցին Սեֆյանների ժամանակ: Գրվում էին հատուկ պոեմներ-ոդեր, որոնք կատարվում էին նաև քաջ տարածքներում: Այդպիսով, թատրոնը դառնում էր մասսայական՝ հատկապես կրոնական տոների և

սզո հիշատակի օրերին, երբ թագին կրոմ էր էքսպրոմտի բնոյթ և զբաղեցնոմ էր մեծ զանգվածների: Առաջին բազմաթատերահարկ (յարոս) շենքը կառուցեց Նասեր աղ Դին շահը, ով ծանոթ էր եվրոպական թատրոնին՝ ընդարձակ ու շրջանակավոր բեմին<sup>3</sup>: Ավելի ուշ, Ռեզա Փահլավին եվրոպական ոճի փոփոխություններ մտցրեց կառույցի ճարտարապետության մեջ և հիմնովին ապակրոնականացրեց թատրոնի խաղացանկը: Ավելին, 1960-ականների թատրոնի խաղացանկում տեղ էին զբաղեցնոմ Բերթոլդ Բրեխթի և բազմաթիվ այլ եվրոպական թատերագիրների գործեր, ինչպես նաև ոռոս դասականների (Մ. Գորկի, Ն. Օստրովսկի, Ա. Արբուզով են)<sup>4</sup>: Այսօր Իրանի տարբեր քաղաքներում գործոմ են բազմաթիվ թատրոններ (նաև հայկական), սակայն հեղափոխությունից հետո հաստատված իսլամական գաղափարական «ոսզմավարությունը», մեղմ ասած, չի նպաստել թատրոնի վերեցբին: Մի քան, որ չի կարելի ասել իրանական կինոարվեստի մասին: Այն Իրանում ձևավորվեց 1920-ականներին: Հայտնի են առաջին ֆիլմերը՝ «Աբի-Ռաբի» և «Աղջնակը լոր ցեղից», որը պարսկալեզու անդրանիկ ֆիլմն է (ոեժ. Ավանես Օհանյան): Շահական Իրանի համայն վեստերնիզացիան նպաստեց իրանական կինեմատոգրաֆի ձևավորմանը: Արևմտյան ոճերը (նեոռեալիզմ, նատուրալիզմ) մուտք էին գործոմ իրանական կինոարվեստ (Դարյուշ Մեհրուզի, Բահրամ Բեհզայի են): Այդ շրջանում մեծ էր ներմուծվող՝ հաճախ ցածրորակ, հակազեղազիտական հոլիվուդյան ֆիլմերի մուտքը Իրան, որն անմիջապես կասեցվեց իսլամական

<sup>3</sup> Տե՛ս Хабіб Аллах Айнот Аллахи 2007: 314:

<sup>4</sup> Бертольд 1988; Чорекчи, Иран. Драматический театр.



հեղափոխությունից հետո: Չնայած խիստ զրաքննությա-  
նը, բազմաթիվ արգելքներին (օր. կանանց դերակա-  
տարման վերաբերյալ) և թելադրանքին, այնուհանդերձ  
20-րդ դարում իրանական ազգային կինոն համաշխար-  
հային հանրությանը ներկայացավ հումանիստական-  
առաջադիմական գաղափարների ողջ համալիրով: Եվ  
րոպայի կողմից «երրորդ աշխարհ» համարվող երկիրը  
այսօր բազմաթիվ հեղինակավոր փառատոների դափնե-  
կիր է (օրինակ՝ Կաննի փառատոնի) և համաշխարհային  
կինոյի առաջին տեղերում է: Բահրամ Բեհզայի, Ամիր  
Նադերի, Դարյուշ Մահրուջի, Խաչիկ Սամվելյան, Աբաս  
Քիառոսթամի, Մոհսեն Մախմաթբաֆ: Վերջինիս հաե-  
րահայտ «Գյարե-կարպետ» ֆիլմը հաճախ համեմատ-  
վում է Ս. Փարաջանովի «Նոան գոյնի» հետ: Ֆիլմը սիմ-  
վոլ է՝ ժողովրդական ավանդույթների և նոր ժամանակ-  
ների հանդիպման հրաշալի լուծում՝ խելահեղ գոյնի,  
լուսի, ձկնի և մաժորային տրամադրության միջոցով: Ֆիլ-  
մի ոգին է՝ խանդավառ սեր և խոնարհում կյանքի և բնու-  
թյան գերեցկության առջև: Ճանաչված ֆիլմեր են Քիա-  
ռոսթամիի «Բալի համը», «Կյանք և ուրիշ ոչինչ», «Որ-  
տեղ է ընկերոջ տունը» ևն: Գեղարվեստական կինոյի  
հետ մեկտեղ այսօր զարգանում է նաև ուսուցողական,  
ոազմահեղափոխական, վավերագրական և պատմա-  
կան կինոն:

Պարսից մշակույթի զարգացման ընթացքը 18-20-րդ  
դդ. լայնություն մեկ անգամ ևս ընդգծում է ավանդույթ-  
ների և նորարարության սինթեզը, որի ստեղծողները և  
կրողները ուղղորդվում են ժամանակի մարտահրավեր-  
ներով, սակայն մշտապես պահպանում են ազգային ար-  
վեստի էթնոմշակութային ժառանգականությունը և  
միասնականությունը:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

**The arts of Persia. 1989**, Edited by R.W. Ferrier, Yale University Press, New Haven, London, 334 p.

**Tajaryan I. 2007**: Hame jhani divar-e nagshba-e Iran Marko raft... Etemad-e melli, Tehran.

**Хабиб Аллах Айат Аллахи 2007**: История иранского искусства, Санкт-Петербург, Петербургское Востоковедение, 352с.

**Бертельс Е.Э. 1988**, Персидский театр. Избранные труды, Москва.

**Չորեան Խ. Ա.**, Իրան. Դրամատիկական թատր, Большая Советская Энциклопедия.

Արմանուշ Կոզմոյան, ք.գ.դ.,

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ,  
Իրանի բաժին, գլխավոր գիտաշխատող  
kozmojan@mail.ru

### A REVIEW OF MAJOR TRENDS IN THE DEVELOPMENT OF IRANIAN ART (XIX AND XX CENTURIES)

**Keywords:** *Iran, art, Fathali, Pahlavi, synthesis, Islamic revolution, tradition, Westernization, modern art.*

The major trends in the development of various types of Iranian art under progressive Qajar dynasty rulers highlight dedication to national traditions on the one hand, and the impact of Western culture, that is, the tendency towards Westernization, on the other. The Iranian revolution changed the policy to the value systems of Iran under Shah Pahlavi era, where the doctrine of "cultural unity" - *Miras-i Farhangi* - prevailed. On the whole, the Iranian art predominantly depended on the socio-political challenges of the time, the religious charisma, and innovative individuals.

*Armanush Kozmoyan - Doctor of Sciences in Philology,*

*Institute of Oriental Studies NAS RA,  
Department of Iran, Principal Researcher  
kozmojan@mail.ru*

## ՈՒՂԵՑՈՒՑՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարը հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում 1960 թ.-ից: Ժողովածուն ընդգրկում է **Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հին և միջին դարերի, նոր և նորագույն ժամանակների պատմության, ինչպես նաև աղբյուրագիտության և բանասիրության** հարցերի վերաբերյալ հետազոտություններ: Զգալի տեղ է հատկացված նաև տարածաշրջանի քաղաքական զարգացումների, միջազգային հարաբերությունների և այլ հիմնախնդիրների լուսաբանմանը: Ժողովածոում հրատարակվում են նաև աշխատություններ նվիրված Մերձավոր Արևելքի և Եվրասիայի այլ տարածաշրջանների միջև հարաբերություններին:

Ժողովածուի հոդվածները հրատարակվում են հայերեն, ռուսերեն, անգլերեն և այլ եվրոպական լեզուներով:

Ժողովածուն լույս է տեսնում տարեկան 2 անգամ: Հոդվածները հարկավոր է ներկայացնել տվյալ տարվա առաջին համարի համար՝ մինչև տվյալ տարվա **մայիսի 15-ը**, իսկ երկրորդ համարի համար՝ մինչև **սեպտեմբերի 15-ը**:

Ժողովածուին հոդվածներ կարող են ներկայացնել միայն **գիտական աստիճան** ունեցող հետազոտողները (*գիտական ասպիրանտ չունեցողները՝ միայն խմբագրության որոշմամբ*):

Ժողովածուի պաշտոնական կայքէջը՝

<http://www.orientcpome.am>, էլեկտրոնային հասցեն՝ [jour-nal@orient.sci.am](mailto:jour-nal@orient.sci.am):

### ***Հոդվածներին ներկայացվող պահանջներ***

Հարկավոր է որպեսզի հեղինակները իրենց հոդվածները համապատասխանեցնեն «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» ժողովածուի ոճային հետևյալ պահանջներին՝

*Հոդվածի ծավալը պետք է լինի մինչև 15 էջ՝ ներառյալ նաև ամփոփումները և գրականությունը (ավելի մեծ ծավալը՝ խմբագրության որոշմամբ):*

1. **Հոդվածի շարվածքը** ներկայացնել և՛ էլեկտրոնային (Word - doc, docx), և՛ թղթային տարբերակներով (երևանից դուրս, կամ արտասահմանից ուղարկվող հոդվածները՝ միայն էլեկտրոնային տարբերակով, ժողովածուի էլեկտրոնային հասցեին՝ [journal@orient.sci.am](mailto:journal@orient.sci.am)) (շարվածքը՝ 12 տառաչափ, 1.5 միջտողային բացվածք, 3500 բառից ոչ ավել):

2. Հայերեն տեքստերը ներկայացնել **GHEA Grapalat** տառատեսակով, **այլ լեզուներով՝ Times New Roman (նույն սկզբունքով նաև ծանոթագրություններում և գրականության ցանկում):**

3. **Հոդվածի վերնագիրը** և հեղինակի անուն և ազգանունը պետք է լինի մեծատառերով:

4. Հոդվածի տեքստից առաջ, բանալի բառերից հետո տալ նաև հոդվածի բովանդակության վերաբերյալ **համառոտ շարադրանք** (այն պետք է ներկայացվի այն լեզվով, որ լեզվով ներկայացվում է հոդվածը, շարվածքը՝ 12 տառաչափ, միջտողային բացվածքը՝ 1, **250 բառից ոչ ավելի**: Հայերեն տեքստերը ներկայացնել **GHEA Grapalat** տառատեսակով, **այլ լեզուներով՝ Times New Roman**):

5. Հեղինակը ներկայացնում է նաև իր հոդվածի անգլերեն և ռուսերեն վերնագիրը և իր անունը և ազգանունը այդ լեզուներով (եթե հոդվածի տեքստը հայերեն է, եթե անգլերեն կամ եվրոպական այլ լեզուներով՝ համապատասխանաբար՝ հայերեն և ռուսերեն, եթե ռուսերեն՝ հայերեն և անգլերեն):

6. Հոդվածներին կից ներկայացնել նաև հայերեն և անգլերեն **10 Բանալի բառեր (Keywords; Ключевые слова)**:

7. Եթե հոդվածում կան **հապավումներ**, ապա հոդվածի վերջում՝ Գրականությունից հետո տալ նաև հապավումները՝ բացված վիճակում:

**Ծանոթագրությունները** *տալ ներկայացվող հոդվածի ամեն էջի գողարևակում (Footnote):*

8. **Ծանոթագրությունները** տալ ըստ հղված աշխատության լեզվի:

9. **Ծանոթագրությունների** միջտողային հեռավորությունը՝ 1, տառատեսակը՝ հայերենի դեպքում՝ **GHEA Grapalat** տառատեսակով, **ալլ լեզուներով՝ Times New Roman**, տառաչափը՝ 10:

10. **Ծանոթագրությունների** մեջ նշված հեղինակների ազգանունները և տարեթիվը ընդգծել թավ (Bold), նմանապես նաև հոդվածի վերջում տրվող գրականությունում:

11. **Ծանոթագրությունները (հոդվածներ, գրքեր, զեկուցում) տալ հետևյալ կերպ՝**

**Պողոսյան 2019**: 36:

**Poghosyan 2019**: 36.

**Погосян 2019**: 36.

12. **Ծանոթագրություններում ներկայացվող համացանցային հոդվածները և կայքերը տալ հետևյալ կերպ՝**

**Պողոսյան Պ., Վերևագիրը**, ամսաթիվը, էլեկտրոնային հասցեն:

13. **Ծանոթագրություններում ներկայացվող հոդվածներ օրաթերթերից՝**

**Պողոսյան «Օրաթերթի անունը չակետների մեջ», օրաթերթի ամսաթիվը և համարը:**

14. Եթե **ծանոթագրություններում** տրվում է նույն ազգանունը կրող երկու անձ՝ հարկավոր է նշել նաև (այդ դեպքում միայն) անվան առաջին տառը՝

**Պողոսյան Պ. 2019**, 36:

**Պողոսյան Կ. 2019**, 115:

15. Եթե **ծանոթագրությունում** նույն հեղինակը նույն տարում հրատարակել է երկու կամ ավելի աշխատություններ և դրանք հղվում են ներկայացվող հոդվածում՝ հարկավոր է ներկայացնել հետևյալ կերպ՝

**Պողոսյան 2019ա**, 36:

Պողոսյան 2019բ, 76:

Poghosyan 2019a: 36.

Poghosyan 2019b: 76.

16. **Օսնոթագրություններում** եթե նույն հեղինակի նույն հիշումն է կրկնվում իրար նույնից հարկավոր է հայերենի դեպքում տալ այսպես՝

**Նույն տեղում:** Անգլերեն և այլ եվրոպական լեզուներով տրվող ծանոթագրությունների դեպքում՝ **Ibid.**, ռուսերենի դեպքում՝ **Там же**.

**17. Հոդվածում ներկայացվող նկար, քարտեզ և աղյուսակ**

Հոդվածում նկարներ, աղյուսակներ և քարտեզներ ընդգրկելու դեպքում դրանք պետք է ունենան առնվազն 300 խտություն (300 dpi): Հոդվածում նկարները, աղյուսակները և քարտեզները հարկավոր է համարակալել և վերնագրել:

Հոդվածի վերջում ներկայացնել նաև **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ** (անգլերենի դեպքում՝ **BIBLIOGRAPHY**, ռուսերենի՝ **ЛИТЕРАТУРА** (լրալ մեծատառերով, թափ (Bold):

18. **Գրականության ցանկը ներկայացնել այբբենական կարգով:** Օգտագործված գրականությունը ներկայացնել հետևյալ հաջորդականությամբ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն կամ այլ եվրոպական լեզուներով:

19. **Գրականության ցանկում աշխատությունը (գիրք, հոդված) նշել ամբողջական՝**

Պողոսյան Պ. 2019, հոդվածի կամ գրքի վերնագիրը, տպագրության վայրը, տարեթիվը, էջերը:

20. **Գրականության ցանկում ներկայացվող անտիպ աբենախոսությունը ներկայացվում է հետևյալ կերպ՝**

Պողոսյան Պ. 2019, Վերնագիրը (անտիպ թեկնածուական ատենախոսություն, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ): Գրքի դեպքում նշել նաև հրատարակատունը:

21. **Գրականության ցանկում ներկայացվող համացանցային հոդվածների և կայքերի** հասցեները պետք է նշվեն ամբողջությամբ և հնարավորության դեպքում նաև այն օրը, երբ վերջին անգամ այցելել եք այդ կայքը:

22. **Գրականության ցանկում ներկայացվող հոդվածներ օրաթերթերից, ամսագրերից՝**

**Պողոսյան Պ.**, Վերնագիրը, օրաթերթի անունը չակերտների մեջ, օրաթերթի ամսաթիվը և համարը:

23. **Գրականության ցանկում ներկայացվող գիտաժողովի փյազգրված թեզիս կամ հոդված՝**

**Պողոսյան 2019**, զեկուցման կամ թեզիսի վերնագիրը, գիտաժողովի վերնագիրը, անցկացման վայրը և ամսաթիվը:

24. **Գրականության ցանկում եթե նույն հեղինակը** ներկայացված է մի քանի աշխատություններով, ապա հարկավոր է այդ աշխատությունները ներկայացնել ըստ տպագրման տարիների հաջորդականության:

25. Եթե հոդվածը ներկայացվում է հայերեն՝ հարկավոր է Գրականությունից հետո տալ նաև անգլերեն **ամփոփում** (200 բառից ոչ ավելի) /հարկավոր չէ գրել ամփոփում բառը/: Անգլերեն կամ եվրոպական այլ լեզվով ներկայացված հոդվածի դեպքում՝ հայերեն ամփոփում: Ռուսերենի դեպքում՝ հայերեն և անգլերեն ամփոփումներ:

**Ամփոփումները** պետք է հանդիսանան տեքստի սեղմ րովանդակությունը: Հայերեն ամփոփման տառաչափը 12, միջտողային հեռավորությունը՝ 1, **GHEA Grapalat** տառատեսակով: Անգլերեն, ռուսերեն ամփոփումների դեպքում **Times New Roman** տառատեսակով: Ամփոփումների տեքստից առաջ պետք է մեծատառերով գրել հոդվածի վերնագիրը (լենտրոնում): Ցուրաքանցյուր ամփոփման տեքստից առաջ գրվում են համապատասխան լեզվով բանալի բառեր (**Key words, Ключевые слова**): Բոլոր լեզուներով տրվող բանալի բառերը պետք է լինեն նույնական:

Հոդվածի վերջում ներկայացնել նաև հեղինակի գիտական աստիճանը, նշել աշխատանքի վայրը, պաշտոնը և e-mail հասցեն:

Հոդվածները հարկավոր է ուղարկել միայն հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ [journal@orient.sci.am](mailto:journal@orient.sci.am)

Հոդվածը ստանալուց անմիջապես հետո հեղինակները կտեղեկացվեն այդ մասին, ինչպես նաև դրա հրատարակման նպատակահարմարության և գրախոսման հանձնելու մասին:

**Հեղինակների ուշադրությունն ենք հրավիրում հղումների հետևյալ համակարգի առանձնահատկությունների վրա և ակնկալում որպեսզի հոդվածների ներկայացման ժամանակ դրանք խստորեն արահայանվեն:** Սույն համակարգի սկզբունքները չարհայանելու դեպքում ժողովածուի խմբագրական խորհուրդը իրավունք է վերապահում հոդվածները չընդունել քննարկման (հղումների համակարգին կարող եք ծանոթանալ նաև՝ <http://www.orientconme.am> կայքում):

***Քոլոր հոդվածները գրախոսվում են, մերժման դեպքում չեն վերադարձվում:***

**Գրախոսման գործընթացը**

Հոդվածը ստանալուց հետո, եթե այն չի մերժվում, խմբագրությունն այն ուղարկում է համապատասխան մասնագետի՝ գրախոսման համար: Գրախոսը պարտավոր է մեկամսյա ժամկետում ներկայացնել իր կարծիքը ըստ գրախոսման ձևի: Գրախոսի դրական կարծիքի դեպքում հեղինակը տեղեկացվում է այդ մասին և անհրաժեշտ փոփոխություններ կատարելուց հետո խմբագրությունն ուղարկում հոդվածի վերջնական տարբերակը:

***«Մերժավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ»  
ժողովածուի խմբագրություն***

Էլ. փոստ՝ [journal@orient.sci.am](mailto:journal@orient.sci.am)



**«ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ  
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐ» ՄԱՏԵՆԱՇԱՐ**

1. Արևելագիտական ժողովածու, հատ. I, եր., ՀՍՄԻ ԳԱ հրատ., 1960, 402 էջ:
2. Արևելագիտական ժողովածու, հատ. II, եր., ՀՍՄԻ ԳԱ հրատ., 1964, 380 էջ:
3. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. III, Արաբական երկրներ, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, 237 էջ:
4. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. IV, Իրան: եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1969, 232 էջ:
5. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. V, Թուրքիա, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 452 էջ:
6. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. VI, Արաբական երկրներ, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, 439 էջ:
7. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. VII, Քրդագիտություն, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 385 էջ:
8. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. VIII, Իրան: եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975, 409 էջ:
9. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. IX, Արաբական երկրներ, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, 401 էջ:
10. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. X, Թուրքիա, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979, 334 էջ:
11. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XI, Իրան: եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 350 էջ:
12. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XII, Թուրքիա, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 278 էջ:
13. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XIII, Քրդագիտություն, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1985, 287 էջ:
14. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XIV, Արաբական երկրների նեոլիթի և արտալիթի ցարգաբանության ժամանակակից արթթեմներ, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 317 էջ:
15. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XV, եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989, 344 էջ:
16. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XVI, եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, 270 էջ:

17. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XVII, եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1998, 240 էջ:
18. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XVIII, եր., «Ձանգակ-97» հրատ., 1999, 248 էջ:
19. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XIX, եր., «Ձանգակ-97» հրատ., 2000, 280 էջ:
20. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XX, եր., «Ձանգակ-97» հրատ., 2001, 352 էջ:
21. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXI, եր., «Ձանգակ-97» հրատ., 2002, 408 էջ:
22. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXII, եր., «Ձանգակ-97» հրատ., 2003, 336 էջ:
23. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXIII, եր., «Ձանգակ-97» հրատ., 2004, 568 էջ:
24. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXIV, եր., «Ձանգակ-97» հրատ., 2005, 536 էջ:
25. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXV, եր., «Ձանգակ-97» հրատ., 2006, 480 էջ:
26. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXVI, եր., «Աստղիկ» հրատ., 2007, 316 էջ:
27. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXVII, եր., «Երիբ Պրինտ» հրատ., 2009, 272 էջ:
28. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXVIII, եր., «Ձանգակ-97» հրատ., 2011, 352 էջ:
29. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXIX, եր., «Ձանգակ-97» հրատ., 2014, 352 էջ:
30. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXX, եր., «Գիտություն» հրատ., 2016, 276 էջ:
31. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXXI, եր., «Գիտություն» հրատ., 2018, 248 էջ:
32. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXXII/1, եր., «Գիտություն» հրատ., 2019, 345 էջ:
33. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հատ. XXXII/2, եր., «Գիտություն» հրատ., 2019, 367 էջ:

ՄԵՐՁԱՎՈՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ  
ԵՐԿՐՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՈՈՐԴՆԵՐ

THE COUNTRIES AND PEOPLES  
OF THE NEAR AND MIDDLE EAST

СТРАНЫ И НАРОДЫ  
БЛИЖНЕГО И СРЕДНЕГО ВОСТОКА

XXXIII/1

Հրատ. խմբագիրներ՝ Ա.Հովակիմյան, Ա.Սահակյան,  
Ն.Նանասյան  
Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Հրատ. պատվեր № 1035  
Ստորագրված է տպագրության՝ 25.09.2020թ.:  
Չափսը՝ 60 x 84 <sup>1</sup>/<sub>16</sub>, 33,5 տպագր. մամուլ:  
Տպաքանակը՝ 150 օրինակ:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղդամյան պող. 24: